Գրաբարում նախդիրը առանձին խոսքի մաս է, գործածվում է թեք հոլովների հետ, արտահայտում քերականական իմաստ: Նախդիրների ուսումնասիրությունը սկսվել է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության թարգմանությունից, հայ մեկնիչների ուսումնասիրություններից: Սկզբնապես նախդիրներն ու նախադրությունները չեն տարբերակվել, կոչվել են **նախադրություն,** որը հունարենի համապատասխան խոսքի մասի անվանման պատճենումն է: Հետագայում գրաբարի քերականության համար տարբերակվել են ***նախդիրն ու նախադրությունը:*** Մ. Աբեղյանը դրանց համար գործածել է ***կապ*** եզրույթը.նախադրություն կոչել է նախադաս գործածվող կապերը, ետադաս գործածվողներն էլ անվանել է ետադրություն:[1]

Հ.Աճառյանը նշել է. «Նախդիր և նախադրություն, մանավանդ նախադրություն և մակբայ շատ են շփոթվում թե՛ միևնույն լեզվի մեջ և թե՛ մանավանդ լեզվից դուրս»: Ըստ նրա՝ «Նախդիր են կոչվում մի կամ երկու և երեք ձայներից բաղկացած այն բառիկները, որոնք իբրև բառ առանձին գոյություն չունեն և որոնց իմաստն էլ շատ ընդհանուր և շարժական է, սակայն միանալով գոյականների և դերանունների զանազան հոլովների հետ՝ ստանում են որոշ և հաստատուն նշանակություն: ....Իսկ նախադրությունն այն անփոփոխ բառն է, որ ունի առանձին իմաստ և միանալով գոյականների և դերանունների հետ որոշում է նրանց այս կամ այն պարագան և այս հանգամանքով կապում նրան բայի հետ»:[2]

---

[1] ***Աբեղյան Մ.,*** *Երկեր, Զ հատոր, Երևան, 1974, էջ 107,298:*

[2] ***Աճառյան Հ.,*** *Լիակատար քերականություն հայոց լեզվի,Երևան,1965, էջ 60:*

Հենվելով նախորդ շրջանի քերականների ձեռքբերումների և ուսումնասիրությունների վրա՝ Ա. Աբրահամյանը ևս ներկայացրել է նախդիրների և նախադրությունների խոսքիմասային առանձնահատկությունները, յուրաքանչյուր նախդիրի քերականական գործառույթները:[1]

Ըստ լեզվաբան Վ. Քոսյանի՝ նախադրություններն ու նախդիրները, որպես սպասարկու բառեր, լրացական հարաբերություն են արտահայտում: Նախադրությունները նախդիրներից տարբերվում են՝

1. հոլովառությամբ. նախադրությունը դրվում է այս կամ այն հոլովի վրա, իսկ նախդիրները (բացի ց-ից) կարող են դրվել երկու կամ ավելի հոլովների հետ:

2. Նախադրությունները իմաստային սահմանափակություն ունեն, նախդիրները՝ ոչ: Եթե նախադրությունները մեծ մասամբ մենիմաստ են, ապա նախդիրները հիմնականում բազմիմաստ են:[2]

Գրաբարի նախդիրներն են՝ ***առ, զ, ընդ, ըստ, ի(յ), ց:***[3] Հ.Աճառյանը *առ, ընդ, ըստ, ի* նախդիրները համարել է բնիկ հայերեն բառեր, որոնք ծագել են նախահիմք լեզվի համապատասխան ձևերից, իսկ ***զ*** և ***ց*** նախդիրները ենթադրաբար է համարել բնիկ հայերեն բառ, քանի որ լիովին հավաստի չի համարել նրանց նախահիմք լեզվի համապատասխան ձևերը: Այսպես՝

Առ. նախդիր կամ նախադրություն, որ զանազան հոլովներով զանազան նշանակություններ է ստանում . ծագել է հնխ. par-ձևից:[4]

Զ. նախդիր՝ որ կցւում է բառասկիզբը հայցական, պատմական և պարառական հոլովները կազմելու ժամանակ, բայց մանաւանդ գործածւում է իբրև սաստկական և կամ զօրացուցիչ: Իր շատ ճոխ գործածությունից դատելով՝ պետք է լինի բնիկ հայ:Բայց որովհետև զ ձայնով սկսող հայերէն բառերը կամ փոխառութիւն են և կամ դեռ մեկնուած չեն, ուստի յայտնի չէ, թէ ինչ պիտի լինէր սրա հնխ. ձևը: Ենթադրում է, որ ծագել է հնխ. g'h ձևից:[5]

Ընդ. Ընդարձակ գործածութիւն ունեցող նախդիր:Բնիկ հայ բառ հնխ. anti ձևից, որ ներգոյականն է ant-«երես, ճակատ, առաջակողմ» բառի:[6]

Ըստ. Նախդիր, որ ունի զանազան նշանակություններ յաջորդ բառի հոլովի համեմատ: Բնիկ հայ բառ՝ հնխ. posti ձևից:[7]

Ի. նախդիր ներգոյականի, նախդրիւ հայցականի և բացառականի. ձայնաւորի մօտ դառնում է յ (երկուսն էլ հնչմամբ նախապէս նոյն էին):

---

[1] ***Աբրահամյան Ա.*** *, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 228-262:*

[2] ***Քոսյան Վ.,*** *Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 166:*

[3] ***Աբրահամյան Ա.,*** *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 228:* ***Աճառյան Հ.,*** *Լիակատար քերականություն հայոց լեզվի,Երևան,1965,էջ 70:*

[4] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան,1971, էջ 247:*

[5] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, , հ. Բ, Երևան,1973, էջ 75:*

[6] *Տե՛ս նույնը, էջ 122-123:*

[7] *Տե՛ս նույնը,, էջ 133:*

Բնիկ հայ բառ, որ հաւասարապէս կարող է գալ հնխ. in կամ en ձևից վերջաձայն n-ի անկումով:[1]

Ց.«մինչև»,նախ իբր նախդիր տրականի (ասէ ցնա):Թուի բնիկ հայ բառ՝ հնխ. ad նախդիրից որ նշանակում է «մօտը, դեպի,առ, ց»: Մեր մէջ հնխ., ad-դարձել է ad=sk' և տուել է թերևս ց:[2]

Նախդիրները գործածության լայն շրջանակներ են ունեցել հայ հին մատենագրության մեջ: Ինչպես նշում է Գ. Մանուկյանը, նախդիրների «գործածությունը ոչ միայն պայմանավորված է գրաբարի որևէ լեզվական փուլի առանձնահատկությամբ, այլև հեղինակի լեզվի և ոճի յուրահատկությամբ, գրվածքի բովանդակությամբ»: Նա նկատում է, որ 5-րդ դարում, երբ դրսևորվել է հունաբան հայերենը, նախդիրների գործածությունը բավականին ակտիվացել է,ուժեղացել է ***առ, ընդ, ըստ*** նախդիրների նախաձանցական կիրառությունը, նախդիրներով կազմվում են բազմաթիվ դարձվածքներ: Նախդրագործածությունը նպաստում է բացահայտելու լեզվական փուլերի նմանություններն ու տարբերությունները,բնութագրելու այս կամ այն մատենագրի գրվածքների լեզվի և ոճի առանձնահատկությունները, ներկայացնելու գրաբարի և խոսակցական լեզվի ներթափանցումները: Ըստ նրա՝ «Համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքով նախդրագործածության հաճախականության բացահայտմամբ որոշվում է գրաբարի «պուլսացիան»՝ բաբախումը՝ ինչպես կոնկրետ ժամանակաշրջանում, այնպես էլ դարերի ընթացքում»: Նա նախդիրները համարում է գրաբարի և աշխարհաբարի բաժանարար գիծ: Երբ նախդիրները դադարել են գործել, վերջնականապես հաղթանակել է աշխարհաբարը:[3]

Ըստ Հ. Աճառյանի՝ նախդիրները հնդեվրոպական լեզվի մեջ առանձին, անկախ հոլովված բառեր էին, որոնք կորցրել են իրենց ինքնուրույնությունը, շեշտից զրկվել, դարձել երկրորդական բառեր, գրեթե հավասար մասնիկներին:[4] Փաստորեն նրանք հանդես են եկել և' բառակազմական և', քերականական գործառույթներով:

Հայերենում ևս դեռ շատ վաղ ժամանակներում նախդիրները կիրառվել են նաև ածանցական նշանակությամբ:Որոշ բառերում այդ մասնիկները շատ սերտ են ձուլվել բառարմատին, և անցումը գրեթե չի գիտակցվում, ինչպես՝ ընկեր (***ընդ***+կեր), ***(ը)*** ստանձնել, *զառամ*, *զարդ*, *յարգանք*, *ցայգ* և այլն: Նախդիրների ածանցական կիրառությունն ընդհանուր երևույթ է նախդիրներ ունեցող լեզուներում: Այսպես, օրինակ, ռուսերենում համարյա

---

[1] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան,1973, էջ 235:*

[2] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան,1979, էջ 446:.*

[3] *Տե՛ս* ***Մանուկյան Գ.,*** *Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Երևան,2002, էջ 4:*

[4] ***Աճառյան Հ.,*** *Լիակատար քերականություն հայոց լեզվի,Երևան,1965, էջ 61:*

բոլոր նախդիրներից առաջացած նախածանցներ կան , որոնք գործուն են և լայն կիրառություն ունեն ժամանակակից ռուսերենում:[1]

Այսպես՝ ռուսերենում ***за*** նախամասնիկը ցույց է տալիս սաստկություն (за-долго=շատ վաղուց), որին հայերենում համապատասխանում է ***զ***-ն: Զ «զօրացուցիչ» մասնիկը հետզհետե կորցրել է իր այդ իմաստը, այն կարելի է զգալ միայն, երբ կրկնությամբ գործածվում է՝ արմանք-զարմանք (արմանալ-զարմանալ), դժվար է կողմնորոշվել, որ ***զարկանել*** բայը ***հարկանել*** բառից է, կամ էլ ***զգալ, զգաստ,*** *զգօն*, *զեկուցանել* (զեկուցել) բառերը *գալ* բառից և նրա անցյալ կատարյալի ***եկ*** հիմքից: Նույնիսկ հինգերորդ դարում շատ բառերի մեջ մթագնած է զ-ի գործածությունը (***զ***+երծ, ***զ***երծանիլ): Ղարաբաղի բարբառում զ-ն պահպանվում է զինքը, զիրաւ տալ (վերան փաթաթել) ձևերում:[2] Շնչեղ խուլ բաղաձայններից առաջ ***զ*** մասնիկը փոխվում է ս-ի (թափիլ-սթափիլ), քօղ –սքօղել, փռել-սփռել և այլն):Այլ բաղաձայններով սկսվող բառերի դեպքում նախորդ բաղաձայնը ընկնում է, ավելանում է զ-ն (հատանել-զատանել, հեղուլ-զեղուլ):[3] Թվարկենք բառեր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանից (այսուհետև՝ ՆՀԲ)՝ զականեմ, զահանդիմ, զանց, զառանց (անանցանելի), զարթուն, զարկանեմ, զարտուղի, զգետնեմ, զելանեմ, զետեղանեմ,զուր և այլն,[4] Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» (այսուհետև՝ ՀԱԲ)՝ զակատիլ, զայրանալ, զաչաղել, զառանցել, զարգանալ, զարհուրիլ, զարմ, զգածիլ, զեռալ, զեռուն, զիրարել, զկնի և այլն:

Ի(յ)նախդիրը բառակազմական գործառույթ ունի ***յ*** ձևով ձայնավորով սկսվող բառերից առաջ: Յ նախածանցով շատ կազմությունների իմաստը մթագնած է, դժվար է բացահայտել սկզբնական «մէջ» իմաստը: Գ. Ջահուկյանը այդպիսի կազմություններ է դիտում յականեմ (ակն, կա նաև ականեմ), յաղեմ (աղ, կա նաև աղեմ), յանձնեմ (անձն), յերկուանալ (երկու, կա նաև երկուանալ), յղել (յուղել, ուղի) և այլն:[5] ՆՀԲ՝ իսպառ, իսպառազէն, յաղազս, յաճախ, յայսմաւուրք, յանգէտս, յանիրաւի, յանկարծ, յանձնառութիւն, յարալէզ, յարդարեմ, յարձակիմ, յաւելադրութիւն, յուղարկաւորութիւն: ՀԱԲ՝յանգ, յապաղել, յաջող, յաջորդ, յաւելուլ, յերիւրել, յոյժ, յոյս, յօրինել և այլն: Ի-ով բառերից իսպառ, իսպառազէն բառերում ի-ն միասին է գրված, ի զուր բառում՝ առանձին, որը հետագայում նույնպես գրվեց միասին: Այդ մասին Հ. Աճառյանը նշում է. «Վերջերս գրաբարի անգիտության պատճառով.... նախդիրները սկսեցին միացնել բառին, օրինակ՝ իզուր, ինկատի, իհարկին»: Նա նշում է նաև Ստ. Մալխասյանի՝ Խորենացու պատմության թարգմանության մեջ

---

[1] *Տե՛ս* ***Աբրահամյան Ա.*** *, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 229:*

[2] *Տե՛ս* ***Աճառյան Հ.****, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 76:*

[3] *Տե՛ս* ***Աճառյան Հ.*** *, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1965, էջ 71-73:*

[4] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.Ա,Երևան,1979, հ.Բ,Երևան,1981:*

[5] ***Ջահուկյան Գ.,*** *Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 135:*

իմիջիայլոց միասին գրված բառը: Ըստ նրա՝ այդ կարգի բառերը պետք է բառարանում նշվեին: Նա նկատում է, որ աղոթքների մեջ սովորական է ***յաւիտեանս յաւիտենից*** ձևը, որը ի նախդրով պետք է լինի ***ի յաւիտեանս յաւիտենից***: Ըստ նրա՝ «կարելի չէ ասել, թե սրանք ներկայացնում են նախդիրի կրճատվա՞ծ ձևը, թե, ինչպես հավատացած եմ, հին աննախդիր ձևերն են»:[1]

Ց-ն ածանցական արժեքով քիչ է գործածվում, հիմնականում գոյականների մեջ է ցայգ, ցանկ, ցերեկ: ՀԱԲ-ում նույն բառերն են, իսկ ՆՀԲ-ում՝ ցայգ, ցայժմ, ցայսօր, ցանկ, ցարդ բառերը:

Առ-ը ***առա***–ձևով պահպանվել է մի քանի մթագնված հին կազմություններում՝ առագաստ,առասպել, և առ ձևով՝ ***առաւաւտ*** բառում: ***Առ-ի*** բառակազմական գործառույթը ընկալելի է որոշ գոյականներում ու բայերում՝ առ-ողջ,առ- աւել, առ –անց, առ-անձին, առ-հաւատչեայ, առ-կայծ, յ-առ-աջ, զ-առ-անցել, զ-առ-իվայր, առ-ընթեր (ընդ-թեր «կողմ»), հնդեվրոպական հիմքերի հետ քիչ է գործածվել՝ ***առածիմ,*** *առիւեթեմ, առլնում*: Հունաբան երկերում հատկապես պատճենումներում հաճախացել է նրա գործածությունը՝ ***առարկեմ, առդնեմ, առձայնեմ*** և այլն:[2] Առ նախդիրը պահպանվել է նաև Ղարաբաղի բարբառում գործածվող «առիս, առիտ, առին «մօտս, մօտդ, մօտը», (քովս, քովդ, քովը) ձևերի մեջ, որոնցից առաջինը առ իս ձևն է,մեկ բառի արժեք ունի: Այդ բառի մեջ կարծես ուղղականը առի ձևն է՝ ավելացրած ս հոդը:Այդ հիմքի վրա էլ կազմվել են մյուս ձևերը՝առիտ, առին»:[3] ՆՀԲ՝ առադրութիւն, առդրութիւն, առաթուր, առարկ, առինչ, առկայանում, առկայուն, առհասարակ, առձեռն, առճակատումն, առոգանութիւն, առօրեայ և այլն: ՀԱԲ՝ առանձին, առանց, առաջ, առաստաղ, առաքել, առէջ, առողջ, առոյգ և այլն:

Ընդ նախդիրը որպես նախածանց գործածվում է ***ընդ***-(ընդարմանամ), ***ընտ***- (երկրորդական խլացմամբ՝ ընտել), ***ըն***-(ընթեռնում), ***ըմ***-(ըմբռնեմ) տարբերակներով: Նախածանցական գործառությամբ ևս կարող են արտահայտվել ***ընդ*** նախդրի իմաստները՝ ***ընդվզիմ,*** (վիզը մեկին դեմ տալ), ***ըմբոստանալ***-դեմ, հակառակ, ***ընդաւազեմ*** (ավազի տակ ծածկել)-տակ, ***ընդել՝ ընտրել*** (մեկի հետ միասին ելած, ծանոթ, ընտանի)-հետ, միասին, ***ընդոստնում*** (վեր ցատկել)-վեր, ***ընկողմանիմ*** (մի կողմի վրա ընկնել, պառկել-վրա, ***ընդգրկեմ*** (գիրկն առնել գրկի մեջ առնել)-դեպի, մեջ, ***ընդունայն-իսպառ, մինչև վերջ:***[4] ՆՀԲ՝ ընդառաջեմ, ընդարմանամ, ընդբերանել, ընդգրկեմ, ընդդէմ, ընդդիմադրութիւն, ընդդիմախօս, ընդէ՞ր, ընդկրկել, ընդհանուր, ընդհատ, ընդհարումն, ընդհուպ, ընդոստ, ընդունակ,

---

[1] ***Աճառյան Հ.,*** *Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան,1965, էջ 61:*
[2] ***Ջահուկյան Գ.,*** *Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003,էջ 135:*
[3] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971,էջ 247:*
[4] *Տե՛ս* ***Ջահուկյան Գ.,*** *Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 131-132:*

ընդունիմ, ընդվզեմ, ընդօրինակեմ և այլն: ՀԱԲ՝ ընդարձակ, ընդելուզանել, ընդոծին, ընթեռնուլ և այլն:

Ըստ նախդիրը նախածանցային կիրառությամբ է հանդես գալիս, երբ փոխակերպվում է ըստ+խնդիր կապակցությունը: ***Ըստանձնել*** բայը ստացվել է ***ըստ անձին*** կապակցությունից, ունի շեղվող ***իր վրա*** իմաստը:[1] Բառակազմության մեջ ***ըստ*** ածանցը հանդիպում է թե՛ ըստ, թե՛ ***ստ*** ձևով:ՆՀԲ և ՀԱԲ՝ ըստանձնեմ, ըստարտուդիմ, ըստգիւտ, ըստգտանեմ, ըստեզրագոյն, ըստերիւրեմ, ըստիւրաքանչիւր, ըստհուն, ըստմիոջէք, ըստնմայք, ըստօրէն և այլն:

Նախդիրների քերականական գործառույթը դրսևորվել է շարահյուսական մակարդակում: Գրաբարում նախդիրները դրվել են թեք հոլովաձևերի վրա, արտահայտել տարբեր հարաբերություններ,ձևավորել լրացումներ, հատկապես բայի: Այդ տարաբնույթ հարաբերությունների մի մասը կարող է արտահայտվել հոլովաձևերով, մի մասն էլ՝ ոչ: Առ, ընդ, ըստ, զ, ի(յ) նախդիրները բազմիմաստ են, կարող են գործածվել տարբեր հոլովաձևերի հետ, արտահայտել բազմազան իմաստներ: Շատ դեպքերում նույն իմաստն արտահայտվում է տարբեր նախդիրներով ու նախդրավոր կառույցներով, բայց տարբեր նախդիրների ձևավորած նույն անդամը իմաստային նրբերանգներ ունի: Սակայն ինչպես նշում է լեզվաբան Վ. Քոսյանը, նկատելի է, որ նախդիրների իմաստները շատ ընդհանուր են, երբեմն ոչ հստակորեն տարբերակված: Այս հանգամանքն է պատճառը, որ հնարավոր է դարձնում նախդիրների գործածությունը մեկը մյուսի փոխարեն: Այսպես՝ նույն իմաստով կարող են գործածվել ***ի*** և ***ընդ, ի*** և ***առ, ի*** և ***զ, առ*** և ***ընդ*** նախդիրները:[2]

Թե՛ ժողովրդական բանահյուսական հատվածներում, թե՛ հայ հին մատենագրության մեջ լայնորեն կիրառված են նախդիրները, որոնք ամենից շատ մասնակցում են բայական անդամների լրացումների ձևավորմանը: Թեք հոլովաձևերի հետ նախդիրների իմաստային դրսևորումները ներկայացրել է գրաբարի հմուտ մասնագետ Ա. Աբրահամյանը:[3] Վ. Քոսյանը ավելի մանրամասն և ընդգրկուն է ներկայացրել նախդրավոր կառույցներով արտահայտվող խնդրային ու պարագայական իմաստները գրաբարում:[4]

Առ և ***զ*** նախդիրները գործածվում են տրական, հայցական, բացառական, գործիական, ընդ նախդիրը սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ըստ և ի նախդիրները՝ տրական, հայցական, բացառական հոլովների, ց նախդիրը՝ միայն հայցական հոլովի հետ: Նախդրավոր կառույցներով արտահայտվում են հանգման, մատուցման,

---

[1] *Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Շարահյուսական ուսումնասիրություններ,Երևան, 2003, էջ 133:*

[2] ***Քոսյան Վ.**, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 184:*

[3] *Տե՛ս **Աբրահամյան Ա.** , Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 230-262:*

[4] *Տե՛ս **Քոսյան Վ.**, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 182-258:*

վերածման, հաղորդման, ուղղության, վերաբերության, փոխադարձ կապի, միասնության, համեմատության, փոխարինության, միջոցի, ներգործող խնդրի, սահմանափակման, որոշյալության, տեղի, պատճառի, ժամանակի, ձևի, նպատակի, հիմունքի, պարառական, չափի և շարահյուսական այլ իմաստներ:

Միջին հայերենում նախդիրների գործածությունը աստիճանաբար դադարել է, իսկ ժամանակակից արևելահայերենին այնքան էլ բնորոշ չէ: Արևմտահայերենը մասնակիորեն պահել է ***զ*** նախդիրը, հատկապես դերանունների հայցական հոլովում:Արդի արևելահայերենում գրաբարի ***ի, առ, ըստ*** նախդիրները դիտվում են պարզ կամ արմատական կապեր (ի՝ նպատակի, առ՝ ժամանակի, սակավ դեպքերում՝ վերաբերության, ըստ՝ հիմունքի): Նրանցից համեմատաբար գործուն են ***ի***-ն և ***ըստ***-ը (ի բարօրություն, ի գիտություն, ի կատարումն, ըստ օրենքի, ըստ կարգի, ըստ սովորության և այլն): Առ նախդիրը գործածվում է հիմնականում վարչագործարարական ոճում, վիճակագրական, գրասենյակային գրագրության մեջ՝ տրվում է սույնը ***առ*** այն, ***առ*** մեկը նոյեմբերի, այլն՝***առ*** ուսումը , ***առ*** հայրենիքը:[1]

Գրաբարի նախդիրները աշխարհաբարում պահպանվել են գրաբարյան քարացած նախդրավոր կառույցներում (ի փառս, ի դէմս, ի հաշիւ, ի տեղի (խմբագրի), ի միջի այլոց//իմիջիայլոց, ի ծնէ, ի հեճուկս, ի վերջոյ, դէմ առ դէմ, մէկ առ մէկ, բառ առ բառ, առ այսօր//առայսօր, առ այն, ըստ արժանւոյն, մի ըստ միոջէ, ըստ իս, ըստ այնմ, ըստ երեւոյթին, ըստ որում, ըստ ամենայնի և այլն: Շատ կիրառություններում նախդիրները միացել են բառերին, վերածվել բառակազմական ձևույթի՝ ի ուրախութիւն› յուրախութիւն› հուրախություն, ի օգուտ › յօգուտ › հօգուտ, ի առաջ › յառաջ› հառաջ, վայր ի վերոյ › վայրիվերո, առ անձին › առանձին , օր ըստ օրէ › օրըստօրէ և այլն:

Այսպիսով՝գրաբարում նախդիրը քերականական իմաստ ունեցող խոսքի մաս է, արտահայտում է բառերի լրացական հարաբերություն: Նախդիրները գրաբարում ունեցել են նաև բառակազմական գործառույթ. մի շարք բառերում նրանք երկրորդական բառակազմական ձևույթ են:

---

[1] ***Աբրահամյան Ս.***, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառային ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան,1965, էջ 296:* ***Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.***, *Ժամանակակից հայոց լեզու , հ. 2, Հնչաբանություն, Երևան, 1974, էջ 493:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ.,** Երկեր, Զ հատոր, Երևան, 1974:
2. **Աբրահամյան Ա.** , Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964:
3. **Աբրահամյան Ս.**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառային ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան 1965:
4. **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու , հ. 2, Ձևաբանություն, Երևան, 1974:
5. **Աճառյան Հ.,** Լիակատար քերականություն հայոց լեզվի,Երևան,1965:
6. **Աճառյան Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. Ա,1971, հ. Բ, Երևան,1973, հ.Դ , Երևան, 1979:
7. **Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ.,Աւգերեան Մ.,** Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.Ա,Երևան,1979:
8. **Մանուկյան Գ.,**Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Երևան, 2002:
9. **Ջահուկյան Գ.,** Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003:
10. **Քոսյան Վ.,** Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ. Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Նունե ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՊՀ Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: Khachatryan-15@mail.ru

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՌՈՒՍԱԲԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՄԵՐՕՐՅԱ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվական խաթարումների պատճառ են դառնում հայերենի լեզվամտածողությանը անհարիր կառույցները, օտարաբան արտահայտությունները :Սույն հոդվածում քննում ենք շարահյուսական ռուսաբան սխալ մի շարք կառույցներ և գրական արևելահայերենի օրինաչափություններով պայմանավորված դրանց կանոնական,ճիշտ ձևերը :
Ռուսերեն բառերի բազմիմաստության անտեսման հետևանքով առաջանում են սխալ կապակցություններ: Այդպիսի սխալները հետևանք են տվյալ բառի իմաստը չհասկանալու և կառույցների մեխանիկական գործածության: Յուրաքանչյուր երևույթի համար հոդվածում բերում ենք համապատասխան օրինակներ:
Բանալի բառեր՝ *ռուսաբանություն, բառակապակցություն, պատճենումներ, բազմիմաստություն, լեզվամտածողություն, ռուսաբան կառույցներ, կապային կառույց, մերժելի կաղապար, բառացի թարգմանություն, լեզվական սխալներ:*

Н.Хачатрян

СИНТАКСИЧЕСКИЕ РУССКОЯЗЫЧНЫЕ СТРУКТУРЫ В ПОВСЕДНЕВНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Причиной языковых неточностей становятся структуры не соответствующие языковому мышлению армянского языка, иноязычные выражения. В этой статье рассматриваем ряд ошибочных русскоязычных строений и их принятые, правильные формы, обусловленные закономерностями литературного восточноармянского языка.
В результате игнорирования многозначности русских слов образуются неправильные связи слов. Такие ошибки являются следствием непонимания смысла данного слова и механического использования структур. Для каждого явления в статье приводятся соответствующие примеры.
Ключевые слова: *русскоязычность, словосочетание, ксерокопии, многозначность, языковое мышление, русскоязычные структуры, связующая структура, неприемлемый шаблон, дословный перевод, языковые ошибки*

N. Khachatryan

SYNTACTIC RUSSIAN-LANGUAGE STRUCTURES IN EVERYDAY ARMENIAN

The reason for language inaccuracies are structures that do not correspond to the language thinking of the Armenian language, foreign language expressions. In this article, we consider a number of erroneous Russian-language structures and their accepted, correct forms, due to the regularities of the literary Eastern Armenian language.

The result of ignoring the polysemy of Russian words are formed the wrong word connections.. Such errors are the result of a lack of understanding of the meaning of the word and the mechanical use of structures. For each phenomenon, the article provides relevant examples.

Keywords: *Russian speaking , word combination, photocopies, polysemy, language thinking, Russian-language structures, linking structure, unacceptable template, literal translation, language errors*

Լեզվական ամեն մի շեղում սկսվում է առանձին մարդկանց կողմից և հետո միայն դառնում ընդհանրական: Եվ սրա դեմ պայքարելու եղանակներից մեկը նույն անհատական ջանքերի գնով ճիշտ կիրառություններին վերադառնալն է:

Լեզվական խաթարումների պատճառ են դառնում հայերենի լեզվամտածողությանը անհարիր կառույցները, օտարաբան արտահայտությունները: Վերջիններիս անհարկի գործածությունը բնորոշ է մտավորականների, ուսանողների շրջանում:

Որո՞նք են դրանց գործածության պատճառները: Դրանցից առաջնայինը խոսողի մտածողության անհատականությունն է, որը դրսևորվում է բանավոր խոսքում: Խոսելիս նրանք գործածում են որոշակի կայուն կապակցություններ, շարահյուսական սխալ կառույցներ. այդպիսի սխալները հետևանք են տվյալ բառի իմաստը չհասկանալու և կառույցների մեխանիկական գործածության:

Այս հոդվածում կներկայացնենք շարահյուսական *<u>ռուսաբան սխալ մի շարք կառույցներ</u>* և գրական արևելահայերենի օրինաչափություններով պայմանավորված դրանց կանոնական, ճիշտ ձևերը:Դա ոչ միայն սխալի ճանաչման, այլև ճիշտ տարբերակի ընտրության, դրա կիրառման հմտություններ ու կարողություններ ձևավորելու նպատակ ունի:

Ռուսաց լեզվից նույնությամբ ընդօրինակվում են այնպիսի շարահյուսական կառույցներ, որոնք խորթ են մեր լեզվամտածողությանը: Օտարաբանության հետևանք է **ինձ մոտ** կապային կառույցի անհարկի գործածությունը որոշ նախադասու-թյուններում: Ռուսերեն **У меня это не получается նախադասությունը բառացի թարգմանելիս հայերենում սխալ է հնչում.** <u>Ինձ մոտ դա չի ստացվում</u>: Ճիշտ տարբերակն է՝ **Դա ինձ չի հաջողվում :** Մեր լեզվում **մոտ** բառը ճշգրիտ իմաստ ունի,նշանակում է *կողքին,մերձակայքում, ոչ հեռու*:Հետևաբար սխալ է վերը նշված իմաստով գործածելը: Պետք է խուսափել **մոտ** կապի այն սխալ գործածություններից, երբ

ստորադասվելով անձ ցույց տվող բառին՝ չի ունենում իմաստի որոշակիացում:
Ինձ մոտ հարց առաջացավ սխալ կառույցին փոխարինում է **ես հարց ունեմ** ճիշտ կառույցը: **Սխալ է՝** Մեզ մոտ չեն ծխում **/ у нас не курят** / կառույցը . **ճիշտ է՝ Այսինչ տեղում՝հիմնարկում չեն ծխում: Սխալ է՝** Մեզ մոտ այսինչ սովորույթը կա/ **у нас есть такой обычай** /, ***ճիշտ*** **է՝ Մենք այս սովորույթն ունենք:** Կամ՝ Քեզ մոտ դա կլինի **/ у тебя это найдется/, փոխանակ՝ Դու դա կունենաս :** Իր մոտ գիրք ուներ **/при себе имел книгу/սխալ արտահայտության փոխարեն պետք է գործածել՝ Գիրք ուներ**: Տարածված են նաև նման սխալ կիրառությունները.Նրա մոտ լավ հատկանիշներ կան, փոխանակ՝ **Նա լավ հատկանիշներ ունի,** Դա նրա մոտ լավ է ստացվում , փոխանակ՝ **Նա դա լավ է անում:**

Մոտ կապի գործածությունը **մերժելի է նաև ես ինձ մոտ եմ, դու քեզ մոտ ես / я у себя,ты у себя/** կապակցություններում:Վերջիններիս փոխարեն անհրաժեշտ է գործածել **ես տեղում եմ, դու տեղում ես** տարբերակները:

Հաճախադեպ են **վրա** կապի ռուսաբան գործածությունները ,որոնք առաջացնում են հայերենին խորթ օտարաբան կառույցներ՝ **բաժանել հինգի վրա. փողոցի վրա, հրապարակի վրա տեղի ունենալ** :Այս բառակապակցությունները **հարկ է գործածել առանց վրա կապի,ինչպես՝ բաժանել հինգի: Հայերենում գործողությունները տեղի են ունենում փողոցում , հրապարակում , ոչ թե դրա վրա:**

Ռուսերեն բառերի բազմիմաստության անտեսման հետևանքով առաջանում են սխալ կապակցություններ,ինչպես՝ *տեսակետի վրա* կանգնել**/стать на точку зрения/:** Ռուսաբանություն են և **կանգնելը**, և **վրա** կապը: Հանձնարարելի են **տեսակետին հարել, տեսակետը պաշտպանել:** Մեկի կամ մի բանի վրա դուրս գալ **/выйти на кого/что/** սխալ արտահայտության փոխարեն **պետք է գործածել հետքը գտնել :**

Ռուսերենից **вместе с-** կապակցությունը պատճենելով՝**հետ միասին** կառույցն են գործածում. Ընկերների հետ միասին մեկնելու է, փոխանակ՝ **Ընկերների հետ մեկնելու է. միասին** բառը ավելորդ է: **Հետ, միասին** բառերը մերձիմաստ են, ուստի սխալ է դրանք կողք կողքի գործածելը:

Հայերենում **համարվել, դառնալ** ու այլ բայերի հետ ավելորդ տեղը **որպես** կամ **իբրև** բառերն են գործածվում : Սա առաջացել է ռուսերենի **считать как** կապակցության բառացի թարգմանությունից. ինչպես՝ Նրանք մինչև հիմա համարվում էին իբրև վկաներ.ճիշտ տարբերակն է՝**Նրանք մինչև հիմա համարվում էին վկաներ/**առանց **իբրև** բառի գործածության**/:** Կամ՝Տունը նրա համար դառնում է որպես օջախ, ճիշտ է՝ **Տունը նրա համար դառնում է օջախ** /առանց **որպես** բառի **/:**

Բերենք այլ օրինակներ՝ շարունակում է մնալ որպես ամենակարևոր օղակը, փոխանակ՝ **Շարունակում է մնալ ամենակարևոր օղակը/**

առանց **որպես** բառի/, Նա եղել է որպես գործող անձ, փոխանակ՝ **Նա եղել է գործող անձ,** Աշխատանքը գնահատել է իբրև ծայրահեղ անբավարար, փոխանակ՝ **Աշխատանքը գնահատել է ծայրահեղ անբավարար**:

Ռուսերենի ազդեցությամբ պայմանավորված՝ նմանատիպ մերժելի կառույցներ են. վկայել մի բանի մասին , ուշադրություն դարձնել մեկի կամ մի բանի վրա:Վկայել ինչի մասին սխալ կառույցը ռուսերեն **свидетельствовать о чем** կաղապարի թարգմանությունն է. ոչ թե վկայել ինչի մասին ,**այլ վկայել ինչը:** Այսպես՝ ոչ թե՝ Այդ մասին են վկայում կուսակցությունների ծրագրերը, այլ **Այդ են վկայում կուսակցությունների ծրագրերը**:Կամ՝Տառապել ինչով. ռուսերեն՝ **страдать чем** կապակցությունն է. տառապել ոչ թե անքնությամբ,**այլ անքնությունից**:

Հաճախ գործածում են կայուն կապակցություններ,սխալ կառուցվածքներ, որոնք հետևանք են տվյալ բառի իմաստը չհասկանալու: Մեր խոսքի մեջ շատ են տարածված հետևյալ մերժելի արտահայտությունները. հետաքննություն է գնում,խոսակցություններ են գնում. սրանք ռուսերենից պատճենումներ են. **идет расследование,ходят слухи**: Ռուսերենում լիովին ճիշտ են հնչում,իսկ հայերենում՝ոչ: Օտարաբանություն է **գնում է** ձևի գործածությունը:Հայերենում ճիշտ են հետևյալ տարբերակները.**հետաքննություն է տեղի ունենում, խոսակցություններ կան կամ լսվում են:**

Հաճախ **позволять/ թույլ տալ, թույլատրել/** բառի հետևողությամբ ասում ենք՝ թույլ է տալիս եզրակացնելու: Սա սխալ արտահայտություն է: Դրա փոխարեն հարկ է գործածել՝ **հիմք է տալիս եզրակացնելու** կառույցը: Շահագործման մեջ կմտցվեն/ **ввести в эксплуатацию/.** դրա փոխարեն հանձնարարելի է **Շահագործել կսկսեն** կառույցը, Հետևել է ի պատասխան /**следовать в ответ/** մերժելի կաղապարի փոխարեն ընդունելի են **եղել է, տրվել է ի պատասխան** կապակցությունները:

Я себе представляю կապակցությունը բառացի թարգմանում են այսպես՝ Ես ինձ պատկերացնում եմ, և կազմում են հետևյալ սխալ նախադասությունը. Ես ինձ պատկերացնում եմ, թե հիմա այնտեղ ինչ է կատարվում.հանձնարարելի է՝ **Ես պատկերացնում եմ**/ առանց **ինձ** բառի/, **թե հիմա այնտեղ ինչ է կատարվում**:

Ռուսերենի ազդեցությամբ պայմանավորված՝ նմանատիպ մերժելի կառույցներ են առաջանում նաև **կանգնեցնել** բայի գործածությամբ. կանգնեցնել ավերածությունը, կանգնեցնել արտադրությունը, կանգնեցնել աշխատանքը:

Կանգնեցնել ավերածությունը ռուսերեն **/остановить разруху**/ կառույցի բառացի թարգմանությունն է: Կանգնեցնել ավերածությունը կապակցության մեջ **կանգնեցնել** բառի փոխարեն հանձնարարելի է

գործածել **դադարեցնել** բայը. **դադարեցնել ավերածությունը:** Կանգնեցնել արտադրությունը / остановить производство/ բառակապակցության մեջ **կանգնեցնել** բառի փոխարեն հանձնարարելի է գործածել **արգելել** բառը. **արգելել արտադրությունը.** կանգնեցնել աշխատանքը /остановить работу/ կապակցության մեջ **կանգնեցնել** բառի փոխարեն՝ **ընդհատել** բառը,այսինքն՝ **ընդհատել աշխատանքը:**

Հարցեր բարձրացնել ռուսերեն **поднимать вопросы** կապակցության բառացի թարգմանված ձևն է:Այս կապակցության մեջ **բարձրացնել** բայի փոխարեն անհրաժեշտ է գործածել **առաջ քաշել ,արծարծել** բայաձևերը,այսինքն՝ **հարցեր առաջ քաշել կամ արծարծել**: Տեղից բարձրանալ **/подниматься с места/** կապակցության փոխարեն՝ **ոտքի ելնել, ոտքի կանգնել:**

Մեր խոսքի մեջ շատ տարածված են հետևյալ արտահայտությունները. Համերգը տեղափոխվում է վաղը. Միջոցառումը լավ է ստացվել. Համերգը տեղափոխվում է վաղը/ **концерт переносится на завтра** /կառույցում **տեղափոխվել** բայը հարկ է փոխարինել **հետաձգվել, նշանակվել** բայերով: Պետք է ասել **Համերգը հետաձգվում է** կամ **Համերգը կայանալու է վաղը:** Միջոցառումը լավ է ստացվել **/представление получилось хорошим/**նախադասության մեջ **ստացվել է** բառի փոխարեն պետք է ասել. **հաջողվել է.**ինչպես՝ **Միջոցառումը հաջողվել է** :

Մերօրյա հայերենին խորթ են նաև հետևյալ նախադասությունները. Մեզ անհրաժեշտ է իմանալ, Ռուսաստանին հեշտ չի լինի հրաժարվել: Սրանք ռուսերենի տառացի պատճենումներ են: Մեզ անհրաժեշտ է իմանալ/ **нам надо знать**/ կառույցի փոխարեն հանձնարարելի է՝**Անհրաժեշտ է, որ մենք իմանանք**. կամ՝ **Մենք պետք է իմանանք**: Ռուսաստանին հեշտ չի լինի հրաժարվել **/России будет нелегко отказаться/նախադասության** ճիշտ տարբերակն է՝ **Ռուսաստանը հեշտ չի հրաժարվի:**Հայերենում գործողություն կատարողը/ենթական/ դրվում է ուղղական/բառի ուղիղ ձևն է/ հոլովով:

Շատ է չարաշահվում հետևյալ արտահայտությունը. Մեր հաղորդումը մոտեցավ ավարտին **/передача подошла к концу**/. ռուսերենի լեզվամտածողությանը գուցե և հարիր է, բայց հայերենի լեզվամտածողությանը անհարիր է: Ավարտին մոտեցավ՝ չի նշանակում ավարտվեց:Ամեն մի կառույց պետք է իր տեղում գործածել:

Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր,որոնք **վ** ածանցն ընդհանրապես չեն ընդունում:Նման բայերի ածանցավոր գործածությունը դիտվում է իբրև լեզվական աղավաղում: Հաճախ դժվարանում ենք կողմնորոշվել՝ **խնդրեց,թե խնդրվեց, կրկնել թե կրկնվել**: Շատ ենք լսում հետևյալ կապակցությունները. Խնդրվում է լռություն պահպանել , Խնդրվում է բեմ բարձրանալ և այլն:Այստեղ **խնդրվում է** բառը թարգմանությունն է ռուսերեն **просится** բառի: Անհրաժեշտ է ասել

կամ գրել՝ **Խնդրում ենք լռություն պահպանել, Խնդրում ենք բեմ բարձրանալ:** Ոչ քիչ ենք լսում հետևյալ նախադասությունը. Ես չեմ ուզում կրկնվել. սա ռուսերենի **Я не хочу повторятся** նախադասության բառացի թարգմանությունն է:Մեր լեզվով ճիշտ է հետևյալը՝ **Ես չեմ ուզում ասածս կրկնել:**

Հանդիպում ենք **որպեսզի, որ, եթե,թե** շաղկապների հետ անորոշ դերբայով գործածված մերժելի կառույցների,օրինակ. **Որպեսզի լողալ սովորել,պետք է մտնել գետը:** Սա ռուսերեն **чтобы учиться плавать,надо лезть в воду** կապակցության թարգմանությունն է: Մեր լեզվում **որպեսզի, որ, եթե,թե** շաղկապներին կարող են հաջորդել միայն խոնարհված բայով կապակցություններ, ի տարբերություն ռուսերենի: Այս օրինակի ճիշտ տարբերակն է՝ **Որպեսզի լողալ սովորենք,պետք է մտնենք գետը:** Բերենք այլ օրինակ. Եթե հաշվի առնել պայմանները,ապա դեպի մեզ կշրջվի:Սա ևս սխալ նախադասություն է:Հայերենում **եթե հաշվի առնել կամ նկատի ունենալ/ если учитывать/** չի լինի, կլինի այսպես՝ **եթե հաշվի առնենք կամ նկատի ունենանք** . որպեսզի իմանալ /**чтобы знать**/ չի լինի.կլինի՝ **որպեսզի իմանանք:**

Հաճախ ենք լսում՝ Որպեսզի վաղը աշխատանքից չուշանաք նախադասությունը:Սա ռուսերենից պատճենված ձև է՝ **Чтобы завтра на работу не опоздали**:Նույն **если, чтобы** բառերով ռուսերենում կարելի է պարզ խրատական նախադասություններ կազմել,իսկ հայերենում՝ ոչ: Այսպիսի նախադասությունները ամբողջական չեն, պետք է շարունակություն ունենան: Հայերեն պետք է պարզապես ասել. **Վաղը աշխատանքից չուշանաք**:

Ռուսերենում **если** բառով ամբողջական պարզ, իղձ արտահայտող նախադասություն են կազմում. **если моя мечта сбылась** կապակցությունը հայերեն պատճենում և գործածում են այսպես՝ Եթե միայն երազանքս իրականանար.սա կիսատ նախադասություն է:Նման միտք արտահայտելու համար մեր լեզվում այլ տարբերակներ կան.**Երանի թե երազանքս իրականանար:**

Պետք է կարողանանք խոսք կառուցելու դժվարությունները հաղթահարել,լեզվական մեղանչումները,սխալները իմանալ և դրանց ուղղումները յուրացնել: Հայերենը մեր հայրենիքն է և կարիք ունի ամենօրյա հոգածության:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ. Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 808.1
Գրականություն

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ, Հայ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.
E-mail: grakanutjunlragrutyun@mail.ru

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Սույն հոդվածում հեղինակը ներկայացնում է Մխիթարյան միաբանության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի գնահատականը միջնադարյան հայ պոեզիայի վերաբերյալ:
Կոնկրետ օրինակներով ընդգծվում է մեծ գիտնական-բանաստեղծի գրական հայացքների գործառնական նշանակությունը բոլոր ժամանակների համար:
Հոդվածը գրելու առիթը Ղ.Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանական տարին է: Անմահ բանաստեղծ, եվրոպական երկրների մի շարք ակադեմիաների անդամ Ալիշանը, խորապես ուսումնասիրելով հայ հին մատենագրությունը ու միջնադարյան հայ պոեզիան, հաստատեց, որ 10-18-րդ դդ ստեղծված հայ քնարերգությունը իր գաղափարական հագեցվածության ու գեղարվեստական ինքատիպ առանձնահատկություններով համամարդկային գեղարվեստական խոսքի փայլուն էջերից է:
Բանալի բառեր՝ *Ղևոնդ Ալիշան, Մխիթարյան Միաբանություն, պոեզիա, Նարեկացի, Շնորհալի, Նահապետ Քուչակ, շարական, բնապաշտություն, սիրային քնարերգություն, հայրենասիրություն:*

С.Ханян

ГЕВОНД АЛИШАН И АРМЯНСКАЯ СРЕДНЕКОВАЯ ПОЭЗИЯ

В данной статье автор представляет высокую оценку одного из знаменитых представителей Мхитаряновского братства Гевонда Алишана о средневековой армянской поэзии.
Конкретными фактами отмечается актуальное значение литературных взглядов великого ученого и поэта.
Поводом этой статьи является 200-летие со дня рождения Г.Алишана. Бессмертный поэт, член академии многих европейских стран, Г.Алишан глубоко изучая труды историографов и армянскую поэзию, подтверждает, что армянская лирика созданная в 10-18 веках своей идейной насыщенностью и художественной самобытной особенностью является одним из светлых страниц общечеловеческой поэзии.
Ключевые слова: *Гевонд Алишан, Мхитаряновское братство, средневековая поэзия, Нарекаци, Шнорали, Наапет Кучак, шаракан,*

пантеизм, любовная лирика, патриотизм

S.Khanyan

GHEWOND ALISHAN AND ARMENIAN MEDIEVAL POETRY

In this article, the author presents a high assessment of one of the famous representatives of the Mkhitaryan brotherhood, Gevond Alishan about medieval Armenian poetry.
Concrete facts indicate the actual significance of the literary views of the great scientist and poet.
The reason for this article is the 200th anniversary of the birth of G. Alishan. An immortal poet, a member of the Academy of many European countries, G. Alishan deeply studying the works of historiographers and Armenian poetry, confirms that the Armenian lyrics created in the 10-18 centuries is one of the bright pages of universal poetry with their ideological richness and artistic originality.
Keywords: *Ghewond Alishan, Mkhitaryan brotherhood, medieval poetry, Narekatsi, Shnorhali, Naapet Kuchak, sharakan, pantheism, love lyrics, patriotism*

Դժվար է գերագնահատել հայ մշակույթի գերաստղերից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի տեղն ու դերը հայ նոր պոեզիայի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև հայագիտության բազմաշերտ բնագավառներում: Որպես բանաստեղծ, բանասեր, պատմագիր, աշխարհագետ, թարգմանիչ, հնագետ, վիմագետ՝ նախադեպը չունեցող անհատականություն է նա, որը մեկուկես դարից ավելի է, ինչ իր գրական, գիտական հարուստ ժառանգությամբ վերածնում է իրեն ծնող ժողովրդին՝ հայացքը հառած գալիք սերունդներին այնպես, ինչպես Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Պարոնյանը և այլ հսկաներ: Նշենք, որ Ալիշանի գործունեությունը սերտորեն կապված է եղել Մխիթարյան միաբանության հետ: Հայ ժողովրդի վտանգված ճանապարհին ճակատագրական մեծ նշանակություն ունեցող երևույթ էր Մխիթարյան միաբանության ստեղծումը՝ Մխիթար Սեբաստացու ղեկավարությամբ:

Պատահական չէ Հայոց հեղափոխական մտքի թևաբաց արծիվ Միքայել Նալբանդյանի բարձր գնահատականը Մխիթարյան միաբանության և Մխիթարյանների մասին: Աշխարհայացքային որոշակի տարբերությամբ հանդերձ՝ Մեծն Նալբանդյանը արձանագրել է. «Մխիթարյան միաբանությունը, այդ մեզանից ընկած հատվածը, օտարության մեջ, պատերազմելով բազմադիմի նեղությունների հետ, քունը կտրել է հայոց հին լեզուն մշակելու ու ծաղկեցնելու համար, և եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը Մխիթարյանց շնորհիվ»: [1]:

Եվ ընդգծենք, որ հայոց ազգը Եվրոպային ներկայացնողների մեջ ամենահզոր դեմքը Մխիթար Սեբաստացու հանճարեղ աշակերտն էր՝ Ղևոնդ Ալիշանը, որը գիտության ասպարեզում հայ հանճարի հրաբխային ժայթքումով ներկայացավ Եվրոպային՝ դառնալով ֆրանսիական

[1] ***Մ. Նալբանդյան***, *«Երկերի լիակատար ժողովածու» վեց հատորով, հ. 2, Ե., 1980, էջ 273*

ակադեմիայի պատվավոր լեգեոնի դափնեկիր (1886), Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և դոկտոր (1897), անդամակցեց իտալական, ռուսական և այլ գիտական ընկերությունների: Եվ նա երջանիկ էր զգում իրեն առաջին հերթին նրանով, որ ինքն իրենով ներկայացնում էր իր պատմական հզոր անցյալ ունեցող, սակայն միջնադարյան մղձավանջային տարիներին օտար բռնակալների լծի տակ տառապող մայր ժողովրդի հրաբորբոք հանճարը: Եվ ոչ միայն այդ: Նա կոփվելով նախ Վենետիկի Ռափայելյան վարժարանում որպես ուսուցիչ, տեսուչ, «Բազմավեպ» հանդեսի խմբագիր, Փարիզի Մուրադյան վարժարանում՝ ուսուցիչ, 1872 թվականից ամբողջովին նվիրվեց գիտական գործունեության:

Գրական ասպարեզ իջնելով որպես բանաստեղծ՝ նա եռանդով շարունակեց Մխիթարյանների գրական ավանդները ու դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և համախմբման նվիրյալ ջահակիրներից մեկը:

Ղ. Ալիշանի պատմահայեցողությունը և հայագիտական գործունեության միտումը ճիշտ հասկանալու համար բավական է անդրադառնալ 1840-1852 թվականներին ստեղծած նրա պոեզիային՝ ամփոփված հինգ հատորյակներում՝ «Մանկունք», «Մաղթանք» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի» և վերջին հինգերորդ հատորը՝ «Տխրունի»խորագրերով: Խորանալով այդ ժողովածուների ենթատեքստերի աշխարհում՝ դժվար չէ նկատել, որ մեծանուն բանաստեղծը անձնական ապրումների համապատկերին ներկայացնում է մայր ժողովրդի հերոսական-արժանապատիվ անցյալը, բնարմատների անխափան ավիշը, պետականության կորստի ցավը: Ժողովրդի ճակատագրի ճշմարիտ պատկերը ներկայացնող հայոց բամբիռի լարերի հպարտ ու թախծոտ մեղեդիների փունջ են նրա ժողովածուները: Ալիշան-բանաստեղծի մտորումների հորձանուտում հայրենասեր ու ժողովրդանվեր սերունդ դաստիարակելու գաղափարն է ալեկոծվում: Դրա խոսուն վկայություններից է 1845թ. Ռափայելյան վարժարանում ծիածանված նրա խորհուրդը, «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք»[1]: Նշենք, որ այդ օրերին Իտալիայում ընթանում էր ժողովրդի ազատագրական պայքարը ավստրո-հունգարական զավթիչների դեմ: Ամեն դեպքում նրա ուշքն ու միտքը հայրենի երկրում էր, իր ճնշված ու հալածվող ժողովրդի մոտ: Տասներկուամյա Ղևոնդ (Քերովբե) Ալիշանը, որ հոր ցանկությամբ մեկնել էր Վենետիկի Սուրբ Ղազար վանքի դպրոցում («Ընծայարան») սովորելու, տարիք էր առնում ծննդավայրից հեռու՝ այդպես էլ երբեք ոտք չդնելով հայրենի հողին: Պարզվում է, որ հայրենիքի հանդեպ ծփացող կարոտը աչքեր ունի, որ հեռվից ամեն պահ տեսնում է իր հայրենի հողը, հարազատներին: Պարզվում է, որ այդ կարոտը ոտքեր ունի, որ կարող են հեռվից-հեռու քայլել հայրենի եզերքի բոլոր ծայրերում, ինչպես նաև ունի ձեռքեր, որ ունակ են անգամ տիեզերական

[1] *«Բազմավեպ», 1845, հ. 22, էջ 343*

հեռուներից գրկել հարազատներին, փարվել այն հողին, որ ավիշն ու կանչն են մարդու արյան հյուլեռում: Ղևոնդ Ալիշանի կյանքն ու գործը քաղաքացու աստվածային այդ առեղծվածների վկայությունն են:

Հասակ առնելով Սուրբ Ղազար կղզում, այցելելով Հռոմ, Լոնդոն, Փարիզ, Բեռլին, Վիեննա, ուսումնասիրելով գրական այն հաղորդումները, ինչ ներկայացնում են հայ ժողովրդի պատմությունը՝ նա իր ստեղծած գրական ու պատմական երկերում որդիական կարոտած աչքերով տեսել է Հայոց աշխարհը, նրա հին թռիչքներն ու ժամանակի ծանրածանր վիճակը ու խորհե¯լ, խորհե¯լ ժողովրդին այդ ողբերգական վիճակից հանելու, փրկելու, ազատության երջանկաբեր ուղին հանելու մասին: Այդ երանելի օրերին հասնելու համար նա ուղիներ է որոնում ու գտնելով՝ խորհուրդներ է տալիս իր ժամանակակից սերնդին: Առաջին հերթին նա պատգամում է նոր սերնդին. «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն և զախորժակս նորա անվնաս, զհարազատ դպրութիւն նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն» [1]:

Խորապես գիտակցելով ազգային մշակույթի, առանձնապես գրականության ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը՝ նա հայացքն ուղղեց դեպի հայոց արվեստի անցյալը ոչ միայն գեղագիտական հաճույք ստանալու, այլև հոլովելու սեփական ժողովրդի ուժն ու կորովը՝ անցյալում անկախ պետություն ունենալու շնորհիվ, ընդգծելու ժողովրդի արժանապատվությունը պահպանող հերոս զավակների անձնուրացությունը, հայրենի օջախներն ու եզերքը պաշտպանելու համար չմոռանալ Ավետարանի հուսավառ պատգամը. «Սրով եկողը սրով էլ կընկնի»: Ահա ազգափրկիչ ու ազգապահպան այս գաղափար-միտումներով էլ Ալիշանը դիմել է նաև հայ պոեզիայի կարկառուն ներկայացուցիչների՝ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի, Ներսես Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու, Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Թլկուրանցու, Առաքել Բաղիշեցու, Գգրիգորիս Աղթամարցու, Նահապետ Քուչակի և մյուս տաղերգուների ստեղծագործությանը՝ հետևյալ հիմնական միտումներով. ըմբոշխնել հայոց մարդասիրական բազմերանգ պոեզիայի լավագույն նմուշները, հուսավառվել հայոց ժողովրդանվեր բանաստեղծների լավատեսական երկերի կրակով, թևավորվել նրանց հայրենասիրական գաղափարներով, օրինակ վերցնել նրանց ստեղծած պատմական-գրական կերպարների խիզախությունից, մարտնչել հայոց պետականությունը վերածնելու սրբազան նվիրումով, որպես ժողովրդի անվտանգության և հավերժական ապահովման երաշխիք: Նվիրյալ հայրենասեր քաղաքացիներ դաստիարակելու երազանքով նա նշում է. «…Բուն իսկ հայրենիք մեք եմք, անձն իւրաքանչիւր, և լաւութիւն մեր նեցուկք են նորա»[2]: Եվ նման կոչով մեկ

[1] *«Բազմավէպ», 1848, հ. 12, էջ 181*
[2] *«Բազմավէպ», 1845, հ. 22, էջ 343*

անգամ չի հանդես եկել իր սաների առջև, առանձնապես Ռաֆայելյան վարժարանում: Նա իր ելույթներով սաներին արիության դասեր էր տալիս. «Դրախտին Հայաստանի մէջ ծաղկիլը զմեզ չկրնար ազատե հիմակվան փուշերեն, որ լեցուն է ճամբնուս վրա: Մեր անանման դյուցազունք և քաջերն և երևելի մարդիկը չեն կրնար մեր գերութեան և խեղճութեան վիճակը մեզի մոռցնել… Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կըլլանք… Մեր ինչ ըլլալը մեզնե կախված է, անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեզ ճամբուն վրա, բայց մենք պետք է որ աչվընիս բանանք ու ոտվընիս շարժենք…»[1]: Շրջանցելով Ղ. Ալիշանի ելույթներն ու հոդվածները հայ հին մատենագրության վերաբերյալ՝ կոնկրետ անդրադառնանք նրա մտորումներին ու կարծիքին 10-18-րդ դարերի հայ պոեզիայի վերաբերյալ:

Ղ. Ալիշանը բարձր է գնահատում Գ. Նարեկացու պոեզիան: Նրա վերաբերյալ եղած բոլոր աղբյուրներին քաջածանոթ Ղ. Ալիշանը արդարամիտ ու խորաթափանց քննադատի հմտությամբ է մոտեցել Գ. Նարեկացու մասին հնչեցրած կարծիքներին: Օրինակ՝ նա չի ընդունել Գ. Ավետիքյանի այն կարծիքը, թե իբր Նարեկացին իր «Սուրբ Խաչի պատմություն»-ը գրելիս նյութին մոտեցել է ոչ լուրջ, ուստի «Ապարանից Ս. Խաչի պատմության» մեջ ուրիշ ձեռքից միջամտություններ կան: Խոսելով այս մասին՝ ականավոր նարեկացիագետ Պողոս Խաչատրյանը բերում է Ղ. Ալիշանի հետևյալ կարծիքը, որի հետ համամիտ է նաև ինքը Ալիշանի հետևյալ կարծիքին. «Գիրգոր Նարեկացի համեն գրվածուն ևս՝ Գրիգոր Նարեկացի է: Որպիսի և է առարկա ըլլա իր գրելիքը… հեղեղորեն թափե նկարագրությունը և հեղեղորեն փայլեցընե»[2]:

Պ. Խաչատրյանը վստահորեն ավելացնում է. «Ապարանից Ս. Խաչի պատմության» մեջ դժվար է որոշակիորեն մատնացույց անել օտար ձեռքի միջամտություն, ոչ նարեկացիական նախադասություն կամ կապակցություն (Ավետիքյանի նկատառումները համոզիչ չեն): Եվ հասկանալի է Ալիշանի հիացումն առանձնապես «այդ գործի ոճով»: Խաչատրյանը կրկին ու կրկին դիմում է Ալիշանի ծանրակշիռ կարծիքին. «Կրնա ըսվիլ, թե ոչ միայն մեր ազգի պատմական գրվածոց, այլ թերևս և ամենայն ազգաց սա գերաթռույց պատմվածն է, կարծես թե ոչ միայն մտոքն (իմաստյոքք), այլև շարաբանությամբն թռչի…»[3]:

Գ. Նարեկացու ամբողջ ստեղծագործությունը գտնվել է Ղ. Ալիշանի ուշադրության կենտրոնում: Նրա գնահատականները Նարեկացու տաղերի մասին լինեն, թե «Մատյան ողբերգության» պոեմի, այսօր էլ գործառնական մեծ նշանակություն ունեն:

Ուշագրավ երևույթ է Ղ. Ալիշանի գնահատականը Գ. Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագ Իմաստասերի ստեղծագործությանը: Գրիգոր

---

[1] *«Բազմավէպ», 1848, հ. 5, էջ 66-67*

[2] ***Պ. Խաչատրյան**, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1896, էջ 92*

[3] *Նույն տեղում, էջ 92-93*

Մագիստրոսին բնութագրում է որպես իմաստուն և հանճարեղ թե՛ հայկական և թե՛ հունական դպրութեան մեջ…[1]

Ղ. Ալիշանը ընդգծում է Գ. Մագիստրոսի գիտելիքների հարստությունն ու խիզախությունը, որոնց շնորհիվ Բյուզանդական կայսրության կողմից ստանում է մագիստրոսի և դքսության աստիճաններ, ու վստահվում երկրի արևելյան սահմանների պաշտպանությունը: Նա գրում է. «Գրիգոր Մագիստրոս իր ընդարձակ իշխանութեամբ և հարստութեամբը յարմար առիթ և դիւրութիւն ունեցաւ իր մտաւոր և հոգևոր ախորժակները բանեցնելու. գրասիրութեան հետ՝ հոգեսիրութեան եռանդն ալ ունէր, և այն ալ իբրև ժառանգութիւն մը ի հարց և «ի նախնեաց, որով և իրենց վեհագոյն նահապետին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ համանման յաջորդաց արժանաւոր ցեղապետ եղաւ: Իշխանական զորութեամբ խաղացընելով իր սահմանները, ջանաց թէ զինուց թէ բանից ուժով նուաճել նաև մտաւոր մոլորութիւնները, մասնակորապէս Թոնդրակեցի Հայ աղանդաւորաց դէմ վիճնցաւ, և ամենևին անհաւանները և պիղծերը բռնութեամբ ալ պատժեց և խոշտանգեց, ինչպէս Մեծն Սահակ իր ատենի բարբորիտոնները: Իսկ ուր որ հաւանութիւն և խաղաղութիւն կար՝ հոն ձեռք և ստակ ալ տալով՝ կանգնեց բարեկարգեց վանքեր, և անոնց մէջ ուսումնարաններ, ուր որ նոր պիտանի գիրք մը գտնէր, կամ օրինակել կու տար. ուր որ գիտնական մը կար՝ անոր հետ կը թղթակցէր, ոչ միայն ընդ ազգայինս, այլ և ընդ Յոյնս, Ասորիս, Արաբացիս և Պարսս, որոց լեզուաց ալ բաւական հմտութիւն ունէր. ինչպէս վկայեն իր մնացեալ գրուածին, մանաւանդ Քերականութիւնն և Թուղթքն»[2]:

Ալիշանն անդրադարձել է նաև Գ. Մագիստրոսի որդուն՝ Վահրամին, որ թարգմանություններ է կատարել հունարենից և ասորերենից և կոչվել Վկայասեր:

Ալիշանը Հովհաննես Սարկավագին գնահատում է որպես ժամանակի ամենահանճարեղ գործիչ: «Մեր հայ գրագիտաց ամենէն հանճարեղներէն և ճարտար գրողներէն մեկն է ԺԱ դարուն վերջերում, ԺԲ-ին սկզբներում»: Նա նշում է, որ Հովհաննես Սարկավագը քահանա էր, թեպետ գրական անունը հոլովվում էր Սարկավագ:

Ղ. Ալիշանը նշում է, որ Հ. Սարկավագի բանաստեղծությունները գրված են իմաստասիրական ոճով, որտեղ նա փառաբանել է Հայոց Տրդատ արքային, սուրբ հայրապետ Ներսես Մեծին, սքանչելի Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին, որոնց շնորհիվ իր պայծառությամբ փայլում է Հայոց եկեղեցին: Պատահական չէ, որ վրաց Դավիթ թագավորը մեծարել է նրան, երբ նրան լսել է Թիֆլիսում:

Հ. Սարկավագի ստեղծագործությունը մշտապես գրավել է Ղ. Ալիշանին: Եվ նա մեկ անգամ չի հանդես եկել նրա երկերի գնահատմամբ: Առաջին անգամ Ղ. Ալիշանն է հրատարակել Հ. Սարկավագի ամբողջական աղոթագիրքը: 22 աղոթքներից բաղկացած այդ ժողովածուի մեջ

---

[1] ***Ղ. Ալիշան***, *«Շնորհալի եւ պարագայ իւր», էջ 209*

[2] *Նույն տեղում, էջ 25*

Սարկավագը դիմում է Աստծուն, Քրիստոսին, Սուրբ Հոգուն և Աստվածամորը:

Ղ. Ալիշանի՝ հայ միջնադարյան պոեզիայի մասին գրած գիտական աշխատությունները, առանձնապես Ներսես Շնորհալուն նվիրած ստվարածավալ աշխատությունը հետագա տարիներին դարձել են տասնյակ անվանի բանասերների ուսումնասիրության առարկա:

Նրանում նախ՝ ներկայացնելով Ն. Շնորհալու մանկությունն ու պատանեկությունը՝ Ղևոնդ Ալիշանը նշում է Սև լեռան վրա կառուցված սրբավայրերը, որտեղ տարբեր ազգերի քրիստոնյա ճգնավորներ էին աղոթում: Այդ կապակցությամբ Ալիշանը բերում է Ն. Շնորհալու հետևյալ բանաստեղծությունը.

Անդ՝ ուր սրբոցըն բնակք եղեալ
Եւ ի մարմնի հրեշտակացեալ,
Մշտամռունչ փառաբանեալ
ԶԵրորդութիւնն ամենօրհնեալ.
Ի վայելուչ յայն լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ[1]:

Սև լեռան վանքերում հոգևոր կրթություն ստացած աստվածաշնորհ գործիչների շարքում Ղ. Ալիշանն առանձնացնում է չորս հոգու՝ Ղուկասի ավետարանի մեկնիչ Իգնատիոս եպիսկոպոսին, կաթուղիկեանների թղթերի մեկնիչ Սարգիս վարդապետին և Պահլավունի երկու հարազատ եղբայրներ Գրիգորիսին ու Ներսեսին, «որոց նման մաքուր և շնորհազարդ գրողք կամ չեն եղած, կամ շատ քիչ իրենցմէ առաջ և ետև. և յետ Ե դարու թարգմանչաց»[2]:

Ղ. Ալիշանը, նկարագրելով Ն. Շնորհալու անցած ուղին, ընդգծում է նրա բանաստեղծական ինքնատիպ կարողությունը, ինչպես նաև հետաքրքրությունը Պլատոնի, Հոմերոսի, Արիստոտելի երկերի հանդեպ:

Անմահ գիտնականը Ն. Շնորհալուն համարում է ամենից զարգացածը ընկերների շարքում և պատահական չի համարում նրա Շնորհալի կոչումը: Նշելով մեծ բանաստեղծի 50 տարվա ստեղծագործական վաստակը ամենօրյա պաշտոնական զբաղվածության մեջ՝ Ալիշանը նրան համարում է եզակի դեմք 12-րդ դարի ամբողջ ընթացքում:

Ղ. Ալիշանը Ն. Շնորհալու ստեղծագործությունը քննարկում ու գնահատում է բազմակողմանիորեն՝ մատնանշելով նրա բերած նորությունները հայկական տաղաչափական արվեստի, վիպասանության, լեզվառճական առանձնահատկությունների բնագավառներում՝ ընդգծելով. «Եթե մեր լեզուին արձակաբանից մէջ առաջին կարգը կը դասուի Շշնորհալին, տաղաչափից մէջ առանց տարակուսի՝ նոյն իսկ առաջին տեղին ունի և միակ այս բանս կըրնար անմահական պարծանք ըլլալ. լեզուի

[1] *Նույն տեղում, էջ 48*
[2] *Նույն տեղում, էջ 51*

մը և ազգի մը նախադաս չափաբան, այսինքն ոտանաւոր բանիւ գրողն ըլլալ… վասնզի ոչ ոք իրմէ առաջ այնչափ տեսակ չափերով և ոճով երգեր, տաղեր և քերթուածներ գրած է»[1]:

Այստեղ Ղ. Ալիշանը մի կողմից՝ ինքը ներկայանում է որպես գրականության հմուտ տեսաբան՝ բանաստեղծական ոտքի տեսակները առնչելով լեզվի շեշտադրության հետ, մյուս կողմից՝ ըստ էության գնահատում է Ն. Շնորհալու բերած նորությունը տաղաչափության ասպարեզում՝ Գրիգոր Մագիստրոսից հետո:

Ղ. Ալիշանը բարձր է գնահատում Ն. Շնորհալու չափածոն նաև այն առումով, որ Ս. Երրորդության վրա իր մտորումների մեջ «Կերևի նաև ազգային եռանդուն ոգին, զոր չեն մարած հոգևոր և աստուածաբանական կրթութիւն, այլ իրենց գերագոյն լուսովը աւելի պայծառ և մաքուր ցուցընեն: Ասոնց վրայ՝ բաւական ճարտարութիւն ալ կ’երևի համառօտելու ազգին պատմութեան կարևոր յիշատակները և անձինքը, որով աւելի ախորժընթերց կըրնայ ըլլալ, քան իրմէ առաջ Խորենացին համառօտող արձակաբան պատմիչք»[2]:

Մատնանշելով Շնորհալու «Հիսուսորդի», «Ողբք Եդեսիոյ», «Բան հաւատոյ», «Վիպասանութիւն», «Ժամասացութեան երգերն», «Չարչարանաց և ննջեցելոց»և այլ շարականներ, նա ընդգծում է անմահ բանաստեղծի կողմից օգտագործված բանաստեղծական տարբեր չափերն ու ոճը, որոնց շնորհիվ նա մեծարվել է Վարպետ կոչումով:

Ղ. Ալիշանը իր հիացմունքն է արտահայտել նաև Ն. Շնորհալու ակրոստիքոսների վերաբերյալ, ինչպես նաև կրկնաձայնության օգտագործման կապակցությամբ:

Ականավոր գիտնականը ընդգծում է նաև Շնորհալու պոեզիայի անմիջականությունը՝ հեռու քարոզից: «Գալով քերդուածոց նիւթերուն կամ առարկային, յայդ է, որ ի Շնորհալւոյ աշխարհային և պարզ նկարագրական բաներ պետք չէ սպասել. ամէն գրուածն ալ հարկաւ բարոյական են, այլ ոչ զուտ խրատական կամ հոգևոր… Շնորհալին գիտած է զամենայն ի կրթութիւն մարդկան գրել և քերդել. և լաւ գիտէր, որ բարուց կրթութիւնն չէ միայն ի հոգի մարդուս, այլ և ի միտս և ի սիրտս. այս երեք զօրութեանց համար ալ գրած է զանազան բաներ»[3]: Այս դիտարկումից հետո Ղ. Ալիշանը Ն. Շնորհալուն աներկբայորեն համարում է առաջին բանաստեղծը հայ իրականության մեջ թե՛ նյութերի բազմազանության, և թե՛ տաղաչափության օրինաչափությունների առումներով: Գիտնականը Շնորհալու մեջ խտացված տեսնում է սիրտ-հոգի-միտք եռամիասնության միաձուլվածք: Այս ուղղությամբ Ն. Շնորհալուն համարում է հավասարը չունեցող անհատականություն, «անհաւասարելի հաւասարութիւն»:

---

[1] *Նույն տեղում, էջ 70*
[2] *Նույն տեղում, էջ 76*
[3] *Նույն տեղում, էջ 80*

Աշխատության «Է» գլուխը նվիրված է Ն. Շնորհալու երաժշտական արվեստին: Ու պատահական չէ, որ ժամանակակիցները՝ առանձնապես Սամուել Անեցին, նրան անվանել է «ԵՐԳԵՑՈՂՆ» ոչ միայն երգեր հորինելու, այլև աստվածանվեր ձայնով երգելու շնորհիվ:

Ղ. Ալիշանը իր աշխատության հաջորդ գլուխներում 12-րդ դարի քաղաքական հակասական իրադարձությունների համապատկերին ներկայացնում է Ն. Շնորհալու գործունեությունը Ծոփքում, Հռոմկլայում և բուռն նվիրումը որպես կաթողիկոս:

Ղ. Ալիշանը Ն. Շնորհալու բազմակողմանի գործունեությունը պատկերում է և՛ Կիլիկիայի, և՛ բուն Հայաստանի ազգային-քաղաքական, պատմամշակութային խաչմերուկներում: Դրանով իսկ նա ներկայացնում է Ն. Շնորհալու ժամանակաշրջանը և ստեղծագործության դարակազմիկ նշանակությունը: Ընթերցողը ծանոթանում է Մեծ Հայքի ծանր իրավիճակին, Անիի և անեցիների դրությանը, Գանձակի և Մխիթար Գոշի ճակատագրին, Հաղպատի և Սանահինի պատմական դերին: Եվ պարզ է, որ այդ դարաշրջանի հորիզոնի վրա Ն. Շնորհալու տաղանդի ծիածանն էր կամարված:

Ղ. Ալիշանի ուշադրությունից չի վրիպել Հայոց և Ասորաց կրոնական ընդդիմաբանությունը, որի հրամայականով Ն. Շնորհալին գրել է Թուղթ՝ Ասորաց մեջ այդ մոլորյալ շարժման մասին:

Դարաշրջանի քաղաքական իրադարձությունների հանգամանալից իմացությամբ Ալիշանը ափամեջ է դնում Հայաստանում, առանձնապես Կիլիկիայում կատարված իրադարձություններն ու տարբեր ժողովուրդների փոխհարաբերությունները, պատմում է Հայոց կաթողիկոսության և նորընծա Ռուբինյան պայազատների հարաբերությունների, շրջակա ազգերի ու տերությունների՝ հույների և լատինների, ինչպես նաև հենց մերոնց՝ Պահլավունի հայրապետների և Լևոնյան ու Հեթումյան թագավորությունների մասին: Ազդեցիկ դիրք ունեին նաև ասորիները:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Ն. Շնորհալին ակտիվ դիրք ուներ այդ հարաբերություններին խաղաղ ընթացք տալու ուղղությամբ: Ինչպես գրում է Ղ. Ալիշանը, «Շնորհալին ինչպէս տաղաչափութեան և այլևայլ բաներու մէջ, այսպէս և թղթեգրութեան, մեր դպրութեան մէջ նախադաս օրինակ է. այս բանի մէջ ալ՝ իր պապէն (Գրիգոր Մագիստրոսեն) զատ՝ ոչ ոք իրեն չափ թղթոց ավանդ թողած է մեզի, կամ պահուած և հասած է մեզ. և ամենքն ալ այսպես աստուածաբանական չեն, աւելի ընտանեկանք ալ կան»[1]:

Ալիշանը, հայ ժողովրդի ճակատագրի անվտանգության երաշխիքը համարելով միաբանությունը, անդրադարձել է նաև Աղվանից կաթողիկոսությանը: Ամենուրեք նկատելի էր Ն. Շնորհալու գործունեության վեհությունը:

Ղ. Ալիշանը աշխատության մի առանձին գլուխ նվիրել է Եդեսիա քաղաքի վտանգված ժամանակաշրջանին, որի հետևանքը եղավ քաղաքի գրավումը

[1] *Նույն տեղում, էջ 110:*

թուրք Զանգի ամիրայի կողմից: Ալիշանն այդտեղ անդրադառնում է Շնորհալու «Ողբ Եդեսիո» պոեմին՝ այն համարելով գլուխգործոց: Նա գրում է. «Իր երգած Եդեսիո ողբն՝ իր գործոց մէջ շատ նշանաւոր տեղ մը բռնած է, և քան զամեն քերդուածոն աշխուժիւ և ճարտարութեամբ գրուած, և ինչպէս իր պատմիչն կ'սե՝ «զամենայն ընթերցողս շարժեց»[1]:

Ալիշանն ավելացնում է, որ արդարև այս քերթվածքում Ն. Շնորհալին կատարել է նորանոր հնարանքներ՝ անձնավորելով Եդեսիան ողբերգական ապրումների մեջ: Հետևողականորեն վերլուծելով պոեմը՝ Ալիշանը բերում է նաև Շնորհալու մարգարեական խորհուրդը այն մասին, որ հայերը օտար ափերից վերադառնան Հայաստան:

Ներկայացնելով Հռոմկլա բերդը, որտեղ Շնորհալին գործունեություն ծավալեց Ծոփքից հետո, Ղ. Ալիշանը գրքում առանձին հատվածներ է բերում մեծ բանաստեղծի չափածոյից, որտեղ առանձին պատկերներ են նվիրված Հռոմկլայի դիրքին ու գեղեցկությանը: Ինչ վերաբերում է Շնորհալու «Բան հավատոյ», «Թուղթ առ Գր. Ապիրատ», «Հիսուս Որդի» երկերին, կրկին երևում է Ղ. Ալիշանի գրաքննադատական բարձր մակարդակը գեղարվեստական խոսքը դիտարկելու և արժևորելու ուղղությամբ:

Ն. Շնորհալուն նվիրած աշխատության վերջաբանը կարելի է համարել Ալիշանի գեղարվեստական լավագույն երկերի շարքը, որի քնարական հերոսները մի կողմից՝ Ն. Շնորհալին է, մյուս կողմից՝ գրքի հեղինակը՝ Ղ. Ալիշանը: Սույն աշխատությունը սովորական ուսումնասիրություն չէ, այլ հանրագիտարան, որտեղ ստույգ փաստերով ներկայացված են ոչ միայն Շնորհալին, այլև հայ դպրության Ոսկեդարը և հայ միջնադարյան պոեզիայի վերածնունդը 11-12-րդ դարերում:

***

Օրը օրին, տարին տարուն, դարը դարին հաջորդեցին Հայոց աշխարհում: Արյունարբու թշնամիները ևս հաջորդեցին միմյանց: Արաբական խալիֆայության զորքերը հեռացան պատմական ասպարեզից, Հայաստան ներխուժեցին սելջուկ-թուրքերը, ապա լենկթեմուրյան դահիճները, վերջնականապես պարսկական բռնապետությունն ու թուրքական սուլթանությունը բաժան-բաժան արեցին Տիգրան Մեծի ստեղծած ծովից ծով Հայոց երկիրը: Բայց Աստված Հայկ Նահապետից սերված ժողովրդի հետ էր, որովհետև երկրի պաշտպանության դիրքերում հառնել էին Հայկյան Արամն ու Արա Գեղեցիկը, Արտաշես Արքան ու Տիգրան Մեծը, որովհետև Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը Հայոց օջախներում հավատի ջահ էին դարձրել Քրիստոսի Լույսը, և այդ լույսի շողերի շաղախով հայոց այբուբենն էր կամարվել Սուրբ Մաշտոցի մտքով ու ձեռամբ: Ահա այդպես Հայկի և Մեսրոպի սերունդները մի կողմից՝ սրով, մյուս կողմից՝ գրով պաշտպանեցին Արարատված երկիրը՝ աշխարհին պարզելով գրականության և արվեստի այն գանձերը, որոնք ծիածանվեցին Խորենացի-

[1] *Նույն տեղում, էջ 199:*

Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս-Ներսես Շնորհալի, Ֆրիկ-Երզնկացի, Քուչակ-Սայաթ-Նովա և մյուս աստվածախոս մեծերի աստղաշող հոգուց: Եվ հետագա դարերում հանդես եկան այն մարգարեները, որոնք պետք է և՛ ստեղծագործեին և՛ գնահատմամբ մեծարեին նրանց, ովքեր արարել էին միջնադարյան հայ պոեզիան: Այդ մարգարեներից էր Ղևոնդ Ալիշանը, որը Ներսես Շնորհալուց հետո իր զրույցն սկսեց Հովհաննես Իմաստասերի ու Ֆրիկի, Հովհաննես ու Կոստանդին Երզնկացիների, Հովհաննես Թլկուրանցու ու Գրիգորիս Աղթամարցու, Մկրտիչ Նաղաշի ու Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի երգող հոգիների հետ, գրիչն առավ ու դարերին հանձնեց նրանց պոեզիայի մասին գոբելենի փոխված իր հայրական գնահատականը՝ այն կտակելով գալիք հայկազուն սերունդներին՝ հայ մշակույթը, հայ պոեզիան ըմբոշխնելու, նրանցով զինվելու՝ հանուն այն Հայաստանի վերածնման, որ ստեղծել էին Արտաշես Արքան ու Տիգրան Մեծը, պաշտպանել էին Վարդան Մամիկոնյանն ու Եսայի Ապու Մուսեն, Բագրատունյաց նվիրյալներն ու Ռուբինյան պայազատները: Ապա Հոմերոսի հանգույն եղեգնյա գրչով Նահապետի անունից դիմեց Ավագ Մասիսին ու հայ սերունդներին.

Շարժի՛ր, հա՛ շարժի՛ր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Շընչե՛, հա՛ շընչե ծրխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացըդ նըշան ըլնիս,
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք այլ շարժեցե՛ք, մանկըտիք հայկա[1]:

Այսօր հնչեցնելով Ղ. Ալիշանի «…Ուր որ հայրենի երգեր կլսվին՝ Հոն հայրենիքը ողջ է» տողերը՝ պարզենք մեր ձեռքերը առ երկինք, ուր նրա լուսավառ հոգին է և գոչենք. «Ով մեծն Ղևոնդ Ալիշան, Քո պատգամը մեր օրերում հնչում է հայոց հզոր բանակի դյուցազնասիրտ զինվորների շուրթերին, իսկ անունդ հնչում է որպես դարերից եկող մեր Տիգրանված նախնյաց ժառանգորդի սրբանուն: Փա՛ռք մեր ժողովրդին, որ ծնել է Քեզ ու փառք Քեզ, որ հանճարեղ որդու կյանքով ու գործով շարունակում ես վերածնել Քեզ աշխարհ բերած ժողովրդին»:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

[1] ***Ղևոնդ Ալիշան***, *Նվագներ, Հայպետհրատ, 1957, էջ 57*

ՀՏԴ 81՝28
Հայոց լեզու

Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՎՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ. գ. թ.

Գոհար ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լոռու մարզի Ջրաշեն համայնքի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՇԻՐԱԿԻ ԽՈՍՎԱԾՔԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՓՇՐԱՆՔ ՇԻՐԱԿԻ ԱՄԲԱՐՆԵՐԻՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Բարբառային բառարանի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բարբառային մի շարք բառեր բնորոշ են միայն Կարնո բարբառին: Վերջիններս արտահայտում են այդ բարբառախոսների լեզվամտածողությունը, կենցաղն ու առօրյան: Կատարելով այդ բառերի լեզվաբանական քննություն՝ դրանք դասակարգել ենք խոսքիմասային իմաստային խմբերով.
1. Գոյականներ՝ անձնանիշ և իրանիշ բառեր, տեղանուններ և այլն:
2. Ածականներ՝ անձնանիշ և իրանիշ գոյականներին բնութագրող բառեր:
3. Բայեր՝ անձնանիշ ենթակա պահանջող գործողություններ:
4. Մակբայ - Չևի և ժամանակի:
Կարնո բարբառում պահպանված եզակի կազմությունները երբեմն հնչյունական տարբերակներ են, որոնց զուգահեռ կան նաև հոմանիշ բաղադրիչով տարբերակներ:
Բանալի բառեր՝ *հեքիաթ, բառարան, ժողովրդական մտածողություն, կազմություն, կապակցելիություն, վերլուծություն, անձնանիշ և իրանիշ բառեր:*

Л.Петросян, Г.Торосян

ИСПОЛЬЗОВАНИЕ ДИАЛЕКТНЫХ СЛОВ, ХАРАКТЕРНЫХ ДЛЯ ШИРАКСОЙ ОБЛАСТИ, В СКАЗКАХ «КРОШКИ ИЗ АМБАРОВ ШИРАКА»

Анализ диалектного словаря показывает, что некоторые диалектные слова характерны только для каринского диалекта. Они выражают языковое мышление, образ жизни и повседневную жизнь людей, говорящих на этом диалекте. На основе лингвистического изучения этих слов мы классифицировали их на семантические группы в зависимости от того, к какой части речи они принадлежат.
1. Существительные - Слова, обозначающие людей и предметы, географические названия
2. Прилагательные -Слова, характеризующие существительные,

обозначающие людей и предметы.
3. Глаголы -Действие, требующее подлежащее, обозначающего человека
4. Наречия манеры и времени.
Единичные словообразования, сохранившиеся на каринском диалекте, иногда являются фонетическими вариантами слов. Параллельно существуют также варианты, содержащие синонимный компонента.
Ключевые слова: *сказка, словарный запас, народное мышление, композиция, связность, анализ, слова обозначающие людей и предметы.*

L. Petrsyan, G. Torosyan

THE USE OF DIALECT WORDS SPECIFIC TO SHIRAK REGION IN THE TALES OF "CRUMBS FROM SHIRAK'S BARNS"

The analysis of the dialectal dictionary shows that a number of dialectal words are typical only to the Karin dialect. They express the linguistic thinking, lifestyle and everyday life of the people speaking this dialect. Based on the linguistic examination of these words, we have classified them into semantic groups based on what part of speech they belong to.
1. Nouns - Words denoting persons, and objects, names of locations.
2. Adjectives - Words characterizing nouns that denote persons and subjects.
3. Verbs - An action that requires a subject denoting a person.
4. Adverbs of manner and time.
The sporadic word formations preserved in the Karin dialect are sometimes phonetic variants of words. Parallel to these words, there are also variants containing a synonym component
Keywords: *: fairy tale, vocabulary, folk thinking, composition, connectivity, analyse, person nords denoting persons, and objects.*

Հայկական ժողովրդական հեքիաթների բառապաշարի քննությունը բացահայտում է բարբառակիր համայնքի լեզվամտածողության մի շարք դրույթներ, որոնք հետաքրքրելի են և՛ լեզվաբաններին, և՛ բանագետներին, և՛ մանկավարժներին: Լեզվաբանական տեսակետից դրանք նշանային միավորներ են՝ կազմված բնիկ կամ փոխառյալ միավորներից, բանագիտության տեսակետից դրանք առարկայանիշ կամ հատկանիշ ցույց տվող միավորներ են, որոնք բնութագրում են հեքիաթների կերպարային համակարգը, իսկ մանկավարժության տեսակետից հեքիաթներն ունեն ուսուցողական, աշխարհընկալման կարևոր նշանակություն: Այս հոդվածով փորձել ենք միջգիտակարգային զուգահեռներով բացահայտել միայն Շիրակի խոսվածքին բնորոշ լեզվական մի քանի միավորների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով նորովի բացահայտել դրանց կապակցելիության սահմանները:

«Էմինեան ազգագրական ժողովածուի»[1] առաջին հատորում ամփոփվել են «Փշրանք Շիրակի ամբարներից» կոչվող ազգագրական նյութերը, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն «բնիկ Ալէքսանդրապօլցի Ալէքսանդր Ափրիկեանցի» [ՓՇա VIII] կողմից 1880 թ. գրառված հեքիաթները: Ինչպես ժողովածուի խնբագրակազմն է նկատել «…. ժողովրդական բանաւոր գրականութեան **գրականական** հետաքրքրութիւնից զատ, նկատելի է և նորա **լեզուաբանական** նշանակութիւնը գաւառաբարբառների ուսումնասիրութեան տեսակէտից»[2], քանի որ հայոց լեզվի պատմության, ազգագրության, պատմագրության, բանագիտության և այլ բնագավառների հետ առնչվող շատ հարցերի պատասխանը կարելի է գտնել բարբառների բառապաշարի ուսումնասիրության շնորհիվ[3]: Ընթերցելով Շիրակի բարբառին վերաբերող լեզվաբանական մի շարք ուսումնասիրություններ՝ պարզեցինք, որ առանձին ուսումնասիրված չեն այն բառերը, որոնք բնորոշ են միայն Կարնո բարբառին, բայց դրանք հաճախակի հանդիպող լեզվական միավորներ են, որոնք իրենց տարբեր արտահայտություններով գործածվել են Շիրակի հեքիաթներում: Նպատակ ունենալով բացահայտելու Կարնո բարբառի Շիրակի խոսվածքին բնորոշ բարբառայնությունները՝ դրանք ուսումնասիրել ենք որոնողական և զուգադրական մեթոդաբանությամբ:

Կարնո բարբառի հնչյունական և ձևաբանական հատկանիշները քննվել են Հ. Մկրտչյանի կողմից[4]: Սույն աշխատանքում մեր ուշադրությանն են արժանացել հատկապես Կարո բարբառի Շիրակի խոսվածքին բնորոշ բառային միավորները, որոնք դասակարգել ենք ըստ խոսքիմասային պատկանելության՝ զուգահեռաբար քննելով դրանց կազմության և կապակցելիության առանձնահատկությունները, քանի որ նշված բառերի իմաստների պարզաբանման համար անհրաժեշտ են թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Հավաքագրված բառապաշարը դասակարգել ենք խոսքիմասային պատկանելության՝ զուգահեռաբար քննելով դրանց կազմության և կապակցելիության առանձնահատկությունները, քանի որ նշված բառերի իմաստների պարզաբանման համար անհրաժեշտ են թե՛ մեկը, թե՛ մյուսը:

1. Իրանիշ **գոյականները** ներկայացվում են ինքնատիպ կապակցություններով, ինչպես՝ **չալի-չոթի** «1. Մացառ, խռիվ, ցախ-մախ: 2. Հնամաշ իրեր»[5] իմաստով հարադրությունը կիրառվում է որպես «թոփ էնել» ներգործական սեռի հարադրության լրացում, որը հնարավոր է մի դեպքում

---

[1] *Փշրանք Շիրակի ամբարներից, Հ. Ա, Մոսկուա-Ալէքսանդրապոլ, «Էմինեան ազգագրական ժողովածու» հրատարակութեամբ, 1901:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Բառնասյան Ջ.**, Կարնո բարբառի խոսվածքներին անդրադառնալու մի փորձ, էջ 112 / http://shirak.asj-oa.am/290/1/109-112.pdf (2.27.2020)*

[4] ***Մկրտչյան Հ.**, Կարնո բարբառը, Երևան, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի» հրատարակչություն, 1952, էջ 19:*

[5] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Դ, 2007:*

«ծախել», մյուս դեպքում՝ «վառել», օրինակ՝ *Ամեն օր կէրթար մեշեն էս հալիվորը,* ***չալի-չոթի*** *թոփ կէներ կը բերեր քաղաք, որը կծախեր, որն էլ տունը կը վառեր….* [ՓՇա 22][1]: Հեքիաթներում կիրառված մի շարք բարբառայնություններ բարբառագիտական բառարաններում վկայված չեն, ինչպես՝ **հաթահութ** գոյականը՝ «բարձր երաժշտություն» նշանակությամբ, վերջինս, որպես կանոն, գործածվում է գործիական հոլովով՝ որպես որոշիչ լրացնելով **հարսանիք** գոյականին, օրինակ՝***Հաթահութով*** *զբոլթի հարսնիքմ էրաւ* [ՓՇա 49]: «Գազար» նշանակությամբ **փուրչուլուկ** բառը փոխառություն-բուսանուն է, որ Կարնո բարբառի խոսվածքներում գործածական է նաև **փուրչուլուխ** տարբերակով: Այն հանդիպում է «Հաբրմանի» հեքիաթում. «Կայ, ընչի՞ չէ, քա՞նի գրուանքայ փուրչուլուկ կուզես» [ՓՇա 33]:

Դիւրկեարխանայ[2] տեղանիշ, կազմությամբ բարդ գոյականի առաջին բաղադրիչը բարբառներում տարածված **դուրգալ**«հյուսն»բառն է[3]: Շիրակի խոսվածքին բնորոշ հնչյունափոխված տարբերակն է՝ ***դյուկյար,*** որից էլ կազմվել է բառաբարդումը՝ գործածվելով «Թազաւորի պզտի տղէն» հեքիաթում՝ իբրև տեղանիշ բազմակի ուղիղ խնդիրների մեկ բաղադրիչ, օրինակ՝ *էլ բազազի դիւքեան, միկիտան, ֆռուն, դամրչնոց,* ***դիւրկեարխանայ,*** *բիրադի լաւ – իրանց դայտի սարքած* [ՓՇա 69]: Այս շարքում նույն կերպ առանձնանում է նաև **դամրչնոց** ածանցավոր կազմությունը: Բարբառներում գործածական «դարբին» նշանակությամբ **դամիրչի** բառի շիրակյան տարբերակն է **դամրչի**[4], որով տեղանվանական ածանցով կազմությունը նույնպես վկայված չէ բառարաններում:

Հետաքրքիր է, որ **ֆ** հնչյուն-տառով են սկսվում «արտասովոր կենդանատեսակներին» տրվող անունները: Արևմտյան բարբառներում հանդիպող **ֆիլիկ** («Մի տեսակ այծ, որ ունի նուրբ ու երկար մազեր»[5]) գոյականը Շիրակի խոսվածքում կիրառվում է առանց ածանցման. օրինակ՝*Էս մորթին էնպէս մարիֆաթ ունի, թէ որ, ըսաւ,* ***ֆլի*** *ոսկորից մէկ հատ պալատ շինուի, չամչրաղի պէս չորս բոլորը լուս կուտայ* [ՓՇա 53]: *Քառուն հատ* ***ֆիլ*** *տռճիկ տալով, սարերուց պրծան էկան, հաւուզներու վրա թափան* [ՓՇա 55]: Այսպես նաև **ֆիլիզ** իրանիշ գոյականը՝ ըստ երևույթին «ձեղ» նշանակությամբ «Հաբրմանի» հեքիաթում գործածվում է որպես

---

[1] *«Փշրանք Շիրակի ամբարներից» հեքիաթների ժողովածուից մեջբերված նախադասությունների էջերը ներկայացվում են կից ուղիղ փակագծերում՝ ՓՇա համառոտագրությամբ:*

[2] *Ժողովածուում հանդիպում են և՛ դասական, և՛ բարբառային ուղղագրությամբ կազմություններ, որոնք մենք նույնությամբ արտագրել ենք:*

[3] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ա, 2001, էջ 362:*

[4] *Նույն տեղում, էջ 304:*

[5] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Է, 2012, էջ 194:*

փոխակերպման արդյունք, օրինակ՝ *Հաբրմանին էլ էն սհաթին կնկան դարձրեց մէկ բարակ* ***ֆիլիգ****, ինքն էլ էղաւ մէկ օձ, փաթտուաւ էդ* ***ֆիլիգին*** *ու գլուխը դրեց* ***ֆիլիգի*** *ծերին* [ՓՇա 34]:

Այս շարքում առանձնանում է **ղուլլուղտար** անձնանիշ գոյականը՝ կազմված «ղուլլուղ (ծառայություն) + տար» կաղապարով, որ կիրառվել է ***Ղուլլուղտարները*** *թագաւորի ղրկած ձկի հրմար յայտնեցին թագուհուն* [ՓՇա 6] արտահայտության մեջ «սուրհանդակ» իմաստով:

2. **Բայերը** Կարնո բարբառում կիրառվում են ինքնատիպ ածանցումներով. ինչպես՝ **կառավարցնել** կազմությունը, որտեղ ներգործական սեռի բայը, ստանալով պատճառական ածանց, արտահայտում է նաև անդրադարձ գործողության իմաստ: Օրինակ՝ … *թող ընծի մէկ կոտ օսկի տար՝ հերիք էր. ես ընծի կը* ***կառավարցնէի*** [ՓՇա 16]: Նշված նախադասությունը «Բաղդաւոր տղայ» հեքիաթում կրկնավոր արտահայտություններից է, որը սակայն հաջորդ կապակցության մեջ արտահայտվում է ….*ես իմ* ***գլուխրկը պատէի*** [ՓՇա 17] հոմանիշ դարձվածքով՝ «գլխի ճարը տեսնել» իմաստով: Ի դեպ նշված դարձվածքը նույնպես բառարանում ներկայացված չէ, և մեր որոնողական աշխատանքի ընթացքում այլ բարբառներով գրառված հեքիաթներում նույնպես չենք հանդիպել, ուստի կարող ենք վերապահությամբ նշել, որ այն նույնպես Կարնո բարբառին բնորոշ արտահայտություններից է: Շիրակի խոսվածքին բնորոշ է նաև **կառավարել** բայի **վ** ածանցով կազմությունը՝ «իջևանել» իմաստով: Օրինակ՝ *Հրմա քովը մէկ աղքատանոց էլ շինել տուեց էդ թագաւորի անունով, որ գնացող էկող աղքատ ճամփորդները* ***կառավարուին*** [ՓՇա 20]: Հեքիաթներում գործածական բայերից առանձնացրել ենք նաև **կիսկսել** արմատի կրկնությամբ բազմապատկական բայը, որ այլուր չենք հանդիպել: Օրինակ՝ *ես* ***կը կիսկսեմ*** *ու երբ որ ձեզի կանչեցի, արէք ամենքիդ բաժինը իրան տամ* [ՓՇա 4]: Ինչպես **ֆ** հնչյուն-տառով սկսվող գոյականներին հատուկ էր կախարդական ոգի նշանակությունը, այնպես էլ **ֆոլտալ** գործողությունը Շիրակի հեքիաթներում հատուկ է կախարդական «չարխերին» (իր առանցքի շուրջ պտտվող անիվ): Օրինակ՝ *բիրադի գլխէ գլուխ էնպէս արծլի չարխեր էին շինել, էդ չարխերը էնպէս* ***կը ֆոլտային****, որ մարդ մօտենար քիմի՝ կը կտրտէին* [ՓՇա 58]:

Շիրակի խոսվածքին բնորոշ **փելքստալ** բայը ***կը*** ճյուղի բարբառներին հատուկ **փայլքտալ** «փայլփլել, շողշողալ» իմաստով[1] բայի հնչյունափոխված տարբերակն է, որ «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում արևի հետ կատարված համեմատությամբ վերագրվել է սպանված «ջանավարի» մորթուն: Ինչպես՝ …..*վրայի մորթին էնպէս մէկ սամուրմ էր, որ արեգակի պէս* ***կը փէլքստար*** [ՓՇա 51]:

3. Շիրակի խոսվածքին բնորոշ **ածականներն** արտահայտում են ինչպես իրանիշ, այնպես էլ անձնանիշ գոյականների անմիջական

[1] *Նույն տեղում, էջ 343:*

հատկանիշ՝ հանդես գալով որոշչի կամ ստորոգելիի շարահյուսական պաշտոններով: Ինչպես՝ **սուր** հասկացությունը «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում բնութագրվում է **զիլֆիխար** փոխառությամբ՝ «Հալունի թուրը, որ իբր թէ շինած է կայծակի հալած երկաթից» նշանակությամբ[1]: Օրինակ՝ *….բսաւ աւճի Շաբուրի տղէն ու **զիլֆիխար** թուրը դուս քաշեց, հասաւ վրա* [ՓՇա 58]: Բարբառային հատկանիշ է նաև **ամրկենի** ածականը, որով «Կատուն ու առիւծը» առակում բնութագրվում է **փայտ** գոյականը: Օրինակ՝ *Յետոյ վեր առնելով մի հաստ **ամրկենի** փայտ, ընկնում է առիւծի ջանին …* [ՓՇա 80]: Կարնո բարբառում «ահարկու, երկյուղալի»[2] նշանակությամբ է կիրառվում **ահոտ** ածանցավոր ածականը: Օրինակ՝ *Իջած տեղերը շատ **ահոտ** էր* [ՓՇա 39]: ***Սայմազ*** «հիմար, անխելք» նշանակությամբ փոխառություն-ածականով են բնութագրվում հնարամիտ, բայց հասարակության կողմից չհասկացված տղաները[3]: Օրինակ՝ *….տարէ՛ք էդ **սայմազ** տղի գլուխը զարկէք* [ՓՇա 10]:

Ածականների մեջ նույնպես կան կազմություններ, որոնք բառարաններում ներկայացված չեն, դրանցից շատերը հեքիաթներում հանդիպում են ասացողների մեկնաբանությամբ: Կարծես թե դրանց կիրառությունների եզակիությունը, անհասկանալի լինելու հանգամանքը գիտակցելով՝ պատմողը զուգահեռաբար ներկայացնում է կազմության բացատրությունը: «Մարդակերպ ձուկը» հեքիաթում **անիաթ** ածականով, բնութագրվել է **տղա** անձնանիշ գոյականը, որ ասացողը մեկնաբանել է «բան չէր գիտի» արտահայտությամբ. *Մէկէլ ընկերն էլ՝ հէչ **զանիաթ** – բան չէր գիտի* [ՓՇա 39]: Բառարաններում ներկայացված չեն նաև մի շարք հնչյունափոխական տարբերակներ: Ինչպես՝ **ածելի** գոյականի[4] **արծլի** ձևը, որ «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում կիրառվել է ածականական «սուր» իմաստով: Օրինակ՝ *…բիրադի գլխէ գլուխ էնպէս **արծլի** չարխեր էին շինել* [ՓՇա 58]:

4. Ժամանականիշ ***ետնաւուր*** մակբայը՝ «Ետի օրը, հետագայում, ապագայում»[5] իմաստով, գրաբարյան «աւուրս յետինս» կազմության բառայնացումն է, որին հատուկ է ապառնի ժամանակաձևերին կապակցվելը: Օրինակ՝ …..*ու չեղնի թէ **յետնաւուր** իմ հացս խլէ ու անունս կոտրէ* [ՓՇա 3]:

---

[1] ***Աճառեան Հ.,*** *Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, «Էմինեան ազգագրական ժողովածու» հրատարակութեամբ, 1913, էջ 312:*

[2] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ա, 2001, էջ 34:*

[3] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ե, 2008, էջ 261:*

[4] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ա, 2001, էջ 22:*

[5] *Նույն տեղում, էջ 375:*

Շիրակի խոսվածքին բնորոշ են նաև մի շարք դարձվածքներ, որոնք հիմնականում վերաիմաստավորված բայական բառակապակցություններ են, որ վերագրվում են անձնանիշ գոյականներին: Օրինակ՝ ***կեծակի զարկած դառնալ*** դարձվածքը՝ «Սաստիկ զարմանալ, ապշել՝ հանկարծակիի գալով» իմաստով[1], բնութագրում է թագավորի հրամանը լսող ռանչպարին «Ռանչպարի տղէն» հեքիաթում. *Ռանչպարը էս որ իմացաւ,* ***կէծակի զարկած դառաւ****…* [ՓՇա 4]:

Դարտը կապուտ էր դարձվածքը «Նպատակը ուրիշ լինել»[2] նշանակությամբ է գործածվել «Ռանչպարի տղէն» հեքիաթում. *Հըմա իրան փորի ցավը ուրիշ էր –* ***դարտը կապուտ էր*** [ՓՇա 3]: Հեքիաթներում հետաքիր է դարձվածքը դարձվածքով բացատրելու հանգամանքը, որի արդյունքում կիրառվում են հոմանիշ դարձվածներ՝ խոսքը դարձնելով ավելի պատկերավոր և հասկանալի:

Արև բաղադրիչով դարձվածքները բարբառներում բազմաթիվ են, որոնք հիմնականում կապվում են գեղեցիկի, լուսավորի, կյանքի և մահվան հետ: Օրինակ՝ *արև ալ, արև անել, արև անցնել, արև աչքեր, արև առնել, արև հասակ, արևեն հանել* և այլն[3] [5,Ա, 123]: Սակայն **արևը երդիկից թռել** դարձվածքը բառարաններում վկայված չէ, այն կիրառվել է «Ռանչպարի տղէն» հեքիաթում՝ «եղածը եղած է» դարձվածային իմաստով: Ինչպես՝ *….հըմա էլ ի՞նչ օգուտ,* ***արևն երդկիցը թռել էր****, էղածն էղած էր* [ՓՇա 10]: Բազմաթիվ են նաև **ջուր** բաղադրիչով դարձվածքները, որոնցից վկայված չէ նույն հեքիաթում կիրառված **ջրով ջաղաց** կայուն արտահայտությունը՝ «նույնը լինել» նշանակությամբ: Օրինակ՝ *…. մնացած քառասուն ջառիէքին էլ տեսան՝ որ բիրադի էն* ***ջրով ջաղացն*** *են* [ՓՇա 15]: Այս շարքում առանձնանում է «Բաղդաւոր տղայ» հեքիաթում կիրառված **բերնին զոլի քար դիպած** արտահայտությունը՝ ասացողների *սառած մարդու պես մնալ* մեկնաբնությամբ [ՓՇա 21]:

Բայական արտահայտությունների մեջ առանձնանում են թագավորներին ողջունելու ձևերը: Սրանցից **թամալլահ անել**՝«ողջունել» իմաստով դարձվածքը բառարաններում վկայված չէ, այն կիրառվել է «Ռանչպարի տղէն» հեքիաթում: Ինչպես՝ *…ռանչպարի տղէն օխտը տեղ* ***թամալլահ էրավ*** [ՓՇա 7]:

Չվկայված կազմությունները հասկանալի են լինում խոսքում: Ինչպես՝ **տաւարձուղ** բառաբարդումը նշանակում է «տավարած»: *Մէկ քիչ ճամբու պաշար դրին* ***տաւարձուղները****, կապին շալակները….* [ՓՇա 15]: **Ումուզ** նշանակում է «ուս» *Մորթին քցեց* ***ումուզին*** *ու ուրախ-ուրախ ընկավ ճամբայ գնաց տուն* [ՓՇա 51]: **Արթղ** նշանակում է «հերթով». *Տղէն* ***արթղ*** *պատմեց* [ՓՇա 51]:

---

[1] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Գ, էջ 71:*
[2] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ա, էջ 315:*
[3] *Նույն տեղում,* էջ 123:

Ուսումնասիրելով հեքիաթների բառապաշարային միավորների իմաստաբանությունը և կառուցվածքային առանձնահատկությունները՝ պարզ դարձավ, որ ժողովրդական մտածողության պարզաբանման բանալիները թաքնված են ժողովրդական ստեղծագործությունների՝ հեքիաթների մեջ: Դրանցում առանձին ժողովրդական ստեղծագործություններ են նաև բարբառային լեզվական միավորները, որոնց կազմությունը, ստուգաբանությունը բացահայտում է տվյալ տարածքի ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած հարաբերությունները, մարդկային ապրելակերպը, բարուն ու չարին ինչպես վերաբերվելը: Ավելացնենք նաև, որ բարբառային բառերը քննելով՝ բարբարառագիտական բառարաններում հաճախ էինք հանդիպում դժվարությունների, քանի որ բառերի մի ստվար խումբ գրառված չէ և կարոտ էր լուսաբանման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, «Էմինեան ազգագրական ժողովածու» հրատարակութեամբ, 1913:
2. Բառնասյան Ջ., Կարնո բարբառի խոսվածքներին անդրադառնալու մի փորձ / http://shirak.asj-oa.am/290/1/109-112.pdf (2.27.2020):
3. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ա, 2001:
4. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Գ, 2004:
5. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Դ, 2007:
6. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Ե, 2008:
7. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, Հ. Է, 2012:
8. Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Երևան, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի» հրատարակչություն, 1952:
9. Փշրանք Շիրակի ամբարներից, Հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, «Էմինեան ազգագրական ժողովածու» հրատարակութեամբ, 1901:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 81`37
Լեզվաբանություն

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր

ԱՆԵԶԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԽՅԱԼ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Աստվածաշնչի գրքերում անեզական գոյականների բառակազմական արժեքի քննությունը ցույց է տալիս, որ այդ կարգի բառերը բառակազմական տեսակետից ունեցել են գործառական տարբեր հաճախականություն :
ա) Անեզական գոյականների հետ հավասարապես գործածվել են նրանց անկախ արմատները՝ բառական արժեքով :
բ) Անեզական գոյականների կախյալ արմատները ունեցել են բառակազմական որոշակի դեր. նրանցով կազմվել են նոր բառեր :
գ) Անեզական որոշ գոյականների կախյալ արմատները բառակազմորեն չեզոք են, նրանցով նոր բառեր չեն հանդիպում Աստվածաշնչում: Այս կարգի որոշ բառեր հանդիպում են կապակցությունների կազմում, ինչպես՝ աղիք – աղիքն գալարել, աղօթք – աղօթս առնել՝ կալ՝ կանխել, կնիք – կնքեալ եւթն կնքով և այլն:
Հինգերորդ դարի թարգմանական առաջին հուշարձանում անեզական գոյականների կախյալ արմատների բառակազմական արժեքների բացահայտումը վերաբերում է արմատական բառագիտությանը և որոշակի առումով կարող է ամբողջացնել հայերենի պատմական բառագիտության և պատմական բառակազմության քննության շրջանակները:
Բանալի բառեր՝ *եզակի և հոգնակի թիվ, անեզական գոյական, բառակազմական արժեք, արմատ՝ անկախ, կախյալ, բառակազմորեն չեզոք :*

Л.Хачатрян

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ СВЯЗАННЫХ КОРНЕЙ СУЩЕСТВИТЕЛЬНОГО НЕ ИМЕЮЩИЙ ЕДИНСТВЕННОГО ЧИСЛА В БИБЛИИ

Исследование словообразовательного значения связанных корней не имеющий единственного числа в книгах Библии показывает, что

эти слова с точки зрения словообразования имели разную функциональную частоту.
А. Вместе с pluralia tantum в равной степени употребились их связанные корни с лексическим значением.
Б. Связанные корни существительного не имеющий единственного числа имели некоторый словообразовательный роль- с их помощью образовались новые слова.
В. Связанные корни некоторых существительных не имеющий единственного числа нейтральны с точки зрения словообразования, в Библии не встречаются новые слова с этими корнями.
Выявление словообразовательных значений связанных корней существительногоне имеющий единственного числа в первом переводческом монументе 5-ого века касается корневой лексикологии и по некоторой степени может наполнить рамки исследования исторической лексикологии и словообразования.
Ключевые слова: *единственное и множественное число, корни не имеющий единственного числа, словообразовательное значение, связанные, несвязанные, нейтральные корни.*

L.Khachatryan

WORD-FORMING VALUE OF DEPENDENT ROOTS OF NON-SINGULAR NOUNS IN THE BIBLE

The study of word-formation value of non-singular nouns in the Bible shows that those kind of words from the point of view of word- formation has different functional frequency.

- *With non-singular nouns have been equally used their non-dependent roots in word value.*
- *The dependent roots of non-singular nouns had some word-forming role. new words have been formed with them.*
- *Dependent roots of some non-singular nouns are neutral from the point of view of word-formation, there are no words formed with them in the Bible, like, դիր, գրասանք, լլկանք, արունք. Some words of this type are seen in fixed word combinations.*

The reveal of word-formation value of dependent roots of non-singular nouns in the first translation monument of 5th century refers to root-lexicology and at some case can complete the frames of historical lexicology and word formation.
Keywords: *singular, plural, non-singular nouns, word-formation value, dependent, non-dependent, neutral root.*

Անեզական գոյականներն արտահայտության պլանում ունեն հոգնակիակերտ –ք ձևույթը, արտահայտում են հոգնակի թվի գաղափար, հանդես են գալիս միայն հոգնակի թվով և չունեն եզակի-հոգնակի հակադրություն, ինչպես՝ *խելք, կամք, միտք, հունձք, կարք, կուրք, վարք, բարք* և այլն[1]:

---

[1] *Անեզական գոյականների մասին տե՛ս* ***Բագրատունի Ա.****, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 7:* ***Աբրահամյան Ա.****, Գրաբարի ձեռնարկ, Երևան 1976, էջ 20:* ***Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.****, Գրաբարի դասագիրք, Երևան., 2004, էջ 25:* ***Ավետիսյան, Հ. Ղազարյան Ռ.****, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 50:*

Այդ կարգի բառերի ձևային պլանում հոգնակիակերտ ցուցիչը ձուլված է արմատին, այն չի տրոհվում լեզվի համաժամանակյա կտրվածքում. այն տրոհելի է ստուգաբանական մակարդակում, ինչպես՝ խել-ք, կամ-ք, միտ-ք, հունձ-ք, կառ-ք, կուռ-ք, վար-ք, բար-ք և այլն:

Անեզական գոյականներով հարուստ է հին հայերենը. դրանք լայն կիրառություն ունեն գրաբար մատենագրության մեջ:

Անեզական գոյականներն ստուգաբանական մակարդակում ունեն կախյալ արմատներ. թեև վերջիններս անկախ գործածություն չունեն, այնուամենայնիվ հանդիպում են մատենագիտական մասնակի վկայություններ՝ հմմտ. *միտք-միտ. Միտք* մարդկան հաստատեալ են ի խնամս չարի (Ծնն. Ը. 21): Մեք *ի մտի եդաք* անվրէպ խորհրդով խաղաղ գնալ աշխարհն արեւելից (Եղ.,10): *Օրէնք-օրէն.* Ի գիրս *օրինացն* Մովսիսի (Յեսու. ԻԳ. 6): Այս *օրէն* է զոհիցն փրկութեան (Ղեւտ. Է. 7):

Անեզական գոյականների կախյալ արմատներն ունեն որոշակի բառակազմական արժեք. դրանցով հին հայերենում, ավելի հստակ՝ նախագրային հայերենում կազմվել են զգալի քանակությամբ բառեր, որոնք նախագրային հայերենի բառային կազմի հետ, իբրև ժառանգություն, անցել են հին հայերենին: Այդ կարգի բառերը (անեզական գոյականներն ու նրանցով կազմված բառերը) առաջին անգամ գործածվել են հայերեն առաջին թարգմանական մատյանում՝ Աստվածաշնչում, այնուհետև հայերեն մատենագրական ինքնուրույն երկերում:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կփորձենք վերլուծել Աստվածաշունչ մատյանում հանդիպող այն անեզական գոյականները, որոնց կախյալ արմատներով կազմվել են նոր բառեր, և որոնք դարձյալ գործածվել են քննվող բնագրում[1]: Անեզական գոյականները Աստվածաշնչի բառային կազմում կարելի է բաժանել երեք խմբի[2]:

ա) Անեզական գոյականներ, որոնց արմատներն ունեն գործածության անկախություն:

բ) Անեզական գոյականներ, որոնց արմատներն անկախ գործածություն չունեն, սակայն մասնակցում են բառակազմությանը:

գ) Անեզական գոյականներ, որոնց արմատներն անկախ գործածություն չունեն և բառակազմորեն չեզոք են:

Ըստ վերոբերյալ բաժանումների՝ դիտարկենք անեզական գոյականների և նրանց արմատական բաղադրիչների իրացումներն Աստվածաշունչ մատյանի թարգմանական գրքերում:

---

[1] *Քննության բնագիր ենք ընտրել «Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» աշխատությունը (Հայաստանի Աստվածաշնչային ընկերութիւն, Երեւան, 1997):*

[2] *Աստվածաշնչի բառային կազմը քննել ենք ըստ նրա համաբարբառների: Տես՝* ***Աստուածատուրեան Թ. Վ.****, Համաբարբառ հին և նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895: Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Սուրբ Էջմիածին, 2012:*

Ա. Առաջին խմբի մեջ, ինչպես նշեցինք, մտնում են այն անեզական գոյականները, որոնց արմատներն ունեն անկախ գործածություն:

Աստվածաշնչում գործածված այս կարգի բառերը ներկայանում են եզակի-հոգնակի հակադրությամբ, ընդ որում հոգնակիության քերականական իմաստն արտահայտվում է քերականական տարբեր մասնիկներով, ինչպես՝ -ք. –անք, -իք և այլն:

Այսպես՝ -ք մասնիկով են ձևավորվել հետևյալ անեզական գոյականները. *բարի-բարիք, բարձ-բարձք, հաւատ-հաւատք, պահ-պահք, մուտ-մուտք, ստին-ստինք* և այլն:

Ակնհայտ է, որ այս կարգի բառերի հոգնակի ձևերը հատկանշվում են բառիմաստի և գործածության անկախությամբ և համապատասխան հոգնակի ձևերի հետ կազմում են հակադրամիասնություն:

Մենք չենք կարող այս բառերի հոգնակի մասնիկով ձևերը դիտել հոգնակի թվով գոյականներ, քանի որ նախ՝ Աստվածաշնչի համաբարբառում և հնխ. լեզվի վկայություններում դրանք տրված են իբրև գլխաբառեր, երկրորդ՝ հոգնակի մասնիկով ձևերը բնավ հոգնակիության իմաստ չեն արտահայտում, այլ ավելի շուտ ունեն հավաքականության նշանակություն. հմմտ. բարի և բարիք, ել-ելք, մուտ-մուտք և այլն[1]:

Դիտարկենք այդ բառերը համապատասխան բնագրային կիրառություններում:

Գտա ի նմա բան *բարի* (Գ. Թագ. ԺԴ. 15): Մի՛ ձանձրանայք *զբարիս* գործել (Ա. Թեսայ. Գ. 13):

Տէր պահեսցէ *զմուտ* և *զել* քո (Սաղ. ՃԻ. 8): Ի վերայ *մտից* տաճարի քերովբէի (Եզե. ԽԱ. 25): Եղէն *ելք* նոցա Յորդանան (Յեսու. ԺԹ. 33):

Տանել ի քրտանէ նորա թաշկինակ (Գործ. ԺԹ. 12): Քրտամբք *երեսաց* քոց կերիցես զհաց քո (Ծնն. Գ.19):

Անկախ արմատներով հետևյալ անեզական գոյականները ձևավորվել են –անք մասնիկով. *ողոք-ողոքանք, սխալ-սխալանք, վարձ-վարձանք, փակ-փականք, փորձ-փորձանք* և այլն:

Աստվածաշնչի համաբարբառում այս բառազույգերը դիտվել են առանձին բառեր՝ անկախ բառական արժեքներով. հմմտ. *Սխալ* եւս լինէր նաւելոցն (Գործ. ԻԷ. 9): Ի ժամանակի *սխալանաց* ցոյց զդարձն (Սիրաք. ԺԸ. 21): *Զփորձ* նորա գիտէք և դուք (Փիլիպ. Բ. 22): *Զփորձանս* մեծամեծս զոր տեսին աչք քո (Բ. Օրէնք. Է. 19):

Սպառնալիք անեզական գոյականը ձևավորվել է –իք մասնիկով՝ անորոշի դերբայական հիմքով, հմմտ. *Սպառնայ* սպանանել զքեզ (Ծնն. ԻԷ. 42): *Սպառնալիք* թագաւորի նման են մռնչելոյ առիւծու (Առակ. ԺԹ. 12):

---

[1] *Ստին և ստինք բառազույգի մեջ կարող ենք տեսնել եզակի-հոգնակի հակադրություն՝ ելնելով՝ ստինք գոյականի հոգնակիության (երկակիության) գաղափարից: Հմմտ. Հատուցաւ ի ստենէ Իսահակ (Ծնն. ԻԱ.): Զի բարի են ստինք քո քան զգինի (Երգ. Ա. 1)*

Ինչպես ցույց են տալիս բնագրային վկայությունները, անեզական գոյականների այս ենթախմբի բառարմատներն ունեն գործածության անկախություն և համապատասխան մասնիկավոր ձևերի հետ կազմում են եզակի-հոգնակի (հավաքական) հակադրություն:

Բ. Աստվածաշնչում հանդիպող անեզական գոյականների երկրորդ խմբում այն բառերն են, որոնք ունեն *կախյալ արմատներ.* վերջիններս մասնակցում են բառակազմական քայլերի՝ որպես սերող հիմքեր. այդ կարգի հիմքերով առաջացել են որոշակի կազմություններ: Անեզական այդ գոյականները և նրանց կախյալ արմատներով կազմությունները որոշակի գործածություն ունեն Աստվածաշնչում:

Այդ կարգի բառերը նույնպես կարելի է դասդասել ըստ ձևակազմական հատկանիշի՝ ելնելով բառակազմական երկրորդական ձևույթների տեսակից: Այսպես՝ –ք մասնիկով են կազմվել (ձևավորվել) հետևյալ անեզական գոյականները. *ընթրիք, կամք, կուրծք, միտք, վարանք, փառք* և այլն:

Անեզական այս գոյականները դիտարկենք Աստվածաշնչի գրքերում՝ միաժամանակ ցույց տալով դրանց կախյալ արմատների բառակազմական դերը որպես սերող հիմքեր:

Ընթրիք- «երեկոյան ուտեստի պահը. ուտելիք». Գործածվել է միայն անեզական ձևով: Հմմտ. Եկն ամենայն ժողովուրդն տալ *ընթրիս* (Բ. Թագ. Գ. 35): *Ընթրի*[1] կախյալ արմատից է *ընթրել* բայական բառույթը, Պատրաստեա՛, զինչ *ընթրելոց* իցեմ (Ղուկ. ԺԷ. 8):

Կամք- պահլավ. kam «կամք, կամեցողություն» բառից՝ «իղձ, ցանկություն» նշանակությամբ[2]: Հմմտ. Կատարեցին զանիրաւութիւն *ի կամաց* իւրեանց (Ծնն. ԽԹ. 5): *Կամք* անեզականի կախյալ *կամ* արմատով են կազմվել *կամել, կամ լինել* և այլ բառեր: Հմմտ. Գուցէ կինն ոչ *կամիցի* գալ ընդ իս (Ծնն. ԻԴ. 5): *Կամ եղէ* և ինձ, որ ի սկզբանէ զհետ երթեալ (Ղուկ. Ա. 3):

Կուրծք- «լանջք, լանջի տախտակը, ընդլայնմամբ՝ սիրտ, ստինք, կուրծք»- Բախէին *զկուրծս* և դառնային (Ղուկ. ԻԳ. 48): *Կուրծ* կախյալ արմատական բաղադրիչով նորակազմություններ չկան Աստվածաշնչում, սակայն մատենագրության մեջ հանդիպում են, ինչպես՝ *կրծացաւութիւն, կրծապահ, կրծանոց, կրծաբախ* և այլն[3]:

Միտք- բնիկ հայերեն բառ է՝ med արմատից «մտածություն, խելք, բնականություն, ուշադրություն, իմաստ» նշանակությամբ[4]: Հմմտ. Ինքեանք առ տկարութեան *մտացն* (Բ. Մակ. Զ. 21): *Միտ* կախյալ արմատը հանդես է գալիս ինչպես բառակազմական մակարդակում, այնպես էլ ունի

---

[1] *Ընթրի արմատի ծագումը համարվում է անհայտ (Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, Ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 249):*

[2] ***Հր. Աճառյան****, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 498:*

[3] ***Հր. Աճառյան****, նշվ. աշխ., Երևան, էջ 666:*

[4] ***Հր. Աճառյան****, նշվ. աշխ, հ. 3, Երևան, էջ 325:*

գործածության անկախություն: Աստվածաշնչում հանդիպում են՝ *մտաւոր* (Իմաս. Է. 22), *մտաբերել* (Ելք. ԻԱ, 14), *մտադիր* (Առակ, Թ, 17), *մտադիրութիւն* (Դատ. Ե. 2), *մտադրութիւն* (Իմաս. ԺԳ. 13), *մտախոհ* (Ծնն. Զ, 6), *մտածութիւն* (Սիրաք, Գ. 26), *մտահաճութիւն* (Ա. Տիմ. Ե. 21), *մտայոյզ* (Դան. Բ. 29), *ի միտ առնուլ* (Սաղ. ԼԲ. 18), *ի մտի դնել* (Ա. Մակ. Բ. 27) կազմությունները:

Ինչպես երևում է Աստվածաշնչում ունեցած կիրառություններից, կախյալ *միտ* արմատը հանդես է գալիս բայական հարադրությունների արտահայտության պլանում՝ կազմելով վերլուծական բարդություններ:

Վարանք – ծագումն անհայտ է համարվում[1]: Բառը նշանակում է «վարանում, երկմտանք»- Ու՞մ են դժնդակութիւնք և *վարանք* (Առակ. ԻԳ. 23): *Վարան* կախյալ արմատից է *վարանել* բայական բառույթը, հմմտ. Լեզուաւ քով մի՛ *վարանէր* (Սիրաք. Ե. 16):

Փառք – համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ միջին պրսկ. farr -«պատիվ, մեծարանք. կրոն, դավանանք» նշանակությամբ[2]- Արար իւր զայն ամենայն *փառս* (Ծնն. ԼԱ. 1):

Անեզական գոյականի կախյալ *փառ* արմատից է կազմվել *փառաւոր* բառը: Հմմտ. Ես այր մի տառապեալ եմ և ոչ *փառաւոր* (Ա. Թագ. ԺԸ. 23):

Փառաւոր սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են *փառաւորել* (Դատ. Թ. 9), *փառաւորիչ* (Ա. Թագ. Բ. 30), *փառաւորութիւն* (Ա. Մակ. ԺԲ. 43) բառերը և *փառաւոր լինել* հարադրական կազմությունը (Ա. Մակ. Ե. 63):

Կախյալ արմատներով անեզական գոյականների ձևավորման հարցում որոշակի դեր ունի *–անք* հավաքական մասնիկը՝ ինչպես

կալանք	պաղատանք
կշտամբանք	տանջանք
հոսանք	փրկանք
պատկառանք	

Այս կարգի անեզական գոյականները ընդհանուր օրինաչափություն են ցուցաբերում. դրանց կախյալ արմատներով կազմվել են բայական բառույթներ (անորոշ դերբայներ), կամ կարող ենք ասել՝ կախյալ այդ արմատներով կազմվել են անեզական գոյականներ: Երկու դեպքում էլ կախյալ արմատներն ունեն բառակազմական արժեք՝ անկախ այն բանից, թե նախապես ո՛ր կարգի բառերի համար են դարձել սերող հիմքեր:

Աստվածաշնչում դիտարկենք այդ կարգի բառերի կախյալ արմատների բառակազմական արժեքը համապատասխան բառերի արտահայտության պլանում:

Կալանք բառի արտահայտության պլանում *կալ* կախյալ արմատը բայահիմք է՝ ածանցակերպ. *ունիմ - կալ: Կալանք* ունի «բանտարկություն» իմաստը: Հմմտ. Երեմիա մարգարէ կայր *ի կալանս* (Երեմ. ԼԲ. 2):

---

[1] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., Երևան, էջ 706:*

[2] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., Երևան, էջ 758: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, Երևան, էջ 482:*

Նրանով բաղադրվել են *կալնուլ* և *կալանատեր* բառերը, որոնք հանդիպում են Աստվածաշնչում: Հմմտ. Եւ երկունք *կալցին* զնոսա յերեսաց քոց (Բ. Օրենք. Բ. 25): Ուկն դնէին զնոսա *կալանաւորքն* (Գործ. ԺԶ. 25):

Կշտամբանք - «հանդիմանություն, պախարակություն»- Պահիցես ինձ զնոսա յաւուր նեղութեան և *կշտամբանաց* (Յուդիթ. Բ. 5):

Կշտամբ կախյալ արմատը հանգում է անկախ չգործածված *կուշտն* բառի գործիական հոլովաձևին[1], որից կազմվել են *կշտամբել, կշտամբիչ, կշտամբութիւն* բառերը: Հմմտ. Ոչ թե վասն պատարագաց քոց *կշտամբէր* զքեզ (Սաղ. ԽԹ. 8): Ոմանց դատապարտելոց լինիջիք *կշտամբիչք* (Յուդա. 22): Հասեալ է ժամանակ *կշտամբութեան* (Ա. Մակ. Բ. 48):

Հոսանք- «ջրերի ընթացք» - Իբրեւ ջուրց բազմաց բռնութիւն *հոսանաց* (Եսայ. ԺԷ. 13): *Հոս* կախյալ արմատով[2] են կազմվել *հոսել* և *հոսիչ* բառերը, որոնք հանդիպում են Աստվածաշնչում: Հմմտ. Զի *հոսէ* ի վերայ երեսաց երկրի (Սաղ. Ա. 4): Կամ *զհոսիչս* միայն ծխոյն շարաւոյ (Իմաս. ԺԱ. 19):

Պաղատանք- «աղաչանք, խնդրանք»- Լսել *պաղատանաց* աղօթից ծառայից քոց (Գ. Թագ. Ը. 28): *Պաղատ*[3] կախյալ արմատից է *պաղատել* բայական բառույթը. Որովք *պաղատեաց* առաջի տեառն Աստուծոյ (Գ. Թագ. Ը. 53):

Պատկառանք - «հարգանք». Զի դու գիտէս *զպատկառանս* իմ (Սաղ. ԿԸ. 20): *Պատկառ*[4] կախյալ արմատից է *պատկառիչ* բայական բառույթը, հմմտ. *Պատկառեցեր* յերեսաց Տեառն (Դ. Թագ. ԻԲ. 13):

Տանջանք- «տառապանք»- Ընտրեաց ինքնակամ հասանել *ի տանջանս* (Բ. Մակ. Զ. 19): *Տանջ*[5] կախյալ արմատից են սերել *տանջել* և *տանջիչ* բառերը: Հմմտ. *Տանջէ* Տէր զմեղաւորս իւր (Յուդիթ. Ը. 23): *Տանջիչս* անձամբ անձին (Բ. Մակ. Դ. 16):

Փրկանք- «փրկագին»- *Փրկանք* արկանիցէն ի վերայ նորա (Ելք. ԻԱ. 30): Կախյալ *փրկ*[6] արմատից են սերել *փրկել, փրկիչ, փրկութիւն* բառերը: Հմմտ. Հրեշտակն *փրկեաց* զիս (Ելք. Բ. 13): Յարոյց Տէր *փրկիչ* Իսրայելի (Դատ. Գ. 9): Առանց Աստուծոյ ոչ լինիցի պատասխանի *փրկութեան* (Ծնն. ԽԱ. 16):

---

[1] *Գ.Ջահուկյանն այն բխեցնում է խեթական արմատից (նշվ. աշխ., էջ 413), Հր.Աճառյանը՝ սանսկրիտից (նշվ., աշխ., հ. 2, էջ612):*

[2] *Գ.Ջահուկյանը հոս արատը համարվում է անհայտ ծագման (տե՛ս նշվ. աշխ., Երևան, էջ 466):*

[3] *Պաղատ արմատը համարվում է անհայտ ծագման (Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., Ե., էջ 618):*

[4] *Պատկառ արմատը համարվում է իրանական (՞) փոխառություն (Տե՛ս* ***Ջահուկյան, Գ.*** *նշվ. աշխ., Երևան, էջ 626):*

[5] *Տանջ արմատը համարվում է իրանական փոխառություն՝ *tanj կորած ձևից, որ համեմատելի է պարսկերեն tang «նեղ, անձուկ» արմատի հետ՝ «(Տե՛****Ջահուկյան*** *ս* ***Գ.****, նշվ. աշխ., էջ 720,* ***Հր.Աճառյան****, նշվ. աշխ., հ. 4, Երևան, էջ 369):*

[6] *Փրկ արմատը համարվում է ասորական փոխառություն (Տե՛ս* ***Ջահուկյան****,* ***Գ.*** *նշվ. աշխ., Երևան, էջ 771):*

Աստվածաշնչում որոշ անեզական գոյականների կախյալ արմատները հանդես են գալիս բառակազմական արժեքով, որոնց արտահայտության պլանում առկա է –իք երկրորդական ձևույթը:

Մեր ընտրանքում հանդիպում են *երախտիք, ընթրիք* և *կարծիք* և *կարիք* բառերը: Այս բառերը, ինչպես նաև նրանց կախյալ արմատներով կազմված միավորները Աստվածաշնչում կենսունակ գործածություն ունեն: Այսպես՝

Երախտիք- «նյութական և բարոյական աջակցություն»- Մոռացան *զերախտիս* նորա (Սաղ. ՀԷ. 11): *Երախտ*[1] կախյալ արմատից է սերել *երախտաւոր* բառը, ինչպես՝ Արքն *երախտաւոր* էին մեզ յոյժ (Ա. Թագ. ԻԵ. 15):

Կարիք – բառի արմատական *կար* ձևույթը բխեցնում են բնիկ հնդեվրոպական *gori- *ger «ծանր» արմատից[2]: Բառի նախնական իմաստից են ճյուղավորվել «ուժ, կարողություն, զորություն» նշանակությունները: Աստվածաշնչում հանդիպում են տկար կազմությունը և *կարիս առնել* անվանաբայական հարադրությունը՝ («կարեկից լինելով՝ դժկամությամբ համաձայնել եղածին»): Հմմտ. Եւ *տկարք* զգեցան զօրութիւն (Ա Թագ. Բ. 4): *Կարիս առնէին* վասն առնն տարապարտուց մահուանն (Բ Մակ. Դ. 35):

Կարծիք- հավանական է համարվում ծագումը բնիկ հնդեվրոպական *garag- «սարսափելի, ահեղ, սարսափ» արմատից[3]: Հին հայերենում այն նշանակում է «տեսակետ, դատողություն, ենթադրություն»: Հմմտ. Գուցէ *կարծիս* ինչ տացէ թագաւոր (Բ. Մակ. Գ. 32): *Կարծ* կախյալ արմատը՝ իբրև սերող հիմք, հանդես է եկել *կարծել* բառերի արտահայտության պլանում, հմմտ. Ոչ որպէս դուք *կարծեք*՝ թէ սոքա արարեալ իցեն (Գործ. Է. 15):

Գ. Աստվածաշնչում հանդիպում են զգալի քանակությամբ անեզական գոյականներ, որոնց արմատական բաղադրիչները նույնպես կախյալ արմատներ են, սակայն այդ արմատներով նոր բառեր չեն հանդիպում քննվող բնագրում. անեզական այդ գոյականները տվյալ բնագրում բառակազմորեն չեզոք են: Դրանք կարելի է ներկայացնել երկու կտրվածքով՝ բառեր, որոնք չեն հանդիպում բաղադրությունների կազմում, և բառեր, որոնք հանդիպում են կայուն կապակցությունների արտահայտության պլանում:

1. Բառակազմորեն չեզոք բառեր են՝

Դիք - ծագում է բնիկ հնդեվրոպական *dheses-՝ *dhes- կրոնական բնույթի արմատից[4] և նշանակում է «հեթանոսական կուռք, չաստված»:

---

[1] *Երախտ արմատը համարվում է իրանական փոխառություն (Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., էջ 220): Հր.Աճառյանն այն բխեցնում է պիլ. *raxt հոմանիշ ձևից (****Աճառյան Հր.****, նշվ. աշխ., հ. 2, էջ 36):*

[2] ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., Երևան, էջ 390:*

[3] *Հավանական է համարվում ծագումը բնիկ հնդեվրոպական *garag- «սարսափելի, ահեղ, սարսափ» արմատից (Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., Երևան, էջ 392):*

[4] ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., էջ 200: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 672):*

Զբաւանք բառի *բաւս* արմատը համարվում բնիկ հնդեվրոպական (ᵒ) bha-u-k- bha-՝ «խոսել» ձևից. զբաւսանք՝ «ժամանակի անցկացում՝ խոսակցությամբ» իմաստով[1]:

Լլկանք բառի *լլուկ* համարվում է բնիկ հնդեվրոպական *lul-՝ «դեսուդեն շարժել, օրորել» արմատից կամ նրա *lel- տարբերակից[2]:

Խոշտանգանք - արմատը համարվում է իրանական փոխառություն[3]:

Սրունք - բնիկ հնդեվրոպական *k՛rusni – «ոտք, սրունք» արմատից[4]:

2. Անեզական գոյականներն իբրև հարադրությունների բաղադրիչ.

Աղիք- արմատի ծագումն անհայտ է համարվում[5]: Անեզական գոյականն Աստվածաշնչում հանդիպում է *աղիքն գալարել* հարադրության կազմում՝ «խոր ցավ՝ վիշտ զգալ՝ ապրել» իմաստով. *Գալարէին աղիք* նորա ի վրեայ եղբօրն իւրոոյ (Ծնն. ԽԳ. 40):

Աղօթք - արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական oləu-ti- (ᵒ)՝*el բնաձայնական արմատին[6]: Ունի «խնդրանք, աղաչանք, մաղթանք» իմաստներ (Ծնն. Ի. 7): Աստվածաշնչում հանդիպում է անվանաբայական հարադրության կազմում՝ *աղօթս առնել, աղօթս կալ, աղօթս մատուցանել, կանխել յաղօթս* ՝«աղոթել» իմաստով: Հմմտ. *Աղօթս արարէք* վասն իմ առ Տէր (Ելք. Ը. 28): Այն կին եմ՝ որ կացի առաջի քո ընդ քեզ *կալ աղօթս* (Ա Թագ. Ա. 26): *Աղօթս մատուցանել* յանուն նորա մինչեւ ցայսօր (Բ Օրէնք. Ժ. 8): Եւ *կանխեալ յաղօթս* եւ ի խնդրուածս զցայգ եւ զցերեկ (Ա Տիմն. Ե. 5):

Դժոխք - արմատը փոխառություն է իրանական աղբյուրից[7]: Աստվածաշնչում հանդիպում է *ի դժոխս իջանել* հարադրության կազմում՝ «գերեզման իջնել» նշանակությամբ. Զի *իջից* ես սովին ոգով առ որդի իմ *ի դժոխս* (Ծնն. ԼԷ. 34):

Խրացք - *խրաց* արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական *khrok-so- (ᵒ)՝ *(s)ker- «պտտել, ծռել» ձևին և նշանակում է «կոշկաթել, բաճկոնի թել, քուղ»[8]: Աստվածաշնչում հանդիպում է *խրացք հատանել* («կոշիկի թելերը կտրվել») և *խացք լուծանել* («կոշիկի թելերն արձակել») հարադրությունների կազմում: Հմմտ. Եւ ոչ *հատցին խրացք* կոշկաց նորա (Եսայ. Ե. 27): Չեմ բաւական խոնարհել *լուծանել զխրացս* կօշկաց նորա (Մարկ. Ա. 7):

Կեանք - համարվում է հայկական կազմություն՝ կեա-ից՝ -ան ածանցով: Հավանական է համարվում նաև *կեան*- ձևի անմիջական հնդեվրոպական ծագումը[9]: *Կեանք* բառի թեք ձևով Աստվածաշնչում հանդիպում են հետևյալ

---

[1] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 235:*
[2] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 298: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 288):*
[3] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 341:*
[4] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 698: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 285):*
[5] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 37:*
[6] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 35:*
[7] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 197: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 664):*
[8] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 354:*
[9] ***Զահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 397: Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 2, էջ 565:*

անվանական հարադրությունները՝ *պսակ կենաց* (Յայտ. Բ. 10), *կենաց աղբիւր* (Յայտ. Է. 17), *գիր կենաց* (Յայտ. Ի. 15), *գիրք կենաց* (Յայտ. Ի. 12), *ջուր կենաց* (Յայտ. ԻԲ. 17), *ծառն կենաց* (Յայտ. ԻԲ. 19), *բան կենաց* (Փիլիպ. Ա. 26) և այլն:

Ջահիջահանք - հավանական է համարվում փոխառության հանգամանքը. կա՛մ խեթական zah(h) - «խփել», zahhai «ճակատամարտ», կա՛մ վրացական. jah «խփել»[1]: աստվածաշնչում հանդիպում է *ջահիջահանք մահու* անվանական հարադրության կազմում՝ «կյանքի հարված(ներ)» իմաստով: Հմմտ. Զի պաշարեցին զիս *ջահիջահանք մահու* (Բ Թագ. ԻԲ. 5):

Կնիք - համարվում է ակկադական փոխառություն kunukkum արմատից՝ «կնիք» նշանակությամբ[2]: Աստվածաշնչում հանդիպում է հետևյալ բայական հարադրությունների կազմում, որոնց մի մասն ունի դարձվածքի արժեք, ինչպես՝ *կնքեալ եւթն կնքով* («յոթ կնիքով՝ դրոշմով կնքել») (Յայտ. Ե. 1), *լուծանել զկնիք* («կնիքը քանդել՝ բացել»), (Յայտ. Ե.2), *բանալ զկնիք* («կնիքը բացել»), (Յայտ. Ե. 9) և այլն: *Տալ ետու կնիք* կապակցությունը հունաբան ոճով նշանակում է «մկրտել», հմմտ. *Տալ ետու կնիք* եւ տանն Ստեփանեայ (Ա Կորն. Ա. 16): Անվանական հարադրություններ են՝ *կնիք արդարութեան* (Հռ. Դ. 11), *կնիք առաքելութեան* (Ա Կորն. Թ.2):

Մօրուք - բնիկ հնդեվրոպական *smakru- (**smek-) «կզակ, մորուք» արմատից[3]: Աստվածաշնչում գործածվել է *փետեմ զմօրուս* կայուն կապակցությունը («մորուքը փետել՝ արմատախիլ անել»), որ ձևավորվել է *փետեմ զհերս* կապակցության համաբանությամբ («մազերը փետել»): Հմմտ. *Փետեցի զհերս* և *զմօրուս* իմ (Բ Եզր. Թ. 3):

Սեամք - ծագումն անհայտ է համարվում[4]: Աստվածաշնչում հանդիպում է հետևյալ կայուն կապակցությունների կազմում, ինչպես՝ *պահել զսեամս մտից* (փխբ. «հիշողությունը չկորցնել»). Եվ *պահիցէ զսեամս մտից* իմոց (Առակ, Ը. 34): *Զսեամս մաշէ ոտն* (փխբ. «մի տեղ շատ գնալ-գալ»). *Զսեամս* դրանց նորա *մաշեսցէ ոտն* քո (Սիրաք, Զ. 36):

Տուգանք - *տոյժ* փոխառություն է իրանական աղբյուրից. արմատի տարբերակն է *տուգ,* որ առանձին անգործածական է[5]: Աստվածաշնչում *տոյժ* արմատը հանդիպում է *ի տոյժ անկանել* («նեղության՝ փորձանքի մեջ ընկել») կայուն կապակցության կազմում. Եւ անզգամք ընդ առաջ երթեալ *ի տոյժս անկցին* (Առակ, ԻԷ. 12):

Հինգերորդ դարի մատենագրական այլ երկերի բառային կազմի համեմատական քննությունը կարող է այլ փաստեր բացահայտել, մինչդեռ

---

[1] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 649: Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 4, էջ 119:*
[2] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 412:*
[3] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 519: Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 3, էջ 375:*
[4] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 674:*
[5] ***Ջահուկյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 732: Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 4, էջ 420:*

մեր քննության բնագիրը Աստվածաշունչն է, որի շրջանակներում էլ անում ենք այդ եզրակացությունը:

Այսպիսով՝ Աստվածաշնչի թարգմանական գրքերում անեզական գոյականների արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննությունը բացահայտում է բառակազմական որոշակի օրինաչափություններ, որոնք բնորոշ են նախագրային հայերենին: Լեզվի զարգացման այդ գոյավիճակում անեզական գոյականների կախյալ արմատներով կազմվել են զգալի քանակությամբ բառեր, որոնք նախագրային հայերենի բառային կազմի հետ փոխանցվել են հին հայերենին: Աստվածաշնչի գրքերում այդ կարգի բառերի քննությունը ցույց է տալիս, որ անեզական գոյականները բառակազմական տեսակետից ունեցել են գործառական տարբեր հաճախականություն.

ա) անեզական գոյականների հետ հավասարապես գործածվել են նրանց անկախ արմատները՝ բառական արժեքով,

բ) անեզական գոյականների կախյալ արմատները ունեցել են բառակազմական որոշակի դեր. նրանցով կազմվել են նոր բառեր,

գ) անեզական որոշ գոյականների կախյալ արմատները բառակազմորեն չեզոք են, նրանցով նոր բառեր չեն հանդիպում Աստվածաշնչում:

Հինգերորդ դարի թարգմանական առաջին հուշարձանում անեզական գոյականների կախյալ արմատների բառակազմական արժեքների բացահայտումը վերաբերում է արմատական բառագիտությանը և որոշակի առումով կարող է ամբողջացնել հայերենի պատմական բառագիտության և պատմական բառակազմության քննության շրջանակները: Նյութի համաժամանակյա քննության արդյունքները կարող են համեմատական խարիսխ դառնալ լեզվական տվյալ իրողության տարժամանակյա քննության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
3. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004:
4. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
5. Ջահուկյան Գ., Ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
6. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Երևան, 1971-1979:

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

«Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» աշխատությունը (Հայաստանի
Աստվածաշնչային ընկերութիւն, Երեւան, 1997):
Թ. Վ. Աստուածատուրեան, Համաբարբառ հին և նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895:
Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն,
Սուրբ Էջմիածին, 2012:

Համառոտագրություններ

Առակ- Առակք Սողոմոնի
Ա. Տիմո.- Թուղթք Պաւղոսի Առաքելոյ, Առ Տիմոթէոս Ա.
Ա Կորն.- Թուղթք Պաւղոսի Առաքելոյ առ Կորնթացիս
Բ Եզր.- Գիրք Եզրի
Գործ.-Գործք Առաքելոց
Դանի.-Դանիէլ
Դատ.- Դատաւորք
Եսայ.- Եսայի
Ելք- Ելք
Եզե.- Եզեկիէլ
Եղ.- Եղիշէի Վասն Վանրդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957:
Երեմ.- Ողբք Երեմիայ
Եզր- Եզր
Եսայ.- Եսայի
Երգ.- Երգ երգոց
Թագ.Ա.Բ.Գ.Դ. – Թագաւորութեանց Ա. Բ.Գ.Դ.
Թեսայ.- Թուղթք Պաւղոսի Առաքելոյ առ Թեսաղոնիկեցիս Ա.
Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի
Ծնն.-Ծնունդք
Հռ.- Հռութ
Ղեւտ.- Ղեւտական
Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու
Մակ. Ա. Բ. - Գիրք Մակաբայեցւոց Ա. Բ.
Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի
Յայտ.- Յայտնութիւն Յոհաննու
Յեսու.- Յեսու Նաւեայ
Յովբ- Յովբ

Յուդիթ – Յուդիթ
Յուդա- Թուղթ Յուդայի Առաքելոյ
Սաղ.- Գիրք Սաղմոսաց
Սիրաք- Սիրաք
Փիլիպ.- Թուղթք Պաւղոսի Առաքելոյ առ Փիլիպեցիս
Օրենք-Բ.- Երկրորդումն Օրինաց

5.Стрельцова И.Д. Мотивация обучения и работа над художественными текстами (из опыта преподавания русского языка на факультете журналистики ЕГУ), журнал “Русский язык в Армении” N2, 1999 г.
6.Чехов А.П. Собрание сочинений в 12 томах, т.3, Москва, изд-во “Правда”, 1985 г.
7.Интернет-ресурсы: skiente-start.ru; google.ru infourok.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Է.Ա.Հայրապետյանը:

ՀՏԴ 81`33:004
Օտար լեզու

Հասմիկ ՂԱՋՈՅԱՆ
ՀԱՊՀ, Օտար լեզուների ամբիոն
E-mail: hasmikghajoyan@mail.ru

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔ

Սույն հոդվածում քննության է ենթարկվում փոխաբերականացումը՝ որպես հաշվողական տեխնիկայի եզրույթների ստեղծման հիմք: Ժամանակակից կյանքը արագ զարգանում է՝ իր հետ բերելով նոր գաղափարներ, գյուտեր և սարքեր, որոնք ազդում են ոչ միայն մեր ապրելակերպի, այլև լեզվական մտածողության վրա: Բացառություն չէ հաշվողական տեխնիկայի ոլորտը: Այս ոլորտին վերաբերող եզրույթները սերտ կապված են փոխաբերության հետ: Նրանց դերը չափազանց կարևոր է տեխնիկական հաղորդակցության համար, որն էլ ուղեկցվում է որոշակի տեխնիկական գործընթացներով: Քանի որ լեզուն ազդում է մարդու գործունեության տարբեր ոլորտների վրա (այդ թվում հաշվողական տեխնիկայի ոլորտը), հետևաբար կարող ենք առանձնացնել անտրոպոլոգիական (մարդաբանական) և ոչ անտրոպոլոգիական փոխաբերություններ (ոչ մարդաբանական): Անտրոպոլոգիական փոխաբերությունները արտացոլում են մարդու սոցիալական գործունեության առանձնահատկությունները, մինչդեռ ոչ անտրոպոլոգիականը՝ մարդուն շրջապատող իրականությունը: Կարելի է ասել, որ փոխաբերությունը կարևորագույն դեր է կատարում հաշվողական տեխնիկայի եզրույթաբանության ձևավորման գործընթացում:

Բանալի բառեր՝ *եզրույթներ, հաշվողական տեխնիկա, փոխաբերականացում, եզրույթաբանություն, առարկա, հասկացություն, փոխաբերություն, գիտական լեզու, հաղորդակցություն, բառիմաստ, լեզվական միավոր:*

А. Каджоян

МЕТАФОРИЗАЦИЯ КАК СПОСОБ ФОРМИРОВАНИЯ ТЕРМИНОВ ВЫЧИСЛИТЕЛЬНОЙ ТЕХНИКИ

В данной статье анализируется метафоризация как способ формирования терминов вычислительной техники. Современная жизнь стремительно развивается, принося новые идеи, изобретения и устройства, которые влияют не только на наш образ жизни, но и на язык. Говоря о терминах вычислительной техники, можно сказать, что они в основном связаны с метафорой. Их роль очень

важна для технической коммуникации и руководствуется знанием определенных технических процессов. Учитывая тот факт, что язык влияет на различные области человеческой деятельности (включая вычислительные техники), метафоры можно классифицировать как антропологические и не антропологические Антропологические метафоры отражают качества социальной деятельности человека, не антропологические метафоры – реальность, окружающую человека. Можно сказать, метафоризация считается ключевым фактором при формулировании терминологии вычислительной техники.
Ключевые слова: *Термины, вычислительная техника, метафоризация, терминология, объект, концепт, метафора, научный язык, коммуникация, значение слова, языковая единица.*

H. Ghajoyan

METAPHORIZATION AS A MEANS OF TERM FORMATION OF COMPUTER SCIENCE

The following article analyzes metaphorization as a means of term formation of computer science. Modern life is rapidly developing, bringing new ideas, inventions and devices that affect not only our life, but also the language. Terms of computer science are mainly connected with the metaphor. The role of the metaphor is very important for technical communication and is guided by the knowledge of certain technical processes. Taking into consideration the fact that language affects various areas of human activity (including computer science), metaphors can be classified into anthropological and non-anthropological. Anthropological metaphors reflect the physical, moral and intellectual qualities of human social activity, whereas non-anthropological metaphors reflect the reality surrounding man. It must be noted that metaphorization is considered to have a key factor in the formation of computer science terminology.
Keywords: *Terms, computer science, metaphorization, terminology, object, concept, metaphor, scientific language, communication, meaning, linguistic unit.*

Ժամանակակից կյանքը արագ զարգանում է՝ իր հետ բերելով նոր գաղափարներ, գյուտեր, սարքեր, որոնք ազդում են ոչ միայն մեր կենսակերպի այլ նաև լեզվի վրա: Հաշվողական տեխնիկայի եզրույթների դերը տեխնիկական հաղորդակցման համար շատ կարևոր է և ուղղորդվում է որոշակի տեխնիկական գործընթացների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ գիտելիքի առկայությամբ: Գիտական լեզուն կրում է իր մեջ փոխաբերականության տարրեր, որոնք կարևոր դեր են խաղում գիտության բնագավառների զարգացման համար: Փոխաբերությունների շուրջ բազմաթիվ տեսություններ ևս ապացուցում են լեզվի և մտքի միջև եղած կապը ու արտացոլում նոր մոտեցումներ: Դրանք հաստատում են, որ փոխաբերությունները գործիք են մարդու մտքի ձևավորման համար: Գիտական տեքստերում և տեխնիկական եզրույթներում փոխաբերությունները շատ կարևոր դեր ունեն, քանի որ լիովին արտահայտում են լեզվի դերն ու գործառույթը գիտական և

տեխնիկական հաղորդակցության մեջ: Որպեսզի տարբերակվի գործառույթի նշանակությունն ու ֆունկցիան, անհրաժեշտ է առանձնացնել բառիմաստի դերը: Բառային իմաստը տվյալ լեզվով խոսող հանրության գիտակցության մեջ ամրացված օբյեկտիվ իրականության, առարկայի, երևույթի նկատմամբ ունեցած բառի վերաբերությունն է, նրա համապատասխանությունը: Բառային իմաստի առանձնահատկությունն այն է, որ բառն իբրև լեզվական միավոր իր բառային իմաստով հարաբերակցվում է արտալեզվային նյութի՝ օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների հետ[1]: Սակայն, փոխաբերական իմաստը բառի այն իմաստն է, երբ խոսքում վերջինս ձեռք է բերում այնպիսի առարկա, երևույթ, հատկանիշ նշանակելու համար, որ նրա սովորական կամ բնական հասկացական բովանդակությունը չէ[2]: Այսպիսով՝ փոխաբերության միջոցով եզրույթը հաստատում է օբեյկտիվ իրականության ճանաչողական փուլի անհրաժեշտությունը բառիմաստի ձևավորման գործընթացում՝ համեմատելով հին և նոր իմաստները: Հետևաբար մեզ անհրաժեշտ են կոնկրետ լեզվաբանական կառույցներ, որոնք կարտացոլեն որոշակի հայեցակարգեր: Հաճախ լեզվաբանական կառույցները նկարագրվում են լեզվում արդեն առկա տարրերով:

Փոխաբերությունը, որպես լեզվական միավոր, համարվում է իրականության արտացոլման և ճանաչողության ձև, որը հիմնված է պատկերավոր մտածողության վրա: Վերջինիս հիմնական կիրառման ոլորտը գեղարվեստական գրականությունն է: Գեղարվեստական գրականության մեջ փոխաբերությունը ունի միջնորդավորված արտացոլում և համարվում է նշված հասկացության ոչ թե ուղղակի անվանում, այլ այդ հասկացության պատկերավոր ածականը կամ անվանումը: Այն հասկանալու համար անհրաժեշտ է որոշակի ենթատեքստ, որտեղ վերջինս պետք է հանդես գա իր ուղղակի անվանումով: Այսպիսով՝ գեղարվեստական փոխաբերությունը տվյալ հասկացության երկրորդական անվանումն է:[3]

Գիտական լեզվում փոխաբերությունը հանդես է գալիս որպես տվյալ հասկացության առաջնային անվանում, քանի որ վերջինս այլ անվանում չունի: Հետևաբար գիտական լեզվում առկա փոխաբերության մեջ գոյություն չունի ուղղակի և պատկերավոր անվանումների համադրումը: Քանի որ գիտական եզրույթները հասկացությունների սկզբնական անվանումներն են, ուստի անհրաժեշտ է այստեղ հաշվի առնել տվյալ հասկացությունների ձևավորման և եզրույթների կազմավորման միջև կապը:

---

[1] ***Սուքիասյան Ա. Մ.***, *Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004թ., էջ 104*

[2] *Նույնը, էջ 109*

[3] ***Арутюнова Н. Д.,*** *Языковая метафора // Лингвистика и поэтика. М.: Наука, 1979, с. 147- 173.*

Գեղարվեստական փոխաբերությունը տարբերվում է գիտական լեզվում կիրառվող փոխաբերությունից: Գիտության լեզուն ներկայանում է որպես բնական լեզվի տարատեսակ, որի խնդիրն է ապահովել մասնագետների գիտական հաղորդակցությունը, որոնք հանդիսանում են միաժամանակ բնական լեզվի կրողներ և տիրապետում են համագործածական բառապաշարին: Անխուսափելիորեն գոյություն ունի կապ եզրույթի և համագործածական բառապաշարում առկա բառի միջև: Այդ կապը, անշուշտ, իմաստաբանական բնույթ է կրում, քանի որ եզրույթ-փոխաբերությունները ստեղծվել ու ստեղծվում են համագործածական բառապաշարում առկա բառիմաստի հիման վրա: Հաշվի առնելով այս փաստը՝ կարող ենք ասել, որ փոխաբերականացումը գիտական լեզվում անվանման ընտրության իմաստաբանական գործընթաց է, որը հիմնված է երկու հասկացությունների առարկայական կամ գործառույթային նմանության վրա: Փոխաբերականացման գործընթացն սկսվում է եզրույթը համագործածական բառապաշարում առկա բառից տարանջատելուց, որին հաջորդում է համագործածական բառապաշարում համապատասխան բառ փնտրող մասնագետի մտավոր գործունեությունը: Եզրույթաբանական դաշտում բառը կորցնում է իր համագործածական բառապաշարային նշանակությունը և ձեռք բերում համապատասխան գիտական հասկացություն, որը պահանջում է ոչ թե մեկնաբանություն, այլ սահմանում: Եզրույթները կարող են ունենալ փոխաբերական իմաստ՝ առարկաների, երևույթների, հատկանիշների, իրողությունների միջև առկա որևէ ներքին կամ արտաքին նմանության հիման վրա: Դրանք կարող են լինել մարմնի մաս ցույց տվող բառեր, կենդանիների, կենցաղային և շրջապատող երևույթների անվանումներ: Փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթները դառնում են տվյալ բնագավառի լիիրավ անդամ և լայն կիրառություն գտնում այդ ոլորտում: Նույնիսկ ճշգրիտ գիտությունների դեպքում չենք կարող խուսափել փոխաբերություններից: Այսպիսով՝ փոխաբերությունը համագործածական երևույթ է: Փոխաբերությունները, որոնք առնչվում են հաշվողական տեխնիկային, ունեն հատուկ եզրույթաբանություն: Այս ոլորտին առնչվող տեքստերը լի են փոխաբերություններով, քանի որ մարդկային գործունեության ընթացքում ստեղծված պարզ բառերը ներթափանցել են էլեկտրոնիկայի աշխարհ: Այս ոլորտում եզրույթների մեծ մասը ձևավորվում են բառիմաստի նեղացման կամ էլ ընդլայնման միջոցով: Օրինակ՝ ***հոսանք (current)*** եզրույթը առաջացել է բառիմաստի ընդլայնման և համեմատության հետևանքով՝ հիմք ընդունելով շարժում արտահայտող հայեցակարգը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզուն ազդում է մարդկային գործունեության տարբեր ոլորտների վրա (այդ թվում հաշվողական տեխնիկայի)՝ փոխաբերությունները կարող են լինել **անտրոպոլոգիական**

(մարդաբանական) և **ոչ անտրոպոլոգիական** (ոչ մարդաբանական) փոխաբերություններ:

Անտրոպոլոգիական փոխաբերություններն արտացոլում են մարդու սոցիալական գործողությունների ֆիզիկական, բարոյական և մտավոր հատկությունները: Այդպիսիք են, օրինակ, այն բառերը, որոնք բնորոշում են մասնագիտություն հայեցակարգը: Վերջիններս իրենց փոխաբերական իմաստով օգտագործվում են որպես տեխնիկական եզրույթներ:

Այսպես, օրինակ՝ ***acrobat*** բառը համագործածական բառապաշարում ունի ***մարմնամարզիկ*** իմաստը, իսկ որպես տեխնիկական եզրույթ՝ այն նշանակում է ***ծրագրակազմ***, որը թույլ է տալիս ձևաչափված տեքստը և պատկերները ցուցադրել տարբեր սարքավորումների վրա: ***Administrator*** բառը համագործածական բառապաշարում նշանակում է ***կառավարիչ***, մինչդեռ փոխաբերական իմաստով այն ունի ***հսկիչ*** իմաստը: Նույնը կարելի է ասել ***գործակալ (agent)*** բառի վերաբերյալ, որը, որպես տեխնիկական եզրույթ, ունի ***ծրագիր կամ ծրագրակազմ*** իմաստը, որն ուղարկում է կատարման և վիճակագրական տեղեկությունցանցի կառավարման կենտրոնական կարգավորիչ սարքին:

Անտրոպոլոգիական փոխաբերությունների շարքին են դասվում նաև մարմնի մասերի անվանումները, ընտանեկան հարաբերակցություն ցույց տվող բառերը, որոնք ևս իրենց փոխաբերական իմաստներով լայնորեն կիրառվում են հաշվողական տեխնիկայի ոլորտում: Այսպիսով՝ ***ողնաշար (backbone)*** բառը փոխաբերական իմաստով կիրառվում է հաշվողական տեխնիկայի ոլորտում և ունի **հիմնուղի** իմաստը:

Տեխնիկական եզրույթների կազմավորման մեջ փոխաբերությունները հասանելի տեղեկատվությունը հաղորդում են ճանաչողական մեխանիզմների միջոցով, այլ կերպ ասած՝ փոխաբերությունները նոր հասկացությունները կապում են լեզվում արդեն իսկ գոյություն ունեցող հասկացությունների հետ: Այս եղանակով փոխաբերությունները ապահովում են ընդհանուր բառապաշարի և տեխնիկական եզրույթների կապը: Վերջիններս դառնում են տվյալ լեզվի լիիրավ անդամ և լայն կիրառություն գտնում այդ լեզվում:Նմանատիպ օրինակներ են մարմնի մասեր ցույց տվող բառերը, ինչպիսիք են ***բազուկ (arm), մարմին (body), մատ (finger), գլուխ (head)*** գոյականները: Նշված հասկացություններից յուրաքանչյուրն ունի նոր փոխաբերական իմաստ, որը համարվում է տեխնիկական եզրույթների առաջնային նշանակությունը և կապված չէ վերջիններիս ուղիղ իմաստի հետ: Այսպիսով՝ մարմնի մասեր ցույց տվող գոյականները, ստանալով փոխաբերական իմաստ, տեխնիկական եզրույթաբանության ոլորտում ձեռք են բերում իմաստաբանական առանձնահատկություններ:

Այսպես՝ ***մարմին (body)*** գոյականը սույն օրինակում հանդես է գալիս ***body networks*** կապակցությամբ և ունի փոխաբերական իմաստ:

The personal privacy of individuals requires special attention when ***body networks*** are involved, particularly in healthcare applications (https://www.lifewire.com/introduction-to-body-area-networks-817364).

Բազուկ (arm) գոյականը բնութագրվում է որպես մեխանիկական սարք, այսինքն՝ ***լծակ***, որի միջոցով կարդացող կամ գրանցող գլխիկը տեղադրվում է պնակի ճիշտ շավիղի վրա :

A read /write head is a device found on the ***arm*** of a hard drive (https://www.computerhope.com/jargon/h/head.htm).

Փոխաբերական իմաստով ***մատ (finger)*** գոյականը սույն օրինակում ցույց է տալիս փոքր ծրագիր, որը տեղեկություն է կորզում գործածողի մասին՝ հիմնվելով նրա էլեկտրոնային փոստի հասցեի վրա:

If no arguments are specified, ***finger*** will print an entry for each user currently logged into the system (https://www.computerhope.com/unix/ufinger.htm).

Գլուխ (head) գոյականը՝ որպես տեխնիկական եզրույթ, հանդես է գալիս ***ընթերցող գլխիկ*** (***read head***) կապակցության մեջ: Վերջինս կարողանում է ընթերցել տվյալները մագնիսական պահոցային միջավայրից:

Once the information has been written to the hard drive, it is read by the ***read head*** that detects the polarization of each section of the drive to understand the data (https://www.computerhope.com/jargon/h/head.htm).

Կարող ենք շեշտել, որ փոխաբերականացման դերը մեծ է տեխնիկական եզրույթների ձևավորման մեջ: Ազգակցականություն ցույց տվող բառերը, ինչպիսիք են ***ընտանիք (family), երեխա (child),որբ (orphan)*** գոյականները, նույնպես ունեն փոխաբերական իմաստ և կարող են հանդես գալ որոշակի կապակցություններում:

Այսպես՝ ***ընտանիք (family)*** գոյականը փոխաբերականորեն ձեռք է բերում ***հակաբածու*** իմաստը:

A computer ***family*** is a category of computers with the same designs and microprocessors that are compatible with each other (https://www.computerhope.com/jargon/c/compfami.htm).

Երեխա (child) գոյականը փոխաբերականորեն հանդես է գալիս ***child window (դուստր պատուհան)*** կապակցության մեջ:

In commercial Silver light applications opening ***child window*** for detail or other user inputs is the most user-friendly approach so avoiding ***child window*** can be bit costly (https://www.codeproject.com/Articles/383892/Open-Child-Window-in-MVVM-environment).

Որբ (orphan) բառը փոխաբերականորեն ունի ***կախվող տող*** իմաստը և հանդես է գալիս ***orphan file***, ***orphan process*** կապակցություններում:

An ***orphan process*** is a computer **process whose parent process has finished or terminated**, though it remains running itself (http://www.gmarik.info/blog/2012/orphan-vs-zombie-vs-daemon-processes/).

Orphan files are files that no longer have a parent; the parent being the folder they were in. If a folder is deleted, the files within it are deleted as well but are

not orphans (https://ru.scribd.com/document/226082231/Wp-nt-Orphan-Files-en-Us).

Այսպիսով՝ հետևյալ բառերը, հանդես գալով որպես տեխնիկական եզրույթներ, վկայում են բառիմաստի ընդլայնման և փոփոխման մասին:

Ոչ անտրոպոլոգիական փոխաբերությունները արտացոլում են մարդուն շրջապատող իրականությունը: Տեխնիկական եզրույթների ձևավորման մեջ փոխաբերականությունը ցույց է տալիս երկու տարբեր առարկաների արտաքին նմանության հարաբերակցությունը: Սրանք կարող են լինել կենդանիների, կենցաղային իրերի, հագուստի, բույսերի, ծառերի կամ էլ վերացական հասկացությունների անվանումներ: Այսպես, օրինակ, փոխաբերական անցումը տեղի է ունենում կենդանիների անվանումներից առարկաներին:

Whether ***the mouse*** uses a laser or ball, or is wired or wireless, a movement detected from ***the mouse*** sends instructions to the computer to move the cursor on the screen in order to interact with files, windows, and other software elements (https://www.lifewire.com/what-is-a-mouse-2618156).

Մուկ (mouse) բառը, որպես տեխնիկական եզրույթ, սույն օրինակում հանդես է գալիս ***համակարգչային մկնիկ*** իմաստով: Այս եզրույթի իմաստաբանական ձևավորմանը նպաստել է արտաքին նմանության զուգորդումը, որի շնորհիվ վերջինս լայն կիրառություն ունի որպես համակարգչի մաս:

In addition to inventing new technologies, ***Apple*** also has often been the first to bring sophisticated technologies to the personal computer (https://www.webopedia.com/TERM/A/Apple_Computer.html).

Նույնը կարելի է ասել ***խնձոր (apple)*** բառի մասին, որը հակասում է իր ուղիղ իմաստին և ներկայումս տեխնիկայի ոլորտում հանդես է գալիս, որպես ***ապրանքանիշի բնութագրիչ***: A ***cookie*** is a small text file stored by a web site on your computer to keep track of information about your browsing on that site (https://www.livinginternet.com/w/wa_cookie_what.htm).

Թխվածքաբլիթ (cookie) բառը՝ որպես տեխնիկական եզրույթ, նշանակում է ***նշոցիկ***, որը պահպանվում է համակարգչի կարծրապնակի վրա: Ոչ անտրոպոլոգիական փոխաբերությունները արտահայտում են ոչ միայն բառիմաստի առաձնահատկությունը բնութագրող գծերի, այլև ձևի և բովանդակության կապը: Ինչպես, օրինակ, ***թռչուն (bird)*** բառը ստանում է ***արբանյակ*** իմաստային երանգավորումը, ***ավտոբուս (bus)*** բառը՝ ***կապուղի***, ***գծուղի*** իմաստները, ***նավահանգիստ (port)*** բառը՝ ***բնիկ*** իմաստը, որը հնարավորություն է տալիս տվյալներ փոխանակել համակարգչի ներքին հաղորդակցության կապուղու և այլ սարքի միջև: Այսպիսով, ուսումնասիրելով հետևյալ բառերի իմաստափոխությունը, կարող ենք նշել, որ դժվար է հաստատել փոխաբերական իմաստի զուգորդման կապը պարզ գոյականների ուղիղ իմաստի հետ, քանի որ այն պայմանավորված է արտալեզվական միավորների ազդեցությամբ:

Տեխնիկական եզրույթների փոխաբերության իմաստաբանական կապը պայմանավորված է առնմանության գործոնով, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել արտալեզվական միջավայրի նոր ընկալում և բնութագրում: Հաշվողական տեխնիկայի եզրույթների մեծ մասը ունի փոխաբերական ծագում՝ ելնելով «պատկերի նմանությունից»:[1] Այսպիսի փոխաբերություն է ***հիշողություն (memory)*** բառը, որը վերաբերում է պահոցային տարածքի, որն ի վիճակի է պահպանելու տվյալները կամ հրահանգները:

Փոխաբերության մասնակցությունը լեզվի բառապաշարի զարգացմանը հաստատում է, որ մարդկանց գիտակցության մեջ գոյանում են նոր հասկացություններ, նոր բառիմաստներ: Իհարկե, դա տեղի է ունենում տարերայնորեն, մարդու պրակտիկ կենսագործունեության գործընթացում: Իր ակտիվ գործունեության ընթացքում անընդհատ շփվելով օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների հետ՝ մարդը ճանաչում է նորանոր իրեր, երևույթներ, գործընթացներ: Այդ նորույթները, իհարկե, չեն կարող գոյություն ունենալ մարդու գիտակցության մեջ ինքնին, դա տարածական առումով հնարավոր էլ չէ: Ուստի այդ առարկաները, երևույթները ճանաչելով՝ մարդն իր գիտակցության մեջ ձևավորում է դրանց հասկացությունները: Փոխաբերությունները, որոնք օգտագործվում են հաշվողական տեխնիկայի ոլորտում, շատ հաճախ կիրառվում են, որպեսզի պարզաբանեն որոշակի բարդություններ: Չափազանց բարդ է պատկերացնել այս ոլորտը՝ առանց փոխաբերական իմաստով գործածվող եզրույթների: Այդ բարդությունները այս կամ այն կերպ «տանելի» դարձնելու նպատակով մարդիկ հակված են կիրառելու բառեր, որոնք, ստանալով փոխաբերական իմաստ, հետագայում դառնում են եզրույթներ:

Քանի որ տեխնիկական եզրույթների ձևավորման հիմնական սկզբունքի ամբողջականությունը ձևի և բովանդակության միասնության մեջ է, այդ պատճառով հաշվողական տեխնիկայի եզրույթների ամբողջականության սկզբունքն արտահայտվում է եզրույթաբանության իմաստային դաշտի միավորների միասնության և փոխհարաբերության մեջ, որի թվում են բազմիմաստ բառի կառուցվածքը, հոմանշային շարքը, հականշային զույգը և բառիմաստային խմբերի գոյության այլ օրինաչափությունները գործառույթային և իմաստաբանական դաշտում: Բազմիմաստության ձևավորման զուգորդման հատկանիշը իմաստի փոխանցման տարբեր տեսակներն են՝ ելնելով նմանության գործառույթի և հարակցության սկզբունքից:

Նմանության զուգորդման հիմքի վրա առանձնացվում են այն տեխնիկական եզրույթները, որոնց ուղիղ և փոխաբերական իմաստները

---

[1] ***Lakoff G.,*** *The Contemporary Theory of Metaphor // Metaphor and thought.- 2nd ed.- Cambridge: Cambridge University Press, 1993, p.*202-252

անմիջական վերաբերություն են արտահայտում: Այսպիսով՝ ***ֆայլ (file)*** եզրույթը բնութագրում է համակարգչային տվյալների հատվածը, որը կարող է պարունակել տվյալներ, գրանշաններ կամ գրաֆիկական պատկերներ, որոնք ունեն մեկ անվանում, իսկ ուղիղ իմաստով այն նշանակում է ***թղթապանակ***՝ թղթերը ամրացնելու կամ կարելու հարմարանքով: ***Թղթապանակ (briefcase, folder)*** եզրույթը փոխաբերական իմաստով արտացոլում է նույն իմաստաբանական երանգը, որը հիմնված է նմանության զուգորդման վրա, այն է՝ փաստաթղթերի համալիր, որն օգտագործվում է տեղեկատվության պահպանման, ինչպես նաև մեկ այլ համակարգչից մյուսին կարևորագույն տվյալներ փոխանցելու համար: Ըստ գործառույթի հիմքի՝ կարելի է առանձնացնել ***տախտակ (board)*** և ***կոճակ (button)*** եզրույթները: Վերջիններս, ըստ գործառույթի, ունեն համանուն փոխաբերական իմաստ: Այսպիսով՝ եզրույթների փոխաբերական իմաստի ձևավորումը կապ ունի արտալեզվական միջավայրում վերջիններիս գործառույթի և դերի հետ:

Հիմք ընդունելով կատարած վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ բառի ուղիղ իմաստը անմիջականորեն կապված է մեզ շրջապատող իրականության, առարկաների և երևույթների արտացոլման հետ: Մինչդեռ տվյալ բառը, կիրառվելով հաշվողական տեխնիկայի ոլորտում, վերածվում է եզրույթի՝ ձեռք բերելով մեկ այլ իմաստ, որը հիմնված է առարկաների, երևույթների արտաքին և ներքին նմանության վրա: Գիտական լեզվում եզրույթները ստեղծվում են բառի ուղիղ իմաստի փոփոխությամբ: Առարկաների արտաքին և ներքին նմանությունների փոխակերպումը տեխնիկական եզրույթներում, ի վերջո, հանգեցնում է բառիմաստի համախմբմանը իմաստաբանական պայմանականացման և զարգացման շնորհիվ: Եզրույթների փոխաբերական իմաստը ամրապնդվում է բառիմաստի զարգացման փուլերի ընթացքում, որոնց հետևում ընկած է արմատական փոխաբերությունը, որն էլ ապահովում է զանազան հասկացությունների ընկալումը: Այսպիսով՝ փոխաբերության ներգրավումը գիտական լեզվում հնարավոր չէ բացառել, քանի որ վերջինս հիմնված է դրա վրա: Հետևաբար փոխաբերականացումը առանցքային դեր է կատարում հաշվողական տեխնիկայի եզրույթների ձևավորման գործում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.թ. Է.Ա. Հայրապետյանը:

ՀՏԴ 159.9-05
Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ, Հոգեբանության ամբիոն, հ.գ.թ.

ՆԺԴԵՀԸ՝ ՀՈԳԵԲԱՆ

Նժդեհի գաղափարների հենքը պաշտամունքն է՝ հայրենապաշտություն, ցեղապաշտություն, լեզվա-, զոհա-, նախնիա-, առաջնորդա-, ուժապաշտություն, որոնք խոսուն ձևով արտահայտվել են նրա ասույթներում՝ «Հաղթում է ուժեղը, ոչ արդարը», «Լինել ուժեղ, ավելի ուժեղ, միշտ ուժեղ», «Ուժն է ծնում իրավունքը»:
Նժդեհի այս և բազմաթիվ այլ ասույթներ այսօր թևավոր խոսքեր են: Միայն մեծ հոգեբանը կարող էր ասույթներով ստեղծել մի ուսմունք, որով կառաջնորդվեն իր ազգի հետագա սերունդները:
Բանալի բառեր՝ *Նժդեհ, հոգեբան, գաղափարախոսություն, հոգեվերլուծություն, գեշտալտ հոգեբանություն, հումանիստական հոգեբանություն:*

В. Ярамишян

НЖДЕ-КАК ПСИХОЛОГ

В статье автор попытался логически развивать точку зрения о том, что армянский политический и государственный деятель начала 20-го века Гарегин Нжде, будучи признанным философом, военачальником, политиком, экономистом и реформатором национальной идеологии, в своей бурной, неоднозначной деятельности вполне проявил себя еще и как психолог. Психологические рассуждения и философские обобщения, сделанные Гарегином Нжде, полностью соответствуют статусу профессионального психолога с точки зрения теорий психоанализа З.Фрейда, гештальт психологии и гуманистической теории личности.
Ключевые слова: *Нжде, психолог, идеология, психоанализ, гештальт-психология, гуманистическая психология.*

V.Yaramishyan

NZHDEH AS A PSYCHOLOGIST

In this article, the author puts forward and attempts to logically develop the point of view that Garegin Nzhdeh, the Armenian political and state leader of the early 20th century, as a recognized philosopher, military leader, politician, economist and reformer of the national ideology, in his turbulent ambiguous activity fully manifested himself as a psychologist. Psychological reasoning and philosophical generalizations made by Garegin Nzhdeh fully correspond to the status of a professional psychologist from the point of view of the theories of psychoanalysis by S. Freud, Gestalt Psychology and the Humanistic Theory of Personality.
Keywords:*Nzhdeh, psychologist, ideology, psychoanalysis, Gestalt Psychology, Humanistic Psychology.*

«Գարեգին Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր հիրավի պատմաստեղծ կյանքով հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը»,- այսպես է բնութագրում Գարեգին Նժդեհին նրա կենսագիր Մուշեղ Լալայանը[1]: Թերևս պետք է համաձայնել կենսագրի տված գնահատականի հետ այն առումով, որ Նժդեհը միաժամանակ թե՛ բարոյախոս էր, թե՛ փիլիսոփա, թե՛ քաղաքական և ռազմական գործիչ: Նժդեհի գործունեության մեկ այլ հետազոտող Ռաֆայել Համբարձումյանը նույնպես բարձր է գնահատել Նժդեհի համակողմանի զարգացածությունն ու արդյունավետ գործունեությունը: Նա գրում է. «Մեծ է Գարեգին Նժդեհի դերը հայոց պատմության մեջ: Նա քսաներորդ դարի առաջին կեսի համաշխարհային իմաստագիտության կարկառուն դեմքերից է, այդ շրջանի պետական ու քաղաքական խոշորագույն գործիչներից և ժամանակի մեծ զորահրամանատարներից ու ռազմարվեստի տեսաբաններից մեկը: Գարեգին Նժդեհը 20-րդ դարի մեր խոշորագույն հրապարակախոսն է, հռետորը, պետության ղեկավարը, հայոց նոր ***ռազմահոգեբանության հիմնադիրը*** (ընդգծումը մերն է)**,** 20-րդ դարի հայոց առաջին սահմանադրության հեղինակն ու կիրարկողը, հայերենի լեզվառաձն ու բառապաշարը հարյուրավոր նորակերտություններով հարստացրած տաղանդավոր գրող-արվեստագետը և, վերջապես, Հայոց Ոսկեդարի ծնունդ ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական համակարգի՝ Մամիկոնեից ուխտի վերածնողն ու նոր ժամանակներին ագուցող տեսաբան-իրագործողը...»[2]:

Եթե շարունակենք մեր դատողությունները Նժդեհի կերպարի վերաբերյալ ոչ միայն Մուշեղ Լալայանի, Ռաֆայել Համբարձումյանի, այլ նաև մյուս ուսումնասիրողների կողմից տրված գնահատականների համեմատական վերլուծություն կատարելու ուղղությամբ, ապա բազմաթիվ տեսակետների, կարծիքների ու երբեմն նույնիսկ մերժողական դիրքորոշումների[3] բազմազանության մեջ կարելի է կարմիր թելի նման հստակ ուրվագծել հետևյալ տրամաբանությունը. Նժդեհի անձի մեջ անվիճելիորեն միաձուլվել են ինքնամոռաց հայրենասերը, հմուտ զորավարը, համոզված գաղափարախոսը, ճկուն քաղաքագետը, խորամիտ փիլիսոփան, նույնիսկ՝ տնտեսագետը: Այս տեսանկյունից, բնավ չհավակնելով Նժդեհի բարդ կերպարի վերաբերյալ նոր խոսք ասելու

---

[1] ***Նժդեհ Գ.,*** *Հատընտիր: Երկրորդ հրատարակություն-Երևան, Հայաստան, 2001, էջ 3:*

[2] *Տե՛ս* ***Համբարձումյան Ռաֆայել,*** *Գարեգին Նժդեհ (ինքնակենսագրություն և կենսատարեգրություն), Հայրենիքի մարտիկ, 1-2009 , ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009, էջ 40-41:*

[3] *Նժդեհին ոմանք մեղադրում էին ծայրահեղ ազգայնականության, նույնիսկ հիտլերականության մեջ:*

դժվարին պարտավորությանը, սույն հոդվածում մենք կփորձենք տեսականորեն զարգացնել Ռաֆայել Համբարձումյանի արտահայտած այն միտքը, որ Նժդեհը հայոց ռազմահոգեբանության հիմնադիրն էր: Մեր կարծիքն այն է, որ Նժդեհը հոգեբան էր՝ բառիս լայն իմաստով: «Լայն իմաստով հոգեբան» ասելով՝ նկատի ունենք այն, որ Նժդեհը հոգեբանական հատուկ-մասնագիտական կրթություն չի ստացել, որպես տվյալ ոլորտի ձևավորված մասնագետ՝ երբևիցե հանդես չի եկել: Նա, սակայն, իր աշխատություններում ձևակերպել ու հանրությանն է ներկայացրել այնպիսի մտքեր, թեզեր ու պնդումներ, որոնք աներկբա ու հաստատապես բնորոշ են մարդու հոգեկանի ձևավորման ու դրսևորման խնդիրներով զբաղվող մասնագետներին՝ հոգեբաններին: Համարձակվենք պնդել ավելին. Նժդեհը հայազգի առաջին և նշանավոր հոգեբաններից մեկն է եղել:

Առաջ գնալով Նժդեհ-հոգեբանի կերպարն ամբողջականացնելու ուղղությամբ, մեր առջև խնդիր դնելով նրա անձի մեջ գտնելու հոգեբանին բնորոշող նորանոր գծեր՝ կարելի է հետաքրքիր ու անսպասելի բացահայտումներ կատարել: Նախ, կարելի է զարմանալ, թե փոթորկալից կյանքով ապրող փոքրամարմին այդ մարդուն ե՛րբ և ինչպե՛ս հաջողվեց գրեթե ամբողջ ծավալով լիարժեք տիրապետել ժամանակի համաշխարհային փիլիսոփայության, քաղաքագիտության, մշակութաբանության, տնտեսագիտության, իրավագիտության և, մեր տեսանկյունից, նաև հոգեբանության, գիտելիքների կուտակված ծավալին: Չվախենալով սխալվելուց՝ թերևս ենթադրենք, որ նա այդ արել է 1906-1907 թթ-ին Բուլղարիայում, Սոֆիայի սպայական բարձրագույն դպրոցում սովորելու ժամանակ, երբ փոքր-ինչ հնարավորություն է ունեցել բարձրորակ ու համակարգված կրթություն ստանալու, ինչպես նաև 1922 թ. նույն Բուլղարիայում հաստատվելուց հետո, երբ որոշ չափով ազատ ժամանակ է ունեցել: Նկատենք, որ մինչ այդ Նախիջևանի ռուսական դպրոցն ավարտելուց հետո, Նժդեհը սովորել է նաև Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, հետագայում՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժնում, որը, սակայն, չի ավարտել՝ ցարիզի դեմ տարվող պայքարում ակտիվորեն ներգրավվելու պատճառով[1]:

Հայտնի է, որ Նժդեհի անունն անգամ հիշատակելը խորհրդային համայնավարական իշխանության օրոք հավասարազոր է եղել ազգայնականության մեջ մեղադրվելու ծանրագույն հանցագործությանը: Մեր օրերում՝ անկախությունից հետո մինչև 2018թ. իշխանափոխությունը, իշխող Հանրապետական կուսակցության կողմից որդեգրած գաղափարական ելակետերը պետության կողմից իրականացվող քաղաքականության աստիճանի հասցված և ջանադրաբար իրականացվող նպատակային քարոզչության, Նժդեհի կերպարի լայնամասշտաբ

[1] ***Նժդեհ Գ.,*** *Հատընտիր, էջ 3:*

հանրայնացման, այն որպես հայրանասիրության օրինակելի տիպար ներկայացնելու և այլ միջոցառումների շնորհիվ (կարծում ենք, դրան գումարվել է նաև կատարած գործերի համար Նժդեհին երախտապարտ ժողովրդի հավաքական հիշողությունը) նրա անունը առնվազն լսել էին կամ նրա ազգապահպան գործերի մասին տեղյակ էին գրեթե բոլորը, նրա ասույթներին, գաղափարներին ու մտքերին ծանոթ էին շատերը, և, չնայած Նժդեհի անվան մեծ ճանաչվածությանը, այնուամենայնիվ, քչերն էին խորապես հասկանում, որ Նժդեհի իրական մեծությունը ոչ միայն և ոչ այնքան նրա հայրենասիրական ասույթների, ոգեկոչող ճառերի ու տարած ռազմական հաղթանակների մեջ է, որքան մտավոր ոլորտում նրա ունեցած նվաճումների՝ խոհափիլիսոփայական ընդհանրացումների ու մարդկային գործունեության տարբեր ոլորտներին առնչվող զանազան արդիական, երբեմն նորոգչական ու հեղափոխական մտքերի մեջ: Նրա «Էջեր իմ օրագրէն», «Բանտային գրառումներ», «Անձնավկայություն», «Բաց նամակներ հայ մտավորականությանը», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Խորհրդածություններ պատմության մասին», «Իմաստասիրական խոհեր», «Անհատ և պետություն» և այլ աշխատությունները[1] իմաստասիրական մտքի փայլատակումներ են, իսկ «Մետապոլիտիկա» անավարտ աշխատությունը, ինչպես պնդում է Ռ.Համբարձումյանը, կարելի է համարել «քաղաքական ու հասարակագիտական մտքի անխամրելի հուշարձան: Ընդամենը մի քանի էջանոց այդ աշխատությունը բավական էր, որպեսզի Գարեգին Նժդեհը համարվեր ցայսօր մեզանում դեռևս ինքնուրույն գիտաճյուղ չդարձած քաղաքագիտության հայկական դպրոցի հիմնադիրներից մեկը և տեսաբանը»[2]:

Այնուհետև պատմությանը քաջ հայտնի է, թե որքան գաղափարական է եղել Նժդեհը և որքան անզիջում՝ իր դավանած սկզբունքներում, որքան խորը համոզված՝ իր հայացքներում: Այդ հողի վրա նա հաճախ սկզբունքային հակասություններ էր ունենում յուր ժամանակի մտածողների ու գործիչների հետ, որի արդյունքում էլ թերևս հետագայում ձեռնամուխ եղավ ու ձևակերպեց իր նոր՝ Ցեղակրոն ուսմունքը և նորոգեց Դավիթբեկյան ուխտերը: Սակայն, մեր կարծիքով, Նժդեհի մեծությունը ոչ միայն այն է, որ նոր ուսմունք է հեղինակել, այլ այն, որ, ի տարբերություն իր գաղափարական ընդդիմախոսների, կարողացել է վեր կանգնել նեղ կուսակցական, խմբակային մտածելակերպից ու առաջ քաշել այնպիսի գաղափարներ, որոնք ժամանակին ակտիվ դիմադրության չէին արժանացել և ընդունելի են եղել հայ իրականության մեջ գերիշխող ամենատարբեր հասարակական-քաղաքական հոսանքների համար:

---

[1] *Թվարկված աշխատությունները տես նույն տեղը, էջք 30-58, 58-77, 240-258, 258-274, 291-292:*

[2] *Տե՛ս **Համբարձումյան Ռաֆայել,** Գարեգին Նժդեհ (ինքնակենսագրություն և կենսատարեգրություն), Հայրենիքի մարտիկ, 1-2009 , ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009 :*

Նժդեհն իր գաղափարները չէր տարածում ու չէր հանրայնացնում այնքան ժամանակ, քանի դեռ չէր ամրապնդում իրական գործերով: Հանրահայտ է, որ հայրենասիրությունից խոսելուց առաջ իր բացառիկ խոհունության ու հայրենիքի շահն ամեն ինչից վեր դասելու ընդունակության շնորհիվ նրան հաջողվեց Վանի ֆիզիկապես և բարոյապես հյուծված բնակիչներին ինքնապաշտպանության կոչել և փաստացի փրկել բնաջնջումից, հուսալքված Սյունիքի պաշտպաններին մարտի առաջնորդել թուրք-թաթարական ու բոլշիկյան զորքերի դեմ և ազատել հայրենիքի այդ հատվածը Նախիջևանի ու Արցախի ճակատագրին արժանանալու գրեթե անխուսափելի թվացող հեռանկարից: Խոստովանենք, որ այդպես արդյունավետ ու հաջող կարող էր գործել միայն մարդու և, հատկապես, զանգվածների հավաքական հոգեկան երևույթների գաղտնիքներին խորությամբ տիրապետող անձնավորությունը: Եթե դատելու լինենք՝ հիմնվելով Նժդեհի ոչ թե վերացական մտքերի ու գաղափարների, այլ կատարած գործերի վրա, ապա կեզրակացնենք, որ նա օժտված էր նպատակամետ գործելու բնատուր տաղանդով: Նա գրեթե բոլոր բարդ իրավիճակներում չէր դավաճանում ինքն իրեն, որովհետև էությամբ առաջնորդ էր, ուներ տիտանական կամք ու վճռականություն: Սակայն պետք է նաև փաստենք, որ Նժդեհի կերպարի գրեթե սպառիչ նկարագիրը մեր սեղանին ունենալով հանդերձ՝ անհնար է չնկատել, որ Նժդեհ-հոգեբանի կերպարը պատմությունը քիչ է ուսումնասիրել:

Ազատագրված Սյունիքը, անշուշտ, Նժդեհի մատուցած ամենախոշոր ու շոշափելի ծառայությունն է հայ ազգին, սակայն, խնդիրը միայն ազատագրված տարածքը չէ, թեև գլխավոր խնդիրն է, այլ նաև այդ խնդրի լուծման ժամանակ արձանագրված հոգեբանական արդյունքն է՝ հուսալքված ու արդեն կրավորական կեցվածք որդեգրած ժողովրդին դիմադրության ոգի, սեփական ճակատագիրը սեփական ուժերով տնօրինելու և այլոց ողորմությանը չտրվելու կամք ու վճռականություն ներարկելու մեծագույն ծառայությունը:

Նժդեհն իր համար անելիքներ գտավ նաև նացիստական Գերմանիայում հակահայ տրամադրությունների առաջացման և ֆաշիզմի նորահայտ սպառնալիքների ահագնացման ժամանակ: «Այդ տարիներին Նժդեհի համար վերստին կարևորվում և հրատապ է դառնում հայությանը մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստելու և նոր բարոյականով սպառազինելու խնդիրը»[1]: Հարցնենք ինքներս մեզ՝ այդ ինչպե՞ս պետք է հոգեբանորեն նախապատրաստեր, եթե չլիներ հոգեբան:

Պատմությունը վկայում է, որ վտանգավոր է օրհասական պահերին լինել ժողովրդի առաջնորդը: «Դյուրին բան չէ վարել ժողովրդին, որ բնազդական է, կույր, ապերախտ ու ապա երբեմն՝ հերոսական: Նա գիտե

[1] *Նույն տեղը, էջք 8-11:*

իր լավերին ու առաջնորդներին ոչ միայն մենակ թողնել, այլ նաև գցել սմբակների տակ, երբեմն էլ բարձրացնել կոտոշներից վեր: Այդպես է, և նա, ով կոչված է ղեկավարելու ժողովրդին, պետք է ունենա հավատի և կամքի մի անսպառ շտեմարան», -այսպես է Նժդեհի կատարած գործի կարևորությունը նկարագրել նրա ժամանակակից Գ.Նաիրյանը՝ 1921 թ-ին Գորիսում լույս տեսած և Նժդեհի հեղինակած «Խուստուփյան կանչեր: Զորաշարքային կանոնադրություն» գրքույկի համար գրված նախաբանում[1]:

Որքան էլ ժամանակակից հայեցակետից չխրախուսվի ռազմական, պետական, քաղաքական կամ ազգային գործչի կուսակցական պատկանելությունը, գաղափարայնությունն ու դրանում համոզվածությունը, այնուամենայնիվ Նժդեհի երրորդ խոշոր ծառայությունը պետք է համարել Տարոնական շարժումը և «Ցեղակրոն» ուսմունքի փաստացի հեղինակումը՝ Հայկ Ասատրյանի և Ն.Աստվածատուրյանի հետ[2]:

Պետք է նկատել, որ գործուն գաղափարախոսություն հեղինակելը ամենևին հեշտ գործ չէ: Ավելի հեշտ է առաջնորդվել ուրիշների ստեղծած ու հաջողված փորձով ամրապնդված պատրաստի գաղափարներով: Հարց է առաջանում՝ եթե այս ճշմարտությունը Նժդեհը լավ գիտեր, հապա ինչո՞ւ համարձակություն ունեցավ ձեռնամուխ լինելու այդ դժվարին առաքելությանը, որում մեծ էր ձախողվելու հավանականությունը: Կարծում ենք՝ նման պահվածքի գլխավոր դրդապատճառն այն էր, որ քննախույզ հայացք ունեցող Նժդեհը հասցրել էր նկատել հետևյալ իրողությունը. արևմտյան առաջադիմական համարվող գաղափարները, ազատամտությունն ու պրագմատիզմի վրա հենված բարոյախոսությունը բնավ չեն համապատասխանում հայ ժողովրդի պարկեշտ կենսափիլիսոփայությանը, իսկ արևելյան ադաթներն ու դոգմաները նման են զսպաշապիկի, խիստ նեղ են ու պահպանողական և արգելակում են հայ ազգի բնականոն զարգացումը:

Գարեգին Նժդեհի՝ որպես մտածողի ու հոգեբանի, կերպարի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել՝ շարունակելով հետևել Ռաֆայել Համբարձումյանի ուսումնասիրություններին[3]: Ինչպես պնդում է հեղինակը, Նժդեհը վճռականորեն մերժեց նշված երկու՝ արևմտյան և արևելյան գաղափարական ընկալումներն ու իր սևեռուն հայացքը հառեց Եվրոպայում դեռևս նոր մշակվող նորաձև, մոդայիկ հոսանքների վրա, որոնք, ուշադրություն դարձնենք, Զ.Ֆրեյդի և նրա հետևորդների կողմից առաջ քաշված հոգեվերլուծության, ինչպես նաև, ժողովուրդների հոգեբանության տեսակետից ազգային զարթոնքի ու

---

[1] *Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Խուստուփյան կանչեր: Զորաշարքային կանոնադրություն: Եր, Հայաստան, 1992, էջ 4:*

[2] ***Նժդեհ Գ,** Հատընտիր, էջ 11:*

[3] *Հայրենիքի մարտիկ, 1-2009, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009 :*

վերանորոգչության խնդիրներն ուսումնասիրող, դրանք առաջ տանող, ժողովրդի, ցեղի ու անհատի հարաբերությունները կարգավորել ջանացող գերմոդայիկ գաղափարներ էին՝ հանձինս ժամանակի հեղինակների՝ Տոմաշ Մասարիկի, Ալֆրեդ Ֆուլյեի, Գաբրիել Տարդի, Անրի Բերգսընի և այլոց[1], այդ թվում, մեր կողմից ավելացնենք. Զ.Ֆրեյդի գաղափարների հետևորդ և անհատի ու ժողովուրդների հոգեբանության ճանաչված հետազոտողներ Ա.Ադլերի և Կ.Գ.Յունգի: Կ.Գ.Յունգը, օրինակ, իր տեսության մեջ հատուկ տեղ էր տալիս արքետիպերին ու անձի ռասայական, ֆիլոգենետիկական հատկություններին: Պատճառականության շրջանակներում նա շեշտը դնում է առասպելաբանության, կրոնի, հին սիմվոլիկայի, սովորույթների ու հավատի, ինչպես նաև հոգեկանում դրանց դրսևորումների՝ երազների, նևրոտիկ ախտանիշների, պատրանքների ուսումնասիրության վրա, քանի որ համոզված էր, որ մարդկային էությունը անհիշելի ժամանակներից մարդու նախնիների հավաքագրած փորձի արդյունք է: Յունգի կարծիքով՝ մարդը ծնվում է նախնիներից հաղորդված շատ նախահակվածություններով: Այդ հակումները կառավարում են նրա վարքը, մասամբ պայմանավորում են, թե ինչը նա պետք է գիտակցի և ինչին պետք է հակազդի իր կյանքի ընթացքում: Այլ կերպ ասած՝ կան նախապես ձևավորված ցեղային կոլեկտիվ հատկություններ, որոնք ընտրովի ներթափանցում են մարդու կենսափորձ, մոդիֆիկացվում (վերափոխվում) և զարգանում՝ ծագած ապրումների շնորհիվ: Այս գաղափարները խիստ համահունչ են Նժդեհի կողմից առաջ քաշվող Ցեղի ու ցեղի պաշտամունքի մտքերին[2]:

Այնուհետև, ըստ Ռ.Համբարձումյանի, ուսումնասիրելով հոգեվերլուծական տեսությունները, դրանք համադրելով Ղ.Ալիշանի, Ռաֆֆու, Ռ.Պատկանյանի, Դ.Վարուժանի, Ա.Ահարոնյանի ցեղաշունչ գաղափարների հետ, Նժդեհը (Հայկ Ասատրյանի համահեղինակությամբ) կարողացավ ստեղծել հոգեվերլուծական հայկական դպրոցը, որը, ցավոք, չհասցրեց խորությամբ մշակել: Նա ժամանակ չունեցավ հիմնավորապես շարադրելու իր մտքերը խոշոր աշխատությունների մեջ: Պատճառները բազմամազան են՝ միմյանց հերթագայող մարտական գործողություններ, անվտանգային խնդիրներ, ձերբակալություններ ու տեղաշարժվելու սահմանափակումներ, նույնիսկ՝ թղթի ու թանաքի պակաս: «Թղթի պակասության պատճառով բանտարկությանս առաջին տարիներին ես ակամա սկսեցի գրել ֆրագմենտալ, իսկ երբեն՝ սեղմասույթներով, որոնք ֆրագմենտալ բնույթ ունեն»[3]: Հայկ Ասատրյանը փաստում է, որ այս և այլ պատճառներով Նժդեհն իր մտքերը ձևակերպել է ֆրագմենտներով,

---

[1] *Հայրենիքի մարտիկ, 2-2009, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009, էջ 3:*
[2] https://hy.wikipedia.org/wiki-Կառլ *Գուստավ Յունգ, 23.01.2018:*
[3] *Նույն տեղը, էջ 3:*

աֆորիզմների տեսքով, այսինքն՝ նույն սկզբունքներով, որոնցով ստեղծվել են մեր խաչքարները, շարականները, մանրանկարները, որոնք փոքր չափերով ընդգրկուն խտացումներ են: Ահա թե ինչու Նժդեհին վստահաբար կարելի է դասել համաշխարհային աֆորիստիկայի (ասույթակերտության) խոշոր դեմքերի՝ Կոնֆիցիուսի, Շոպենհաուերի, Գյոթեի կողքին: Պետք է նկատել, որ «Նժդեհի ոճն է բեկորային, իսկ մտածողությունն ամբողջական է: Քչերը, շատ քչերն են խոսում, գրում կամ գործում արյունով ու ջղերով»-Նժդեհի մասին մի առիթով այսպես է ասել Հայկ Ասատրյանը[1]: Հետաքրքիր է, որ վերջինս, լինելով բարձրակիրթ փիլիսոփա և հոգեբան, փորձել է բնութագրել Նժդեհի անձը՝ նույն հոգեվերլուծության տեսակետից: «Հոգեբանութիւնը, բնազդների աշխարհը զատելով զուտ բանականությունից, նրան սահմանեց «ենթագիտակցական» բառով: Ենթագիտակցականը գիտակցութականից տարբերւում է նրանով, որ ոչ թէ ուսուցանում է, այլ ժառանգականօրէն փոխանցւում, ոչ թէ իմացական երեւույթ է, այլ կենսաբանական, ոչ թէ անհատական մտօրում է, այլ տեսակի խառնուածք, ոչ թէ մտքի ընդունակութիւն է, այլ արիւնի, ոչ թէ անցանելի է անհատի հետ, այլ զուգահեռ՝ սեռի յաւիտենականութեան»-գրում է Հայկ Աստրյանը՝ ներկայացնելով իր ըմբռնումը եվրոպական նորոգչական գաղափարների, անգիատակցականի, գիտակցության ու ենթագիտակցության հարաբերությունների մասին[2]:

Նժդեհի հոգեբանական կերպարի առաջին բնութագրիչը, ըստ վերլուծաբանի, նրա «բարձր խառնվածքն» է՝ հիմնված հոգեվերլուծական Super-ego-ի կամ «Գերեսի» վրա, կամ ինչպես Հ.Ասատրյանն է ասում՝ «համաեսի» վրա: «Նա ապավինում է ներգերբնականին, սակայն սեփական «ես»-ի փլուզման վտանգից սարսափած՝ իր համար ստեղծում է մի բնական պատվանդան, աստվածացնում է մի «համաես» և, համակվելով կրոնական զգացումով, թափանցում է ենթագիտակցության ոլորտը»:

Նժդեհի «համեսը» ցեղն է, ինչը շեշտում և երանգավորում է նրա խառնվածքը: Շարունակենք մեջբերել Հ.Ասատրյանին. «Ենթագիտակցականում անձնային «ես»-ը հանդիպում է ցեղային «համեսի» տարերքին: Կախված նրանից, թե խառնվածքը ինչպիսի դիրքորոշման է մղում անձին՝ կոնֆլիկտային, թե ներդաշնակելի, մի դեպքում երկու «ես»-երի միջև ստեղծվում է անկամրջելի մի անդունդ, որի արդյունքում անհատը մատնվում է ներքին ողբերգության, խառնվածքն սկսում է աղոտանալ և, ի վերջո, անձը դառնում է սովորական եսապաշտ, անձնական փառասիրության գերի: Երկրորդ դեպքում երկու «ես»-երի ներդաշնակ ձուլումով կաղապարվում է ցեղատիպ մարդու հուժկու

---

[1] *Նույն տեղը, էջ 3:*

[2] *Տե՛ս **Ասատրյան Հայկ,** Հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ կառ. առընթեր թիվ 6 տպարան, էջ 17:*

անձնավորությունը: Այս բարեբախտ ձուլումով ահա կերպավորված է Նժդեհի էության կարևորագույն գիծը՝ նրա անհատականությունը»[1]:

Այսինքն, ինչպես հասկանալի է դառնում Հ.Ասատրյանի գնահատականից, Նժդեհի երկրորդ բնութագրիչը նրա հզոր անհատականությունն է: «Մենք գործ ունենք փոթորկալից անցյալի տեր մի անհատի, պատմական մի անձնավորության հետ, որն իր ժողովրդի վտանգի պահին դառնում է նրա մարգարեն, գուշակը, առաջնորդը...»:

Երրորդ: Ֆրագմենտարիզմ, որի մասին արդեն խոսեցինք: Ֆրագմենտարիզմի համաշխարհային տիտանը, անխոս, եղել է Նիցշեն, իսկ հայ իրականության մեջ՝ Գրիգոր Նարեկացին: Նժդեհը, նրանց օրինակով, ստեղծագործում է ոչ թե թելերով, որոնք հետագայում հանգույցների պետք է վերածվեն, այլ խտացված հանգույցներով: Ժամանակակից հոգեբանության տեսակետից մի փոքր լրացում կատարենք. Նժդեհի այս հատկությունը համահունչ է հոգեբանական մեկ այլ տեսության՝ գեշտալտ հոգեբանության մոտեցումների հետ: Գեշտալտը ընկալման ամբողջական հանգույց է, համապատկեր, որի շնորհիվ մենք արտաքին պատկերներն ընկալում ենք ոչ թե մասնակի, կտրտված, այլ ամբողջական պատկերներով, ինչը և հիմք է տալիս վերացարկման ու ամբողջական սիմվոլներով նոր՝ երևակայական պատկերների ստեղծման համար[2]:

Հետաքրքիր է, որ Նժդեհի մտորումներն ու կարգախոսները, որոնք ի վերջո դարձել են հանրաճանաչ ասույթներ, լիովին համապատասխանում են հոգեբանական մեկ այլ տեսության հիմնադրույթների հետ, որը, որպես այդպիսին, ձևավորվել է փոքր-ինչ ավելի ուշ՝ 20-րդ դարի 50-60-ական թթ-ին: Հումանիստական հոգեբանության[3] ուսումնասիրման առարկան մարդու սուբյեկտիվ, գիտակցական փորձն է, նրա ներաշխարհը, հոգևոր կեցությունը: Այս ուղղության հիմնական նպատակն է՝ հասկանալ մարդու էությունը, նպաստել նրա ներունակ հնարավորությունների ակտուալացմանը: Հումանիստական հոգեբանության մարդասիրությունը ոչ միայն նրա բարության, գթասրտության մեջ է, այլև նրա կարողության՝ օգնել մարդուն ինքնաիրականացնել իրեն, ներդաշնակություն մտցնել իր ակտուալի և պոտենցիալի միջև: Հումանիստական հոգեբանությունը լավատեսական դիրքորոշում ունի կյանքի նկատմամբ և հաղթահարելի է համարում կյանքի ընթացքում ծագած բոլոր դժվարությունները, այսինքն՝ այն, ինչը կազմում է Գ.Նժդեհի ողջ գաղափարախոսության հիմքը: Հումանիստական հոգեբանության հիմնադիրներից Վիկտոր Ֆրանկլը համոզված էր, որ «տառապանքի անխուսափելիությունը հնարավոր չէ հաղթահարել, բայց, այնուամենայնիվ, հումանիստական հոգեբանը

---

[1] *Հայրենիքի մարտիկ, 2-2009, էջ 4:*

[2] *ttps://hy.wikipedia.org/wiki/ Գեշտալտ հոգեբանություն, առ 23.01.2018:*

[3] *ttps://hy.wikipedia.org/wiki/Հումանիստական հոգեբանություն, առ 23.01.2019:*

դիմում է նրան իր ամբողջությամբ՝ մահվան և այլ վախերով, օտարացման հետ միասին՝ նպատակ ունենալով օգնել իրեն ընդունել այս ամենը, միաժամանակ չկորցնելով իր կյանքի իմաստը, սերը, հավատքը և պատասխանատվությունը իր սեփական կյանքի վերաբերյալ»[1]:

Կյանքի իմաստի արժեորումը մեծ տեղ է գրավում հումանիստական հոգեբանության մեջ: Կյանքի իմաստի արժեորումը պետք է դիտարկել մենակության, նույնականության, հեղինակության և իմաստի հիմնախնդրի համատեքստում: Ի դեպ, նույն Վ.Ֆրանկլի ներմուծած «էկզիստենցիալ վակուում» եզրը՝ կյանքի իմաստի կորուստը, որը ծագել էր հետպատերազմյան Ամերիկայում, արդիական է նաև Նժդեհի գաղափարներում, քանի որ նրա պայքարում ևս, ընդգծված չափերով, առկա է եղել պայքարն ամենաբարձր արժեքների և հեղինակությունների համար[2]:

Տառապալից մտորումներից հանկարծակի ծնվող վեհաշունչ բանաձևումներ. ահա Նժդեհի մտածողության արգասիքը: Նրա ասույթները պատկերավոր ընդհանրացումներ են՝ սինթեզ /համադրություն/ և ալեգորիա /այլաբանություն/՝ միասին վերցրած: Նրա երևակայությունը միշտ պտղաբեր է: Նրա ասույթները պայթուցիկներ են, որոնք հազարավոր սրտեր են հրդեհում: Երկարաշունչ չեն դրանք, որովհետև սրտի պոռթկումներ են: Ֆրագմենտար մտածողության և հոգեբանական այսպիսի եզակի հատկության նմուշները հեշտ է գտնել Նժդեհի գրեթե բոլոր, առանձնապես «Էջեր իմ օրագրեն», «Բաց նամակ հայ մտավորականությանը», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Հիշիր պատերազմը» և այլ գործերում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Ա.Մ.Մխիթարյանը:

---

[1] *Հոգեբանությունը և կյանքը, հ.1, 2002, էջ 24-26:*

[2] *см. Психология с человеческим лицом: гуманистическая перспектива в постсоветской психологии /Под ред. Леонтьева Д. А.,. Щур В. Г., М.: Смысл, 1997, с. 23:*

ՀՏԴ 159.9-057
Զինվորական հոգեբանություն

Բագրատ ԵՐԻՑՅԱՆ
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան,
մ.գ.թ., պրոֆեսոր
E-mail: mu.vs@mil.am

ՀԵՏԱԽՈՒՅԶ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ուսումնական գործընթացի բաղադրիչներից է ապագա սպաների շարժողական ընդունակությունների կատարելագործումը, նրանց մոտ ռազմակիրառական հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Այդ նպատակն իրականացնելու համար Զինված ուժերի ֆիզիկական պատրաստության հրահանգներում, որպես միջոց տրվում են արգելագոտու հաղթահարման չորս՝ թիվ 24, 25, 26, 27, ձեռնամարտի՝ թիվ 29, նռնակի նետում՝ թիվ 30 վարժությունները:

Ռազմական համալսարանում 2016- 2018 թթ. անցկացվել է գիտափորձ՝ վերոնշյալ վարժությունների ուսումնասիրման, հմտությունների ձևավորման առավել արդյունավետ գործոնները, դրանց կատարելագործման մեթոդներն ու միջոցներն որոշելու և ուսումնական գործընթացում կիրառելու նպատակով:

Բանալի բառեր՝ *ռազմակիրառական հմտություններ, հետախույզներ, գիտափորձ, մաթեմատիկական վերլուծություն, մոդելային սանդղակներ, արգելագոտու հաղթահարում:*

Б. Ерицян

НАУЧНО-МЕТОДИЧЕСКАЯ ОСНОВА РАЗВИТИЯ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ НАВЫКОВ У КУРСАНТОВ-РАЗВЕДЧИКОВ

Главной задачей Высших военных учебных заведений (ВВУЗ-ов) является подготовка высококвалифицированных офицеров для различных родов войск. Решая эту важную задачу в Военном университете им. В. Саргсяна, будущие офицеры изучают целый ряд необходимых дисциплин, в том числе и физическую подготовку.

С целью совершенствования физической подготовки и, в частности, ее военно-прикладной составляющий, был проведен педагогический эксперимент, в результате которого для курсантов-разведчиков были разработаны различные комплексы развивающих упражнений, составлены модельные оценочные шкалы, благодаря которым стало возможным развитие и контролирование процесса

совершенствования военно-прикладных навыков в любой период учебного процесса.
Ключевые слова: *курсанты-разведчики, педагогический эксперимент, военно-прикладные навыки, математический анализ, модельные шкалы, преодоление препятствий.*

B.Yeritsyan

METHODOLOGY OF MILITARY APPLIED SKILLS ASSESSMENT OF SOUT CADETS

The main task of the Military University is to train highly qualified officers.Solving this important task future officers are given necessary disciplines including physical training in the Military University after V. Sargsyan.
In order to improve physical training and, in particular, its military-applied component a pedagogical experiment was conducted as a result, model estimated scales have been compiled for cadets, thanks to which it became possible to specify and to differentiate the improvement of military-applied skills of scout cadets.
Keywords: Military-applied skills, scout cadets, pedagogical experiment, mathematical analysis, model scales, overcoming obstacles.

Արդիականությունը: Ֆիզիկական պատրաստության միջոցով ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտները զարգացնում են ոչ միայն ընդհանուր և հատուկ շարժողական ընդունակությունները, այլ նաև ձևավորում ու զարգացնում են իրենց ռազմակիրառական ընդունակություններն ու հմտությունները: Դրանից բացի նրանք ստանում են տեսական գիտելիքներ ֆիզիկական պատրաստության կազմակերպման և մեթոդիկայի մասին: Քառամյա ծանրաբեռնված պարապմունքների արդյունքում՝ Հայոց բանակի ապագա սպաները ձեռք են բերում տարբեր գիտելիքներ, հմտություններ և ունակություններ՝ դառնալով բազմակողմանի զարգացած, բարձր որակավորում ունեցող կադրեր:

Հատկանշական է, որ, կարևորելով ֆիզիկական պատրաստությունը և դրա մասնագիտակիրառական բաղադրիչը, բազմաթիվ գիտնականներ (Ս. Վ. Նեպոմնյաշչի, Վ. Ի. Սուխոցկի և ուրիշներ) անդրադարձել են ռազմակիրառական ընդունակությունների ձևավորման և կատարելագործման հարցերին՝ նշելով դրանց կարևորությունը ուժային կառույցների աշխատակիցների և, հատկապես, ազգային բանակի մարտիկների համար:

Զարգացնելով կուրսանտների մասնագիտակիրառական շարժողական ընդունակությունները՝ մարզումների ընթացքում տեղի է ունենում նաև նրանց կամային որակների զարգացումը, այսինքն՝ ռազմակիրառական վարժությունների նպատակային և գիտակցված բազմաթիվ կրկնությունները կոփում են նրանց և հեշտացնում ծագող խնդիրների հաղթահարումը, իսկ դրանց տիրապետման և հմտանալու արդյունքում աստիճանաբար դրսևորվում ու ձևավորվում են որոշակի կամային հատկանիշներ, ինչպիսիք են՝ համառությունը, նպատակասլացությունը, վճռականությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ և այլն:

Հետազոտության նպատակը: Կարևորելով դա՝ որոշվեց ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում անցկացնել գիտափորձ՝ բոլոր կուրսանտների ներգրավմամբ՝ որոշելու նրանց ռազմակիրառական հմտությունները ձևավորող գործոնները, բացահայտելու կուրսանտների առավել կարևոր շարժողական ընդունակությունները, մշակելու նրանց ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակները և կազմելու գործնական առաջարկություններ մասնագետների և պրոֆեսորադասախոսական կազմի համար:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվեցին հետևյալ խնդիրները. երկամյա գիտափորձի արդյունքում ուսումնասիրել կուրսանտների ֆիզիկական զարգացման փոփոխությունները, պարզել ֆիզիկական պատրաստության դասերի ծանրաբեռնվածության աստիճանը և դրանց արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները, մշակել և գիտափորձի արդյունքներով հիմնավորել ռազմակիրառական հմտությունների ձևավորման մեթոդիկայի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները: Առաջ քաշված խնդիրների լուծման համար ընտրվեցին հետևյալ մեթոդները. մանկավարժական գիտափորձ, մանկավարժական դիտարկում, շարժողական ընդունակությունների թեստավորում, մաթեմատիկական վերլուծություն:

Ապա, ընդգրկելով բոլոր կուրսանտներին, անցկացվեցին հետազոտական աշխատանքներ՝ գտնելու համար գիտականորեն հիմնավորված ցուցանիշները, որոնք հնարավորություն են ընձեռում գնահատել կուրսանտների ֆիզիկական պատ-րաստության վիճակը, մարզումների կազմակերպման առավել արդյունավետ ձևերը և հագեցնել դրանք համալիրներով ու վարժություններով, ինչն իր հերթին կնպաստեր շարժողական ընդունակությունների աճին և ռազմակիրառական հմտությունների բարելավմանը:

Հիմնական բովանդակությունը: Չափագրումները անցկացվել են Մոսկվայի անթրոպոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված մեթոդիկայով, ըստ որի՝ ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշներ են ընտրվել մարմնի զանգվածը, հասակը և կրծքավանդակի շրջագիծը:

Շարժողական ընդունակությունները որոշելու համար ընտրվել է չորս վարժություն՝ վերցատկ տեղից, հեռացատկ տեղից, սեղմումներ գետնի վրա և Հարվարդյան ստեպ թեստ:

Ռազմակիրառական հմտությունները որոշելու համար ընտրվել է երեք վարժություն. թիվ 24՝ ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում, թիվ 25՝ հատուկ ստուգողական վարժություն արգելագոտիներում և թիվ 27՝ վազք ստորաբաժանման կազմով՝ արգելագոտու հաղթահարմամբ:

Ընտրված վարժություններից երեքը՝ թիվ 24-ը, 25-ը և 27-ը հատուկ մասնա-գիտական են, իսկ դրանց տիրապետման գործընթացը՝ բարդ, քանի որ արգելագոտու հաղթահարման վարժություններն իրենցից ներկայացնում են բազմաթիվ և բազմապիսի խոչընդոտներ ու արգելքներ:

Նշենք նաև, որ արգելագոտու հաղթահարման վարժությունների տիրապետման գործընթացը տեղի է ունենում բազմաթիվ դժվարությունների հաղթահարման պայմաններում, երբ ապագա սպաները դրսևորում են տարբեր կամային հատկանիշներ՝ համառություն, տոկունություն, վճռականություն, իսկ երբ չի ստացվում՝ նույնիսկ հիասթափություն, երբեմն էլ՝ հուսահատություն, սակայն վերջնարդյունքում, չորս տարվա համառ աշխատանքի շնորհիվ կոփվում է կամքը, և տիրապետում են անհրաժեշտ հմտությունների:

Գնահատման մոդելային սանդղակների մշակման համար ուսումնասիրվել են I-IV կուրսերի բոլոր կուրսանտները: Ուսումնասիրության ծրագիրը ներառում էր շարժողական ընդունակությունների, ռազմակիրառական հմտությունների և աշխատունակության գնահատում, ցուցանիշների մշակում և այդ ցուցանիշների շարադրում՝ ըստ գնահատման 5 (բարձր, միջինից բարձր, միջին, միջինից ցածր և ցածր) աստիճանների: Աղյուսակում ներկայացված յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր համապատասխան գնահատականը:

Գիտական նորույթ: Աշխատանքի գիտական նորույթը այն է, որ գիտափորձի արդյունքում առաջին անգամ ներկայացվել են ցուցանիշներ՝ կուրսանտների ռազմակիրառական հմտությունների վերաբերյալ, և կազմվել են դրանք արտացոլող մոդելային սանդղակներ:

ՄՈԴԵԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

I կուրսի հետախույզների

	Վարժության և ծավալի անվանումը	Ցուցանիշներ				
		բարձր	միջ. բարձր	միջին	միջ. ցածր	ցածր
Ֆիզիկական զարգացում	հասակը (սմ)	177.6 և բարձր	177.5 – 175.2	175.1 -170.9	170.8 – 168.4	168.3 և ցածր
	մասսա (կգ)	69.2 և բարձր	69.1 – 66.0	65.9 – 61.1	61.0– 57.8	57.7 և ցածր
	կրծքավանդակի շրջ. (սմ)	89.7և բարձր	89.6 – 88.2	88.1 – 85.8	85.7 – 84.3	84.2 և ցածր
Շարժողական ընդունակություններ	սեղմումներ գետնի վրա	43.4 և բարձր	43.3-40.6	40.5-36.0	35.9-35.8	35.7 և ցածր
	վերցատակ տեղից (սմ)	54.8 և բարձր	54.7-53.4	53.3-51,2	51.1-49.8	49.7 և ցածր
	հեռացատակ տեղից (սմ)	234.8 և բարձր	234.7 - 230.5	230.1 - 222.5	222.4 - 217.8	217.7 և ցածր
	ՀՍԹ	70.2 և բարձր	70.1-68.9	68.8-67.2	67.1-65.9	65.8 և ցածր
Ռազմակիրառական հմտություններ	վարժ. թիվ 24	141.1 և ցածր	141.2 - 144.5	144.6 - 150.1	150.2– 153.3	153.74 և բարձր
	վարժ. թիվ 25	192.7 և ցածր	192.8 -197.5	197.6- 205.3	205.4 - 210.1	210.2 և բարձր
	վարժ. թիվ 27	268.7 և ցածր	268.8 - 273.5	273.6- 281.3	281.4-286.1	286.2 և բարձր

Եզրակացություն:

Մոդելային սանդղակը հնարավորություն է ընձեռում.

1. գնահատելու յուրաքանչյուր կուրսանտի շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների զարգացման մակարդակը ուսման տարբեր փուլերում,
2. բացահայտելու անբավարար շարժողական ընդունակություններ ունեցող կուրսանտներին «և ուղենշելու նրանց մոտ այդ որակների զարգացման միջոցներն ու մեթոդները,
3. ըստ շարժողական ընդունակությունների աստիճանի՝ մոտավորապես հավասար պատրաստություն ունեցող կուրսանտներին բաժանել խմբերի՝ անհատականացնելու և տարբերակելու համար նրանց մարզումային գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՊՆ ֆիզիկական պատրաստության ձեռնարկ. Երևան, 2011, 160 էջ:
2. Непомнящий С. В.: Средства и методы профессионально-прикладной физической подготовки работников отдельных подразделений МВД СССР: Автореферат диссертации КПН, М., 1989, 24с.
3. Сухоцкий В. И.: Теоретический раздел требования военно-спортивного комплекса. М., 1975, 62с.
4. Երիցյան Բ.Լ., ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ՌՀ-ի հրետանավոր կուրսանտների ֆիզպատրաստվածության գնահատման մեթոդիկա. ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, 27էջ .
5. Երիցյան Բ.Լ., ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ՌՀ-ի համազորային ֆակուլտետի կուրսանտների ֆիզպատրաստվածության գնահատման մեթոդիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014, 23էջ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9-057
Զինվորական հոգեբանություն

Անի ԱՄԻՐՅԱՆ
ՀՀ, ՇՄ, ք. Գյումրի, Շիրակի պետական համալսարանի «Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի հոգեբանության, զինվորական հոգեբանության դասախոս
E-mail: aniamiryan1989@gmail.com

ԿՐՏՍԵՐ ՍՊԱՅԻ ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՋՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

/ՇՄ թիկունքային զորամասերի օրինակով/

Հոդվածում ներկայացված է ՀՀ ԶՈՒ ՇՄ թիկունքային զորամասերի կրտսեր սպաների հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրների հետազոտության արդյունքները: Ընտրվել են երեք մեթոդիկա՝ «Այզենկի անձնային» թեստ, «Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման» թեստ և Վ.Բոյկոյի «Ընդհանուր տոլերանտության մակարդակը որոշող» հարցարանը: Թեստերի հետ միաժամանակ օգտագործվել են նաև դիտման և զրույցի մեթոդները սպաների և նրանց հրամանատարների հետ: Այս հետազոտության նպատակն էր պարզելու, թե կրտսեր սպայական կազմը որքանով է հոգեբանորեն հավասարակշռված վիճակում գտնվում և պատրաստ բանակում ծառայելու և զինվոր դաստիարակելու համար:
Հիմք ընդունելով հետազոտության վիճակագրական արդյունքները՝ կազմվեց ընտրված թիկունքային զորամասերի կրտսեր սպայական կազմի հոգեբանական բնութագիրը:
Բանալի բառեր՝ *տոլերանտություն, կրտսեր սպայական կազմ, թեստավորում, անձ, հաղորդակցում, հոգեբանական պատրաստություն*:

А. Амирян

РОЛЬ НЕКОТОРЫХ ЛИЧНОСТНЫХ ПСИХОЛОГИЧЕСКИХ ХАРАКТЕРИСТИК МЛАДШИХ ОФИЦЕРОВ В КОНТЕКСТЕ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ПРИГОДНОСТИ

В статье представлены результаты исследования проблем психологической подготовленности младших офицеров тыловых частей Вооруженных сил ШО РА. Были выбраны три методики: «личностный тест Айзенка, тест диагностики позиций общения и опросник В. Бойко Определения уровня общей толерантности». Одновременно с тестами также использовались методы наблюдения и беседы с офицерами и их командирами. Целью этого исследования было выяснить, насколько младший офицерский состав находится в психологическом уравновешенном состоянии и готов служить в армии и воспитывать солдат.
На основании статистических результатов исследования были составлены психологические характеристики младшего офицерского

состава выбранных тыловых частей.
Ключевые слова: *толерантность, младший офицерский состав, тестирование, личность, общение, психологическая подготовленность.*

A. Amiryan

THE ROLE OF SOME PERSONAL PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF JUNIOR OFFICERS IN THE CONTEXT OF PROFESSIONAL APTITUDE

In the article are presented the results of a study of the psychological preparedness problems of junior officers of the rear units of RA SHR Armed Forces. Three methods have been chosen: the Eysenck personality test, communication positions diacnostic test and the V.Boyko questionnaire «determinating the level of general tolerance». At the same time with the tests have been also used methods of observation and conversation with officers and their commanders. The research purpose was to find out how junior officers have been in a psychological balanced state and ready to serve in the army and train soldiers.

Based on the statistical results of the study, were complied the psychological characteristics of the junior officers of the selected rear units.
Keywords: *tolerance, junior officers, testing, personality, communication, psychological preparedness.*

Այսօր ազգային բանակում մեծ տեղ ու դեր ունեն ռազմական հոգեբանությունն ու հոգեբանը: Այդ իսկ պատճառով մեր օրերում ավելի հաճախ են զորմասերում կատարվում հոգեբանական խորհրդատվություններ և հոգեբանական հետազոտություններ՝ ինչպես թեստային, այնպես էլ անհատական տարբերակով:

Ժամանակակից պայմանները ծայրահեղ արագ ազդեցությունն են թողնում անձի էության զարգացման վրա՝ չթողնելով, որ անձն ինքնուրույն կողմնորոշվի (սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և անգամ էկոլոգիական գործոններ): Այսպիսի պայմաններում մեծ է հոգեբանի դերը թե՛ որպես տեսաբան, թե՛ որպես պրակտիկ: Հազարամյակների կիզակետում, երբ բախվում են ներկան ու անցյալը, մարդու համար ամեն ինչ դարձել է երկրորդական ու անհետաքրքիր: Եվ չնայած այս ամենին՝ ամեն ինչ ապրում և զոյատևում է այնքան, քանի դեռ կա մարդ արարածը: Նույնականացման կորուստը կարող է հանգեցնել շատ լուրջ հետևանքների, որը անդառնալի է ոչ միայն մարդու այլև ողջ հասարակության համար: Կորցնելով էությունը՝ անձը, չգիտակցելով կանխում է այն պրոցեսը, որը Վերնիդսկու բնորոշմամբ կոչվում է «նոոսֆերային». այլ կերպ ասած՝ դա այն ոլորտն է, որը փոխգործակցության մեջ է մտնում բնության ու հասարակության հետ, և որն իր հերթին դառնում է որոշիչ գործոն անձի զարգացման հարցում:

ՀՀ Զու-ում կարևոր տեղ են զբաղեցնում սպայի հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը և սպայի անձին ներկայացվող պահանջները: Այս հարցերին են անդրադարձել Վ.Պ. Իվանովը, Ն.Ն. Եֆիմովը, Ս. Վ. Չերնեևը, Վ. Գ. Գրիգորյանցը, Ա. Վ. Կուզնեցովը, Վ. Հ. Մարգարյանը և այլք, որոնք կարևորել են սպայի անձնային որակների, հուզակամային կայունության, հաղորդակցական, կազմակերպչական և այլ

ընդունակությունների ուսումնասիրությունները: Հայ հեղինակները հիմնականում անդրադարձ են կատարել ոչ կանոնադրական հարաբերությունների հանգեցնող պայմաններին և առանձին անձնային հատկանիշներին, որոնք հանգեցնում են կանոնադրական նորմերից զինծառայողների վարքի շեղման:

Վ. Հ. Մարգարյանը նշում է, որ զինվորական կոլեկտիվն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք անդրադառնում են զինծառայողների միջանձնային հարաբերությունների վրա: Հոգեբանական այդ առանձնահատկություններից Մարգարյանը կարևորում է անձնակազմի գործողությունների համատեղելիությունն ու համաձայնեցվածությունը, զինվորական կոլեկտիվի անդամների հաղորդակցման և փոխգործության կայունությունը, տևականությունը և անընդհատությունը, զինվորական կոլեկտիվի երիտասարդ կադրերի սոցիալականացման, արժեքային և վարքային կողմնորոշումները:[1]

«Զինվորական կոլեկտիվի հոգեբանությունը հասկանալու համար, կարևոր է տեսնել ու ճիշտ գնահատել այդ կոլեկտիվում ձևավորվող փոխհարաբերությունների էությունը և ուղղվածությունը, դրանց դրսևորման ձևերը, փոքր խմբերում ծառայողական և անձնական շփումների հարաբերակցությունը, սոցիալական շեղումները և այլն»:[2]

Հիմնվելով վերոնշյալ հանգամանքների վրա՝ հետազոտության համար ընտրել ենք երեք մեթոդիկաներ «Այզենկի անձնային» թեստ (EPI) բացահայտում է հոգեբանական կայունությունը և անկայունությունը /նյարդային/ էքստրավերսիան և ինտրովերսիան, «Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման» թեստ, որը բացահայտում է բացասական հաղորդակցական դիրքորոշումների առկայությունը և «Ընդհանուր տոլերանտության մակարդակը որոշող» թեստը, որը բացահայտում է հաղորդակցական հանդուրժողականության մակարդակը (Վ.Բոյկո):[3]

Հոգեբանական այս առանձնահատկությունների վերլուծության և իմացության համատեքստում է հնարավոր արդյունավետորեն կառավարել զինվորական կոլեկտիվը, կանխարգելել զինծառայողների փոխհարաբերությունների բացասական միտումները, որոնցից են «ոչ կանոնադրական հարաբերությունները»:

Մենք բոլորս նման ենք հողի մեջ ընկած հատիկի, որն ամեն կերպ ձգտում է դուրս գալու արևի երես՝ հաղթահարելով ցանկացած փորձություն: Ինչպես պայքարել և հասնել հաջողությունների՝ հաղթահարելով սրտի և գիտակցության միջև մշտական պայքարը:[4]

Էքստրավերսիա-ինտրովերսիայի և նեյրոտիզմի (նյարդային կայունություն) աստիճանը, ինչպես նաև խառնվածքի տիպը որոշելու նպատակով օգտագործվել է Այզենկի «Անձնային հարցարանը», որի միջոցով կարելի է բացահայտել, թե սպաներից քանի տոկոսին է բնորոշ հուզական

---

[1] *Հայկական բանակ 2/64/ 2010,* ***Մարգարյան Վ.Հ., Մարտիրոսյան Հ.Ա.,*** *Զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները, 101-110 էջ*

[2] *նույն տեղում, էջ 102-103*

[3] http://ipp.hse.ru/popularpsy/tests/22/5102.html *առկա է առ 16.03.2016*

[4] ***Арутюнян С. Ф.*** *"Идентичность: от теории к практике" – монография. – Ереван, Тигран Мец, 2010, 238с.*

կայունությունը կամ նեյրոտիզմի բարձր աստիճանը: Տասնմեկ մասնակցի հարցաթերթիկների տվյալները համարվել են անվավեր ստի սանդղակի բարձր ցուցանիշի պատճառով:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ-ում կարևոր տեղ են զբաղեցնում սպայի հոգեբանական պատրաստության հիմնախնդիրը և անձին ներկայացվող պահանջները:

Հետազոտությունը իրականացվեց թվով 7 զորամասերում չորս ամիսների ընթացքում (հունիս ամսից սեպտեմբեր ամիսը ներառյալ): Աշխատանքի նպատակից ելնելով՝ հետազոտվել են կրտսեր սպայական կազմի 98 ներկայացուցիչ, որոնցից 30-ը լեյտենանտ. միջին տարիքը՝ մոտ 21-27, թվով 26-ը՝ ավագ լեյտենանտ՝ 24-37 տարեկան, և թվով 46-ը՝ կապիտան՝ 28-40 տարեկան:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները տարվել են՝ բացահայտելու երկարամյա (միջինը 12-17 տարի) և կարճաժամկետ (միջինը 4-8 տարի) ծառայության ստաժ ունեցող սպաների անձնային յուրահատկությունները:

Ուսումնասիրություն կատարվել է ոչ միայն թեստավորման միջոցով, այլ նաև օգտագործվել են դիտման և զրույցի մեթոդները սպաների և նրանց հրամանատարների հետ:

Ելնելով Այզենկի անձնային հարցարանի միջոցով կատարված հետազոտության արդյունքներից՝ ներկայացվում են Էքստրավերսիայի, ինտրովերսիայի և նեյրոտիզմի արդյունքները, որոնք ներկայացվում են հետևյալ գծապատկերների տեսքով: Առանձնացվել են էքստրավերսիան և ինտրովերսիան նեյրոտիզմից: (տես՝ նկար 1):



Նկար 1 Այզենկի թեստի արդյունքների տոկոսային ցուցանիշները (n=98):

Սպայակազմի հոգեվիճակի և վարքագծի դրսևորումներում առկա էին նաև այլ՝ «անկախ» փոփոխականներ, օրինակ՝ տարիքային ճգնաժամերի երևույթը: Համադրելով 2 հետազոտությունների՝ Այզենկի թեստի և տարիքային ճգնաժամերի վերլուծությունների արդյունքները՝ հանգեցնում են այն եզրակացությանը, որ առավել խոցելի խումբ համարվում են 30-35 տարեկան սպաները, որոնց ծառայողական ստաժը գերազանցում է տասը տարին: Եվ հենց այս տարիքի սպաներն են, որ համարվում են ‹‹վտանգավոր›› շրջապատի և ծառայակիցների համար:

Ներկայացվում է այդ տարիքի ճգնաժամային առանձնահատկությունները: 30-35 տարեկան. այս շրջանում աճում է անինքնավստահությունը, մարդը հիասթափություն է ապրում, հաճախակի են դառնում կոնֆլիկտները հարազատների հետ: Այս ճգնաժամի բացասական կողմը մոտ մարդկանցից մեկուսացումն է: Նախնական հետազոտությունները ցույց են տալիս, որ այս շրջանում արժեքների կտրուկ վերաիմաստավորում է տեղի ունենում, աճում է ներհայեցողությունը, երիտասարդներն անընդհատ մտորում են սեփական ես-ի արժեքի, կյանքի իմաստի, սեփական կյանքի ուղու մասին: Այս շրջանում ինքնագիտակցության նոր հեղաշրջում է տեղի ունենում. մարդն ընկալում է իրեն որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ և այդ ակտիվության նշանակալիության, իմաստի, հաջողությունների տեսանկյունից է գնահատում իրեն:[1]

Ճգնաժամն ի հայտ է գալիս, երբ կասկածի տակ է դրվում այդ ակտիվության նշանակությունը կամ ընտրած ոլորտում անհաջողությունները ստիպում են վերանայելու սեփական ես-ի՝ որպես տվյալ ակտիվություն իրականացնող սուբյեկտի մասին կարծիքը:

Փաստորեն թեստի և տարիքային ճգնաժամի մեկնաբանության արդյունքում պարզվեց, որ 30-35 տարեկան սպաների մոտ առավել նկատելի են մելանխոլիկ և խոլերիկ խառնվածքի անձնային տիպերը: Ինչը խորանում է տարիքային ճգնաժամ ապրող անձանց մոտ:

Այս թեստավորումը կատարվել է կրտսեր սպայական կազմի բացասական հաղորդակցման դիրքորոշումները բացահայտելու նպատակով: Այս փուլի թեստավորմանը մասնակցել են թվով 82 կրտսեր սպայական կազմ: Ստորև 9 կետերի միջոցով ներկայացվում է, թե ինչ վարքային առանձնահատկություններ են դրսևորվում առավելագույն միավորներ ստացած սպաների մոտ ըստ տվյալ թեստի գնահատման սանդղակի:

1. Նրանք չեն կարողանում և չեն ուզում հասկանալ կամ ընդունել այլ մարդկանց անհատականությունը:
2. Գնահատելով մարդկանց վարքը, մտածելակերպն ու առանձին բնութագրերը՝ դրանք դիտարկում են որպես անձնական չափորոշիչներ: Նման դեպքերում մերժում են գործընկերոջ անհատականության իրավունքը և խցկում իրենց անձի այս կամ այն ենթակառուցվածքների մեջ: Քողարկված դեպքերում նրանք իրենց համարում են «վերին աստիճանի անկեղծ», գործընկերների մասին դատում են՝ ղեկավարվելով իրենց սովորություններով, դիրքորոշումներով և տրամադրություններով:
3. Մարդկանց գնահատելու հարցում կտրուկ են կամ պահպանողական: Նման ձևով կարգավորում են գործընկերոջ անհատականության արտահայտումը և պահանջում են իրենց համար նախընտրելի միօրինակություն, որը համապատասխանում է իրենց ներաշխարհին, ձևավորված արժեքներին և ճաշակին:
4. Չեն կարողանում թաքցնել կամ գոնե հարթել տհաճ զգացումները, որոնք առաջանում են գործընկերոջ անհաղորդակցական որակների հետ բախվելիս: Սովորաբար դրսևորում են անկառավարելի բացասական

[1] ***Слободчиков В. И., Исаев Е. И.***. *Психология развития человека. Развитие субъективной реальности в онтогенезе. Учебное пособие»: Москва; 2013 стр. 179*

ռեակցիաներ ընկերոջ անհաղորդակցունակ որակների արտահայտման դեպքում:

5. Ձգտում են վերափոխելու, վերադաստիարակելու իրենց գործընկերոջը: Գործընկերոջը վերադաստիարակելու փորձերն արտահայտվում են կտրուկ կամ մեղմ ձևերով, սակայն ցանկացած դեպքում հանդիպում են նրա դիմադրությանը: Խիստ ձևը, օրինակ, դիտվում է բարոյականություն քարոզելու և խրատելու, էթիկայի կանոնների խախտման մեղադրանքների մեջ: Մեղմ ձևերը դրսևորվում են վարքի և համագործակցության կանոնները պահպանելու պահանջներում, տարբեր առիթներով նկատողություններ անելու մեջ:

6. Ցանկանում են իրենց գործընկերոջը նմանեցնել իրենց, դարձնել նրան իրենց հարմար: Տվյալ դեպքում նրանք ասես հղկում են գործընկերոջ այս կամ այն որակները՝ ձգտելով կանոնակարգել նրա արարքները կամ նմանեցնել նրան իրենց, պնդում են իրենց տեսակետի ընդունման վրա, ընկերոջը գնահատելիս ելնում են իրենց պայմաններից:

7. Չեն կարողանում ներել ուրիշների սխալները, անփութությունները, անկանխամտածված իրենց հասցրած տհաճությունները: Իրենց գիտակցությունը «թաղվում է» իրենց մեջ: Այդպիսին են փոխադարձ վիրավորանքների, ընկերոջ հետ հարաբերությունները բարդացնելու ձգտման, նրա արարքներին և բառերին յուրահատուկ տհաճ իմաստ տալու աղբյուրը:

8. Չեն դիմանում ֆիզիկական կամ հոգեբանական անհարմարությանը, որում հայտնվել է իրենց ընկերը: Սա դիտվում է այն մտքերում, երբ ընկերը տկար է, դժգոհում է, կամակորություն է անում, նյարդայնանում կամ ապրումակցում, աջակցություն է խնդրում և այլն: Հաղորդակցման հանդուրժողականության ցածր մակարդակով մարդը հոգեպես կարծր է, այդ իսկ պատճառով կամ չի նկատում նման իրավիճակները կամ դրանք նրան նյարդայնացնում են և երբեմն քննադատության հանգեցնում: Դրա հետ մեկտեղ նման մարդիկ անտեսում են նաև այն, որ իրենք ևս անբարեհարմար վիճակում են և սովորաբար հույսը դնում են շրջապատի կարեկցանքի վրա:

9. Դժվարությամբ են հարմարվում ուրիշների բնավորություններին, սովորություններին, դիրքորոշումներին և հավակնություններին: Նման իրավիճակը ցույց է տալիս, որ իրենց ինքնահարմարումը գործնականում ավելի կարևոր է և դրան ավելի հեշտ են հասնում, քան ուրիշներին հարմարվելիս: Համենայնդեպս նրանք առաջին հերթին կփորձեն փոխել կամ վերափոխել ընկերոջը, բայց ոչ իրենց: Որոշ մարդկանց համար սա հաստատուն աշխարհայացք է: Համատեղ գործունեությունը, այնուամենայնիվ, ենթադրում է երկու կողմերի հարմարման կարողություն:[1]

Աղյուսակ 1.

Վ. Բոյկոյի հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման թեստ (n= 82)

Մասնակիցների կոչումներ	Տոկոսներ
Լեյտենանտներ	7%
Ավագ լեյտենանտներ	7.8%
Կապիտաններ	13.9%
Ընդհանուրը	28.7%

[1] ***Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ.***, *Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան Զանգակ, 2002. էջ 225-231:*

Արդյունքում 100%-ից 28.7%-ը հավաքել են առավելագույն ցուցանիշները: Ինչն արդեն իսկ հուշում է, որ սպայական կազմը կարիք ունի հոգեբանական խորհրդատվության և պարբերաբար անցկացվող հոգեբանական աշխատանքների ինչպես խմբային, այնպես էլ անհատական:

Հոգեբանական հետազոտություններից մեկում նշվում է, որ այսօր ռազմական գործունեության բարձր սոցիալական կարևորությունը, որը մի կողմից՝ պարունակում է նրա սուբյեկտի վրա ապակայունացնող ազդեցության ներուժ և զինծառայողի անձի սուբյեկտիվ որակների ձևավորման գործընթացի բովանդակային ասպեկտների համալիր մոտեցման անբավարար մշակվածությունը, մյուս կողմից՝ հանդիսանում են պրոբլեմային իրավիճակի էությունը, որն էլ պայմանավորում է զինծառայողի անձի ամբողջական գոյության հոգեբանական առանձնահատկության հետազոտման հասունացած խնդիրը: Այսպիսով՝ նշվում է զինծառայողի սուբյեկտիվ-անձնային հատկանիշների դինամիկայի համալիր հոգեբանական հետազոտության տեսական, մեթոդոլոգիական և պրակտիկ պահանջվածությունը՝ որպես անձի ժամանակակից հոգեբանության արդիական ուղղություն: Կարևոր է այն փաստը, որ անցկացվել է զինծառայողի սուբյեկտիվության ձևավորման դետերմինանտի էքսպերիմենտալ հետազոտությունը, ինչն էլ թույլ է տվել մշակել հոգեբանական ազդեցության մեթոդոլոգիապես հիմնավորված ծրագիր և իրականացնել դրա պրակտիկ կիրառումը զինվորական ծառայության իրական պայմաններում:

Հետազոտության հիմնական եզրակացություններից մեկը վկայում է այն մասին, որ իրավիճակային-դերային և անհատական-առանձնահատուկ ազդեցությունների հարաբերակցությունը կադրային սպաների և պարտադիր զինծառայության զինվորականների արտացոլված Ես-ի կազմում ունի արտահայտված յուրահատկություն: Կադրային սպաների համար բնորոշ է նրանց կայուն բնավորությունը, ինչը վկայում է սուբյեկտիվության ռեսուրսների ակտիվության մասին: Իրական ռազմական ծառայության շրջանում զինվորների համար արտացոլված Ես-ի բովանդակային բաղադրիչներն ունեն հակասական բնույթ, ինչը հանդիսանում է իրավիճակային դեպրեսիոնալիզացման արտացոլում, որը կարող է դիտարկվել որպես անձի ճգնաժամի դետերմինանտ, ինչն էլ իր հերթին իսկության հասնելու գործում ձևավորում է «խոչընդոտներ»:[1]

Հաջորդ թեստի միջոցով կատարվել է փորձ՝ բացահայտելու բացասական դիրքորոշումների նախանշանները:

Հոգեբանությունում ընդունված է դիրքորոշումը դիտարկել նաև որպես կարճատև հոգեվիճակ* (այս դեպքում նրա սուբյեկտիվ և մասամբ գիտակցական դրսևորումը ուշադրությունն է) կամ անձի կայուն

---

[1] ***Бабаян Э. А.***, *Личность военнослужащего: детерминанты формирования субъектности: Автореф. дис. канд. филос. наук,19 00 01, Краснодар, 2005// dissercat.com/content/lichnost-voennosluzhashchego-determinanty-formirovaniya-subektnosti#ixzz4SNBPkPwh*

* *Անձի հոգեկան ակտիվության ընդհանուր բնութագիրը որոշակի ժամանակահատվածում, նրա ընթացքի յուրահատկությունը և հոգեկանի ընդհանուր ֆունկցիոնալ ակտիվացման մակարդակը:Հոգեվիճակը կարող է լինել գրգռված, ճնշված, ծույլ, գործուն և այլն: Այդ բնորոշումները կարող են վերաբերել մտավոր, հուզական և գործնական ակտիվությանը:*

առանձնահատկություն, որը մշտական ուղղվածություն է հաղորդում նրա ակտիվությանը:[1]

Եվ այսպես, եթե միավորները բարձր են, դա վկայում է հաղորդակցման արտահայտված բացասական դիրքորոշումների մասին, որը հավանաբար բացասաբար է անդրադառնում գործընկերների ինքնազգացողության վրա: Հաղորդակցական բացասական դիրքորոշումների էներգիան հնարավոր է թաքցնել գործընկերների զգայական համակարգից: Բայց սա չի նշանակում պրոբլեմների լուծում: Եթե նույնիսկ հաջողությամբ են թաքցնում բացասական տրամադրվածությունը շրջապատի նկատմամբ /օրինակ՝ աշխատավայրում/, փորձում են զսպել իրենց, լինել կոնկրետ, այնուամենայնիվ առաջ է գալիս մշտական լարվածություն: Էթիկայի տեսանկյունից հնարավոր է, որ ամեն ինչ ճիշտ երևա, սակայն դրա համար վճարվում է հոգեբանական բարձր գին: Վաղ թե ուշ լարվածությունը կհանգեցնի սթրեսի, նյարդային բռնկման և հնարավոր է, որ պոռթկումը տեղի ունենա աշխատանքից դուրս՝ ընտանիքում, ընկերների հետ շփվելիս կամ հասարակական վայրերում:

Բացասական դիրքորոշման նախանշանները. ընդհանուր թվով թեստավորումն անցել է 102 հոգի՝ սպայական հրամանատարական կազմից (ընդհանուր n= 102), որոնցից 30-ը լեյտենանտներ են, 26-ը՝ ավագ լեյտենանտներ և 46-ը՝ կապիտաններ:

Հիմք ընդունելով կատարված վիճակագրական վերլուծությունը՝ ներկայացնենք թեստի պատասխանները.

Աղյուսակ 2.

Բացասական հաղորդակցման դիրքորոշումներ (ըստ Էլլիս թեստի) (n= 102)

Ցուցանիշներ	Թեստավորման մասնակիցներ		
	Լեյտենանտներ n=30	Ավագ լեյտենանտներ n=26	Կապիտաններ n=46
1.Քողարկված դաժանություն /M=20/	36.6%	42.2%	43.4%
2. Ակնհայտ դաժանություն /M=45/	53.3%	46.1%	47.7%
3.Հիմնավորված նեգատիվիզմ /M= 5/	43.3%	57.6%	47.7%
4. Փնթփնթոց /M=10/	56.6%	49.9%	46.6%
5.Հաղորդակցման բացասական փորձ /M=20/	16.6%	57.6%	43.4%
Ընդամենը	41.3%	50.7%	45.7%

M - Միավորների առավելագույն քանակը

Քանի որ միջանձնային փոխհարաբերություններում տեղի է ունենում հաղորդակցման բացասական փորձ, այսինքն՝ ծնողների կողմից բռնություն, ինքնագնահատականի նկատմամբ ոտնձգություն՝ ինքնագնահատականի

[1] **Նալչաջյան Ա. Ա.,** *Հոգեբանական բառարան, «Լույս» հրատարակչություն ,Երևան ,1984, էջ 49:*

իջեցում, հասուն տարիքում կայունացման խնդիր է առաջացնում, ինչի հետևանքով տվյալ մարդկանց մոտ առաջանում է հիմնական նեգատիվիզմ:

Երբ մարդը հայտնվում է կանոնակարգված իրավական սահմանային իրավիճակում (բանակում), (սրող հատկությունները) ֆրուստրացվածության* (*ցանկությունները չեն համապատասխանում իրականությանը) հակումները մեծանում են, ինչը արտահայտվում է փնթփնթոցի երևույթով: Այն բերում է քողարկված դաժանության, հետևանքը՝ այդ լարվածությունը բերում է բացահայտ դաժանության:

Ստորև ներկայացվում են վերոնշյալ խնդիրները՝ առանձին կատեգորիաներով (ենթախմբերով).

Լեյտենանտներն անցել են կրթական զինծառայության փորձից, ունեն որոշակի հաղորդակցման կարողություններ, ինչի հետևանքով հաղորդակցման բացասական փորձը նվազել է 16.6%: Սակայն ծառայության ընթացքում 43.3%-ը առնվազն հիմնավորված արտահայտվող նեգատիվիզմ է դրսևորել: Արդյունքում՝ պատկերացումներն իրենց ծառայության հեռանկարի վերաբերյալ չեն համապատասխանել, ինչի հետևանքով դժգոհությունն աճել է 56.6%-ով: Ծառայության մեջ ունեցած հնարավորությունները կորցնելու մտավախության հետևանքով ընդամենը 36.6%-ի մոտ է արտահայտված քողարկված դաժանությունը: Սակայն դժգոհության բարձր տոկոսի ազդեցությունն այնքան մեծ է, որ հանգեցրել է ակնհայտ դաժանության՝ 53.3%: Արդյունքում՝ 41.3%-ի մոտ առկա են բացասական դիրքորոշման նախանշանները:

Ավագ լեյտենանտները ծառայության են անցել մի փոքր ավելի վաղ, քան նախկին ուսումնասիրվողները: Հետևաբար նրանց մոտ փորձը մի փոքր ավելի շատ է: Սակայն փորձը ցույց է տվել, որ ավագ լեյտենանտների մոտ հաղորդակցման բացասական փորձն առկա է 57.6%-ի մոտ: Արդյունքում՝ դժգոհություն է առաջացել սպասելիքների անհամապատասխանելիության հետևանքով: Այս ամենի հիմքում վերադասից՝ հրամանատարներից ունեցած վախից կամ զգուշավորությունից ընդամենը 42.2%-ի մոտ է նկատվում քողարկված դաժանությունը: Այնուհանդերձ ներքին անհամաձայնության և ագրեսիվության հետևանքով 46.1%-ի մոտ առաջ է եկել ակնհայտ դաժանությունը: Ընդհանուր առմամբ ավագ լեյտենանտների մոտ նկատվել է բացասական դիրքորոշման նախանշանների 50.7%:

Կապիտանների մոտ* (*բանակում հայտնի, որպես կրտսեր գեներալներ) հաղորդակցման բացասական փորձ ունեցողների տոկոսը կազմում է 43.4%, քանի որ նրանք արդեն իսկ ունեն այդ փորձը, ինչպես դրսի շրջապատում, այնպես էլ ծառայողական անձնակազմում: Ծառայողական գործընթացներից հոգնելով և ունենալով ավելի բարձր ինքնագնահատական՝ առաջանում է դժգոհություն շրջապատի և իր չունեցած հնարավորությունների հանդեպ՝ 46.6%, և այդ դժգոհությունն իրենից առաջացնում է քողարկված դաժանություն՝ 43.4%: Չբավարարվելով քողարկված դաժանության մակարդակում՝ առաջացել է հիմնավորված նեգատիվիզմը՝ 47.7%, որն էլ հետագայում ներքին բազում բախումներից հետո փոխակերպվել է ակնհայտ դաժանության՝ 47.7%:

Ատենախոսական աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուս գիտնականներին արդեն նախորդ հարյուրամյակի վերջերին հետաքրքրում էր զինվորականների հումանիտար նախապատրաստման համակարգում սոցիալական դերի և քաղաքական տեսանկյան առանձնահատկության

խնդիրը: Հեղինակի կողմից նշվում է, որ Ռուսաստանում և աշխարհում կատարվող փոփոխությունները հանգեցրել են զինված ուժերի անձնակազմի ուսուցման և դաստիարակության տեսության և պրակտիկայի վերանայմանը: Առանձնացվել են տեսական, կազմակերպչական և մեթոդական միջոցառումների լայն համալիր, որոնք անցկացվում են զինծառայողի համակողմանի և ներդաշնակ զարգացած անձի ձևավորման նպատակով, որն էլ ունակ կլինի քաղաքացիական հասարակության ժողովրդավարական արժեքների և իրավական հասարակության նորմերի ընկալմանն ու յուրացմանը:[1]

Այսպիսով՝ թեստավորումների արդյունքները թույլ տվեցին բնութագրել կրտսեր սպայի անձի որոշ առանձնահատկություններ, և պարզվեց, որ սպայական կազմը կարիք ունի հոգեբանական լուրջ հետազոտությունների:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

[1] ***Сидлицкий С. С***. *Политологические аспекты гуманитарной подготовки военных моряков: Автореф. дис. канд. филос. наук, 09.00.10, Москва, 1993//http://cheloveknauka.com/politologicheskie-aspekty-gumanitarnoy-podgotovki-voennyh-moryakov#ixzz4SN06yCxz*

ՀՏԴ 37.02:159.92
Մանկավարժություն

Հասմիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան, մանկավարժության ամբիոնի հայցորդ, ՀՀ, ք. Վանաձոր
E-mail: hasmik.xachatryan.79@mail.ru

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվել միջառարկայական կապն ապահովելու անհրաժեշտությանը և կարևորությանը, քննվել են այդ կապի շրջանակներում խոսքի զարգացմանը նպաստող հանգամանքները, կարևորվել է ուսուցման գործընթացում դրա ապահովման դերը և նշանակությունը, քանի որ բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում սովորողների մեջ հնարավոր է զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները: Առաջարկվել են մի քանի մեթոդներ միջառարկայական կապի շրջանակներում խոսքի զարգացմանը միտված աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

Կարծում ենք, որ աշակերտի խոսքի զարգացումը կլինի լիարժեք, եթե այն դառնա դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների, ուսուցչական ողջ կոլեկտիվի նպատակը, եթե դպրոցում հաստատվի խոսքի ընդհանուր և միասնական համակարգ և հետևողականորեն պահպանվի ուսումնական ողջ գործընթացի ժամանակ: Երեխան, քայլ առ քայլ հետևելով մարդկության զարգացման գործընթացին, պետք է ծանոթանա մարդկության մտքի պատմությանը, իմանա, թե ինչպես է մարդը սովորել մտածել, ստեղծել, ձևափոխել ու բարելավել իր կյանքի պայմանները, հասել գիտակցական այսօրվա մակարդակին: Մտածող և գիտակից սերունդ դաստիարակելու նպատակով անհրաժեշտ է ճիշտ և նպատակային կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում, ինչը մեծապես կնպաստի խոսքի զարգացման և հաղորդակցվելու կարողության ձևավորմանը:

Բանալի բառեր՝ *բառ – տերմին, բառապաշար, համակողմանի գիտելիք, աշխարհաճանաչողություն, համակողմանի զարգացում, աշխարհի միասնական պատկեր, սովորելու մոտիվացիա:*

А. Хачатрян

МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ РЕЧИ

В статье рассматривается необходимость и важность обеспечения межпредметных связей в процессе обучения, были исследованы условия, способствующие развитию речи в рамках этих связей, отмечена важность значения и роль для его реализации, т.к. на уроках и на каждом отдельном его этапе среди учащихся возможно развить способность познания жизни, повысить их активность и творческие способности. Для успешной организации работы по развитию речи в рамках межпредметных связей было предложено несколько методов, рассмотренных в данной статье.

На наш взгляд развитие речи ученика будет полноценным в том случае, если станет целью дисциплин и всего учительского коллектива, в школе установится общая и единая система речи, которая будет последовательно соблюдатся на всех этапах учебного процесса. Шаг за шагом следуя за процессом развития человека, ребенок должен ознакомиться с историей человеческой мысли, узнать как человек научился думать, создавать, менять и улучшать условия жизни и достиг до сегодняшнего уровня сознания. Для воспитания думающего и сознательного поколения нужна правильная и целенаправленная организация процесса обучения, развитие способности познания жизни на всех уроках и на всех этапах урока, что поспособствует развитию речи и формированию коммуникативного навыка.

Ключевые слова: *слово-термин, лексический запас, всестороннее знание, мировоззрение, всестороннее развитие, единая картина мира, мотивация к учебе.*

H.Khachatryan

INTERSUBJECT COHERENCE IN THE PROCESS OF SPEECH DEVELOPMENT

The article touches upon the importance and necessity of the intersubject coherence, It discusses the consequances promoting speech development within the bounderies of this coherence, emphasizes its role and meaning in the educational process, since during each phase of the lesson and during each lesson it's possible to develop students' cognitive competences towards life, to raise their activeness and creative skills . Some methods to effectively earalize speech development are suggested within the bounderies of the intersubject coherence.

We think that the students' speech development will be perfect if it becomes the aim of the school teaching staff for all the subjects, if a general and united system of speech is established and consistently followed during the whole learning process, Following the evaluation of humanity step by step the child should get acquainted with the history of human thought, how the human started thinking, creating modifying and improving their life conditions and how they got to their present conscious level. In order to bring up knowledgable and intellectual generation the teaching process should be organized in a right and purposeful way, students' life cognitive skills should be developed during all the lessons and during each phase of the lessons, wich will greatly promote speech development and form communicative ability.

Keywords: *term, word stock, intensive knowledge, world perception, intensive development, unificd image of the world, learning motivation*

Խելքը ոչ միայն գիտելիքն է, այլ այդ գիտելիքը ճիշտ օգտագործելու ունակությունը
Արիստոտել

Խոսքի ձևավորման և զարգացման բարդ գործընթացն իրականանում է մարդու գիտակցության մեջ՝ արտաքին աշխարհի ազդեցությամբ՝ սկսած նրա կյանքի առաջին ամիսներից և շարունակվելով ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացը դեռևս վաղ տարիքից պետք է իրականացվի ու վերահսկվի համապատասխան պայմաններում՝ տնից անցնելով մանկապարտեզ, դպրոց և այսպես շարունակ, քանի որ ողջ կյանքի ընթացքում մարդը շարունակում է կրթվել ու զարգանալ: Որքան լայնորեն ու բազմակողմանիորեն է իրականացվում այս գործընթացը, որքան ճիշտ են կազմակերպվում խոսքի և մտածողության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները, այնքան ակտիվ ու գրագետ է ձևավորվում երեխայի խոսքը:

Հանրակրթական դպրոցի առաջնահերթ խնդիրն է դաստիարակել կրթված ու համակողմանիորեն զարգացած նոր սերունդ, որը պետք է ձևավորի վաղվա հասարակությունը, իրեն դրսևորի սոցիալական միջավայրում, հետևաբար այս խնդիրը պետք է լինի դպրոցական ամբողջ համակարգի ուշադրության կենտրոնում, կրթական նպատակները պետք է լինեն ընդհանուր՝ հիմնված բոլոր առարկաների և նրանց ուսուցման մեթոդների վրա: Այդ նպատակով տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչների կողմից պետք է մշակվի խոսքի զարգացման համատեղ ծրագիր: Ուսուցիչներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել իր առաջարկները՝ միտված խոսքի զարգացման միասնական աշխատանքների կազմակերպմանը, որոնք քննարկելուց և վերլուծելուց հետո կընտրվի առավել արդյունավետը, կմշակվի մեկ միասնական ծրագիր՝ խոսքի զարգացման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Մենք գտնում ենք, որ խոսքի զարգացման ուղղությամբ պետք է ձևավորվի համակարգված մեթոդական շղթա և կիրառվի բոլոր առարկաների դասընթացների ժամանակ:

Մարդն իր մտքերն ու զգացմունքներն արտահայտում է տարբեր դրսևորումներով՝ գրական ստեղծագործությունների, երաժշտության, նկարների, քանդակների, այլ նյութական ու հոգևոր մշակութային արժեքների: Սակայն այդ մտքերի արտահայտումը, անկախ նրանից, թե ինչ ձևով է դա իրականացվում, հիմքում, խորքային առումով, լեզվական պատկեր ունի, որովհետև մտքի լիարժեք արտահայտման ձևը լեզուն է, որը մարդուն անհրաժեշտ է ոչ միայն ուրիշների, այլ նաև հենց իր սեփական մտքերը հասկանալու համար: Բառերն ու դրանց կապակցությունները միջոց են արտահայտելու արտաքին աշխարհի բոլոր իրերն ու երևույթները, և եթե հաշվի առնենք՝ միջառարկայական կապի շրջանակներում որքան են ամեն բնագավառին հատուկ բառ-

անվանումները, ապա պարզ կդառնա, թե որքան կարող են զարգանալ երեխայի բառապաշարը, լեզվական կարողությունները, գիտակցությունը և որքան համապարփակ նա կարող է ներկայացնել շրջապատող աշխարհի երևույթները: Ուստի ուսուցիչներն իրենց կողմից դասավանդվող առարկաների շրջանակներում հետևողականորեն պետք է հարստացնեն աշակերտների բառապաշարը, զարգացնեն խոսքը, քանի որ այն կարող է դառնալ հզոր միջոց աշակերտի գիտակցության բարձրացման, անձի ձևավորման գործում: Խոսքը կարևոր դեր ունի մարդու իմացության բնագավառում, և աշակերտը պետք է ըմբռնի այդ դերի կարևորությունը:

Աշխարհի ճանաչողությունը անվերջ գործընթաց է. մարդը, մարդկային իմացությունը զարգանում են աստիճանաբար, ողջ կյանքի ընթացքում, նրա գիտելիքները ևս հարստանում են աստիճանաբար, ուստի դրան պետք է նպաստեն դպրոցի բոլոր առարկաները, քանի որ մարդկային ճանաչողության սահմանների ընդլայնումը համակողմանիորեն զարգանալու հնարավորություն է տալիս աշակերտին, նրա բազմակողմանի զարգացածությունը ձևավորում է վերլուծական մտածողություն, ինչի շնորհիվ նրա խոսքը ևս դառնում է տրամաբանված, հաղորդակցումը՝ ավելի հեշտ: Լիարժեք ուսումնասիրելով դպրոցական բոլոր առարկաները՝ աշակերտը հնարավորություն է ստանում աշխարհն ավելի լավ ճանաչելու, խորանալու իրերի և երևույթների մեջ: Տարբեր նյութերի և փաստերի տիրապետող աշակերտը ցանկանում է դրանց մասին խոսել, նրա լեզուն դառնում է ավելի հարուստ ու գեղեցիկ: Տարբեր առարկաների ուսուցման ընթացքում ներկայացվում է յուրաքանչյուր առարկայի կապը կյանքի հետ, թե տվյալ առարկայից ստացված գիտելիքները ինչպես կարելի է կիրառել կյանքում, այս դեպքում միայն աշակերտը կհասկանա, թե ինչու պետք է սովորի, ինչն էլ կխթանի աշակերտի սովորելու ցանկությունը: Նրա սովորելը կլինի ոչ թե ինքնանպատակ, այլ նա կհասկանա, որ յուրաքանչյուր առարկա բանալի է՝ բացելու իր սահմանափակ անձնական փորձից այն կողմ ընկած օբյեկտիվ իրականության ճանաչողության դռները: Ուսանելով իրեն հասած մարդկության կենսափորձն ու նվաճումները՝ աշակերտը եզրահանգումներ է կատարում, դատում, վերլուծում և դրանց հիման վրա ստեղծում է նորը: Եվ բազմակողմանի զարգացած լինելու պարագայում միայն նրա ստեղծած նորը կլինի ավելի բազմաբովանդակ, ավելի հիմնավոր ու ընդունելի:

Դիդակտիկայի հայտնի սկզբունքներից է ուսուցման կապը կյանքի հետ, քանի որ ճանաչողության յուրաքանչյուր գործընթաց, այդ թվում աշակերտի իմացության գործընթացը, կատարվում է կենդանի հայեցողությունից դեպի վերացական մտածողություն, որն այնուհետև կիրառվում է գործնականում: Ուսուցումը կապել կյանքի հետ նշանակում է սովորել կյանքից, կյանքի համար, և այդ տեսակետից կարևոր է ուսուցման կրթադաստիարակչական նշանակությունը, կրթության և դաստիարակության միջև ներդաշնակ կապ հաստատելը: Դպրոցական

յուրաքանչյուր առարկայի ուսուցման գործընթացը, ուսուցողական նպատակներից բացի դաստիարակչական լուրջ խնդիրներ լուծելով, ձևավորում է աշակերտի աշխարհայացքը, գեղագիտական ճաշակը, նրանց մեջ սերմանում է աշխատասիրություն, ազնվություն, ճշտապահություն և բարոյականային այլ բարձր որակներ, նրանք ծանոթանում են էթիկայի նորմերին, դառնում հասարակության լիարժեք անդամ: Դպրոցի տարբեր առարկաներն այդ տեսակետից լայն հնարավորություն են ընձեռում հանրակրթության այդ նպատակն իրականացնելու համար: Ուսուցիչները պետք է համաչափ ու ներդաշնակ զուգակցեն միջառարկայական կապի շրջանակներում իրականացվող ուսուցումն ու դաստիարակությունը՝ գիտակցելով, որ ուսուցումը սոսկ գիտելիքների հանրագումար չէ, այլ այն պետք է համապատասխանի տեղեկատվական բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալու ցանկությամբ օժտված այսօրվա աշակերտի հոգևոր պահանջներին: Մեր օրերի հագեցած առօրյան, ուսուցման նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցումն ավելի հետաքրքիր ու արդյունավետ կազմակերպելու: Ուստի ուսուցիչը ևս պետք է անընդհատ աշխատի իր վրա, շարժվի դարին համահունչ, որպեսզի կարողանա ճիշտ ուղղություն տալ իր սաներին, քանի որ «դիդակտիկան չի թողնում, որ հոգին զարգանա այնպես, ինչպես իրեն ցանկալի է, այլ նա աշխատում է հոգու էությանը համապատասխան որոշ ազդումների ճնշման տակ նրա զարգացման ընթացքը իր ձեռքը վերցնել»[1]:

Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ, իր ներդրումն ունենալով աշակերտի խոսքի զարգացման գործում, պետք է կարողանա նրան սովորեցնել տրամաբանորեն մտածել և արտահայտել ճիշտ հաջորդականությամբ կապակցված մտքեր: Այդ նպատակով առաջնահերթ խնդիր է մեթոդական ձևերի ու հնարների ճիշտ ընտրությունը, որոնք առավել արդյունավետ կնպաստեն սովորողների խոսքի զարգացման վրա ողջ ուսումնադաստիարակչական գործունեության ընթացքում:

Խոսքի զարգացմանը միտված մեթոդների ընտրությունը կախված է ուսումնական առարկայի բարդությունից և բովանդակությունից: Մեթոդներ ընտրելիս կարևոր է արդյունավետության գործոնը, սովորողների ուսումնական հնարավորությունների՝ տարիքի, ունեցած գիտելիքների, պատրաստվածության մակարդակի, ունակությունների, կոլեկտիվի փոխհարաբերությունների հաշվառումը և այլն:

Աշակերտն օրական ունենում է 5-7 դասաժամ տարբեր առարկաներից և դրանցից յուրաքանչյուրի ժամին պետք է զարգացնել ճիշտ խոսքի հմտություններ, մտքերը կանոնավոր ու հստակ ձևակերպելու և արտահայտելու կարողություններ: Բոլոր ուսուցիչները պետք է լինեն հետևողական, կազմակերպեն համատեղ աշխատանք, մշակեն համապատասխան մեթոդական հնարներ, պլանավորեն իրենց համատեղ

---

[1] ***Էդիլյան Գ.***, *Դիդակտիկայի հիմունքները, «Արարատ»,1912, № 12, էջ 1089*

անելիքը, որպեսզի միասնական նպատակի արդյունքում կարողանան հասնել ցանկալի արդյունքի: Այդ աշխատանքն սկսվում է բառապաշարի հարստացմամբ, որի հիմքը դրվում է տարրական դասարանում բոլոր առարկաների դասաժամերին նոր սովորած բառերի ամրապնդմամբ և գործնականում դրանց կիրառման հմտությունների ձևավորմամբ: Յուրաքանչյուր նոր դաս գիտելիքների և կենսափորձի հարստացմանը զուգահեռ պետք է հարստացնի նաև աշակերտի բառապաշարը, ինչն ամուր հիմք է նրա խոսքի զարգացման համար: Դպրոցում ձևավորված բառապաշարը կազմում է աշակերտի հիմնական բառային ֆոնդը: Այն աստիճանաբար հարստանում է, ժամանակի ընթացքում խմբավորվում և համակարգվում իմաստային համապատասխան դաշտերում: Նոր բառերի յուրացումն ու մտապահումը տեղի են ունենում շատ արագ, որովհետև աշակերտը սկսում է դրանց միջոցով բացահայտել, ճանաչել աշխարհը, ծանոթանալ առարկաներին, երևույթներին, պատմական փաստերի ու իրադարձություններին և այլ հասկացությունների, որի արդյունքում սովորում է դրանց անվանումը՝ հարստացնելով իր մտահորիզոնն ու ինտելեկտը: Բառապաշարի հարստացման միջոցով ձևավորվում են նաև աշակերտի աշխարհընկալումն ու աշխարհայացքը, քանի որ հասկացությունները գաղափարներից սերված վերացարկումներ են, իսկ գաղափարները անցումային օղակ են օբյեկտիվ իրականության իրողությունների /առարկաներ, երևույթներ, հատկանիշներ /և նրանց անվանում հասկացությունների միջև.այսինքն՝ մենք ունենք **օբյեկտիվ իրողություն - նրա ճանաչում՝ գաղափար** / գաղափարը մեկ առանձին առարկայի ճանաչումն է, որին դեռևս հատուկ չէ այն ընդհանրացումը, որն ընկած է հասկացության հիմքում/ -**գաղափարի ամրակայում գիտակցություն մեջ որպես հասկացություն-հասկացության նշույթավորում՝ նշան, այն է՝ բառ** /շղթան:[1]

Իտալացի մանկագիր Ջ. Ռոդարին իր «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում գրում է, որ «եթե լճակի մեջ քար ենք նետում, ջրի վրա համակենտրոն շրջաններ են առաջանում»[2], որոնք տարբեր հեռավորությունների վրա՝ թե՛ լայնքով, թե՛ խորությամբ, կատարում են տարբեր իրադարձություններ և միկրոիրադարձություններ: «Այդպես էլ պատահաբար մարդու գլուխը մտած բառը լայնքով ու խորությամբ ալիքներ է տարածում, հակազդեցությունների անվերջ շղթա առաջացնում՝ հնչյուններ ու կերպարներ, զուգորդություններ ու հիշողություններ, պատկերացումներ ու երազանքներ մեջտեղ բերելով: Այս գործընթացը փորձի ու հիշողության, երևակայության ու ենթագիտակցականի հետ սերտորեն կապված է և նրանով է բարդանում,

---

[1] ***Հարությունյան Հ.Պ.***, *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Երևան , 2017, էջ 22*

[2] ***Ռոդարի Ջ.***, *Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 12*

որ ուղեղը կրավորական (պասիվ) չի մնում, անընդհատ միջամտում է, հսկում, ընդունում կամ մերժում, ստեղծում կամ քանդում»[1]: Բառերը ներգործում են մարդկանց վրա, դրանք ազդակներ են, որոնց միջոցով ձևավորվում են երեխայի պատկերացումները շրջապատող իրականության վերաբերյալ: Սակայն պետք է հաշվի առնել նաև, որ «ընթերցող երեխայի (ինչպես նաև լսող երեխայի) երևակայության վրա տեղեկությունն ամենևին էլ մեղրամոմի մեջ խրվող ասեղի սուր ծայրի պես չի գործում. այն բախվում է երեխայի եռանդուն անհատականությանը»[2]:

Բառապաշարի հարստացման համար կարելի է հանձնարարել «Սովորեցնում են աշակերտները» վերնագրով առաջադրանք: Այսպես՝ որոշակի հերթականությամբ (մատյանների համարներով, ընտրության տարբերակով և այլն) աշակերտներից յուրաքանչյուրը մայրենիի դասին ներկայացնում է նոր բառեր ու տերմիններ տարբեր բնագավառներից ու մասնագիտություններից, բացատրում դրանք, այնուհետև այդ բառերի ու տերմինների վերաբերյալ կատարվում են վարժություններ, դրանք կիրառվում խոսքում: Արդյունքի հասնելու համար այս աշխատանքը պետք է հետևողականորեն իրականացվի մայրենիի բոլոր դասաժամերին, լինի պարուրաձև՝ հնին ավելացնելով նորը:

Մոտավորապես պատկերացնենք այսպես. ուսուցիչն աշակերտի գիտակցության մեջ կառուցում է մի «մտապահարան», որի համապատասխան «դարակներում» աստիճանաբար տեղավորում է բառերը: Հետագայում աշակերտներն իրենց խոսքը կառուցելու համար համապատասխան «դարակներից» ընտրում են իրենց անհրաժեշտ այն բառերը, որոնց միջոցով լիովին կարտահայտեն իրենց հաղորդելիք միտքը: Բնականաբար, որքան հարուստ է աշակերտի «մտապահարանը», այնքան առատ բառանյութ կունենա արագ ու ճիշտ կառուցելու խոսքը, այնքան հեշտ կիրականցվի հաղորդակցումը: Նրա խոսքը կլինի հարուստ, բովանդակալից, ավելի հիմնավոր: Օրինակ՝ աշակերտներին հանձնարարենք խոսել որևէ թեմայի շուրջ (հայրենիքի, ընտանիքի, տարվա եղանակի, որևէ նշանակալից իրադարձության, պատմական փաստերի և այլն)՝ օգտվելով իրենց մտապահարանից: Աշակերտն ընտրում և «դարակից» հանում է այն համապատասխան բառերը, որոնք իրեն անհրաժեշտ են խոսքը կառուցելու համար: Կարող ենք համոզված ասել, որ եթե երեխայի «մտապահարանը» հարուստ է, իսկ բառերը՝ խմբավորված ու համակարգված, ուրեմն նա բավականին հեշտ կգտնի իրեն անհրաժեշտ բառերն ու արտահայտությունները, արագ և ճիշտ կձևակերպի իր միտքը: Այս դեպքում աշակերտը պետք է լավ տիրապետի լեզվին, որպեսզի իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի ոչ թե լեզվական միջոցների, այլ բովանդակության վրա:

---

[1] *Նույն տեղում, էջ 12-13*

[2] *Նույն տեղում, էջ 171*

Միջառարկայական կապի շրջանակներում կարելի է կազմակերպել միջդասարանական կամ միջդպրոցական մրցույթ միևնույն տարիքային խմբերի միջև: Այն կանվանենք «Տերմինների հարուստ աշխարհում»: Նախապես պայմանավորվելով՝ տրվում են հանձնարարություններ՝ կապված տարբեր առարկաների տերմինների և հասկացությունների հետ, այնուհետև մրցության օրը հակառակորդ թիմերը կխոսեն այս կամ այն տերմինի կամ հասկացության մասին, իսկ մյուս կողմը պետք է գուշակի, թե ինչի մասին է խոսքը:

Կարելի է նաև կազմակերպել «Ո՞վ է գեղեցիկ խոսում» խորագրով մրցույթ: Նախապես մշակվում են խոսքի վերահսկման ու գնահատման չափանիշները (տե՛ս՝ աղյուսակ 1), սահմանվում է ժամանակահատված, և այդ ընթացքում բոլոր դասաժամերին, դասամիջոցներին և ընդհանրապես միմյանց հետ հաղորդակցվելիս թե՛աշակերտները և թե՛ ուսուցիչները հետևում են աշակերտների խոսքին, այնուհետև ժամկետի վերջում անցկացվում է քննարկում, և քննարկման արդյունքում հաղթող ճանաչվածը խրախուսվում է (մրցանակը ևս նախապես պայմանավորվում են. դա կարող է լինել, օրինակ, կիսամյակային գնահատականը 1 միավորով բարձրացնելը): Այս մեթոդի շնորհիվ աշակերտների մոտ կզարգանան իրենց խոսքին հետևելու հմտություններ և կարողություններ:

Աղյուսակ 1

	Խոսքի բովանդակությունը (ներկայացվող նյութի ամբողջականությունը) արտահայտող *գնահատման չափանիշները*	*Միավորը*
1	Հիմնական գաղափարի արտահայտումը	2
2	Խոսքի տրամաբանվածությունն ու հաջորդականության պահպանումը	2
3	Բառապաշարի հարստությունը	2
4	Նյութի պարզ ու մատչելի մատուցումը	1
5	Խոսքի արտահայտչականությունը	1
6	Ճիշտ շեշտադրումը	1
8	Սեփական տեսակետի արտահայտումը	1

Խոսքի զարգացման աշխատանքները միջառարկայական կապի շրջանակներում արդյունավետ կազմակերպելու համար կարելի է նաև կազմակերպել միասնական դաս, քանի որ ուսուցման գործընթացում այդ կապը կնպաստի նյութի առավել հիմնավոր յուրացմանը: Դասի ընթացքում ստանալով ավելի համակարգված գիտելիքներ նաև այլ բնագավառներից՝ աշակերտների մեջ կձևավորվեն գիտելիքների դիալեկտիկական միասնության վրա հիմնված ընդհանուր պատկերացումներ, նրանք գիտակցորեն կյուրացնեն նյութը, ինչն էլ կնպաստի մտածողության ու հիշողության զարգացմանը: Միասնական դասի շրջանակներում հնարավորություն կստեղծվի տեղեկություն ստանալ տարբեր

աղբյուրներից, ինչը կնպաստի աշակերտի կողմից գիտելիքի համակողմանի յուրացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը:

Գծապատկեր 1



Մայրենի լեզուն կենտրոնական տեղ է զբաղեցնում խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներում, քանի որ նրա միջոցով է իրականացվում ճանաչողական գործընթացը, նրա միջոցով ենք սեր արթնացնում հենց մայրենի լեզվի նկատմամբ, ճանաչել տալիս համամարդկային արժեքները: Այն նպաստում է երեխայի ինտելեկտի, մտածողության, գիտակցության զարգացմանը նաև ուսումնական այլ առարկաների ժամանակ: Աշակերտները մայրենի լեզու են սովորում բոլոր առարկաների ուսուցման ընթացքում, հետևաբար խոսքի զարգացման հարցերը պետք է մտահոգեն բոլոր ուսուցիչներին: Հայերենով դասավանդող բոլոր ուսուցիչները պետք է ուշադրություն դարձնեն աշակերտի խոսքի մաքրությանն ու կանոնավորությանը, իսկ օտար լեզվով դասավանդողները պետք է ուշադիր լինեն, որ բնագիրը թարգմանելիս աշակերտները խոսքը կառուցեն ճիշտ ու հստակ: Առանց մյուս առարկաների ուսուցիչների աջակցության դժվար կլինի աշակերտների խոսքի բազմակողմանի զարգացումը, իսկ այս հարցում մենք դեռևս շատ անելիք ունենք, որովետև դասավանդման փորձը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ուսուցիչներն են բավարար աշխատանք կատարում աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ: Այն հիմնականում մտահոգում է լեզուների և գրականության ուսուցիչներին: Այդ բացը խոչընդոտում է աշակերտների առաջադիմությունը, մտածողության այնպիսի որակների զարգացումը, որոնք ձևավորվում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, բնագիտության, պատմության և այլ ուսումնական առարկաների յուրացման շնորհիվ: Չէ՞ որ յուրաքանչյուր առարկա ունի իր լեզուն, «մտածողության մեխանիզմը», բառապաշարը և այլ մտավոր կարողություններ, որոնք նպաստում են

աշակերտի ընդհանուր մտավոր զարգացմանը: Օրինակ՝ պատմության դասընթացի շնորհիվ ձևավորվում է կապակցված խոսք, որովհետև այն հարուստ նյութ է տալիս խոսելու և պատմելու համար, մաթեմատիկան ձևավորում է տրամաբանված և դատողական խոսք, որովհետև այն փաստերի և դատողությունների միասնական ամբողջություն է, բնագիտության և աշխարհագրության շնորհիվ ձեռք է բերվում նկարագրական խոսք կառուցելու հմտություն, արվեստի միջոցով ձևավորվում են աշակերտի գեղագիտական պատկերացումները, համադրվում իրականությունն ու մարդկային միտքը և այլն:

Այսպիսով՝ աշակերտի խոսքի զարգացումը կլինի լիարժեք, եթե այն դառնա ոչ միայն մայրենիի, այլ նաև մյուս առարկաների, ուսուցչական ողջ կոլեկտիվի նպատակը, եթե դպրոցում հաստատվի խոսքի ընդհանուր և միասնական համակարգ, և այն հետևողականորեն պահպանվի ուսումնական ողջ գործընթացի ժամանակ: Սոցիալական աշխարհը, որտեղ ապրում է երեխան, չափազանց բարդ ու հարուստ է, և երեխայի համար հեշտ չէ հասկանալ, թե որքան ջանք ու աշխատանք է ներդրվել այն կառուցելու համար: Ուստի երեխայի գիտակցությանը պետք է հասցնել այն ամենը, ինչը նպաստել է այսօրվա հասարակության ձևավորմանը: Երեխան պետք է սովորի, իմանա, թե ինչպես է մարդն սկսել հասկանալ իր կարիքները և քայլ առ քայլ հետևելով մարդկության զարգացման գործընթացին՝ ծանոթանա մարդկության մտքի պատմությանը: Նա պետք է իմանա, թե ինչպես է մարդը սովորել մտածել, ստեղծել, այնուհետև համբերատար ձևափոխել ու բարելավել իր կյանքի պայմանները, հասել գիտակցական այսօրվա մակարդակին, ստեղծել բարոյական արժեքներ: Եվ որպեսզի կրթենք և դաստիարակենք մտածող և գիտակից սերունդ, որն ունենա մարդկային բարձր արժեհամակարգ, լայն մտահորիզոն և բարձր ինտելեկտ, հետևաբար նաև խոսք կառուցելու և հաղորդակցվելու կարողություն, անհրաժեշտ է ճիշտ և նպատակային կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում: Դրա համար պետք է լավ ճանաչել սաներին, նրանց անհատականությունն ու հետաքրքրությունների շրջանակը: Ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն, թե ի՞նչ են դաստիարակում երեխային դաստիարակելիս, օգնեն նրանց՝ ձևավորելու սեփական ընկալումը աշխարհի, տարբեր երևույթների մասին: Դրան պետք է նպաստեն դպրոցական բոլոր առարկաները՝ իրենց շրջանակներում առաջադրվող գիտելիքների միջոցով աշակերտի գիտակցության մեջ կառուցելով աշխարհի պատկերը, իսկ աշակերտներն էլ իրենց հերթին, սովորելով ուսումնական առարկաները և համադրելով ստացած գիտելիք–պատկերները միմյանց հետ, ամրապնդում և սեփականացնում ենք դրանք՝ կազմելով աշխարհի վերաբերյալ սեփական պատկերացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դյուի Ջ., Դպրոցը և հասարակությունը, «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան, 2008, 88 է:
2. Մանուկյան Ա. Ս., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976, 347 էջ:
3. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, II, Երևան, 2008, 268 էջ:
4. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, 224 էջ :
5. Гулевич О. Е., Развитие речи учащихся, Москва, 1956. 184с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 323.1
Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ
ԱրՊՀ, Պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, ք.գ.թ.
E-mail: hrayr.pashayan@mail.ru

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

Հոդվածում Ղարաբաղյան հակամարտության համատեքստում քննարկվում են տարածքների փոխանակմամբ հիմնախնդրի լուծման գաղափարի ծագումն ու շարժընթացը: Ցույց է տրվում, որ այն ծագել է թուրքական ծավալապաշտական ծրագրերի իրականացման գործընթացում:
ԽՍՀՄ լուծարումից հետո Թուրքիայի կողմից Ադրբեջանի Հանրապետությանը ցուցաբերվող բազմակողմանի աջակցությունը, հայ-թուրքական հարաբերությունները Ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելը, Հայաստանը շրջափակելու և հայ ժողովրդի դեմ ուղղված այլ թշնամական քայլերը վկայում են, որ դրանք չեն կորցրել իրենց արդիականությունը: Հետևաբար հարկ է մշտապես հաշվի առնել այս հանգամանքը և քայլեր ձեռնարկել այդօրինակ գաղափարների իրականացումը ի սպառ բացառելու համար:
Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան հակամարտություն, տարածքների փոխանակում, «Մեղրու միջանցք», թուրքական ծավալապաշ-տություն, Թուրքիա, Ադրբեջան, Հայաստան, Արցախ:*

Г. Пашаян

ТУРЕЦКИЙ ЭКСПАНСИОНИЗМ И ПРОИСХОЖДЕНИЕ ИДЕЙ ОБМЕНА ТЕРРИТОРИЯМИ В СВЕТЕ КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ

В статье, в контексте Карабахского противостояния автор анализирует возникновение и продвижение идеи урегулирования проблемы обменом территорий. Указывается, что оно возникло в процессе реализации турецких экспансионистских программ.
После распада СССР, Турция оказывает многостороннюю поддержку Азербайджанской Республике, обусловливает армяно-турецкие отношения Карабахским противостоянием, изолирует

Армению от региональных проектов. Эти недружественные шаги, направленные против армянского народа, свидетельствуют о том, что экспонсионистские планы не потеряли своей актуальности. Следовательно, эти обстоятельства необходимоо всегда учитывать и предпринимать шаги для того, чтобы исключить осуществление подобных идей.

Ключевые слова: *Карабахское противостояние, обмен территорий, «Корридор Мегри», турецкий экспансионизм, Азербайджан, Армения, Арцах.*

H. Pashayan

TURKISH EXPANSIONISM AND THE ORIGIN OF IDEAS FOR EXCHANGE OF TERRITORIES IN THE LIGHT OF KARABAKH SETTLEMENTS

The article, in the context of the Karabakh conflict, discusses the emergence and promotion of the idea of resolving the problem of territorial exchange. It is indicated that it arose in the process of implementing Turkish expansionist programs.

After the collapse of the USSR, the multilateral support provided by Turkey to the Republic of Azerbaijan, the conditioning of the Armenian-Turkish relations by the Karabakh conflict, the isolation of Armenia and other enemy moves directed against the Armenian people, indicate that they have not lost their relevance. Therefore, one must always take this circumstance into account and take steps to completely exclude the implementation of such ideas.

Keywords: *Karabakh confrontation, territorial exchange, "Corridor Meghri", Turkish expansionism, Azerbaijan, Armenia, Artsakh.*

Խնդիրը: Փորձագետներից ոմանք այն կարծիքին են, թե Ղարաբաղյան կարգավորմանն ուղղված «Քի Վեսթյան», դրան նախորդած «Փարիզյան» և ընդհանրապես տարածքների փոխանակման սկզբունքներն ու տարբերակներն անցել են պատմության գիրկը, հետևաբար այլևս արդիական ու հրատապ չեն դրանց հետ կապված հարցադրումները: Սակայն քիչ չեն նաև հակառակ տեսակետի կողմնակիցները, ովքեր իրավամբ կարծում են, որ կարգավորման գործընթացի որևէ ժամանակահատված չի կարող կորցնել իր հրատապությունը, քանի դեռ հակամարտությունը վերջնականապես կարգավորված չէ: ՌԴ արտգործնախարարի հակամարտությունը փուլային ճանապարհով կարգավորելու ապրիլի 21-ին արված հակահայկական հայտարարությունը այդ մասին վկայող հավելյալ փաստարկ է[1]: Ոմանք նույնիսկ նշված փաստաթղթի առայսօր չհրապարակելը հակված են կապելու երկու

---

* *Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:*

[1] *Տե՛ս Лавров: активно обсуждается поэтапный подход к карабахскому урегулированию, https://newsarmenia.am/news/nagorno_karabakh/lavrov-aktivno-obsuzhdaetsya-poetapnyy-podkhod-k-karabakhskomu-uregulirovaniya/*

հանգամանքի հետ. «կամ փաստաթուղթը նախատեսում է ոչ համարժեք զիջումներ, կամ այն դեռ կարող է դրվել բանակցությունների սեղանին»[1]:

Խնդիրն ամենևին էլ ցանկությունների կամ նախապատվությունների շրջանակներում չէ, այլ առավելապես օբյեկտիվ իրականության, որն ունի ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական ու աշխարհաքաղաքական չափումներ: Դրանց վերաբերյալ կարծիքները ոչ միայն արդիական են, այլև հակասական ու երբեմն չպարզաբանված լինելու պատճառով խիստ վտանգավոր: Իսկ աշխարհաքաղաքական գործոնները, որոնք եղել և մնում են հիմնախնդրի ծագման ու շարժընթացի գլխավոր ուղեկիցները, անմիջականորեն ընկած են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման այս կամ այն տարբերակի իրացման հիմքում:

Զուտ մեթոդաբանական տեսանկյունից նույնպես վերոնշյալին անդրադարձն ու տարածքային փոխանակումներին առնչվող գործընթացի էության բացահայտումն անհրաժեշտ է կարգավորման տրամաբանությունն իր ամբողջության և համահայկական հարթության մեջ ընկալելու համար: Չէ որ Ղարաբաղյան հակամարտությունն ավելի քան հարյուրամյա պատմություն ունի, իսկ ժամանակաշրջանի յուրաքանչյուր դրվագ ամբողջի մասն է կազմում, առանց որի այդ շղթան ամբողջական պատկերացնել հնարավոր չէ[2]:

Թուրքիան, «Մեղրու միջանցքի» և տարածքների փոխանակման գաղափարը պատմության ու արդիականության հոլովույթում: Ընդհանրապես «Մեղրու միջանցքի» փոխանակման գաղափարը իր ծագումնաբանությամբ թուրքական ռազմավարական ծրագիր է: Սա անհրաժեշտ է մշտապես հիշել: Առաջին անգամ այն բարձրացվել է 1918թ. Արամ Մանուկյան-Խալիլ փաշա բանակցությունների ընթացքում: Վերջինս Արամ Մանուկյանի՝ Հայաստանի սահմանների ընդարձակման և ապրելու հնարավորության ընձեռմանն ի պատասխան առաջարկում էր հայերին ազատել Զանգեզուրի Մեղրի գավառը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ: Դրա փոխարեն պատրաստ էր, ի հաշիվ Ադրբեջանի, ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Ջիվանշիր և Վարանդա[3]: Բնականաբար, թուրքական կողմը մերժում ստացավ, քանի որ համաձայնվել կնշանակեր Հայաստանը ռազմավարական իմաստով վերջնականապես կործանել:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակ, թուրքական կողմն ամեն ինչ արեց այդ ծրագրերը գործնականում իրականացնելու համար: Այսպես՝ 1920թ. նոյեմբերի 8-ին Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Մուխտար փաշան արևելյան

---

[1] ***Կարապետյան Մ.***, *Քիուեսթյան սրբագրումներ, https://168.am/2016/09/09/685975.html*

[2] ***Մանասյան Ա.,*** *Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, http://ditaket.info/*

[3] *Տե՛ս* ***Ռուբեն,*** *Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. է, էջ 145:*

ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին հրահանգեց. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն վերացնել: ... Պետք է վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից առգրավել և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջապես կապ հաստատել ադրբեջանական թուրքերի և նրանց կառավարության հետ[1]: Արդյունքում՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով, որը հետագայում հիմք հանդիսացավ Խորհրդային Հայաստանի սամանների համար, Թուրքիայի կազմի մեջ ներառվեց երբևէ նրա տիրապետության տակ չգտնված Արևելյան Հայաստանի տարածքների մի մասը (Կարս, Իգդիր, Սուրմալու և այլ հայկական տարածքներ), այդ թվում՝ Արաքս գետի ողջ աջափնյա հատվածը մինչև Իրանի հետ սահմանը[2]: Քարտեզի վրա բավականին ակնառու երևում է, թե ինչպես է թուրքական կողմն ամեն ինչ արել բոլոր հայկական հողերը նվաճելու և Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահման ունենալու համար[3]: Այնուհետև, չկարողանալով ուղղակի տիրապետություն հաստատել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ընկած հայկական մյուս տարածքների վրա, քայլեր ձեռնարկեց դրանք սեփական նախաձեռնությամբ ու ջանքերով հիմնադրված եղբայրական Ադրբեջանի տիրապետությանը հանձնելու համար[4]: Հենց դրանով պետք է առաջին հերթին բացատրել Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների այդ շրջանում դրսևորած հակասական ու հակահայկական վարքը: Մասանավորապես խոսքը վերաբերում է 1920թ. նոյեմբերի 30-ի հեռագրին, որով **Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչել է որպես Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս[5],** իսկ շատ չանցած համառ պայքար ծավալել այդ տարածքները Ադրբեջանի տիրապետությանը ենթարկեցնելու համար[6]: Պետք է նկատել, որ հենց թուրքական դիվանագիտության շնորհիվ այս կամ այն կարգավիճակով Նախիջևանն ու

---

[1] ՀԱԱ ֆ. 113, ց. 3, գ. 31, թ.6:

[2] Տե՛ս՝Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր. 2000, էջ 391-394:

[3] Օրինակ տե՛ս «Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» քարտեզը:

[4] Տե՛ս Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը, Документы внешней политики СССР, т. 3, стр. 597-604.

[5] Տե՛ս 1920թ. նոյեմբերի 30-ի Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի հեռագիրը Խորհրդային Հայաստանի հեղկոմին, «Կոմունիստ» (Երևան, հայերեն), 7 դեկտեմբերի 1920թ.:

*[6] Այդ մասին մանրամասն տես՝ **Փաշայան Հ.,** Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում: Մաս առաջին, Ստեփանակերտ, 2016թ., էջ 48-57:*

Լեռնային Ղարաբաղը հայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի տրապետության տակ[1]: Ավելին՝ իր հեռահար ծրագրերի իրականացման համատեքստում թուրքական կողմը քայլեր ձեռնարկեց նաև նախկին Երևանի նահանգի և Շարուր-Դարալյագազի գավառը արդեն Ադրբեջանի խնամակալությանը տրված Նախիջևանի վարչական սահմաններում ընդգրկելու համար, քանի որ առանց դրա ի սկզբանե անհնարին կդառնար Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապն ու հետագա պանթուրքական ծրագրերն առհասարակ: Դա է պատճառը, որ թուրքական կողմի պնդմամբ Կարսի պայմանագրում հատուկ հստակեցվել է Նախիջևանի տարածքը[2]:

Ինչ վերաբերում է Զանգեզուրին, ապա ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ միայն Գարեգին Նժդեհի՝ բոլշևիկյան և թուրքական կանոնավոր բանակների[3], թուրք-թաթարական զինված հրոսակախմբերի, և նույնիսկ խորհրդային Հայաստանի իշխանությունների դեմ անզիջում ու անհավասար պայքարի, ռազմական ու քաղաքական տաղանդի, ցուցաբերած ճիշտ հաշվարկների արդյունքում հնարավոր եղավ պահպանել Հայաստանի Հանրապետության սահմաններում[4]: Դրանով փաստորեն խափանվեց «հայկական սեպի» վերացման և դեպի Միջին Ասիա թյուրքական պետությունների հետ ցամաքային կապ հաստատելու Թուրքիայի համաթուրքական ծրագրերը, քանի որ իր նեղ շերտով հանդերձ Մեղրու շրջանը բաժանում էր երկու թուրքական պետություններին:

Թուրքական ծավալապաշտական ծրագրերի իրականացման հեթական քայլերից մեկը կապված է 1920-1930-ական թթ. Թուրքիայի ու Նախիջևանի միջև ցամաքային կապի հաստատման հետ: Խոսքը վերաբերում է Իրանի ու Թուրքիայի միջև կատարված տարածքային փոխանակումներին, որով վերջինս մի քանի անգամ մեծ, ոչնչով աչքի չընկնող հողատարածքներ զիջեց Իրանին Ուրմիա լճի արեւելյան հատվածում՝ Նախիջևանի հետ 12 կմ. երկարությամբ ընդհանուր սահման ձեռք բերելով, որոնց մեջ ընդգրկվում էին ռազմավարական կարևոր նշանակությամբ Փոքր Մասիսի ստորոտը և Արաքսի առափնյա շրջանից մի հատված: Այնուհետև 1932 թ. հունվարի 23-

---

[1] *Moments in U.S. Diplomatic History, Stalin's Legacy: The Nagorno-Karabakh Conflict, https://adst.org/2013/08/stalins-legacy-the-nagorno-karabakh-conflict/*

[2] *Տե՛ս 1921թ. հոկտեմբերի 13-ի՝ Հայկական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական ՍՍՀ-ի միջև մի կողմից և Թուրքիայի միջև՝ մյուս կողմից, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ Կարսում կնքված Բարեկամության պայմանագիրը, Документы внешней политики СССР, т. 4, стр. 420-429.*

[3] *Օրինակ 1920թ.ապրիլի 9-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Բաքվից Երևան էր հաղորդում. որ Արցախում կենտրոնացած ադրբեջանական զորամասերը՝ Խալիլ փաշայի և գեներալ Հ. Սելիմովի գլխավորությամբ շարժվել են դեպի Զանգեզուր: Տես՝ ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 606, թ. 6:*

[4] *Օրինակ այս մասին տե՛ս **Միմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920, Եր. 2017, 742 էջ:*

ին Թեհրանում ստորագրվեց Իրան-Թուրքիա պայմանագիրը՝ երկու երկրների սահմանագծերի փոփոխության վերաբերյալ, որը գաղտնազերծված չէ և գործում է առ այսօր[1]: Ճիշտ է, ժամանակին Թուրքիան իր այդ քայլը հիմնավորեց քրդերի ապստամբության ճնշման և երկու երկրների սահմանների անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, սակայն ակնհայտ է, որ, ինչպես ասում են, թուրքական կողմին հաջողվեց մեկ գնդակով երկու նապաստակ խփել և ի պատիվ թուրքական դիվանագիտության՝ չպարծենալ դրանով:

Իրանագետ Վարդան Ոսկանյանի կարծիքով նույնպես՝ տեղի է ունեցել տարածքի անհամաչափ փոխանակում. Իրանի պետությունը Թուրքիայից ստացել է երեք անգամ ավելի մեծ տարածք Կոտուրի լեռներում՝ հատկացնելով այս փոքր կտորը, որի միջոցով ռազմավարական առումով փաստացիորեն Թուրքիան ցամաքային կապ է հաստատել Նախիջևանի հետ: «Իրանցիները ժամանակին, ի դեմս Իրանի շահի, չեն գիտակցել, թե ինչ բացթողումներ են կատարվում՝ ներքին քաղաքականությունից մինչև սահմանի խնդիրներ, և հետո միայն շատ վերլուծաբաններ դա որակել են՝ որպես պատմական սխալ: Թուրքիայի դիրքերն ուժեղացել են տարածաշրջանում, Իրանի դիրքերը թուլացել են: Իրանում այս հարցի մասին երկու կարծիք չկա. որևէ մեկը չի արդարացնում այդ տարածքային փոխանակումը»[2]:

ԽՍՀՄ կազմավորման և Խորհդային միության հզորացման պայմաններում, բնականաբար, թուրքական կողմի համար «հայկական սեպի» վերացմամբ պանթյուրքական ծրագրերի իրականացումը առժամանակ հետին պլան են մղվել, բայց երբեք դուրս չեն բերվել թուրքական ծավալապաշտության՝ ռազմավարական ծրագրերի համատեքստից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին հայության ցեղասպանությունն իրականացրած Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ կենտրոնացրել էր 26 սպառազեն դիվիզիա, և հարմար պահի էր սպասում մեր երկիր ներխուժելու համար[3]:

Թուրքիան և տարածքների փոխանակման խնդրի արծարծումը հետխորհրդային տարիներին:

Անդրադառնալով մեր օրերում տարածքային փոխանակումների միջոցով Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, տեղեկություններ կան, համաձայն որոնց դեռևս 1988թ. մի խումբ իրավապաշտպաններ Անդրեյ

---

[1] ***Բեգիջանյան Է.***, *«1932 թ. Իրան-Թուրքիա պայմանագրի գաղտնազերծումը հակասում է ԻԻՀ շահերին», «Շրջադարձ» հանդես, թիվ 1, ապրիլ, 2004թ.:*

[2] *Նախիջևան. Չհետազոտված փոփոխություններ, վտանգներ և առավելություններ https://hraparak.am/post/5b5837535acf3506c8eb77fd?posts/5b5837535acf3506c8eb77fd/նախիջևան-չհետազոտված-փոփոխություններ-վտանգներ-և-առավելություններ*

[3] *Տե՛ս* ***Штеменко С.,*** *Генеральный штаб в годы войны, М., с. 54.*

Սախարովի գլխավորությամբ, որպես հակամարտության կարգավորման մոդել նույնպես առաջարկել են հայերի և ադրբեջանցիների տարածքների «վերամիավորման» տարբերակը: Սակայն այն ժամանակ այս տարբերակը քննարկման առարկա չի դարձել[1]: Թե ինչպիսի հանգամանքներում է իրավապաշտպանների մոտ ձևավորվել նշված գաղափարը առայժմ հայտնի չէ: Սակայն հայտնի է, որ այդ մասին քաջատեղյակ էին Թուրքիայում: Այսպես 2002թ. լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ալիևն ասել էր. «Երբ Սախարովը եկավ այստեղ, խոսակցություն եղավ Մեղրին Ադրբեջանին փոխանցելու, իսկ Լաչինից Հայաստանի համար միջանցք բացելու մասին, որպեսզի այդ հարցը լուծվի: Ադրբեջանը դրա հետ չհամաձայնեց: Այդ մասին ինձ Թուրքիայում ասել է հանգուցյալ Օզալը, հետագայում Դեմիրելը: Չեմ կարող ասել, որ ի վերջո հայերը կհամաձայնեին, բայց ամեն դեպքում նման տրամադրություններ կային: Սակայն ադրբեջանական կողմը լիովին դեմ եղավ»[2]:

Թուրքիայում հայտնի քաղաքական մեկնաբան, նախագահ Օզալի խորհրդական Զենգիզ Չանդարը հիշում է. «1991թ. Օզալն ինձ ուղարկեց Բաքու մի առաջարկությամբ, որով փորձում էր Ղարաբաղի հարցում ճշտել Մութալիբովի ճկունությունը: Ըստ այդ առաջարկության՝ Ադրբեջանը Հայաստանին զիջում է Լաչինը և Ղարաբաղի մի մասը, իսկ Ղարաբաղի մյուս մասը Շուշիով, ինչպես նաև Մեղրին տրվում է Ադրբեջանին: Մութալիբովն ասաց, որ չի կարող ընդունել այդ առաջարկությունը: Ես մտածեցի, թե նա հաշվի է առնում Իրանի գործոնը: Մութալիբովի բացատրությունն այլ էր: Նա ասաց, որ Զանգեզուրը եղել է ադրբեջանական հող, և Ստալինն է տվել Հայաստանին: Ինչու մենք պետք է ադրբեջանական Լաչինը փոխանակենք ադրբեջանական Զանգեզուրի հետ»[3]:

Հետխորհրդային տարիներին, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում այս խնդիրը նորից վերադարձավ ռազմավարական քննարկումների հարթություն: Տեղեկություններ կան, որ այս գաղափարը քննարկման առարկա է դարձել նաև Թուրքիայի և ԱՄՆ նախագահների միջև, որի ընթացքում Թ. Օզալը Ջ. Բուշին ներկայացրել է ԼՂԻՄ-ը Մեղրիի հետ փոխանակելու հարցը՝ այն հիմնավորելով ԱՄՆ տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական շահերի համապատասխանության դիտանկյունից[4]:

Արդեն 1992թ. մայիսի 28-ին թուրք-նախիջևանյան սահմանում՝ Արաքսի ձախ ափին, Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հավաքված

---

[1] *Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность; предисл. и комент. В. Н. Казимирова. - 2-е изд., испр. и доп., М., 2004. с. 52.*

[2] *Зеркало, 24 июля 2002г., Баку.*

[3] *Մեջբերումն ըստ **Թ. Հակոբյանի**՝ Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 302:*

[4] ***Սարգսյան Ա.** Ո՞ւմ ծրագիրն էր իրականացնում Ռ. Քոչարյանը, https://www.ilur.am/news/view/67492.html*

հազարավոր ադրբեջանցիներին դիմում, բացականչում էր. «Սիրելի ադրբեջանցի թուրքեր, սիրելի նախիջևանցի թուրքեր: Մենք այստեղ ենք՝ ձեզ ասելու, որ դուք միայնակ չեք: Արազի վրայով այսօր մենք բացում ենք հույսի կամուրջը, որը Էգեյան ծովից մինչեւ Չինաստան ճանապարհ բացելու առաջին քայլն է»[1]: Հետևաբար, քանի դեռ Թուրքիայի և Ադրբեջանի, Թուրքիայի և թուրքական աշխարհի հետ կապի հարցը լուծված չէ, ապա պետք է համոզված լինել, որ այն դուրս չի գալու Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարական ծրագրերից, որի իրականացման համար կօգտագործվի ամեն մի առիթ: Խնդիրն ավելի վտանգավոր է դառնում Թուրքիայի Եվրամիությանն անդամակցության ձախողման կամ այն այլևս գերխնդիր չդիտարկելու և նրա Արևմուտք-ՆԱՏՕ-ից հեռանալու, իսկ մյուս կողմից՝ ռուս-թուրքական մերձեցման աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարի համատեքստում[2]:

1992թ. վերոնշյալ գաղափարը որպես տարածքների փոխանակման տարբերակ առաջ քաշվեց այսպես կոչված «Գոբլի ծրագրի» տեսքով[3]՝ պայմանավորված Ամերիկյան քաղաքագետ Պոլ Գոբլի անվամբ: Վերջինս գտնում էր, որ ԱՄՆ-ի համար անհրաժեշտ է մշակել նոր տեսակետ կապված տարածքային ամբողջականության հետ՝ ելնելով տնտեսական և էթնիկական գործոններից: Ըստ նրա «ՆԱՏՕ-ի հանուն սահմանների անձեռնմխելիության պաշտպանության ուժային կառույցներն օգտագործելու քաղաքականությունը «մեռած» և բոլորովին փակուղային սկզբունք է հանդիսանում»[4]: Լինելով պետական սահմանների փոփոխությամբ հակամարտությունները լուծելու համոզված կողմնակիցը՝ նա առաջ է քաշել մի ծրագիր, որով էլ հանրահայտ է դարձել տարածաշրջանում: Պոլ Գոբլը գտնում էր, որ Հայաստանը և Ադրբեջանը ի վիճակի չեն իրենք լուծելու խնդիրը: Եվ «բացարձակապես ոչ մի որոշում հնարավոր չէ, եթե կողմերը փորձում են վերադառնալ հին ստատուս - քվոյին, իրավիճակ, որը գոյություն ուներ նախքան պատերազմը սկսելը՝ 1988 թվականին»[5]: Ըստ նրա՝ նախկին ստատուս-քվոն պահպանվում էր

---

[1] ***Tomas Goltz,*** *"Azerbaijan Diary", page 212-213, M. E. Sharpe, Armonk.New York,London,England*

[2] *Ըստ Զ. Բժեզինսկու՝ Թուրքիան ձգում է երեք ուղղություններով. մոդեռնիստները ցանկանում են նրան տեսնել եվրոպական պետություն, և հետևապես նայում են դեպի Արևմուտք, իսլամիստները հակված են դեպի Մերձավոր Արևելք և մահմեդական համագործակցություն և այսպիսով նայում են դեպի հարավ: Դեպի պատմությունը նայող ազգայնականները տարածաշրջանում տեսնում են Կասպից ծովի ավազանի և Միջին Ասիայի թյուրքական ժողովուրդների նոր դերակատարությունը և այդպիսով նայում են դեպի Արևելք: Տես՝* ***Бжезинский З.,*** *Великая шахматная доска. Господство Америки и его геопалитические императивы. Пер. с англ. М., 1999, ст. 161.*

[3] *Այս մասին մանրամասն տե՛ս* ***Չաքրյան Հ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998:*

[4] ***Мурадян И.,*** *Противоречения политики отлантизма и проблемы регеональной безопасности, Ер. 2001, ст. 117.*

[5] ***Оганесян Н.,*** *Карабахский конфликт, этапы подходы, варианты решения, Ер. 1997, ст. 55*

շնորհիվ ԽՍՀՄ-ի, որն այլևս գոյություն չունի: Իրավիճակը հիմա փոխվել է և այն թելադրում է նոր մոտեցումների անհրաժեշտություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ: «Սկզբունքորեն կա երեք միջոց որոշելու Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ դուրս քշել կամ էլ սպանել բոլոր հայերին, որոնք հիմա գտնվում են այնտեղ, մտցնել մեծաքանակ արտասահմանյան զորք կողմերին բաժանելու համար, կամ էլ ԼՂԻՄ-ը դնել հայկական վերահսկողության տակ»[1]: Սակայն ինքն էլ գտնում է, որ հնարավոր չէ դրանց իրագործումը՝ առաջինը՝ հոգեբանական տեսանկյունից, երկրորդը՝ ֆիզիկական, երրորդը՝ քաղաքական, քանի որ այս դեպքում Ադրբեջանը կդառնա «կորսյալ» կողմ: Դրա համար էլ նա գտնում է, որ խնդրի լուծումը կարելի է գտնել տարածքների փոխանակմամբ: Ծրագրով նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի մի մասը միացնել Հայաստանին իսկ մյուս մասը հանձնել Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Մեղրիին, ապա այն որպես կամուրջ Նախիջևանի ու Ադրբեջանի միջև վերջինիս էր կցվում: Այս ծրագրով փաստորեն Հայաստանը կկտրվեր Իրանի հետ ընդհանուր սահմանից և կմնար լիակատար շրջափակման մեջ: Բացի տարածաշրջանային նշանակությունից ծրագիրը նաև աշխարհաքաղաքական բաղադրիչ ուներ՝ Իրանի ու Ռուսաստանի շահերով պայմանավորված:

Թե որքանով է «Գոբլի ծրագիրը» կապված Թ. Օզալի և Ջ. Բուշի արդեն վերը հիշատակված քննարկման հետ, դժվար է ասել:

Սակայն Պոլ Գոբլը նույնպես հասկացավ իր ծրագրի անիրականանալիությունը, որի համար էլ ավելի ուշ առաջ է քաշել նոր՝ նախկինի կատարելագործված տարբերակը. «Սխալն այն է, որ նա չէր հասկացել, թե ինչպիսի հոգեբանական նշանակություն ունի Հայաստանի համար Իրանի հետ ընդհանուր սահմանը: Դրա համար էլ այժմ նա առաջարկում է Մեղրու միջանցքը տալ Ադրբեջանին, իսկ Նախիջևանի մերձարաքսյան շրջանը՝ Հայաստանին, որպեսզի ապահովվի Իրանի հետ սահմանը»[2]: Պոլ Գոբլի ծրագիրը չիրականացավ, բայց այն հետաքրքիր է նրանով, որ ճանաչվում է նախկին ստատուս քվոյի վերականգնման անիրական լինելը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղն այլևս հնարավոր չէ մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Դրանց հետաքրքրությունն այն է նրանում, որ ըստ էության առաջարկվում է հրաժարվել նախկին քարացած սկզբունքներից և մշակել նոր մոտեցումներ: Պոլ Գոբլի ծրագրի մասին խոսակցությունները կրկին ակտիվացան 2001թ.՝ Քիվեսության բանակցությունների օրերին, որը քննարկման առանձին թեմա է: Բայց նույնիսկ այդ օրերին կարծիքներ էին հնչում, և ոչ անհիմն, թե դրանց

---

[1] ***Оганесян Н.,*** *указ.соч,. Ереван, 1997, ст. 55*

[2] ***Мурадян И.,*** *Политика США и проблемы безопасности региона Южного Ковказа. Ереван, 2000, ст. 29.*

հիմքում ընկած էր հենց Գոբլի ծրագիրը, որի ծագման շարժառիթները ևս լիովին բացահայտված չեն:

Այսպիսով՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համատեքստում ուսումնասիրելով տարածքների փոխանակման գաղափարի ծագման ու ծավալման շարժընթացը՝ ակնհայտ է դառնում, որ բոլոր դեպքերում այս կամ առավել հայտնի «Մեղրու միջանցքի» փոխանակման գաղափարը իր ծագումնաբանությամբ թուրքական ռազմավարական ծրագիր է: Դրա նպատակը Ադրբեջանի և դրանով իսկ միջինասիական թուրքալեզու երկրների հետ անմիջական ցամաքային կապի ստեղծումն է՝ թուրքական հեռահար ծավալապաշտական ծրագրերի իրականացման համատեքստում: ԽՍՀՄ տրոհումից հետո Թուրքիայի համար կրկին արդիական դարձան վաղեմի պանթյուրքական ծրագրերը իրականացնելու, այդ թվում՝ Ադրբեջանի տարածքով միջինասիական թյուրքալեզու պետությունների հետ անմիջական ցամաքային կապի ստեղծման հեռանկարները: Հենց թուրքական ծավալապաշտական ծրագրերի համատեքստում պետք է դիտարկել հայ-թուրքական հարաբերությունները ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելը, Ադրբեջանի հանրապետությանը ամեն ձևով աջակցությունը, Հայաստանը շրջափակելու և հայ ժողովրդի դեմ ուղղված այլ թշնամական քայլերը: Հետևաբար, հակամարտության կարգավորման բանակցություններում հարկ է մշտապես հաշվի առնել այս հանգամանքը և քայլեր ձեռնարկել այդօրինակ գաղափարների իրականացումը ի սպառ բացառելու համար: Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները հերթական անգամ փաստում են, որ Թուրքիան որևէ առիթ բաց չի թողնում նոր տարածքներ նվաճելու և պանթյուրքական գաղափարները իրագործելու համար: Իսկ փոքր եղբայրը, ի դեմս Հ. Ալիևի, առիթը բաց չի թողնում մեծ եղբորը ձայնակցելու, հայատյացություն քարոզելու իսկ հնարավորության դեպքում ցեղասպանության թուրքական ծրագրերը վերջնահանգրվանին հասցնելու համար[1]:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

---

[1] *Թյուրքական խորհրդի 2019թ. վերջերին կայացած 7-րդ գագաթնաժողովին Ի. Ալիևը, հերթական անգամ հակահայկական կեցվածք ընդունելով և թյուրքական աշխարհին Հասաստանի դեմ տրամադրելու համար, հայտարարել է որ. «Զանգեզուրի փոխանցումը Հայաստանին հանգեցրեց թյուրքական աշխարհի աշխարհագրական պառակտմանը»: Ильхам Алиев заговорил о передаче Зангезура Армении, https://haqqin.az/news/160538*

ՀՏԴ 327
Քաղաքագիտություն

Գարիկ ՊՈՂՈՍՅԱՆ
Գլոբալ Բրիջ կրթահամալիրի անգլերենի դասախոս,
քաղաքագիտության մագիստրոս
էլ-փոստ: garik.poghosyan2011@gmail.com

ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԴԵՊԵՐԻՑ ԲԽՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՀԵՏ

Հոդվածը փորձ է անում վեր հանել մադրիդյան սկզբունքների թաքնահարույց անհամատեղելիությունը հետխորհրդային տարածքում և բալկաններում մի շարք հակամարտությունների կարգավորման տրամաբանությանը՝ զինադադարի համաձայնագրերի հետ համեմատական վերլուծության վրա, ինչպես նաև նախորդ դարում ՄԱԿ-ի ապագաղութացման քաղաքականության համատեքստում: Մասնավորապես ուշադրության է արժանանում այն հանգամանքը, որ մադրիդյան սկզբունքները նկատի չեն առնում մի շարք քաղաքական իրողություններ: Այս նկատառումներով առաջարկվում է ձևավորել բանակցային գործընթացի «արցախյան օրակարգ»:

Բանալի բառեր՝ *մադրիդյան սկզբունքներ, խաղաղաստեղծություն, զինադադար:*

Г.Погосян

НЕСОВМЕСТИМОСТЬ МАДРИДСКИХ ПРИНЦИПОВ С НОРМАМИ ВЫТЕКАЮЩИМИ ИЗ МЕЖДУНАРОДНЫХ ПРЕЦЕДЕНТОВ

В статье автор пытается выявить скрытую несовместимость Мадридских принципов с логикой урегулирования ряда конфликтов на постсоветском пространстве и Балканах на сравнительном анализе с соглашениями о перемирии, а также в контексте политики деколонизации ООН в прошлом веке. В частности, удостаивается внимания то обстоятельство, что мадридские принципы не учитывают ряд политических реалий. По этим соображениям предлагается сформировать "арцахскую повестку" переговорного процесса.

Ключевые слова: *Мадридские принципы, миротворчество, перемирие*

G.Poghosyan

INCOMPATIBILITY OF THE MADRID PRINCIPLES WITH THE NORMS ARISING FROM INTERNATIONAL PRECEDENTS

The article attempts to reveal the hidden incompatibility of the Madrid

Principles with the logic of resolving a number of conflicts in the post-Soviet space and the Balkans through a comparative analysis of several armistice agreements, as well as in the context of the decolonization policy of the United Nations in the previous century. In particular, attention is drawn to the fact that the Madrid Principles do not take into account a number of political realities. For these reasons, it is proposed to form the "Artsakh agenda" of the negotiation process.
Keywords: *Madrid Principles, peacebuilding, ceasefire*

Համարժե՞ք են արդյոք մադրիդյան սկզբունքները միջազգային խաղաղաստեղծ պրակտիկային, որքանո՞վ են արտացոլում հակամարտության մեջ ներքաշված կողմերի շահերի և իրավունքների ամբողջությունը: Հիմնավոր և իրավարա՞ր են արդյոք, եթե դրանք դիտարկենք բանակցային գործընթացում փոփոխական հաջողություններ գրանցելու՝ կողմերի թվացյալ կամ առարկայական խաղից դուրս: Այս հարցերի պատասխանների որոնումներում մենք հանգել ենք մադրիդյան սկզբունքների անհամատեղելիությունը խաղաղաստեղծության նախատիպերի հետ վեր հանելու անհրաժեշտության գիտակցմանը: Չնայած նրան, որ հայ քաղաքագիտական և պատմագիտական միտքը վաղուց հիմնավորել է Արցախի հայկական պատկանելությունը, բնութագրել ինքնորոշման իրավունքի իրացման պատմաքաղաքական և իրավաքաղաքական հիմքեր, ինչպես օրինակ Ա. Մանասյանը, Տ. Բալայանը, Հ. Մ. հարությունյանը, Ե. Իշխանյանը, Ա. Ղարիբյանը, Տ. Հակոբյանը և այլք, սակայն Արցախի հարցով դիրքորոշումների և հատկապես հակամարտության կարգավորման առաջարկների խորքային վերլուծությունը շարունակում են մնալ ոչ ամբողջությամբ իրացված: Դրանք են մադրիդյան սկզբունքների համապատասխանությունը, կամ, ավելի փաստական, դրանց անհամապատասխանությունը արցախյան հակամարտության էությանն ու միջազգային իրավական փաստաթղթերին՝ այլ հակամարտությունների կարգավորման պատմությանը: Ուստի, սույն հոդվածն ունի երկակի նպատակ: Առաջին՝ վեր հանել մադրիդյան սկզբունքների անհամատեղելիությունը միջազգային հակամարտությունների կարգավորման համընդհանուր չափորոշիչներին՝ համեմատական վերլուծության ենթարկելով միջազգային նախադեպերը՝ զինադադարի համաձայնագրերի հիմքով: Որքան էլ տարօրինակ է, մադրիդյան սկզբունքները, որքանով որ ցույց են տալիս մեր համեմատական վերլուծության արդյունքները, միայն առերևույթ են համապատասխանում միջազգային ընդունված նորմերին և խորքային իմաստով հակասում են դրանց: Ավելին, ինչպես կհամոզվենք, դրանք իրենցից ներկայացնում են Բիշկեկի զինադադարի բացթողումներն արցախահայության շահերի և իրավունքների հաշվին լրացնելու փորձ՝ զինադադար - 2: Երկրորդ, նպատակ ենք հետապնդում հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել նախաձեռնողական դիվանագիտության աշխուժացման առաջարկությունների փաթեթ:

Հոդվածը բաղկացած է երկու ենթագլխից և եզրակացությունից: Առաջին ենթագլխում հակիրճ ներկայացվում ենք հայկական հասարակագիտական մտքի փաստարկներ Արցախի պատմաքաղաքական և իրավաքաղաքական հայկականության և սուբյեկտայության վերաբերյալ: Երկրորդ ենթագլխում վեր է հանվում մադրիդյան սկզբունքների անլիարժեքությունը միջազգային չափորոշիչերի և նախադեպերի համատեքստում՝ Կոսովոյի, Մերձդնեստրի, Բոսնիայի, Աբխազիայի, Հարավային Օսիայի զինադադարի համաձայնագրերի և Բիշկեկի զինադադարի բովանդակային համեմատական վերլուծության հիման վրա: Հոդվածի գլխավոր նպատակը որոշակիացնելու առումով կարևոր ենք համարում շեշտել, որ միջազգային այլ կարգավորված կամ ընթացիկ հակամարտությունները համեմատվում են մադրիդյան սկզբուքների հետ այնքանով, որքանով այդ սկզբունքերը հակասության մեջ են մտնում Արցախի դեպքի հետ չափորոշիչների ունիվերսալության տեսակետից: Ամփոփում բաժնում ներկայացնում ենք սույն հոդվածի հիմնավորումներից բխող քաղաքական-դիվանագիտական մոտեցումների փոփոխության կոնկրետ առաջարկներ:

1.1 Մադրիդյան սկզբունքների՝ Արցախյան հարցի հետ անհամատեղելիության լուսաբանումը

Արցախյան հակամարտությունը բազմաշերտ է և դրա մեկնաբանության ու վերլուծության ծիրում են դիտարկվում պատմական, իրավական, քաղաքական, աշխարհաքաղաքական մի շարք հարցեր: Այնուամենայնիվ, հայ քաղաքական և քաղաքագիտական, պատմագիտական միտքը Արցախի հայկական պատկանելության, դրա իրավաքաղաքական և պատմաքաղաքական հիմնավորումները սպառիչ ներկայացնելուն զուգահեռ մինչ օրս անդրադարձ չի կատարել այն հարցին,թե արդյոք միջնորդների առաջարկներն ընդհանրապես, իսկ մադրիդյան սկզբունքները մասնավորապես ինչպես պատմական արդարության ու իրավական փաստաթղթերի, այնպես էլ միջազգային սկզբունքների ու նախադեպերի հետ հակասության մեջ չեն՝մեծ հաշվով թողնելով սա անհատական եզրահանգումների մակարդակում: Արցախյան հակամարտության կարգավորմանն ուղղված մադրիդյան սկզբունքների անհամատեղելիությունը միջազգային խաղաղտեղծության հաջողված և ընթացիկ նախադեպերի ու սկզբունքների հետ խորապես հասկանալու համար, նախ անդրադառնանք հայ քաղաքական մտքի՝Արցախի շուրջ հակամարտության վերաբերյալ վերլուծությունների մի հավաքական համեմատության, որը լույս կսփռի վերոնշյալ խնդրի արդիականության վրա: Այսպես, պատմաբան Տարոն Հակոբյանն իր՝ «ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.)» աշխատության մեջ խնդիրը վեր է հանում պատմության, իրավունքի և անվտանգության խնդիրների շուրջ խորքային վերլուծությամբ: Հատկանշական է, որ պատմաբանն անդրադառնում է այնպիսի հույժ կարևոր խնդրի, ինչպիսին նախկին ԼՂԻՄ-ի հարակից տարածքներն են: Պատմական անարդարության և այդ տարածքների հայկական պատկանելության

խնդրի լուսաբանման անհրաժեշտության վրա ընթերցողի ուշադրությունը հրավիրելով՝ պատմաբանը, ԼՂԻՄ կազմավորման մասին խոսելիս հայտնում է, որ «նորաստեղծ մարզի սահմանների մեջ չընդգրկվեցին հարթավայրային Ղարաբաղի մեծ մասն ու արևմտյան լեռնային շրջանները»[1]: Ավելին՝ հեղինակն արդեն կոնֆլիկտի վերածնման ժամանակակից փուլի մասին, զինադադարին նախորդող քաղաքական անցուդարձը նկարագրելիս թեպետ ուշագրավ հղում է կատարում զինադադարի կնքման տրամաբանությանը, հիշեցնելով, որ ՀՀ նախագահ Լևոն Տեր Պետրոսյանը հայկական կողմից զինադադարի կնքման առնչությամբ նախապայմաններ առաջ չքաշելը պայմանավորել էր Ադրբեջանի նույնատեսակ դիքորոշման առկայության պահանջը բավարարելով[2], սակայն հեղինակը չի կապում զինադադարի համաձայնագրի մեջ չընդգրկված նախապայմանների ներառումը միջնորդների առաջարկների մեջ դրանց անընդունելիության հետ: Այս համատեքստում կարևորում ենք նաև պատմաբան, դիվանագետ Տիգրան Բալայանի «Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը (1991-1994 թ.)» աշխատանքը, ինչը բանակցային գործընթացի զարգացման պատմությունը լուսաբանող մի հաջողված փորձ է: Պատմաբանը մեր հետազոտության նպատակների տեսակետից մի կարևոր հարցի մասին է գրում, երբ ԵԱՀԿ-ն ներկայացնում է որպես հակամարտությունների կարգավորման մեջ փորձ չունեցող մի կառույց Ղարաբաղյան հակամարտության միջնորդական ջանքերը այդ կառույցին վստահելու պատմությունը քննության առնելիս[3]: Սրանով հանդերձ՝ հեղինակը չի մեկնաբանում միջնորդների առաջարկների հնարավոր անհամատեղելիությունը միջազգային նորմերի ու սկզբունքների հետ՝ չնայած այն հանգամանքին, որ ստեղծում է դա անելու համար անհրաժեշտ պատմաքաղաքական հիմք: Հատկապես կարևոր է վերոգրյալ շարադրանքին հաջորդող հեղինակի մեկ այլ դիտարկում, այն է. «ԵԱՀԽ-ի հիմնադիր փաստաթղթում՝1975 թ.-ի Հելսինկյան Եզրափակիչ ակտում, արձանագրված է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը, որն Ադրբեջանը փորձում է օգտագործել իր հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ արդարացնելու համար»[4]: Սա այն հանգուցակետն է, որտեղ խաչվում են հայ քաղաքական, դիվանագիտական, պատմագիտական մտքի ներկայացուցիչների մոտեցումները՝այդպես էլ անդրադարձ չկատարելով միջնորդների առաջ քաշած սկզբունքների անհամատեղելիությանը կոնֆլիկտների կարգավորման նախադեպերին և դրանց հարակից միջազգային

---

[1] ***Հակոբյան Տ.***, *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.) 2011, էջ 4*

[2] *Նույնը, էջ 157*

[3] ***Բալայան Տ.*** *«Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը (1991-1994թթ.)» 2004, էջ 151*

[4] *Նույնը*

սկզբունքներին: Մասնավորապես ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների արհեստական հակադրության մասին են վկայում նաև Ալեքսանդր Մանասյանը և Ալեն Ղևոնդյանը Ադրբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի 1991 թ-ի հոկտեմբերի 18-ի «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտին անդրադարձ կատարելիս՝ նշելով, որ «Ակտն ապօրինի և ուժից զրկված էր հայտարարում ԽՍՀՄ կազմավորումից ի վեր Ադրբեջանի վերաբերյալ բոլոր ակտերը և Ադրբեջանական Հանրապետությունը սահմանադրորեն հայտարարում էր 1918-1920 թթ. գոյատևած, միջազգային հանրության կողմից դե յուրե չճանաչված և առանց սահմաններ ձեռք բերելու պատմությունից հեռացած ԱԴՀ-ի իրավահաջորդ»[1]: Այստեղ տեղին է հիշատակել նաև Ա. Հարությունյանի և Ս. Պետիկյանի անդարդարձը արցախցիների ինքնորոշման ժամանակակից փուլի իրավական գործընթացին իրենց «Роль Референдума О Независимости Республики Арцах (Нагорно-Карабахской Республики) В Деле Построения Государственности» հոդվածում[2]: : Հեղինակները ներկայացնում են ինչպես 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ում և Շահումյանի շրջանում պետական ինստիտուտների ձևավորման սկիզբը, Արցախի ժամանակավոր կարգավիճակի ծնունդը, այնպես էլ լուսաբանում 1991 թվականի նոյեմբերի 27-ի՝ հանրաքվեին առնչվող որոշման իրավարարությունը, ինչը ևս մեկ անգամ բացահայտում է այն խզումը, որ առկա է միջնորդների առաջարկների և Արցախի հարցի իրավաքաղաքական տրամաբանության միջև: Թվում է՝ հայ հասարակագետները հանգում են միևնույն եզրակացության, սակայն միջնորդների առաջարկների և միջազգային նախադեպերի ու սկբունքների անմահատեղելիության հարցին այդպես էլ հստակ անցում չի կատարվում: Մեր տեսադաշտում եղած գրականության մեջ կուզեինք առանձնացնել պրոֆեսոր Ա. Մանասյանի «Արցախյան հիմնախնդիր: նորովի իմաստավորման ենթակա հարցեր» հոդվածը, որում արված պարզաբանումներն ու շեշտադրումներն ամենասերտ առնչակցություններն ունեն սույն հոդվածի նպատակների հետ և, թեպետ անուղղակիորեն, բայց ուշադրություն են հրավիրում մադրիդյան սկզբունքների՝միջազգային իրավական ուժ ունեցող նորմերի հետ անհամատեղելիությանը: Այսպես՝ հեղիակը հայտնում է, որ «արցախահայությունը XX դարում երկու անգամ ինքնորոշվել է այլ պետության իրավադասությունից դուրս գտնվող կամ այլ կերպ՝ որևէ մի պետության մաս չկազմող և այդ իմաստով իրենից բացի որևէ մեկին

---

[1] ***Մանասյան Ա. և Ղևոնդյան Ա.***, *«Լեռնային Ղարաբաղ. ինչպե՞ս է դա եղե», Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն, Երևան, 2011, էջ 105*

[2] ***Арутюнян А., Петикян С.***, *Роль Референдума О Независимости Республики Арцах (Нагорно-Карабахской Республики) В Деле Построения Государственности, Кавказ в геополитических интересах региональных и мировых держав, ДГТУ-Принт, Степанакерт – Ростов-на-Дону, 2018, 52-67*

չպատկանող տարածքներում՝ դրանց կարգավիճակի մասին միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում»[1]: Հաջորդ գլխում նպատակ ենք հետապնդում զինադադարի պայմանագրերի, դրանցից բխեցվող տրամախոսության և այլ նորմերի հիման վրա հստակեցնել, որ ոչ միայն Արցախի պատմաքաղաքական և իրավաքաղաքական էությունը, այլև միջազգային պրակտիկան անմեկտեղելի են դարձնում մադրիդյան սկզբունքները իրենց՝ խնդրի կարգավորման խաղաղաստեղծ և իրավարար առաքելության հետ:

1.2 Մադրիդյան սկզբունքներ: ընդհանուր նկարագրությունը և միջազգային նորմերի հետ անհամատեղելիությունը

Նախքան մադրիդյան սկզբունքները մասնավորից ընդհանուր քննադատական-նախադեպային վերլուծության ենթարկելը դրանք միջազգային նորմերի ու հակամարտությունների կարգավորման համաշխարհայնորեն ընդունելի օրինաչափությունների դաշտում տեղորոշելը՝ հիշատակենք մադրիդյան սկզբունքները[2]: Դրանք են՝

ա) Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքների ապառազմականացումը և տարհանումը (evacuation and demilitarization):

բ) Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ՝ անվտանգության և ինքնակառավարման երաշխիքների տրամադրմամբ:

գ) Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք:

դ) Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի վճռում՝ ապագայում պարտադիր իրավական ուժ ունեցող կամարտահայտման միջոցով

ե) բոլոր փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձ իրենց նախկին բնակության վայրեր

զ) անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն

Այսպիսով՝ առաջին կետով փուլային կարգավորում ենթադրող մադրիդյան սկզբունքերը հակասության մեջ են մտնում ինչպես միջազգային նորմերի, այնպես էլ արցախյան հակամարտության պատմության հետ՝ խեղաթյուրելով հակամարտության էությունը և երկրորդելով արցախահայության շահերը: Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքերի ապառազմականացումը և տարհանումը չի հիշատակում Շահումյանի հայաբնակ շրջանը: Եթե ապառազմականացումը վերաբերվում է նախքան հակամարտության ժամանակակից փուլի սկիզբը իրադրության վերականգնմանը, ապա առնվազն տարօրինակ է, որ այդ փուլից դուրս է մնում բռնի հայաթափված

---

[1] ***Մանասյան Ա.*** *Արցախյան հիմնախնդիր նորովի իմաստավորման ենթակա հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2019 № 3 (30), էջ 39* http://ysu.am/science/hy/Alexander-Manasyan

[2] *Statement by the OSCE Minsk Group Co-Chair Countries, 10 July, 2009, L'Aquila* https://www.osce.org/mg/51152

Շահումյանի շրջանը: Այս իմաստով միջնորդների առաջարկը փաստորեն թիրախավորում է նաև Արցախի սուբյեկտայնությունը, քանի որ ինքորոշման իր անքակտելի իրավունքն իրացրած արցախահայությունը անկախության հանրաքվեն անցկացրել է ոչ միայն նախկին ԼՂԻՄ տարածքում, այլև Շահումյանի շրջանում: Սրանից հետևում է, որ Արցախը բանակցային գործընթաց վերադարձնելու անհրաժեշտությունը կարևոր է նաև արցախահայության սուբյեկտայնության այնպիսի աստիճանի բարձրացման իմաստով, որը թույլ կտա առնվազն տարածքների ապառազմականացումը դարձնել հակամարտող կողմերի ընդհանուր պարտավորություն: Ենթադրում ենք, որ Ադրբեջանի Հանրապետության ղեկավարությունը պատրաստ չէ Շահումյանի շրջանի դեօկուպացիային, ինչը փաստորեն մադրիդյան սկզբունքերի առաջին կետը դարձնում է միակողմանի զիջումների չհիմնավորված պահանջ: Եթե նախկին ԼՂԻՄ հարակից շրջանների ապառազմականացումը հիմնավորվում է այն պնդմամբ, որ դրանք Սովետական Ադրբեջանի մաս են կազմել, ապա նույն տրամաբանությամբ միջնորդները կարող էին պահանջել ամբողջ Արցախի ապառազմականացում, ներառյալ՝նախկին ԼՂԻՄ-ը, ինչն իրատեսորեն չեն արել: Մյուս կողմից, եթե առաջարկի նպատակն է Արցախի ինքապաշտպանական ուժերի վերահսկողության տակ այս փուլում թողնել այն տարածքը, որը արցախահայության ինքնորոշման իրավունքի և պահանջատիրության արեալն է, ապա այն ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ն է, այլև Շահումյանի շրջանը, ուստի հարկ ենք համարում կրկնել, որ առաջին կետի պահանջը թիրախավորում է արցախահայության շահերը և չի ճանաչում նրա սուբյեկտայնությունը իր խորհրդային տարիների բնակության ողջ տարածքում:

Առաջին կետի անթույլատրելիությունը, սակայն, չի սահմանափակվում դրա տրամաբանության նկատմամբ ներհակ բնույթով: Սահմանների որոշման համար բացակայում են երեք նախապայման: Առաջին՝ Արցախը, զինդադար կնքած հակամարտության կողմերից մեկը, չի մասնակցում բանակցային գործընթացին, ինչն անթույլատրելի է դարձնում նման կարևորագույն հարցերի վճռումը: Անգամ ինքնորոշում-տարածքային ամբողջականություն դիխոտոմիայի (մեր համոզմամբ առնվազն Արցախի դեպքում արհեստական հակադրության) տեսանկյունից անհասկանալի է ինքնորոշվող միավորի ճակատագիրն առանց դրա մասնակցության լուծելու փորձը, մինչդեռ բանակցությունների հիմքում հենց ինքնորոշման ու դրա ձևաչափի հարցն է եղել մինչ օրս: Երկրորդ՝, Արցախի անվտանգությունը չի կարող դրվել հարցականի տակ անգամ տարածքային փոփոխությունների գնով, ինչպիսին, օրինակ, նախկին ԼՂԻՄ հարակից տարածքների միացումն է Արցախին: Անկլավի կարգավիճակում Արցախը չի կարող ունենալ անվտանգության կայուն, երկարաժամկետ երաշխիքներ, իսկ Հայաստանին կապող միջանցքը մեծ հաշվով չի լուծում այս խնդիրը: Այս հարցում հայկական կողմը կարող է ակնկալել միջազգային ըմբռնում կամ ձգտել ձևավորելու ադրբեջանական

ագրեսիան դատապարտող, դրա հետևանքների վերացման անհրաժեշտությունը գիտակցող գործընկեր պետությունների և կազմակերպությունների շրջանակ, եթե անդրադարձ կատարի հակամարտության ծագման և ընթացքի պատմությանը: Այս իմաստով առանձնակի կարևորում ենք երկու հանգամանք. 20-րդ դարում ՄԱԿ-ի գլխավորությամբ ապագաղութացման գործընթացը և 90-ականներին միջազգային հանրության դիրքորոշման օրինակներ, որոնք հույս են ներշնչում առ այն, որ հնարավոր է դիվանագիտական նպատակամետ ջանքեր գործադրելով հասնել ագրեսիայի և դրա բոլոր դրսևորումների ճանաչման, դրա հետևանքների վերացման առանց նախապայմանների, ինչպես նաև բռնարարքները, դիցուք, էթնիկական կամ ազգային պատկանելությամբ պայմանավորված զանգվածային բռնությունները՝ կոտորածները, կարգավիճակի և տարածքային ճշգրտումների հարթության վրա դիտարկելուն: Այսպես՝ ՄԱԿ-ի գաղութացված երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու հռչակագիրը 20-րդ դարում ինքնորոշման հաղթարշավի իրավական դրսևորում էր, որն ուներ իրավաքաղաքական մեծ նշանակություն: Միջազգային իրավունքի պրոֆեսոր Էդվարդ Մկվինին (Edward McWhinney) այս դեկլարացիայի համատեքստում խիստ ուշագրավ և ուսանելի մեկնաբանություն է ներկայացնում ապագաղութացված աֆրիկյան երկրների սահմանազատման վերաբերյալ: Նա մասնավորապես ասում է. «1514 (XV) բանաձևից կողմնակի հարցեր են առաջանում, որոնք վերաբերվում են նախկին գաղութային շրջանից մնացած տարածքային սահմանների իրավական առումով շարունակական իրավունակության (validity) հետ կապված հետևանքներին ապագաղութացման համատեքստում: Վաղ հետգաղութային շրջանում Աֆրիկյան միության կազմակերպությունը դրսևորել է անհանգստություն առ այն, որ խուսափեն սահմանների շուրջ ներքին հակամարտություններից և դրա հետևանք հանդիսացող «բնական սահմանները» վերականգնելուն միտված ռազմական միջոցներից: Պրագմատիկ որոշումն այն էր, որ նորանկախ աֆրիկյան պետությունների համար ամենախելամիտը, առնվազն այդ պահին, իրենց նոր ժառանգած տարածքային սահմանազատումների լեգիտիմությունն ընդունելն էր, որտեղ նրանք, ինչպես շատ հաճախ պատահում էր, ունեին կամայականորեն բաժանված բնիկ ժողովուրդներ կամ «ազգեր», որոնք պատկանում էին ուրույն էթնոկրոնական համայնքների»[1]: Այսպիսով՝ ակնհայտ է, որ միջազգային խաղաղության պահպանման և ազգերի միջև համագործակցության զարգացման նպատակով միջազգային պրակտիկայում կա նախադեպ, երբ տարածքային վեճերը հարթվում կամ դրանք կանխում են փոխադարձ ըմբռնումով և ժամանակին կամայական

[1] *Edward McWhinney Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples; UN Audiovisual Library of International Law, p. 3, 2008* file:///C:/Users/Admin/Desktop/New/Political%20Science%20and%20other/Conflict/colonial%20declaration.pdf

սահմանազատումների արդյունքում վիճելի սահմանների ժառանգության լեգիտիմացմամբ: Մենք լրիվությամբ անհավանական ենք համարում, որ Ադրբեջանում դրսևորեն ողջախոհություն՝ հանուն խաղաղության այս հարցում, ինչը սակայն չի զրկում հայկական դիվանագիտությունը վերոբերյալ օրինակով պահանջելու ճանաչել գոյություն ունեցող սահմանների լեգիտիմությունը որպես ժառանգություն, իսկ սահմանների ճշգրտման անհրաժեշտության պարագայում բարձրացնել ինչպես Շահումյանի շրջանի, այնպես էլ ԽՍՀՄ կազմում Լեռնային Ղարաբաղի սահմանների փոփոխության հարցը, ինչի վերջնարդյունքում ստեղծվեց ԼՂԻՄ-ը 80-ականների վերջի իր սահմաններում: Այլ կերպ ասած՝ Արցախը բանակցային գործընթաց վերադարձնելուն զուգահեռ անհրաժեշտ է արցախի սուբյեկտայնության հարցը դիտարկել ԼՂԻՄ սահմաններից անդին՝ Լեռնային Ղարաբաղի պատմական տարածքի վրա, ինչը խորհրդային տարիներին փոփոխվել է կամայականորեն և հետևաբար չի արտահայտել արցախահայության և ընդհանրապես հայության կամքը: Երկրորդը անվտանգության խնդիրն է: Թեպետ հայկական դիվանագիտությունը չի թաքցնում նախկին ԼՂԻՄ հարակից տարածքաները նշանակությունն անվտանգության առումով, մեր համոզմամբ անհրաժեշտ է միջազգային հանրությանը պատրաստել այն զարգացումներին, որոնք այդ տարածքները, անկախ պատմաքաղաքական կամ իրավական վերոնշյալ կամ այլ գործոնների, պերմանենտ կերպով կդիտարկվեն որպես Արցախի անվտանգության, ասել է թե՝սահմանների անքակտելիության կարևոր և անփոխարինելի բաղկացուցիչ: Կարևոր է, օրինակ, որ հայկական դիվանագիտությունը հնարավորություն ունի հղում կատարելու միջազգային գործընկերների նախկինում ունեցած մոտեցումներին որպես Ադրբեջանի՝ ագրեսորի դերում հանդես գալու փաստարկ: Այդպիսի օրինակ է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հայտնի 907 բանաձևը[1], որն ընդունվել էր 1992 թվականի հոկտեմբերի 24-ին և արգելում էր Ադրբեջանի կառավարությանն օժանդակությունը մինչև Ադրբեջանի՝ «հստակ քայլեր ձեռնարկելը դադարեցնելու շրջափակումները և այլ ուժի հարձակողական կիրառություններն ընդդեմ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի»: Ակնհայտ է, որ բանաձևը հարվածում էր Ադրբեջանի՝ խնդիրը ագրեսիայի ճանապարհով լուծելու քաղաքականությանը և վերջինիս անուղղակիորեն, բայց հստակորեն ճանաչում էր որպես ագրեսիա իրականացնող կողմ: Այս և նմանատիպ օրինակները, սակայն, հնարավոր է օգտագործել միայն իրատեսորեն նպատակադրման դեպքում՝ հետևելով միջազգային և աշխարհաքաղաքական գործընթացներին: Վերջիններիս հարափոփոխ բնույթով պայմանավորված՝ երրորդ երկրները կարող են վերանայել կամ վերահաստատել, վերահմաստավորել կամ միտումնավոր տարընթերցել

[1] *Section 907 of the Freedom Support Act; Washington DC, 24 October, 1992* http://www.mountainous-karabakh.org/document.html#.XqGjuykzbIU

իրենց նախկին դիրքորոշումը: Այնուամենայնիվ անհրաժեշտ է դիվանագիտական ջանքեր գործադրել շրջափակումը որպես ագրեսիա ընկալելու ընդհանուր եզրահանգման գալու նպատակով, որի վերացումը որևէ փաստաթղթում, լինի դա փուլային, թե փաթեթային, պայման չի հանդիսանա հայկական կողմից անհիմն զիջումներ կորզելու համար: Ցավալիորեն ստիպված ենք նշել, որ մադրիդյան սկզբունքներում ագրեսիա, մարդկանց բռնի տեղահանություն և ռազմական գործողություններ սանձազերծած կողմը՝ Ադրբեջանը, հանդես է գալիս պահանջատիրության դիրքերից՝ կապելով իր կողմից ագրեսիվ գործողությունների դադարեցումը, այսինքն՝հաղորդակցության ուղիների բացումը, հայկական կողմի միակողմանի տարածքային զիջումների հետ, որոնք ինչպես արդեն ասվեց, հակասում են միջազգային պրակտիկային ապագաղութացումից (կարդալ՝կամարտահայտման հնարավորության բացակայությանը հաջորդած ինքնորոշման իրավունքի իրացումից) հետո սահմանների լեգիտիմացմանը կամ անվտանգության պերմանենտ երաշխիքների անխախտելիությանը: Այս վերջին փաստարկի տիրույթում պետք է դիտարկել նաև մադրիդյան սկզբունքների «գ» կետը, որը նախատեսում է միջանցք Հայաստանի և Արցախի միջև այն դեպքում, երբ Արցախի անվտանգության պերմանենտ երաշխիքները (նախկին ԼՂԻՄ հարակից շրջանները) արդեն ապահովում են Հայաստանի և Արցախի միջև կապը և ավելի վաղ բերված հիմնավորումներով չեն կարող ենթարկվել երաշխիքների պերմանենտությանը վնասող կամ դրանք անդառնալիորեն փոխող ազդեցությունների՝ առավել ևս առանց արցախահայության ձայնի իրավունքի: Այս վերջին դիտարկման հետ ուղղակի առնչակցություն ունի մադրիդյան սկզբունքների «բ» կետը Արցախին տրվող միջանկյալ կարգավիճակի, ինքնավարության և անվտանգության երաշխիքների մասին, որոնք, ըստ ամենայնի, ամենաշատն են կտրված իրականությունից և ամենաանհեռատես ձևակերպումներն են, եթե հաշվի առնենք հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը: Այս դիխոտոմիային լուծում տալու համար է, որ համեմատում և համադրում ենք այլ նմանատիպ էթնոքաղաքական հակամարտությունների ժամանակ կնքված զինադադարի պայմանագրերը, մասնավորապես Կոսովոյի, Բոսնիայի, Մերձնեստրի, Աբխազիայի և Հարավային: Այս հակամարտություններն ընտրվել են որոշակիորեն ընդհանրացված չափանիշների հիման վրա, ինչպիսիք են էթնոքաղաքական բնույթը, երրորդ կողմի ուղղակի կամ միջնորդավորված միջամտությունը, խաղաղապահ կամ խաղաղարար միջազգային մեխանիզմների առկայությունը, ավելի փոքր միավորի հակամարտությունն ավելի մեծ հարևանի կամ նախկինում միևնույն քաղաքական միավորի մաս կազմած երկու և ավելի մասերի միջև, ագրեսիայի կամ ինքնորոշման բաղադրիչը, Արցախին աշխարհագրական մերձավորությամբ և աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիաների համադրելիությամբ, խնդրի արդի փուլի ժամանակագրական համադրելիությամբ և հակամարտությունը ծնող

վերջինիս զավթողական կեցվածքը: Մուսավաթական Ադրբեջանն Անգլիայի լուռ համաձայնությամբ մեծ թվով զորք կուտակեց Ղարաբաղում և տարբեր ուղղություններով հարձակում սկսեց: Թուրք-թաթարական հրոսակախմբերը սարսափելի վայրագություններ կատարեցին Դիզակի ու Վարանդայի գավառներում, Շուշիում, Ասկերանում: 1919թ. հունվարի 15-ին ադրբեջանական կառավարության որոշմամբ Խոսրով բեկ Սուլթանովը նշանակվեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ:[1] Շուշիի անգլիական ներկայացուցչությունը՝ հանձին Մանկ Միզոնի, պահանջում է Ղարաբաղի հայոց ազգային խորհրդից ճանաչել Սուլթանովի իշխանությունը, սակայն ազգային խորհուրդը ստանում է հստակ պատասխան. Հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, քանի որ կախումը Ադրբեջանից համարում է անընդունելի, ինչ ձևով էլ որ այն արտահայտված լինի: Բողոքի նոտա հղեց նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որակելով Սութանովի նշանակումը ապօրինի քայլ և Ղարաբաղը համարելով հայաստանի անբաժան մասը: 1919թ. փետրվարի 10-21ը Շուշիում գումարվեց արցախահայության 4-րդ համագումարը, որտեղ որոշվեց. «Չճանաչել Ադրբեջանի իշխանությունը հայկական Ղարաբաղի սահմաններում: Անգլիա- Ադրբեջան- Թուրքիա եռյակը, ճնշումներ, արյունահեղություններ իրականացնելով Արցախում, ի վիճակի չեղավ կոտրելու արցախահայության միահամուռ կամքը և ճանաչել տալու Ադրբեջանի ատելի իշխանությունը: 1919թ. ապրիլի 23-29-ը կայացած արցախահայության 5-րդ համագումարը, որին մասնակցում էր նաև անգլիական ներկայացուցիչ Շատելվորդը, որոշում է չընդունել, որևէ մի որոշում, որն առնչություն կարող էր ունենալ Ադրբեջանի հետ: Սութանովը որոշեց սովի ճիրաններում խեղդել արցախահայությանը: Փակվեցին կենսական նշանակության ճանապարհները, տեղակայվեցին մեծ թվով ուժեր. Միայն Շուշիում 1500 զինվորներից բաղկացած ադրբեջանական զորախումբ, 3000 անոց քրդական բանդա»[2]: Ադրբեջանական հրոսակները հունիսի սկզբներին սոսկալի կոտորածներ կազմակերպեցին Շուշիում, Ղայբալիշենում և այլուր: Չնայած սարսափելի արյունահեղություններին, սովին, արցախահայության 5-րդ և 6-րդ համագումարները կրկին արտահայտեցին արցախահայության անկոտրում կամքը երբեք չճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Ադրբեջանը սաստկացրեց ճնշումները արցախահայության վրա: Արցախի տեղական իշխանությունները ձգտում էին հասնելու նրան, որ Ադրբեջանից համաձայնություն կորզեին հարցը բացառապես խաղաղ միջոցներով լուծելու մինչև Փարիզի խորհրդաժողովի հրավիրումը: Շարունակվող սովի, շրջափակման, համատարած հարձակումների և

---

[1] ***Աբրահամյան Հ.***, *Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923, Երևան, 2003, էջ 125:*

[2] ***Հարությունյան Հ.,*** *Շուշին արցախյան գոյապայքարում 1918-1920թթ., էջ 26:*

արյունահեղությունների պայմաններում Արցախում իրավիճակն ավելի օրհասական էր դառնում: 1919թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության 7-րդ համագումարը: Սուլթանովը հրամայեց թնդանոթներ տեղադրել Շոշու և Շուշիի հայկական թաղամասերի ուղղությամբ: Ի վերջո Արցախի համար ներքին ու արտաքին հանգամանքները խիստ աննպաստ համարելով և նոր արյունահեղությունից խուսափելու նպատակով՝ համագումարը որոշեց ժամանակավորապես համաձայնության գալ և ընդունել որոշում, ըստ որի՝ Արցախի լեռնային մասը՝ Շուշիի, Ջինանշիրի և Ջեբրայիլի գավառները ճանաչել Ադրբեջանի հանրապետության սահմաններում մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի գումարումը: 1920թ. փետրվարի 28-ին ացախահայության 8-րդ համագումարը, կրկին արտահայտելով արցախահայության կամքը, մերժում է Սուլթանովի պահանջը և կրկին բարձրաձայնում Հայաստանի հետ վերամիավորվելու հարցը: Մղձավանջային էր 1920թ. գարունը արցախահայության համար: Ադրբեջանը գիտակցեց, որ համոզելով, սպառնալիքներով չէր կարող լուծել Արցախի հարցը և որոշեց այն լուծել արցախահայությանը բնաջնջելու միջոցով: Արցախում կենտրոնացվեց շուրջ 10 հազարանոց զորք, որը լայնածավալ հարձակում ձեռնարկեց Ղարաբաղ-Զանգեզուրի վրա: Արցախահայության 9-րդ համագումարը 1920թ. ապրիլի 25-ին մեկ անգամ ևս արձանագրեց՝ հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, իրավիճակը փոխվեց տարածաշրջանում: Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիան կարմիր հեղափոխությունը տարածելու խոստումով իր համար ապահովել էր Խորհրդային Ռուսաստանի անվերապահ աջակցությունը: Ոգեշնչված բոլշևիկների համաձայնությամբ և թիկունքում զգալով Թուրքիայի հովանավորությունը՝ Ադրբեջանի խորհրդային իշխանությունը շարունակեց հայկական պատմական տարածքների նվաճման պանթուրքիստական քաղաքականությունը: Թուրք-բոլշևիկյան դաշինքի արդյունքը պետք է լիներ աշխարհամարտում պարտված Թուրքիայի վերականգնումը, իսկ Խորհրդային Ռուսաստանը որպես փոխհատուցում պետք է ստանար տարածաշրջանի խորհրդայնացման փաստը: Քեմալաբոլշևիկյան մերձեցման արդյունքը եղավ Հայաստանի Հանրապետության անկումը և հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Ադրբեջանին: 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով հայկական Նախիջևանի վրա հաստատվեց Ադրբեջանի պրոտեկտորատը, իսկ հուլիսի 5-ի Կովբյուրոյի անօրինական որոշմամբ Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Ոտնահարվեցին արցախահայության միասնական կամքն արտահայտած ազգային համագումարների որոշումները, տարածքի հայ ազգաբնակչության լեզվական, մշակութային, տնտեսական ընդհանրությունները պատմական Հայաստանի հետ և առաջ քաշվեց

Ադրբեջանի հետ Ղարաբաղի ինչ որ մտացածին տնտեսական ընդհանրության մասին դրույթը: Փաստորեն արցախահայության ազգային շահը ստորադասվեց Թուրքիա-Ադրբեջան-Խորհրդային Ռուսաստան եռակողմ քաղաքական շահին, և Արցախը, որը միշտ էլ կազմել է Հայաստան աշխարհի անքակտելի մասը, նրա մշակութային, քաղաքական տնտեսական դաշտի մի օղակը, ամենից անբարենպաստ պայմաններում իսկ պահպանել հայոց պետականության բեկորները, ապօրինաբար բռնակցվեց ազգային ինքնություն և դիմագիծ չունեցող Ադրբեջանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Азербайджанская демократическая республика (1918-1920), под редакцию Агамалиева, Баку, 1988
2. Балаев А.Г., Азербайджанская нация, основные этапы становления на рубеже XIX-XX вв., Москва, 2012
3. Балаев А.Г., Мамед Эмин Расулзаде 1884-1955, Москва, 2009
4. Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998
5. Кочарли Т., К истории карабахского вопроса, Баку 2009
6. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923, Երևան, 2003, էջ 125:
7. Հարությունյան Հ., Շուշին արցախյան գոյապայքարում 1918-1920թթ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 941(479.243)
Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՀ, Պատմության ամբիոն, պ.գ.թ.

ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ (1994 թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1995 թ. ՀՈՒՆԻՍ)

Քաղաքական զարգացումների հետևանքով ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը վերածվեց ավտորիտարի, որը հետագայում իր բացասական դրդումը թողեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Այդուհանդերձ, կառավարման նոր համակարգի ստեղծումը հետպատերազմյան շրջանում ոչ միայն հնարավորություն տվեց արագ հաղթահարելու պատերազմի հետևանքները, այլև ուշադրության կենտրոնում պահելու պետական ինստիտուտների և ենթակառուցվածքների ստեղծման, սոցիալ-տնտեսական դրության հիմնախնդիրների լուծման հարցերը:

ԼՂ-ում պետական շինարարության գործընթացը, հաղթահարելով իր ճանապարհին ծագած վայրիվերումները, շրջանցելով քաղաքական ասպարեզում առաջացած խոչընդոտները, ադրբեջանական ագրեսիայի դեմ ձեռք բերված վճռական հաղթանակների շնորհիվ հաստատեց իր շարունակական լինելու իրավունքը:

Բանալի բառեր՝ *Պաշտպանության խորհուրդ, Պաշտպանության պետական կոմիտե, նախագահ, Պաշտպանության բանակ, վարչապետ, փոխվարչապետ, նախարար, կառավարություն:*

Т. Акопян

ПРОЦЕСС ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА И ИЗМЕНЕНИЕ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ В НКР (НОЯБРЬ 1994г. – ИЮНЬ 1995г.)

В результате политических процессов демократически созданное государство превратилось в авторитарное, что в последствие негативно повлияло на социально-политическую жизнь республики.

Тем не менее, создание новой формы правления в послевоенный период не только позволило быстро преодолеть последствия войны, но и держать в центре внимания вопросы решения проблем создания государственных институтов и инфраструктур, а также проблем в социально-экономической сфере.

Процесс государственного строительства в НКР, преодолевая препятствия в политической сфере, укрепило свое право на продолжительность благодаря решительной победе над азербайджанской агрессией.

Ключевые слова: *Совет обороны, Государственный комитет обороны, президент, Армия обороны, премьер-министр, вице-премьер, министр, правительство.*

T. Hakobyan

THE PROCESS OF STATE BUILDING AND THE CHANGES IN THE GOVERNING FORM IN THE NKR (NOVEMBER 1994- JUNE 1995)

As a result of the political processes, the democratically formed state turned into an authoritarian one which later negatively affected the social-political life of the republic.

Nevertheless, the creation of the new form of governing system in the postwar period allowed not only to overcome the consequences of the war but also to concentrate on the issues of building of state institutes and infrastructures as well as the problems in the social-economic sphere.

Overcoming the obstacles in the political sphere, the process of state building in the NKR ensured its right on continuance due to the resolute victory over the Azerbaijani agression.

Keywords: *Defense Council, Defense State Committee, President, Defense Army, Prime-Minister, Vice Prime-minister, Minister, Government*

1992 թ. հունիս-օգոստոսյան ռազմական անհաջողությունները, այդ թվում և Հյուսիսային Արցախում, հետևանք էին ոչ միայն ռազմական, այլ ներքին քաղաքական գործոնների: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահությունը փորձեց գործադիր և ռազմական իշխանությունները կենտրոնացնել Պաշտպանության խորհրդի ձեռքում: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտների[1]:

Ակնհայտ է, որ ԼՂՀ ԳԽ նախագահությունը երկրում գոյություն ունեցող ռազմաքաղաքական ճգնաժամային պայմաններում կանգնել էր երկընտրանքի առաջ. կամ պահպանել՝ իշխանությունը կամ զիջել հակառակ թևին: Առճակատման գնալը սպառնալիքի տակ էր դնելու երկրի անվտանգությունը: Ճահումյան մասը 1992 թ. հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում օրինավոր ընտրված իշխանության ներկայացուցիչները, գիտակցելով ստեղծված ծանր իրավիճակը, դրսևորելով քաղաքական կամք և պատասխանատվության զգացում ժողովրդի առաջ, որոշում կայացրին իշխանությունը հանձնել ՀՀ նախագահ Լ.Տեր -Պետրոսյանի համար ընդունելի թիմին:

1992թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին Նախարարների խորհրդի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ինչպես նաև ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված էին «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով:

ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի

---

[1] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.****, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 199:*

միջև եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները և որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգությանը: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա, որի արդյունքում հրաժարական տվեց ԼՂՀ ԳԽ պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, իսկ ԳԽ նախագահի պարտականությունները դրվեցին Կ.Բաբուրյանի վրա:

Թվում էր, թե ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հրաժարականով պետք է հանդարտվեր ներքաղաքական լարվածությունը, սակայն 1994թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց հակառակը: Դա վառ կերպով դրսևորվեց դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որը ուղենշային և բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ-ի քաղաքական կյանքում:

1994թ. նոյեմբերի 9-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ որոշում կայացվեց նստաշրջանը հրավիրել 1994թ. նոյեմբերի 23-ին[1]: Օրակարգում ներկայացվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ ԼՂՀ ռազմական դրության ժամկետը երկարաձգելու և ԼՂՀ կառավարման համակարգի կատարելագործման մասին: Սակայն անհայտ պատճառներով նստաշրջանը տեղի չունեցավ:

Այն կայացավ դեկտեմբերի 21-ին: Հատկանշական է, որ նստաշրջանը սկսվեց առանց օրակարգի[2], և այն ձևավորվեց նստաշրջանի ընթացքում:

Ուսումնասիրելով դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի սղագրությունը, ինչպես նաև մասնակի պահպանված տեսաձայնագրությունը[*]՝ պարզ է դառնում, որ ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող քաղաքական գործիչների և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարության՝ մասնավորապես ՊԲ հրամանատար Ս.Բաբայանի կողմից ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ ԳԽ որոշ պատգամավորների վրա: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մեղադրվեց անգործության մեջ: Հնչեցին հայտարարություններ ԼՂՀ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, անգամ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանին նախագահ չընտրվելու դեպքում 10 օրվա ընթացքում ԳԽ-ն ընդհանրապես ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու մասին[3]:

1994թ. դեկտեմբերի 21-ին ԳԽ-ի նիստում որոշում կայացվեց ԼՂՀ-ում հիմնել նախագահական կառավարման ինստիտուտ, ընդունվեց «ԼՂՀ Նախագահի մասին» օրենքը, ըստ որի՝ հանրապետության նախագահը պիտի ընտրվեր 5 տարի ժամկետով՝ ուղղակի փակ գաղտնի ընտրությամբ: Սակայն,

---

[1] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, գ. 2, պ.մ 23, կ.3, թ. 9:*

[2] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, գ. 2, պ.մ 25, կ.3, թ. 90:*

[*] *Թեմայի ուսումնասիրության ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ, ցավոք, ԱՀ պետական և ԱԺ ընթացիք արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրություններից բացակայում են ռազմական և քաղաքական մի շարք գործիչների աղմկահարույց ելույթները, ինչպես նաև պետական շինարարությանը վերաբերող արխիվային կարևոր նյութեր: Ուստի առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել անձնական արխիվներ:*

[3] *Տես՝ Հեղինակի անձնական արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի 1994թ. դեկտեմբերի 21-23 նիստի տեսաձայնագրություն:*

հաշվի առնելով ռազմական դրության պահանջները, ԳԽ որոշեց ԼՂՀ առաջին նախագահին ընտրել երկու տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ[1]:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին ընդունվեցին «ԼՂՀ Խորհրդարանի մասին»[2], «ԼՂՀ կառավարության մասին» օրենքները[3]: Այնուհետև խորհրդարանն անցավ ԼՂՀ նախագահի ընտրությունների հարցին: Առաջադրվեց 2 թեկնածու՝ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը և ԼՂՀ ԳԽ պատգամավոր Մ. Պետրոսյանը, որը, սակայն, հանեց իր թեկնածությունը: «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռ.Քոչարյանը[4]

Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը, այնուհետև, շարունակելով նիստը, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքը[5]:

Այսպիսով՝ պաշտոնական Երևանի միջամտության արդյունքում ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց հետևանքով երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի: Ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու երկրի ժողովրդի ապագայի հանդեպ:

Որպես հիշատակված պետաշինարարական գործընթացների շարունակություն՝ 1995թ. փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ն ընդունեց խորհրդարանի ժողովրդական պատգամավորների վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու մասին որոշում[6]: Հանրապետության տարածքում կազմավորվեց 33 ընտրատարածք՝ նախկին 81-ի փոխարեն. համապատասխան փոփոխության ենթարկվեց նաև պատգամավորական տեղերի քանակը:

1995թ. ապրիլի 30-ին անցկացվեցին խորհրդարանի վաղաժամկետ ընտրություններ, որոնք կազմակերպվեցին մեծամասնական ընտրակարգով[7]: Ընտրությունները տեղի ունեցան 33 ընտրատարածքից 31-ում, իսկ 2-ում՝ պատգամավորության մեկական թեկնածուների ինքնաբացարկի պատճառով չկայացան: ԼՂՀ ԿԸՀ 1995թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ գրանցվեց 23 պատգամավոր: 1995թ. հունիսի 30-ին 5 ընտրատարածքում կայացան նոր ընտրություններ:

ԼՂՀ խորհրդարանի արտահերթ ընտրություններին հետևեցին միջազգային անկախ դիտորդներ, մասնավորապես՝ Գերմանիայի Բունդեստանգի, ՌԴ Պետական դումայի, Մոսկվայում գործող Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի, Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ[8]:

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, թ. 52:*
[2] *Նույն տեղում, թ. 90-137:*
[3] *Նույն տեղում, թ.138-146:*
[4] *Նույն տեղում, թ.150:*
[5] *Նույն տեղում, թ.154-187:*
[6] *Տե՛ս ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանին 1995թ. փետրվարի 14-ի նիստի սղագրություն:*
[7] *Տե՛ս* ***Օհանջանյան Մ.,*** *Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփ., 1998, էջ16 :*
[8] *Տե՛ս ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընթացիկ արխիվ:*

ԼՂՀ Խորհրդարանն ունեցավ հետևյալ մարմինները՝ Խորհրդարանի նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար, 6 մշտական հանձնաժողով: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված էր 5 պատգամավոր:

ԼՂՀ Խորհրդարանի 1995թ. հունիսի 23-ի առաջին նիստում Խորհրդարանի նախագահ ընտրվեց պատգամավոր Կ. Բաբուրյանը, տեղակալ՝ Լ.Գաբրիելյանը, քարտուղար՝ Է. Գաբրիելյանը[1]:

Միաժամանակ փաստենք, որ նոր խորհրդարանում քաղաքական ուժերի բացակայության պայմաններում վերջինս այդպես էլ չկարողացավ կատարել իր պատմական առաքելությունը:

Մինչդեռ ԼՂՀ նախագահի 1994թ. դեկտեմբերի 27-ի հրամանագրով ԼՂՀ վարչապետ նշանակվեց Լ.Պետրոսյանը, իսկ հունվարի 10-ին հաստատվեցին ԼՂՀ կառավարության նոր կազմը և կառուցվածքը: Մեկ այլ հրամանագրով ձևավորվեց կառավարության նախագահությունը[2]:

Հունվար և փետրվար ամիսներին Ս.Թևոսյանը նշանակվեց առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի և ֆինանսների նախարար, Ժ.Պողոսյանն ու Յու.Ղազարյանը՝ փոխվարչապետներ, Ս.Բաբայանը՝ պաշտպանության նախարար, Ա.Իսագուլովը՝ ներքին գործերի նախարար, Ա.Ղուկասյանը՝ արտաքին գործերի նախարար, Է.Շահրամանյանը՝ շինարարության նախարար, Գ.Գասպարյանը՝ գյուղատնտեսության և պարենավորման նախարար, Ն.Ոսկանյանը՝ լուսավորության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, Վ.Աղաբալյանը՝ առողջապահության նախարար, Ա.Աղասարյանը՝ ազգային անվտանգության պետական վարչության պետ, Յու.Հայրապետյանը՝ արդարադատության պետական վարչության պետ, Գ. Գրիգորյանը՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական վարչության պետ, Վ. Սայադյանը՝ աշխատանքի և սոցապահովության պետական վարչության պետ[3]:

Միաժամանակ աշխատանք տարվեց տեղական կառավարման համակարգը բարեփոխելու ուղղությամբ: ԼՂՀ կառավարման կառուցվածքի վերափոխման և ՊՊԿ վերացման կապակցությամբ ԼՂՀ ՊՊԿ լիազոր ներկայացուցիչների ինստիտուտը վերակազմավորվեց՝ դառնալով Ստեփանակերտ քաղաքի և վարչակազմերի[4]:

Հետագայում կատարելագործվեց տեղական ինքնակառավարման համակարգը: Ժողովրդին իր իսկ ընտրած մարմինների միջոցով երկրի կառավարմանը մասնակից անելու նպատակով որոշվեց անցնել գյուղական համայնքների ընտրությանը: Գյուղապետերի աշխատանքն ավելի թափանցիկ և գործնական դարձնելու նպատակով գյուղապետներին կից ստեղծվեց ավագանու խորհրդի ինստիտուտը[5]:

Երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու նպատակով 1995թ. փետրվարի 7-ին ստեղծվեց ԼՂՀ նախագահին կից անվտանգության խորհուրդ: Անվտանգության խորհրդի կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ նախագահը, ԼՂՀ ԳԽ նախագահը, ԼՂՀ վարչապետը, ԼՂՀ պաշտպանության նախարարը,

---

[1] *Տե՛ս http://www.nankr.am/hy/32*

[2] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. հունվարի 10-ի հրամանագիր՝ N ՆՀ-09, N ՆՀ-10:*

[3] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ,*

[4] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. հունվարի 10-ի հրամանագիր՝ N ՆՀ-08:*

[5] *Տե՛ս **Բալայան Վ.**,Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփանակերտ, 2012, էջ 230:*

ինչպես նաև ԼՂՀ արտաքին գործերի նախարարը, ԼՂՀ ներքին գործերի նախարարը և ազգային անվտանգության պետական վարչության պետը[1]:

Անվտանգության խորհրդի քարտուղարի պարտականությունները դրվեցին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Դանիելյանի վրա:

Այսպիսով՝ կառավարման նոր համակարգի ստեղծումը ոչ միայն հնարավորություն էր տալիս արագ հաղթահարելու պատերազմի հետևանքները, այլև ուշադրության կենտրոնում պահելու պետական ինստիտուտների և ենթակառուցվածքների ստեղծման, սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրների լուծման հարցերը: Այս հիմնախնդիրների լուծման գործում վճռորոշ դերակատարություն ունեցավ ՀՀ-ի ցուցաբերած աջակցությունը:

Ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը աստիճանաբար վերածվեց բռնատիրականի, որտեղ անձի իշխանությունը գերակայեց օրենքի իշխանությանը:

Ի դեպ, նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում գոյություն ունեն կարծիքներ, ըստ որոնց՝ կադրային հարցերը, այդ թվում նաև նոր խորհրդարանական ընտրություններում պատգամավորների թեկնածուների առաջադրումն ու պաշտոնների նշանակումը հիմնականում համաձայնեցվում էր պաշտպանության նախարար Ս.Բաբայանի հետ:

Ցավոք, այժմ ժամանակը չէ դեռ ամբողջապես անդրադառնալու հայտնի և ոչ հայտնի, հատկապես՝ նշված ժամանակահատվածում Արցախում տեղի ունեցած ներքաղաքական մութ էջերին: Նշեք միայն, որ Արցախում Ռ.Քոչարյանի՝ ՊՊԿ ղեկավար լինելու, իսկ այնուհետև իշխանության ղեկին գտնվելու ընթացքում ձևավորվեց քաղաքական հալածանքների մշակույթ, սահմանափակվեց նաև խոսքի և մամուլի ազատությունը: Իսկ իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛ ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Հետագայում ԳԽ-ի նոր ընտրություններից հետո՝ 1995թ. հունիսի վերջին, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ «անհնազանդ» անդամներ ձերբակալվեցին: Տարբեր մեղադրականներով ձերբակալվեցին ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նախկին պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ.Հակոբյանը: Սակայն մեղադրականների բացակայության պատճառով վերջիններս ազատ արձակվեցին[2]՝ մինչ այդ ենթարկվելով խոշտանգումների ու ծաղրանքի (ՊՆ Ս.Բաբայանի կողմից): 1992-1994թթ. ձերբակալվեցին ԼՂՀ առաջին գումարման ԳԽ պատգամավորներ[3], ռազմական և քաղաքական գործիչներ, այդ թվում ԼՂՀ ԳԽ-ի մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանը («Նոր Արցախ, թե նոր Սպարտա» հոդվածի համար)[4], որոնք արժանացան նույն բախտին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

---

[1] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. փետրվարի 7-ի հրամանագիր՝ N УП-22*

[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.,*** *նշվ. աշխ., էջ 183:*

[3] *Տե՛ս ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, գ.1, պ.մ.6.կ.1, թ. 71-74£*

[4] *Տե՛ս «Խոսքեն», 14.12.1993:*

ՀՏԴ 941(479.243)
Պատմություն

Արարատ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱրՊՀ, Պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.թ.
E-mail: araratvardanyan54@mail.ru

Էլլադա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի
պատմության բաժնի մագիստրատուրանտ
E-mail: ellada-hayrapetyan@mail.ru

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ԱԶԳՕԳՈՒՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ (1997-2019թթ.)

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Ստեղծվել է 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո Նյու Յորքում՝ ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդարանի նախաձեռնությամբ: Նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության և ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպու-թյունների օգնությունը հայրենիքին: ՀՕՖ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: Կազմակերպության գրասենյակը Երևանում բացվեց 1991թ.:

Պատերազմից տուժած արցախահայությանը օգնելու նպատակով 1997թ. Ստեփանակերտում բացվում է ՀՕՖ-ի գրասենյակ, որն իրականացնում է բազմապիսի բարեգործական ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում:

Բանալի բառեր՝ *Հայ օգնության ֆոնդ, Արցախ, բարեգործություն, բնակելի տներ, ջրամատակարարման համակարգեր, «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին ծրագիր», «Մարզային բժիշկների վերապատրաստում ծրագիր», «Շարունակական բժշկական կրթություն ծրագիր»:*

А. Варданян, Э. Айрапетян

БЛАГОТВОРИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА ПОМОЩИ АРМЕНИИ В АРЦАХЕ

Фонд помощи Армении (ФПА) – благотворительная организация Восточной епархии США Армянской апостольской церкви. Создана в Нью-Йорке, по инициативе предводительства Восточной епархии США после землетрясения в Спитаке в 1988 году. Цель данной организации – сделать более эффективной помощь Родине, оказываемую армянской общиной США, американской общественностью и различными организациями. Центральный орган ФПА находится в Нью-Йорке. В 1991 году было открыто представительство в Ереване.

С целью оказания помощи армянам Арцаха, пострадавшим в войне, в 1997 году в Степанакерте открывается офис ФПА, который осуществляет разнообразные благотворительные программы практически во всех районах республики.

Ключевые слова: *Фонд помощи Армении, Арцах, благотворительность, жилые дома, системы водоснабжения, "Программа гуманитарной помощи Нагорному Карабаху", "Программа переподготовки областных врачей", "Программа непрерывного медицинского образования"*

A. Vardanyan, E. Hayrapetyan

THE FUND FOR ARMENIAN RELIEF ACTIVITIES IN ARTSAKH

The Fund for Armenian Relief (FAR) is a charitable organization of the Eastern Diocese of the United States of America of The Armenian Apostolic Church. It was established in New York, on the initiative of the leadership of the Eastern Diocese of the United States after the earthquake in Spitak in 1988. The purpose of this organization is to make more effective assistance to the Homeland provided by the Armenian community of the United States, the American public and various organizations.

The Central office of FAR is located in New York. In 1991, a representative office was opened in Yerevan.

In order to help the Armenians of Artsakh, who suffered in the war, in 1997 the office of the FAR was opened in Stepanakert, which carries out various charity programs in almost all regions of the Republic.

Keywords: *Fund for Armenian Relief, Artsakh, charity, residential houses, water supply systems, "Humanitarian assistance program for Nagorno-Karabakh", "The program of training of regional doctors", "The program of continuous medical education."*

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, անգլերեն՝ Fund for Armenian Relief) Հայաստանյայց առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Սկզբնապես կոչվել է Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ, 1992-ից՝ Հայ օգնության ֆոնդ: Ստեղծվել է 1988-ի Սպիտակի աղետալի երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում՝ ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդարանի (թեմական առաջնորդն էր Թորգոմ արք. Մանուկյանը) նախաձեռնությամբ: Նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության և ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպությունների օգնությունը: 1993թ. փետրվարից գրանցվել է որպես անկախ կառույց՝ հնարավորություն ստանալով գործելու

ինքնուրույն[1]: ՀՕՖ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: Կազմակերպության գրասենյակը Երևանում բացվեց 1991 թվականին:

Հայ օգնության ֆոնդն իր գերագույն նպատակն է համարում նպաստել Մայր հայրենիքի տնտեսության զարգացմանն ու սոցիալական կյանքի բարելավմանը: «Ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ ապրելիս լինի, անմարելի պարտք ունի մայր հայրենիքի հանդեպ,-նշվում է ՀՕՖ-ի նախագահ Խաժակ արք. Պարսամյանի ուղեծրում: -Այս գործը վերջ չունի, այն տեսական է, զի ուղղված է Հայրենիքի ապագային»:[2]

Սկզբնական շրջանում Հայաստանում ՀՕՖ-ի ծրագրերը մարդասիրական բնույթի էին, իսկ ժամանակ անց կազմակերպությունը նախապատվությունը սկսեց տալ երկրի զարգացմանը նպաստող ծրագրերին՝ ընդգրկելով կյանքի տարբեր բնագավառները՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, գիտություն, կրթություն, մշակույթ և այլն:

Պատերազմը ծանր հարված էր հասցրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: ԼՂՀ-ում տուժել է 149 բնակավայր, լրիվ կամ մասամբ ավերվել են 11647 անհատական տներ, 226 բազմաբնակարան բնակելի շենքեր, 17 ստացիոնար բուժիմնարկներ և 71 բուժկետեր, 196 ուսումնական և մշակութային օջախներ[3], 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալական նշանակության օբյեկտներ: Երեք անգամ կրճատվել էին ցանքսերը, 5 անգամ՝ անասնագլխաքանակը: Գյուղատնտեսությանը հասցվել էր շուրջ 2,5 մլրդ դոլարի վնաս[4]:

Պատերազմից հետո հնարավորություն ստեղծվեց զբաղվելու ավերված տնտեսության, առողջապահական, կրթամշակութային օջախների և այլ ոլորտների վերականգնման ու զարգացման հարցերով: Պատերազմից տուժած երիտասարդ հանրապետությունը հնարավորություն չուներ սուղ պետական միջոցներով լուծելու իր առջև ծառացած խնդիրները և լինելով չճանաչված՝ զրկված էր միջազգային կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և միությունների օգնությունը:

Պատերազմից խիստ տուժած արցախահայությանը օգնելու նպատակով 1997թ. դեկտեմբերին Ստեփանակերտում բացվում է Հայ օգնության ֆոնդի գրասենյակ: Այստեղ նախատեսվում է մարդասիրական օգնությունից բացի զարկ տալ զարգացման ծրագրերին ու ստեղծել նոր աշխատատեղեր: ¦Բոլոր ղարաբաղցիները,- նշում է իր ուղերձում ՀՕՖ-ի նախագահ ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը,- նախագահից մինչև շարքային քաղաքացին, միակամ էին իրենց երկիրն ու տնտեսությունը ոտքի կանգնեցնելու և շենացնելու համար: Նրանք սփյուռքահայ իրենց եղբայրներից ու քույրերից ակնկալում են օգնություն հատկապես նոր աշխատատեղեր բացելու և կիսակործան քաղաքացիական ու հոգևոր կառույցների վերականգնման գործում¦[5]:

---

[1] *«Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 686, Սփյուռքահայ կազմակերպություններ, Եր., 2002, էջ 66:*

[2] *«Ազգ», 10 հուլիսի 1998:*

[3] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, g.1, կ.9, պ.մ. 42, թ. 222:*

[4] ***Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 333:*

[5] *Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր 1997, էջ 2, **Մինասյան Է., Վարդանյան Ա.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին(1991-2009թթ.), հՀոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 83:*

1998թ. օգոստոսին Հայ օգնության ֆոնդի պատվիրակության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում բժշկական օգնություն տրամադրվեց տեղի բուժհիմնարկներին: Այն ներառում էր շուրջ 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անզգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաև մանկական վիտամիններ: Բեռն ամբողջությամբ հանձնվեց ԼՂՀ առողջապահության նախարարությանը, որի միջոցով էլ բաժանվեց հանրապետության տարբեր շրջանների ու քաղաքների բուժհիմնարկներին[1]:

2002թ. հոկտեմբերից Հայ օգնության ֆոնդը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ ձեռնամուխ եղավ «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» լայնածավալ ծրագրի իրագործմանը, որը կոչված է վերականգնելու պատերազմի հետևանքով մեծապես տուժած Լեռնային Ղարաբաղի բնակավայրերն ու ենթակառուցվածքները: Ծրագիրը թույլ է տալիս նաև միջոցներ տրամադրել բուժանձնակազմերի վերապատրաստման դասընթացներ կազմակերպել և անհրաժեշտ բուժսարքավորումներ ու դեղամիջոցներ ձեռք բերել: «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագրին հատկացված գումարի չափը՝ 15մլն դոլար է, իրականացման ժամկետը՝ 5 տարի: Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո՝ 2004 թվականին, սկսվեց ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի և Հադրութի շրջանների՝ հակամարտությունից տուժած տների, բուժկետերի և խմելու ջրագծերի շինվերանորոգման գործընթացը[2]:

Ասկերանի շրջանում շինարարական աշխատանքները սկսվեցին 2004թ. գարնանը: ՀՕՖ-ի ֆինանսավորմամբ իրականացվել են շրջանի Ասկերան քաղաքի, Դաշուշեն, Մխիթարաշեն, Նախիջևանիկ, Ծոշ և Վարդաձոր գյուղերում 24 տների վերանորոգման, Խանաբադ, Խրամորթ, Նորագյուղ Սարգսաշեն, Խնձրիստան, Լուսաձոր, Ջրաղացներ, Սղնախ, Վերին Սզնեք, Մոշխիմատ, Մխիթարաշեն և Սառնաղբյուր գյուղերում բնակելի տների և բուժկետերի կառուցման, ինչպես նաև Ավետարանոց, Այգեստան, Ծոշ, Մադաթաշեն և Դահրավ գյուղերում հինգ բնակելի տների և բուժկետերի վերանորոգման և կառուցման աշխատանքները[3]: 2004 թ. աշնանը արդեն Ասկերանի շրջանում վերանորոգվել է 52 բնակելի տուն[4]:

ՀՕՖ-ի զարգացման ծրագրում կարևոր տեղ ունեն ջրամատակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքները:Այդ աշխատանքները հաջողությամբ են իրականացվել Ասկերանի շրջանի Այգեստան, Կարմիր գյուղ, Լուսաձոր, Աստղաշեն, Բաղարա, Խանցք, Ծաղկաշատ, Հովսեփավան, Ռև[5], Հարավ, Քռասնի, Ջրաղացներ, Ավետարանոց, Նախիջևանիկ, Վարդաձոր, Խանաբադ, Մխիթարաշեն գյուղերում և Ասկերան քաղաքում[6]:

2004թ. հուլիսի 1-ին ՀՕՖ-ը սկսեց Մարտակերտի շրջանի, իսկ նոյեմբերի 1-ին՝ Հադրութի շրջանի տուժած տների, բուժկետերի և խմելու ջրագծերի շինվերանորոգման գործընթացը: Այն ուղեկցվում էր փորձաքննության

---

[1] *«Ազգ», 15 օգոստոսի 1998:*
[2] *Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 4,* ***Միհաստյան Է., Վարդանյան Ա.****, նշված աշխ., էջ 83-84:*
[3] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ 180, g. 1, կ-11, պ.մ.50, թ.82, 86:*
[4] *Նույն տեղում, ֆ 180, g. 1, կ-10, պ.մ.45, թ. 3:*
[5] *«Ազատ Արցախ», 18 նոյեմբերի 2004:*
[6] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ 180, g. 1, կ-11, պ.մ.50, թ.82:*

իրականացմամբ, համապատասխան նախագծերի նախապատրաստմամբ ու արժեքների գնահատմամբ և շինարարական աշխատանքների սկզբնավորումով: Դրա համար հարկ եղավ փոքր գրասենյակներ բացել հիշյալ շրջկենտրոններում՝ կազմելով աշխատանքների կատարման ժամանակացույց[1]:

2005-2006թթ. վերանորոգվել են Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի 29, Գետավան, Զարդախաչ, Չափար, Հաթերք, Վերին Հոռաթաղ, Կոճողոտ, Պողոսագոմեր գյուղերում 19, Վաղուհաս գյուղում 16 բնակելի տուն: Տներ են վերանորոգվել նաև շրջանի Վարդաձոր, Ծաղկաշեն, Ներքին Հոռաթաղ, Աղաբեկալանջ, Կուսապատ, Մեծ շեն, Մոխրաթաղ, Վարնկաթաղ, Մաղավուզ, Զագլիկ, Տոնաշեն, Մատաղիս գյուղերում[2]: Վերանորոգվել են շրջանի 9 բուժկետ, որոնք համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով, կահույքով, դեղորայքով և բժշկական համապատասխան պարագաներով: Կառուցվել և վերանորոգվել են Մարտակերտ քաղաքի, Կուսապատ, Ծաղկաշեն, Հարությունագոմեր, Հաթերք, Ճահմանսուր գյուղերի ջրամատակարարման համակարգերը[3]:

2006 թվականի վերջերին հնարավոր եղավ Մարտակերտի շրջանում վերականգնել շուրջ 240, իսկ Հադրութի շրջանում՝ 15 բնակելի տներ: Ընդհանուր առմամբ Հադրութի շրջանում կառուցվել և վերականգնվել են 90 բնակելի տուն և 6 բուժկետ[4], որոնք ապահովվեցին կահույքով և դեղորայքով: Կազմակերպության կողմից կառուցվել և վերակառուցվել են շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ, Հակակու, Մոխրենես, Ջրակոս, Վանք և Առաքել գյուղերի ջրամատակարարման համակարգերը[5]: Նրա ֆինանսավորմամբ իրականացվել են նաև Մարտակերտի շրջանի Ծաղկաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքները:[6]

ՀՕՖ-ի ծրագրերում կարևոր նշանակություն ուներ նաև ոռոգելի ջրագծերի անցկացումը Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջաններում, որը նպաստեց ԼՂՀ այդ տարածքների գյուղատնտեսության զարգացմանը, լուծեց գործազրկության հարցը:

ԼՂՀ առողջապահական համակարգում ծրագրեր իրականացնելու առումով նշանակալից էր 2005 թվականը: Բացի 37 բուժկետերի վերանորոգումից և նրանց բուժսարքավորումներով ապահովելու գործընթացից՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի Առողջապահության ծառայությունների և ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվեց Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների բուժանձնակազմի վերապատրաստում, և ընդգրկեց հիշյալ շրջանների 296 բուժաշխատողների՝ 46 բժիշկ և 250 բուժքույր: Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի բուժկետերի պատասխանատուներն ու բուժաշխատողները՝ թվով 113 մարդ, վերապատրաստվեցին նաև «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ծրագրով[7]:

2008թ. օգոստոսին, ավարտելով «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագիրը, ՀՕՖ-ը շարունակեց առողջապահական ծրագրերի շարքը: Դեռ 2004 թվականին ՀՕՖ-ի նախաձեռնությամբ և «Ջինիշյան»

---

[1] *Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 4:*
[2] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ 180, g. 1, կ-11, պ.մ.50, թ.82, 11-12, 75, 86:*
[3] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ 180, g. 1, կ-11, պ.մ.50, թ.78, 83*
[4] *Fund For Armenian Relief(FAR) 2007 Annual Report, p.13:*
[5] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ 180, g. 1, կ-11, պ.մ.50, թ.74:*
[6] *Նույն տեղում, թ. 14:*
[7] *Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2006, էջ 3:*

հիշատակի հիմնադրամի համաֆինանսավորմամբ ստեղծվել էր «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագիր: 2005թ. մայիսից սկսած ՀՀ տարբեր մարզերից, Արցախից ու Ջավախքից այս ծրագրով Երևանի առաջատար բուժհաստատություններում («Արաբկիր», «Նորք-Մարաշ», «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոններ, «Մոր և մանկան» առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն, «Դիագնոստիկա» ախտորոշիչ կենտրոն, 1-ին հանրապետական հիվանդանոց և այլն), անվճար հիմունքներով վերապատրաստվում են մարզերի բժիշկները: Այս ծրագիրը ենթադրում է նաև բժշկական տարատեսակ սարքավորումների և բուժպարագաների տրամադրում Երևանի և մարզային բուժհիմնարկներին[1]: «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագրի շրջանակներում 2011թ. Երևանի առաջատար կլինիկաներում վերապատրաստվել են 48 մարզային բժիշկ ՀՀ տարբեր մարզերից և 37-ը՝ ԼՂՀ-ից ու Ջավախքից[2]: 2013թ. վերապատրաստվել են 50 բժիշկ ՀՀ մարզերից և 33 բժիշկ ԼՂՀ-ից[3], իսկ 2014թ. վերապատրաստվել են 54 բժիշկ՝ ՀՀ մարզերից և 32-ը՝ ԼՂՀ-ից[4]:

Սկսած 2011 թվականից՝ «Ամերիկահայ առողջապահության մասնագետների կազմակերպության» և ՀՕՖ-ի կողմից իրականացվում է նաև «Շարունակական բժշկական կրթություն ծրագիր» Արցախի բժիշկների համար: Ծրագրի նպատակն է բարձրացնել բնակչության առողջապահական սպասարկման որակը, մասնագետներին ծանոթացնել տարբեր հիվանդությունների ախտորոշման և բուժման նորագույն մեթոդներին, նպաստել հետազոտման ու բուժման ոլորտում ներդրված նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների յուրացմանը: Նշված ծրագրի շրջանակներում մինչև 2018թ. սեպտեմբեր ամիսը Երևանի առաջատար բուժհիմնարկներում Արցախից վերապատրաստվել են մոտ 240 բժիշկ: ՀՕՖ-ի աջակցությամբ Արցախում իրականացվել են նաև արտագնա դասընթացներ բժիշկների համար՝ Երևանի առաջատար մասնագետների մասնակցությամբ:

2018 թվականից մեկնարկել է վերապատրաստման նոր ծրագիր համայնքային բուժքույրերի համար, որի շրջանակներում արդեն վերապատրաստվում են Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի և Ճահումյանի շրջանների 124 համայնքային բուժքույրեր: Այդ նպատակով 2018թ. ապրիլ ամսին ՀՀ առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտում որպես դասընթացավարներ վերապատրաստվել են նշված շրջանների բուժմիավորումների 4 բժիշկ և 7 բուժքույր: Ծրագիրը շարունակվելու է 2 տարի ևս, որը կընդգրկվի ԱՀ առողջապահության համակարգի համայնքային բուժքույրերի հիմնական մասը[5]: Վերոհիշյալ դասընթացներն անվճար են, ՀՕՖ-ի գրասենյակի կողմից մասնակիցներին տրամադրվում է ֆինանսական աջակցություն՝ տրանսպորտային և սննդի ծախսերը հոգալու համար:

Հայ օգնության ֆոնդի միջոցներով ԱՀ առողջապահության նախարարության հանրապետական բժշկական կենտրոնի դահլիճում 2019թ. հուլիսի 1-ին մեկնարկեց 5-րդ համահայկական բժշկական համագումարը՝ «Հայաստան-Սփյուռք-Արցախ միաձուլում՝ հանուն առողջության» խորագրով: Նման համագումարների, սիմպոզիումների պատմության ընթացքում թերևս առաջին դեպքն է, որ դրա շրջանակներում Արցախում կազմակերպվել է նաև

---

[1] *Նույն տեղում, էջ 13:*
[2] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2011, Երևան, 2012, էջ 154:*
[3] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2013, Երևան, 2014, էջ 144:*
[4] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2014, Երևան, 2015, էջ 120:*
[5] *Նույն տեղում:*

սատելիտ(տվյալ տարածաշրջանում անհրաժեշտ թեմաներ) սիմպոզիում, որը ներառեց երեխաների և մեծահասակների առողջության վերաբերյալ արդի խնդիրները: Հայ բժիշկների համագումարի նպատակն է ծանոթացնել բժշկագիտության վերջին նվաճումներին, ստեղծել հնարավորություններ այդ ամենը ներդնելու ՀՀ-ում և Արցախում, ինչպես նաև զարգացնել աշխարհի տարբեր վայրերում գործունեություն ծավալող բժիշկների համագործակցությունը:[1] Համագումարի շրջանակներում կազմակերպվել էին նաև բուժքույրերի սիմպոզիումներ Տավուշում, Երևանում և հուլիսի 10-ին՝ համագումար Ստեփանակերտում, որին մասնակցում էին ԱՀ, ՀՀ և ԱՄՆ բուժաշխատողները: Համագումարի նպատակն էր բուժքույրերի մասնագիտական որակավորման բարձրացումը: Ծրագրի շրջանակներում Ամերիկահայ բուժքույրերի ասոցիացիան Արցախի «Բուժքույրերի միավորում» հասարակական կազմակերպությանը նվիրել է որոշ բուժպարագաներ, փոխանցել դրանց կիրառման նոր մեթոդները, որպեսզի վերջիններս էլ այդ գիտելիքները փոխանցեն մյուսներին:[2]

ՀՕՖ-ի, «Գաֆէսճեան ընտանիք» հիմնադրամի հովանու ներքո գործող «Հույս Հայաստանի» կազմակերպության, Երևանի «Արաբկիր» բժշկական կենտրոնի և Ղարաբաղում գործող «Ձեռք ձեռքի» հասարակական կազմակերպության ջանքերով 2008թ. մեկնարկել է «Ժպիտ» բժշկական նախագիծը, որի նպատակն էր վիրահատական միջամտություն ցուցաբերել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի «նապաստակի շրթունք» և «գայլի երախ» արատներով շուրջ 50 երեխաների[3] 2009թ. հունիսին շարունակվեց «Ժպիտ» նախագծի 2-րդ փուլը, որի շրջանակներում իրականացվել են 55 երեխայի անվճար վիրահատություններ[4]: Վերջին տասնամյակում ՀՕՖ-ի և մի շարք գործընկեր կազմակերպությունների ջանքերով ժպիտ է պարգևվել շուրջ 150 երեխաների Հայաստանից, Արցախից և Ջավախքից, որոնք ծնվել են «նապաստակի շրթունք» և «գայլի երախ» արատներով[5]:

ՀՕՖ-ի կողմից իրականացված վերոհիշյալ ծրագրերը նպաստել են Արցախի Հանրապետության զարգացմանը սոցիալ-տնտեսական, առողջապահական և այլ բնագավառներում ու կարևոր գործոն են հետագա հաջողությունների համար: Կազմակերպության բարեգործական գործունեությունը Սփյուռքի և Արցախի միասնության հոգեհարազատության հավաստիացումն է:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

---

[1] *«Ազատ Արցախ», 2 հուլիսի, 2019:*
[2] *«Ազատ Արցախ», 11 հուլիսի, 2019:*
[3] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2008, Երևան, 2009, էջ 141:*
[4] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2009, Երևան, 2010, էջ 142:*
[5] *Հայկական Սփյուռք: Տարեգիրք 2016, Երևան, 2017, էջ 129:*

ՀՏԴ 336.7
Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
տ.գ.թ, ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ
Յանա ԼԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի գանձապահ

ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Հոդվածում դիտարկվել է ԱՀ-ում հիպոտեկային վարկավորման ազդեցությունը ինչպես բնակչության բնակարանային ապահովվածության, այնպես էլ անշարժ գույքի շուկայի զարգացումների վրա, քննարկվել երկրում հիպոտեկային վարկավորման բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտը և առաջարկվել այնպիսի դրույթներ, որոնք կարող են ապահովել անհրաժեշտ ֆինանսական ենթակառուցվածքների և հիպոտեկային վարկավորման շուկայի զարգացումը, սակայն ներառված չեն օրենսդրության մեջ:

Ներկայացվել են հիշյալ ոլորտում պետության նպատակային ծրագրերը և կատարվել դրանց արդյունքների համեմատական վերլուծություն, բնակչության շրջանակում նորակառույց շենքերից բնակարանների հասանելիության մակարդակը որոշելու համար հաշվարկվել «բնակարանային մատչելության համաթիվը» և ընդգծվել Հանրապետությունում հիպոտեկային վարկավորման համակարգի զարգացմանը խոչընդոտող անբարենպաստ պայմանները:

Հոդվածում կառուցվել է ռեգրեսիոն մոդել և հիմնավորվել ԱՀ-ում շինարարության ծավալների, միջին անվանական աշխատավարձի և հիպոտեկային վարկավորման ազդեցությունը անշարժ գույքի գների վրա: Հիպոտեկային վարկավորման բարելավման նպատակով կատարվել են հիմնավոր առաջարկներ:

Բանալի բառեր՝ *հիպոտեկային վարկավորում, անշարժ գույքի շուկա, բնակարանային մատչելիություն, միջին անվանական աշխատավարձ, պետական աջակցություն, ֆինանսական աջակցություն, ներդրումային հիմնադրամ:*

Р. Мангасарян, Я. Лалаян

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ В АР

В статье рассматривается влияние ипотечного кредитования как на жилищную обеспеченность населения в Арцахе, так и на развитие рынка недвижимости, обсуждается законодательная база, регулирующая сферу ипотечного кредитования в стране, и предлагаются положения, которые могут обеспечить рыночное развитие необходимых финансовых инфраструктур и ипотечного кредитования, однако не включены в законодательство.

Представлены целевые программы государства в указанной сфере и проведен сравнительный анализ их результатов, рассчитан ***«индекс доступа к жилью»*** *для определения уровня доступа населения к квартирам в новопостроенных домах и подчеркнуты неблагоприятные условия, препятствующие развитию системы ипотечного кредитования в республике.*

В статье представлена ***регрессионная модель*** *и обосновано влияние объема строительства, средней номинальной заработной платы и ипотечного кредитования на цены на недвижимость в Арцахе. Представлены существенные предложения для улучшения ипотечного кредитования.*

Ключевые слова: *ипотечное кредитование, рынок недвижимости, доступность жилья, средняя номинальная заработная плата, государственная поддержка, финансовая поддержка, инвестиционный фонд.*

R. Mangasaryan, Ya. Lalayan

ACTUAL PROBLEMS OF MORTGAGE LENDING AND WAYS OF THEIR SOLVING IN THE REPUBLIC OF ARTSAKH

The article discusses the impact of mortgage lending on both the housing supply of the population of Artsakh and the development of the real estate market, discusses the legislative framework governing the sphere of mortgage lending in the country, and proposes provisions that can ensure the market development of the necessary financial infrastructures and mortgage lending not included in the law.

Targeted state programs in this area are presented and a comparative analysis of their results is carried out, the ***"housing access index"*** *is calculated to determine the level of population access to apartments in newly-built houses, and adverse conditions that impeded the development of a mortgage system in the republic are emphasized.*

The article presents a ***regression model*** *and the impact of construction volume, average nominal wages and mortgages on real estate prices in Artsakh. Substantial proposals for improving mortgage lending are presented.*

Keywords: *mortgage lending, real estate market, housing access, average nominal wage, government support, financial support, investment fund.*

ԱՀ-ում հիպոտեկային վարկավորման բարելավումը բարենպաստ ազդեցություն կունենա ինչպես բնակչության բնակարանային ապահովվածության, շինարարության և շինանյութերի արտադրության ոլորտի ընդլայնման, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության մակարդակի բարձրացման, արդյունքում նաև բնակչության միջին խավի ձևավորման, այնպես էլ անշարժ գույքի շուկայի

զարգացման, երկրի բանկային համակարգի կայուն և արդյունավետ գործունեության ապահովման վրա:

Բնակչության լայն շերտերին բնակարանով ապահովելը դիտարկելով որպես սոցիալական կարևոր խնդիր՝ պետությունը ոչ միայն սահմանում է հիպոտեկային վարկավորման ծավալների ընդլայնմանը նպաստող օրենսդրական դաշտ, այլև հաճախ ինքն է ուղղակիորեն դառնում հիպոտեկային շուկայի մասնակից: ԱՀ-ում ներկայումս բավականաչափ սուր է դրված բնակարանային ապահովվածության հարցը: Խնդիրն ունի ռազմավարական նշանակություն, որը թելադրվում է ԱՀ սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի բարելավման պահանջներով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ մի երկրում բնակարանային հարցը չի լուծվել առանց հիպոտեկի օգտագործման: Աշխարհի շատ երկրներում բնակարանի՝ վարկով ձեռքբերումը ոչ միայն բնակարանային խնդրի լուծման հիմնական ձև է, այլև տնտեսական գործունեության ոլորտ, բանկային և այլ վարկային կառուցվածքների արդյունավետ գործունեության կարևոր պայման:

Ընդգծենք, որ ԱՀ-ում հիպոտեկային վարկավորման բնագավառը կարգավորվում է ինչպես «Բանկերի կողմից տրամադրվող հիպոտեկային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու, վերանորոգելու պետական աջակցության մասին» Կառավարության որոշմամբ (2008 թ.), այնպես էլ Քաղաքացիական և Քաղաքացիական դատավարության օրենսգրքերով (ԱՀ-ում գործում են 2001 թ. հուլիսի 1-ից), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» (2000 թ.), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (2004թ.) ԱՀ օրենքներով: Կարելի է նշել, որ վերոհիշյալ իրավական ակտերով հիպոտեկային վարկավորման զարգացման բնագավառը կարգավորող օրենսդրության մեջ չկան այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն կտան ստեղծելու անհրաժեշտ ֆինանսական ենթակառուցվածքներ և խթանեն հիպոտեկային վարկավորման շուկայի զարգացումը: Որպես այդպիսիք կարելի է նշել, օրինակ, գրավադրված բնակարանի սեփականության ստանձման, դրա իրացման, այդ բնակարաններից երրորդ անձանց վտարելու, վարկի երրորդ անձանց վաճառքի, իրավունքի և ապագայում ծագող իրավունքի գրավադրման խնդիրները:

Կարծում ենք, որ բազմազան են և թանկ գրավադրված անշարժ գույքի պետական գրանցման համար կատարվող վճարները, մասնավորապես, եթե դրանք պետք է կատարվեն կարճ ժամկետներում՝ 1-2 օրվա ընթացքում: Այդ գործընթացի տևողությունը երկար է: Բացի այդ՝ ծախսատար, ժամանակատար և խնդրահարույց են նաև գրավադրված անշարժ գույքը վարկատուի սեփականությանն անցնելու և երրորդ անձին վաճառելու գործընթացները:

Գաղտնիք չէ, որ գոյապայքարի տարիներին ավերվել էր հանրապետության՝ առանց այդ էլ սակավ բնակֆոնդի զգալի մասը: Որպես

ժառանգություն են փոխանցվել նաև քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակները: Միայն 50 հազար բնակչություն ունեցող Ստեփանակերտ քաղաքում ավելի քան 5000 ընտանիքներ ընդգրկված էին դրանցում: Պատերազմից հետո ԱՀ Կառավարությունը անմիջապես ձեռնամուխ է եղել կիսաքանդ քաղաքների ու գյուղերի վերականգնմանը: Պետությունը նպատակային ծրագրերի իրականացմամբ հնարավորինս լուծել և լուծում է բնակչության սոցիալական որոշ խմբերի՝ զոհված ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների, բազմազավակ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցը՝ կառուցելով նոր բնակարաններ: Այնուամենայնիվ բնակչության մեծ մասը չունի սեփական տանիք: Դժվարին կացության մեջ են հայտնվում երիտասարդ նորաստեղծ ընտանիքները, որոնք ստիպված ապրում են ծնողների հարկի տակ կամ էլ վարձակալած բնակարաններում, որոնց գները օրեցօր բարձրանում են առաջարկի նկատմամբ մի քանի անգամ արագ աճող պահանջարկի պայմաններում: Այդ առումով կարծում ենք հիպոտեկային վարկավորման պետական ծրագիրը երկրում կարող է հանդիսանալ ինչպես բնակչության բնակարանային ապահովության խնդրի լուծման, այնպես էլ բնակարանային շինարարության զարգացման խթան:

«Հիպոտեկային վարկավորմամբ բնակարաններ ձեռք բերելու կամ վերանորոգելու պետական ֆինանսական աջակցության» ծրագիրը հանրապետությունում իրականացնում է Արցախի ներդրումային հիմնադրամը: Սկսած 2015թ-ից՝ կառավարության որոշմամբ անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամներին, ԼՂՀ պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակների, բազմազավակ, միածնող ընտանիքների և փախստական քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման նպատակով տրամադրվում է հիպոտեկային վարկավորմամբ պետական ֆինանսական աջակցություն, որն արտահայտվում է հիպոտեկային վարկի տոկոսագումարների սուբսիդավորմամբ և կանխավճարի տրամադրմամբ:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ երկրում բնակարան, բնակելի տուն ձեռք բերելու համար հիպոտեկային վարկը տրամադրվում է առնվազն 15 տարի ժամկետով, իսկ վերանորոգման համար՝ մինչև 10 տարի ժամկետով: Բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող երկրորդ խմբի հաշմանդամ շահառուներին հատկացվում է կանխավճար՝ գործարքի արժեքի մինչև 30 տոկոսի չափով, որից երկու երրորդը կամ գործարքի արժեքի 20 տոկոսը՝ անհատույց, իսկ 10 տոկոսը՝ վերադարձման պայմանով: Մնացած շահառուներին տրամադրվում է գործարքի արժեքի մինչև 20 տոկոսի չափի կանխավճար՝ վերադարձման պայմանով: Այս ծրագիրը վերաբերում է սոցիալական այն կատեգորիաներին, որոնք,

հիմնախնդիր ունենալով հանդերձ, ընդգրկված չէին անվարձահատույց բնակարանների տրամադրման պետական ոչ մի ծրագրում: Չնայած գործող հիպոտեկային ծրագիրը համեմատաբար մատչելի է, սակայն երկրորդ, երրորդ կարգի հաշմանդամների, ծնողազուրկ երեխաների, փախստականների և սոցիալապես խոցելի խավի համար, այդուհանդերձ, առաջացնում ֆինանսական լուրջ դժվարություններ:

Հանրապետությունում 2015 թվականից գործում է նաև հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների մասով եկամտային հարկի արտոնության նոր ծրագիր, որը ևս լրացուցիչ աջակցություն է շահառուների համար:

Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում առևտրային բանկերի հիպոթեքային վարկերի պորտֆելը 2017 թվականին աճել է շուրջ 25, իսկ 2018 թվականին՝ 46 մլրդ դրամով: Այսպես, դիտարկելով հիմնադրամի հիմնական «Հիպոթեքային վարկավորմամբ բնակարան/առանձնատուն ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության» ծրագրի շրջանակում ֆինանսավորված վարկերի քանակը, բացահայտում ենք, որ 2009-2018թթ. կտրվածքով դիտվել է կտրուկ աճ: Ընդ որում՝ ի համեմատ 2009թ.՝ 2018 թվականին տրամադրված վարկերը աճել են 520%-ով, իսկ 2017թ. համեմատ՝ 7,08%-ով: Հատկանշական է, որ բնակարանի վերանորոգման նպատակով վերցված հիփոթեքային վարկերը 10 տարվա կտրվածքով զբաղեցնում էին առաջնային տեղ:[1]

Գծապատկեր 1. "Հիպոտեկային վարկավորմամբ բնակարան/առանձնատուն ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցություն" ծրագրով ֆինանսավորված վարկերի քանակը



Գծապատկերից տեսանելի է, որ 2009-2018թթ. ընթացքում վերոհիշյալ ծրագրի շրջանակում ֆինանսավորված վարկերի քանակը զգալիորեն աճել

Ինչ վերաբերվում է ավազակախմբի կամ զինված կազմավորումների զինվածության հատկանիշին, ապա հաշվի առնելով այն, որ այդ հանցագործությունները առանձնապես ծանր և ծանր հանցագործություններ են, ապա անօրինական զենքը, մեր կարծիքով, ներառվում է նրանց մեջ և համակցությամբ չի որակվելու: Բոլոր ծանր և առնձնապես ծանր հանցագործությունների դեպքում անհրաժեշտ է որդեգրել այս մոտեցումը: Իսկ եթե զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրումը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության եղանակ է, ապա ապօրինի լինելու դեպքում այն պետք

է համակցությամբ որակվի: Օրինակ՝ խուլիգանությունը, որը նախատեսվում է ՔՕ հոդ. 269, մ.1-ով, դասվում է միջին ծանրության հանցանքների թվին, ուստի եթե այն կատարվել է զենքի կիրառմամբ, որն ապօրինի է, որակումը պետք է իրականացվի համակցությամբ :

Գնալով ավելի տարածված է դառնում բարձր տեխնոլոգիաների օգտագործումը որպես հանցագործություն-եղանակը: Գլխավոր դատախազների, ԱԴԾ ղեկավարների և ներքին գործերի նախարարների 2006 թ հունիսի 16-ի նիստում աշխարհի 50 երկրների միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հիպերհանցագործությունների դեմ մղվող պայքարում ջանքերը միավորելու մասին: XXI դարում առաջին պլան է մղվում բարձր տեխնոլոգիաների օգտագործմամբ հանցավորությունը: Տեղեկատվական անվտանգության դեմ հանցագործությունները կատարում են երկու գործառույթ. հանդիսանում են ինքնուրույն հանցանքներ, որոնք որակվում են քրեական օրենսգրքի գլուխ 24-ով՝ («Հանցագործություններ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ») նախատեսված առանձին հոդվածով կամ որպես այլ հանցագործությունների կատարման եղանակներ:

Ամենից հաճախ համակարգչային հանցագործություններն օգտագործվում են հափշտակություններ ու շորրթումներ կատարելու համար: Սակայն հայտնի է ԱՄՆ-ում համակարգչի օգտագործման դեպք հիվանդի սպանության համար՝ կայքը կոտրելու և նրան դեղեր նշանակելու ճանապարհով: Համակարգչային հանցագործությունների որակումը հնարավոր է ինչպես իրական համակցությամբ, այնպես էլ որպես մեկ միասնական բարդ հանցագործություններ, որտեղ նրանք կատարում են հանցագործության եղանակի դեր: Համակարգչային հանցագործությունները կարող են միջոց դառնալ այնպիսի հանցագործություններ կատարելու համար, ինչպիսիք են շորթումը, պոռնոգրաֆիան, միջամտությունն անձնական կյանքին, ահաբեկչական ակտի սպառնալիքը, իշխանության ներկայացուցիչների ու ֆիզիկական անձանց կյանքին ու առողջությանը սպառնալիքն ու շատ այլ հանցագործություններ:

Համակցությունը և մեկ միասնական բարդ հանցագործությունը պետք է տարբերել ըստ այն հատկանիշի, թե արդյո՞ք համակցությունը եղել է իրական, այսինքն՝ սկզբում կատարվել է համակարգչային հանցագործությունը, իսկ հետո այն հանցագործությունը, հանուն որի օգտագործվել են բարձր տեխնոլոգիաները, թե՞ իդեալական: Իդեալական համակցությունը հանցագործություն-եղանակների դեպքում գործնականորեն բացառվում է. ակնհայտ է մեկ միասնական բարդ հանցագործությունը: Օրինակ՝ հաքերները մեկ առ մեկ կոտրել են բանկերի համակարգչային համակարգերը, այդ թվում նաև արտասահմանում, և հաղորդել են, որ որոշակի վճարի դիմաց կարող են ապահովել նրանց պաշտպանությունը: Տվյալ դեպքում համակարգչային

տեղեկատվության նկատմամբ անիրավաչափ հասանելիությունը դարձել է շորթման միջոց:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Հանցագործություն-եղանակը որպես այդպիսին է գնահատվում և առանձին չի որակվում, եթե ըստ ծանրության մեկ աստիճանով պակաս է հիմնական հանցագործությունից: Եթե հավասար է, կամ առավել ևս պատկանում է ավելի բարձր կատեգորիային, որակումը տեղի է ունենում ըստ հանցագործությունների համակցության:

2. Հանցագործություններ-եղանակները կարող են նաև նախատեսված չլինել որպես հանցակազմերի պարտադիր հատկանիշներ, բայց բովանդակությամբ այդպիսին հանդիսանում են, ուստի և մտնում են բարդ միասնական հանցագործության կազմի մեջ և չեն պահանջում որակում համակցությամբ: Դա ամենից առաջ վերաբերում է այնպիսի հատկանիշին, ինչպիսին է պաշտոնական լիազորությունների օգտագործումը, սակայն այն պայմանի առկայության դեպքում, որ պատկանում է հանցագործությունների ավելի ցածր կատեգորիային, քան հիմնական հանցագործությունն է: Այս պայմանի բացակայության դեպքում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ. Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 342342.9(479.243)
Իրավագիտություն

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱրՊՀ, Իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Բ.Դանիելյան:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ (ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԸ)

Հոդվածը նվիրված է Արցախում վարչարարության պատմաիրավական հիմքերի և նախադրյալների հետազոտմանը: Պատմական Արցախում վարչարարությունը ժամանակակից իրավական իմաստով օբյեկտիվ պատճառներով չէր կարող իրականացվել, սակայն պատմական աղբյուրներում պահպանվել են կառավարչական հարաբերությունների իրականացման և կարգավորման առանձնահատկությունները: Պատմական փաստերի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս ընդգծել այն, որ չնայած պատմական տարբեր շրջաններում Արցախի իրավական կարգավիճակը փոփոխվել է, այնուամենայնիվ նա պահպանել է իր ներքին ինքնուրույնությունը՝ իրականացնելով ներքին հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված իշխանական-կառավարչական, վարչական գործառույթները: Հենց դրա շնորհիվ է, որ Արցախը կարողացավ զերծ մնալ օտարածին տարրերի ներթափանցումից, մղել անհաշտ պայքար և հարյուրամյակներ անց վերականգնել կորցրած պետականությունը:

Բանալի բառեր՝ *գործադիր իշխանություն, կառավարում, ինքնակառավարում, ինքնիշխանություն, դատավարություն, Կանոնական սահմանադրություն, Արցախի մելիքություն :*

А. Даниелян

ИСТОРИКО-ПРАВОВЫЕ ПРЕДПОСЫЛКИ АДМИНИСТРИРОВАНИЕ В АРЦАХЕ ДО КОНЦА XVIII ВЕКА

Статья посвящена изучению историко-правовых основ и предпосылок администрирования в Арцахе. В историческом Арцахе администрирование в современном правовом понимании по объективном причинам не могло осуществляться, но в исторических источниках сохранились особенности осуществления и регулирования управленческих отношений.

Изучение исторических фактов позволяет нам подчеркнуть, что, не смотря на то, что в разные исторические периоды правовой статус Арцаха менялся, тем не менее, он сохранял свою внутреннюю

независимость, выполняя властно-управленческую, административную функции, направленные на регулирование внутренних общественных отношений. Именно благодаря этому Арцах смог избежать проникновения чужеродных элементов, вести непримиримую борьбу и спустя столетия восстановить государственность.

Ключевые слова: *исполнительная власть, управление, самоуправление, суверенитет, судопроизводство, Каноническая конституция, Меликство Арцаха.*

A. Danielyan

HISTORICAL AND LEGAL PREREQUISITES OF ADMINISTRATING IN ARTSAKH UNTIL THE END OF THE XVIII CENTURY

The article is devoted to the study of historical and legal foundations and prerequisites of administrating in Artsakh. In historical Artsakh, administrating in modern legal understanding for objective reasons could not be carried out, but in historical sources the features of the implementation and regulation of administrative relations have been preserved.

The study of historical facts allows us to emphasize that, despite the fact that in different historical periods the legal status of Artsakh changed, nevertheless, it retained its internal independence, fulfilling the power-management, administrative function aimed at regulating internal public relations. Due to this, Artsakh was able to avoid the penetration of alien elements, wage an irreconcilable struggle and centuries later to restore statehood.

Keywords: *executive power, government, self-government, sovereignty, legal proceedings, Canonical constitution, Melikdom of Artsakh.*

Հանրային իշխանության մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ներկայիս իրավական հիմքերի, կայացման աստիճանի, գործնական դրսևորումների, ինչպես նաև զարգացման միտումների մասին գիտագործնական հարթությամբ լիարժեք պատկերացում կազմելու մասին, կարծում ենք, հարկ է որոշակի ասպեկտներով ուսումնասիրել հայրենական պետական համակարգի այն պատմահիրավական նախադրյալները, որոնք կանխորոշել են ներկայիս վարչարարության համակարգը, դրա առանձնահատկությունները և բարելավման առավել նախընտրելի ուղիները։

Պետական ապարատի կազմավորման առանցքային բաղադրիչների համալիր վերլուծությունը բերում է այն համոզման, որ Արցախում, ըստ էության, բնորոշ են եղել պետականաշինության, վարչական կառույցների կազմավորման ու գործունեության այն բնութագրիչները, որոնցով առանձնանում է ողջ Հայ ժողովրդի պետականաշինության համակարգը։ Ընդ որում, դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կառավարման

համակարգին առավել հատուկ է եղել մի կողմից կենտրոնացված կառավարումը, մյուս կողմից խիստ մասնատվածությունը: Ընդ որում՝ կառավարման, այդ թվում՝ վարչարարության իրականացման գործընթացների անմիջական մասնակիցն է եղել նաև հոգևոր դասը: Վերջինս գրեթե նույն ակտիվությամբ մասնակցել է ինչպես պետականության առկայության, այնպես էլ դրա բացակայության շրջանում, քանզի օտարերկրյա նվաճողները ձգտել են խուսափել անհարկի բախումներից և, հատկապես, տեղերում հարկադրանքի տարրեր բովանդակող վարչարարությունը (օրինակ՝ հարկահավաքման գործառույթը) մասամբ վերապահել Հայ Եկեղեցուն:

Նախ՝ հակիրճ անդրադառնանք պետական ապարատի կազմավորման որոշ հարցադրումների: Ըստ պատմագիտական աղբյուրների՝ մ.թ.ա. 8-րդ դարում Արցախը նվաճվել և ներառվել է Ուրարտական թագավորության կազմում[1]: Նույն աղբյուրների հավաստմամբ՝ Ուրարտական պետությունը ունեցել է բավականին զարգացած ռազմաբյուրոկրատական ապարատ: Ընդ որում, տեղերում կենտրոնական իշխանությունն ապահովում էր իր անմիջական ռազմական ներկայությամբ՝ հենվելով տվյալ տարածքը վերահսկող և կենտրոնի հետ կապ հաստատող «ամրոց-ամրությունների» շղթայի վրա: Այս համակարգից դուրս ընկած մյուս տարածքային կազմավորումները դուրս էին կենտրոնական իշխանության անմիջական վերահսկողությունից և տնօրինվում էին տեղի առաջնորդների կողմից: Երբ նվաճված երկրում ռազմական ներկայությունը կամ դրա բացակայության դեպքում՝ ներխուժման սպառնալիքը բավարար չէր լինում տվյալ երկրի հնազանդությունը ապահովելու համար, իշխանությունները դիմում էին առավել գործուն, ազդեցիկ, ըստ էության պատժիչ քայլերի՝ «վերանվաճելով երկիրը», ավերելով ամրություններն ու շրջապատող բնակավայրերը, իսկ գլխավոր քաղաքում արդեն տեղակայում էին մշտական զորք[2]: Այն, որ Արցախը (Ադախը) ևս վերանվաճվել է, վկայում է Ռուսա Ա-ի արձանագրությունը՝ փորագրված Սևանի ափի Ծովինար գյուղում, մի ժայռի վրա[3]:

---

[1] *Տե՛ս* ***Կարագեոզեան Յովաննէս****, Մեպագիր տեղանունները Այրարատում և հարակից նահանգներում, Եր., 1998, էջ 85,*

[2] *Տե՛ս* ***Գրեկյան Ե.Հ.****, Բիայնիլի-Ուրարտու. Պետություն և հասարակություն (պատմագիտական հետազոտություն), ատենախոսություն պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2016, էջ 67-68:*

[3] *Տե՛ս* ***Ուլուբաբյան Բագրատ****, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան 1994, էջ 13:*

Արցախը և Ուտիքը Երվանդունյաց պետության կազմի մեջ էին մտնում[1] , և հետագայում էլ այդ երկրամասը եղել է հայկական պետության կազմի մեջ և ենթարկվել նույն ռազմաքաղաքական իրադարձություններին: Մովսես Խորենացին ընդգծել է, որ Արտաշեսը Հայկի սերնդից «Առանին կարգեց» Կուր և Արաքսի միջագետքի, այսինքն՝ Արցախի և Ուտիքի կուսակալ, «աշխարհին» էլ Աղվանք կոչվեց[2]: Եվ հենց այս նախարարական տոհմի ներկայացուցիչներն են Արցախում սկսել պետական շինարարության առաջին քայլերը՝ հիմնադրելով թագավորություն: Արցախի Առանշահիկների թագավորությունը Աղվանից մարզպանության կազմում ներառված էր Պարսկաստանի հյուսիսային Քուստակի մեջ: Ըստ Կաղանկատվացու. «Այն ժամանակ, երբ Աղվանքի նախարարներից յուրաքանչյուրը ստանում է իր իշխանությունը, նրանք միաբանվում են, վերցնում են քաջարի, իմաստուն, խոհականությամբ հմուտ, հասակով բարձր և վայելուչ Աղվանքի թագավոր Վաչեի եղբոր՝ Հազկերտի որդի, իրենց հայրենի թագավորության ժառանգ Վաչագանին և տանում թագավոր են դարձնում»[3]: Այս ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններից է Վաչագան Արքայի կողմից կանոնական Սահմանադրության ընդունումը, որը բացառիկ երևույթ էր այդ ժամանակաշրջանի համար (V դարի վերջ, VI դարի սկիզբ): Կանոնական Սահմանադրությունն առանձնանում է առաջին հերթին ընդունման եղանակով: Ընդունվող կանոնների օրինականությունը և համապարտադիրությունն ապահովելու նպատակով արքան բազմամարդ ժողով է հրավիրում իր ամառանոց Աղվենում (ներկայիս Մարտակերտի շրջանում), որին մասնակցում են հոգևորականները, ազնվականները, հայտնի տների նահապետները և բազմաթիվ այլ մարդիկ: Ժողովը ընդունել է 21 կանոն: Թեև մեծամասամբ կանոնները նվիրված էին հոգևորականության և եկեղեցու հետ կապված հարաբերությունների կարգավորմանը, այնուամենայնիվ, դրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նաև նորաստեղծ թագավորությունում գոյություն ունեցող հասարակական և պետական կարգի մասին: Նշենք, որ պետական կառավարումն ուղղված էր ստեղծված հասարակական կարգի՝ աշխարհիկ և հոգևոր գործիչների դիրքերի ամրապնդմանը: Սակայն որոշ հարցերում հասարակության բոլոր

---

[1] *Առավել մանրամասն տե՛ս **Բալայան Վահրամ** Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան 2002, էջ 38:*

[2] *Տե՛ս **Խորենացի Մովսես**, Հայոց պատմություն , Երևան, 1981, էջ 154:*

[3] *Տե՛ս **Կաղանկատվացի Մովսես**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանություն Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 36:*

անդամները իրավահավասար էին. դա վերաբերում էր հօգուտ եկեղեցու գանձվող հարկերին, որոնք պետք է վճարեին և ազնվականները, այդ թվում՝ թագավորական ընտանիքի անդամները, և շինականները: Հոգևոր դասի ներկայացուցիչների և աշխարհիկ ֆեոդալների փոխհարաբերություններում նկատվել է որոշակի փոխզիջում, օրինակ՝ ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեին քահանային հեռացնելու կամ նշանակելու իրենց դաստակերտում, եպիսկոպոսն էլ առանց նրանց համաձայնության իրավունք չուներ նշանակել կամ ազատելու քահանային: Կանոնական Սահմանադրության մեջ ամրագրված մի շարք դրույթներ ուղղված են հին հեթանոսական շրջանից մնացած բարքերի դեմ մղվող պայքարին՝ արգելվում էր արյան վրեժը, մինչև 3-րդ աստիճանի մերձավոր ազգականների միջև ամուսնությունը, կախարդությունը, գեշակերությունը և այլն:

Կանոններում ընդգծվում էր նաև թագավորի առանձնահատուկ դերը արդարադատության իրականացման բնագավառում: Կանոններից հետևում էր, որ որոշակի վեճեր լուծելու իրավասություն ուներ տանուտերը (կանոն ԺԴ), որոշ հարցեր լուծում էին եպիսկոպոսը կամ քահանան, իսկ որոշ դեպքերում ժողովրդի հետ միասին, (կանոն Ը, ԺԳ, ԺԵ), ընդ որում, առանձին պատիժներ, հատկապես մահապատիժը կարող էր նշանակել միայն թագավորը (կանոն ԺԱ, ԺԲ, ԺԷ): Կանոնական Սահմանադրությունը հաստատվել է պաշտոնատար անձանց (արքայի հրամանակատարի, պալատի վերակացույի), տոհմապետերի, ազնվականների և վերջում էլ կնքվել Վաչագան թագավորի մատանիով[1]:

Այսպիսով՝ վստահաբար կարելի է ասել, որ պետության կառավարումը իրականացվել է թագավորի կողմից, սակայն ինչպես բոլոր ֆեոդալական հասարակարգ ունեցող պետություններում, այնպես էլ Արցախում, առանձին ֆեոդալներ բավականին լայն լիազորություններ ունեին իրենց սեփական տիրույթում: Երկրի կառավարումը իրականացվում էր ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական կառավարման մարմիններ միջոցով, իսկ համայնքի կառավարումը վերապահված էր տանուտերին:

Վաչագան Բարեպաշտի մահից հետո վեցերորդ դարի համարյա ամբողջ երեք քառորդը Արցախն ապրել է խաղաղ և բարգավաճ կյանքով: Արաբների տիրապետության ժամանակ Հայաստանն Արմինիա մեծ նահանգի մասն էր կազմում, իսկ վերջինս խալիֆայության հյուսիսային փոխարքայության մեջ էր, որը պետության հինգ փոխարքայություններից

---

[1] *Տե՛ս **Կաղանկատվացի Մովսես**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանություն Վարագ Առաքելյանի, Երևան 1969թ. էջ 65-69:*

էր: Արմինիան վարչականորեն հետևյալ բաժանումն ուներ Բուն Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվանը, Դարբանդը: Հայաստանը չուներ արաբների կողմից մտցված վարչական նոր բաժանումներ, այլ հնուց ի վեր գոյություն ունեցող գավառները կառավարում էին հին նախարարական տները: Հայաստանի բոլոր կարևոր բաղկացուցիչ մասերը արաբ մատենագրության մեջ հիշատակված են, այդ թվում Խաջին (Խաչենը)[1]: Երկրի կառավարումը իրականացնում էր արաբ ոստիկանը, որի նստավայրը Դվինն էր, սակայն VIII դարի II կեսում, Արմինայի ոստիկանը ունեցավ երկրորդ նստավայրը՝ Պարտավը, որն Աղվանքի մայրաքաղաքն էր: Նա նշանակում էր Հայոց իշխանին, ով որպես երկրի կառավարիչ (բաթրիկ) խալիֆայության առաջ պատասխանատվություն էր կրում նախարարների գործունեության, հարկեր հավաքելու, զորք տրամադրելու համար և այլն: Ըստ արաբ պատմիչ Թաբարի վկայության՝ Աղվանքի (Խաչենի) իշխան Սահլ Սմբատյանը խալիֆայից ստացել էր պատրիկության թագ: Նման թագ ստանում էր Հայոց իշխանը: Մ.Կաղանկատվացին նկատել է, որ իր վաստակի դիմաց Սահլ Սմբատյանը արքունիքից մեծ վարձատրություն է ստանում և ձեռք բերում իրավունք՝ Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նկատմամբ՝ արքայական իշխանությամբ տիրելու կարգավիճակով[2]: Այսպիսով՝ 9-րդ դարի առաջին կեսերին Արցախի արևմտյան և հյուսիսային կողմերում ստեղծվում է Խաչենի իշխանությունը: Խաչենի իշխանությունն առավել հզորացավ 9-րդ դարի վերջերին՝ Գրիգոր Համամի կառավարման տարիներին, թեև նա ընդունեց Բագրատունիների գերագահությունը: Արցախի Առանշահիկների նախարարական, ավելի ուշ թագավորական տան հիմքի վրա 12-րդ դարի առաջին կեսին գոյացան երկու իշխանությունները՝ Ներքին Խաչենի և Հաթերքի: Դարավերջին հիշյալ երկճյուղ իշխանությանն ավելանում է երրորդը՝ Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը:

Նշենք, որ Խաչենի իշխանություններն ունեին տարբեր կարգավիճակ և կախվածության աստիճան, օրինակ՝ Զաքարյանները Վերին Խաչենը ներկայացնում էին որպես ենթակա իշխանություն, մինչդեռ Ներքին Խաչենի իշխան Հասան-Ջալալը հիշատակվում է որպես բնավոր, ինքնակալ իշխանանց իշխան, տեր Խաչենի: Աղբյուրներում նա ներկայացվում է ոչ միայն Խաչենի, այլև Արցախի, այնուհետև՝ Աղվանքի մեծ իշխան և թագավոր: Թագավոր ներկայանալը հավաստում է այն, որ նա

---

[1] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն , երկրորդ հատոր, Երևան 1984, էջ 362:*

[2] *Տե՛ս* ***Կաղանկատվացի Մովսես****, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանություն Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 259*

հայկական միջավայրից անկախ էր և միայն վասալական կախում ուներ թաթար-մոնղոլական բռնապետությունից[1]:

Հաթերքի իշխանությունը դադարեց իր գոյությունը 1214թ., իշխան Վախթանգի մահով, իսկ Ներքին Խաչենի ու Վերին Խաչենի իշխանությունները գոյատևեցին թաթար-մոնղոլական տիրապետության ժամանակ ու նրանց հետքերով եկած թուրքմեն քոչվոր ցեղերի ասպատակությունների օրերին և պարսկական տիրապետության հաստատման սկզբից, ավելի մանրացած, սկսեցին անվանվել մելիքություններ:

Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության ժամանակ մելիք էին կոչվում հայկական ազնվականության մնացորդներից հառնած և իրենց տիրույթներում վարչատնտեսական արտոնություններ ձեռքբերած ֆեոդալները: Ըստ էության, Արցախում և Սյունիքում հայկական միջավայրում արմատացած «մելիք» տիտղոսը նույնացվում էր հայկական «իշխան» տիտղոսին[2]: Ըստ Հ.Աճառյանի՝ մելիքը արաբական «malik» բառն է, թուրքական արտասանությամբ «melik», որը նշանակում է՝ տեր, իշխան, գալիս է «mlk»՝ տիրել, իշխել, ընդհանուր սեմական արմատից [3]:

Այսպիսով՝ հաջորդ ռազմավարչական կազմավորման տեսակը Արցախում մելիքություններն էին, որոնք պարսից Նադիր-շահի կողմից 1736թ. ստացան ինքնիշխանություն և կոչվեցին Խամսայի մելիքություն:

Պարսից գահին տիրացած գարա-կոյունլու Ջահանշահը հատուկ հրովարտակով ճանաչել է հայ գավառական իշխանների իրավունքները: Ի դեպ, տվյալներ են պահպանվել Արցախի Ծար գավառի տերերին նրա կողմից շնորհված արտոնությունների մասին: Ենթադրվում է՝ համանման արտոնագրեր են տրվել նաև հարևան իշխանավորներին: Այս ժամանակից սկսած՝ հայկական աղբյուրներում մելիքներ են կոչվում Արևելյան Հայաստանի գավառական իշխանները: Սակայն պահպանված աղբյուրների համաձայն՝ մելիքական իշխանությունը կանոնավոր ընթացքի մեջ դրվեց Շահ-Աբաս Ա-ի գահակալության ժամանակ[4]:

---

[1] *Տե՛ս* ***Ուլուբաբյան Բ.Ա.****, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն , Երևան 1975, էջ 214:*

[2] *Տե՛ս* ***Магалян Артак,*** *Арцахские меликства и меликские дома в XVII-XIX вв. Ереван, 2012, ст. 30.*

[3] *Տե՛ս* ***Աճառյան Հրաչյա****, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 294, հասանելի է http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=HY_HY&query=%D5%B4%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84*

[4] *Տե՛ս* ***Ուլուբաբյան Բ.Ա.****, նշված աշխ., էջ 419-420:*

Արցախի և Սյունիքի մելիքները, ընդունելով օտար զավթիչների գերագահությունը, ներքին կառավարման հարցերում (հարկեր հավաքել, արդարադատություն իրականացնել և այլն) պահպանում էին լիարժեք ինքնուրույնություն:

Վերոնշյալ ոլորտներում մելիքների իրավունքները հաստավում էին շահի հրամանով, թեև ըստ էության, կրում էին ժառանգական բնույթ: Չնայած մելիքական իշխանությունը ժառանգական բնույթ էր կրում, այդուհանդերձ գոյություն ուներ մելիքի հաստատման կարգ: Եվ այդ կարգում կարևոր տեղ էր հատկացված տվյալ գավառի ժողովրդին. «Մելիքի իշխանությունը, թեև ժառանգական, առանց ժողովրդի համաձայնության չէր իրականանում»[1]: Ցուրաքանչյուր մելիքացու նախ պետք է ստանար տվյալ գավառի ժողովրդի համախոսականը (գրավոր համաձայնությունը) այն մասին, որ նրանք համաձայն են իրենց գավառի մահացած մելիքի փոխարեն նրա որդուն տեսնել հոր պաշտոնում, այնուհետև մելիքացուն տվյալ համախոսականը պետք է վավերացնել տար Ղարաբաղի բեկլարբեկի ստորագրությամբ, և նոր միայն կարող էր դիմել պարսից շահին՝ հաստատության հրովարտակ ստանալու համար: Համաձայն պարսից արքունիքում ընդունված կարգի՝ մելիքացուն բեկլարբեկի ստորագրությամբ վավերացված համախոսականի հետ միաժամանակ պետք է շահին ներակայցներ նաև իր նախորդներին տրված շահական հրովարտակները՝ ի հավաստումն նրա, որ ինքը օրինական մելիքի հետնորդն է:

Ինչ վերաբերում է շահական հրովարտակով իրեն կառավարման հանձնված գավառի ժողովրդին, ապա նրանք ոչ թե մելիքի ճորտերն են եղել, այլ՝ հպատակները, որոնց մելիքը ընդամենը կառավարել է[2]: Մեկ այլ աղբյուրի համաձայն. «Ինչ քաղաքներում բնակում էին պարսիկ խաներ...նոյն խաներից կախումն ունէին նոյն քաղաքի մէլիքներն: Բնաւ ենթարկուած չեն եղել այդ կանոնին **Արցախի մէլիքներն, այլ բոլորովին անկախ**... Մէլիքութիւնն ծնած օրից միշտ անկախ եղած են Արցախի մէլիքներն... ամեն տարի վճարած են շահերին մի որոշեալ գումար եւ միայն այս վճարով կախումն ունեցած շահերից»[3]:

Մելիքի կամքը հպատակների համար օրենքի ուժ ուներ: Շահական հրովարտակները վկայում են, որ Արցախի մելիքներն ունեցել են անսահմանափակ իրավունքներ իրենց հպատակների նկատմամբ: Իրենց հանձնված գավառները մելիքները կառավարել են տանուտերերի

---

[1]Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երևան, 1973, էջ 17:
*[2]Տե՛ս **Լեո,** Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երևան, 1973, էջ 17:*
*[3]Տե՛ս **Մակար եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ Թ-Ժ:*

(գյուղապետերի՝ քենդխուդաների, քյոխվաների՝ գյուղի կառավարիչ), գզիրների (տանուտերի օգնական) և հարկահավաքների միջոցով, որոնց հիմնականում ընտրում էր համայնքի հասարակությունը, իսկ մելիքը հաստատում էր: Երբեմն, առանց ժողովրդի ընտրության, մելիքը նրանց պարզապես,նշանակում էր: Մելիքն ուներ նաև իր աշխատակազմը, այն է՝ մեկ քարտուղար, մեկ սուրհանդակ և մոտ հիսուն զինյալ ծառաներ, որոնք, ըստ անհրաժեշտության, կատարում էին մելիքի բանավոր և գրավոր հրամանները:

Մելիքության ներքին և արտաքին անվտանգությունը ապահովելու համար Արցախի մելիքները զորք պահելու իրավունք ունեին: Զորքը համալրվում էր հպատակներից: Մելիքի պահանջով յուրաքանչյուր տուն պարտավոր էր տալ մեկ զինվոր, իսկ անհրաժեշտության դեպքում զինվում էին զենք կրելու ունակ բոլոր տղամարդիկ: Զինվորները պարտավոր էին ինքնուրույն իրենց ապահովել ձիով և զենքով, իսկ եթե նրանք ընչազուրկների թվից էին, նրանց զինում էր մելիքը: Բացի այդ՝ մելիքը պահում էր անձնական թիկնազոր՝ բաղկացած 300 հոգուց: Մելիքը համարվում էր ամբողջ զորքի հրամանատարը, սակայն զորքի առանձին ստորաբաժանումներ գտնվում էին հարյուրապետերի (յուզբաշիների) հրամանատարության ներքո[1]:

Դատական իշխանությունը յուրաքանչյուր մելիքությունում կենտրոնացված էր մելիքի ձեռքում: Ծանր հանցագործությունը քննում էր ինքը մելիքը, իսկ մնացած գյուղական վեճերը լուծում էր գյուղի ավագը՝ տանուտերը: Դատավարության ժամանակ հայերը առաջնորդվում էին հիմնականում սովորութային իրավունքով, իսկ որոշ դեպքերում՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»[2]: Մելիքի կայացրած որոշումը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր, իսկ տանուտիրական դատարանի նկատմամբ նա հանդես էր գալիս որպես գերագույն ատյան: Դատավարությունը շատ պարզ էր ընթանում, վկաների բացակայության դեպքում որոշումը կայացվում էր կողմերի տված երդման հիման վրա: Նահապետական սովորույթներով և ավանդույթներով ապրող մարդկանց մեջ ոչ միայն սուտ վկայություններ էին հազվադեպ, այլ նաև հենց իրենք շատ անգամ խոստովանում էին հանցանքը, որպեսզի չերդվեն: Արցախի մելիքները, ի տարբերություն Երևանի մելիքների, իրավունք ունեին իրենց հպատակների նկատմամբ, սեփական հայեցողությամբ հանցագործության

---

[1]*Տե՛ս* ***Магалян Артак****, указ.соч., ст. 38.*

[2]*Տե՛ս Հայ ժողովուրդի պատմություն, V հատոր , Երևան 1974թ., էջ 17:*

բնույթից ելնելով, կիրառել պատժի ցանկացած տեսակ, այդ թվում նաև մահապատիժ:

Որդեգրման, ամուսնության հարցերում անհրաժեշտ էր մելիքի համաձայնությունը և թույլտվությունը [1]:

Այսպիսով՝ Արցախի մելիքության գործադիր իշխանությունը կենտրոնացված էր մելիքների ձեռքում, նրանք, դատական գործառույթ իրականացնելուց բացի, իրականացնում էին նաև իրավաստեղծ և իրավակիրառ գործառույթ, անհրաժեշտության դեպքում կիրառում հարկադրանքի միջոցներ, այսինքն՝ հարկադրման, ուժի գործադրման գործառույթ, առանց որի չկա իրավունք որպես այդպիսին:

Արցախի մելիքներից յուրաքանչյուրը պարտավորված է եղել իր հպատակներից հավաքել պարսկական արքունիքի կողմից սահմանված հարկը և ժամանակին մուծել շահական գանձարանը: Եթե մելիքը շահական գանձարանին չէր վճարում տարեկան հարկը, ապա դա նշանակում էր, որ նա ապստամբել էր[2]: Շահական գանձարանին հարկ վճարելուց բացի՝ Արցախի գավառների բնակիչները պարտավոր էին առանձին հարկ վճարել նաև իրենց գավառների մելիքներին: Հարկերից ու պարտադիր աշխատանքներից ազատ էին հոգևորականները տանուտերերը, զզիրները, սափրիչներն ու յոթանասուն և ավելի տարիքի մարդիկ[3]:

Մելիքները, լինելով աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ, այնուամենայնիվ իրենց գործուն մասնակցությունն էին ցուցաբերում ինչպես իրենց գավառներում ծառայող հոգևորականների նշանակման, այնպես էլ Արցախի կաթողիկոսների ընտրության գործում:

Այսպիսով՝ պետական կառավարման համակարգի՝ վարչարարությանն առնչվող տարրերի ուսումնասիրության արդյունքներով կարող ենք առանձնացնել վարչարարության հետևյալ պատմահիրավական նախադրյալներ ու դրանց առանձնահատկությունները:

- Արցախում վարչարարության իրականացման համակարգի հիմնական դերակատարներ են եղել ինչպես աշխարհիկ պաշտոնյաներ, այնպես էլ հոգևոր դասի ներկայացուցիչներ,

- օտարերկրյա նվաճողները տեղական իշխանության մարմիններին և Եկեղեցուն, վերապահելով հարկադրանքով ուղեկցվող գործառույթներով,

---

[1] Տե՛ս ***Мкртумян Л.***, *Гандзасарское патриаршество при католикосе Петросе Ханцкеци(1653–1678 гг.), «Вестник общественных наук» («ВОН»), 2000, №1, с. 90*

[2] Տե՛ս ***Պողոսյան Ֆրունզե***, *Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», թ. 1, Երևան, 1966, էջ 204*

[3] Տե՛ս ***Լալայան Երվանդ***, *Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 242:*

աստիճանաբար ստեղծել են այնպիսի պայմաններ, որոնք հանգեցրել են վարչարարություն իրականացնող հայրենական կառույցների նկատմամբ քամահրանքի ձևավորմանը,

- Արցախի կառավարման մարմինները, ըստ էության, ունեն կայացման հարուստ պատմական փորձ, քանզի պետականության անհամեմատ տևական առկայությունը նպաստել է հանրային իշխանության ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մարմինների գործունեության ավանդույթների ամրակայմանը:

Ինչ խոսք, հետագա պատմական զարգացումները արմատական բեկում են մտցրել պետական կառավարման համակարգի մեջ, սակայն բոլոր դեպքերում, պահպանվել են ձևավորված կառուցակարգային և ընթացակարգային բաղադրիչները:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ. Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ78.072
Արվեստ

Наира МЕЛИКЯН
Преподаватель Ереванского государственного колледжа эстрадно–джазового искусства (специальное фортепиано)
г. Ереван, Республика Армения. Тел. 098401310
E-mail: naira.melikyan11@gmail.com

ПЕСЕННОЕ ТВОРЧЕСТВО КОНСТАНТИНА ОРБЕЛЯНА

Статья «Песенное творчество К.Орбеляна» посвящена песенному наследию армянского композитора, руководителя Государственного эстрадного оркестра Армении - Константина Агапароновича Орбеляна. Дан анализ феномена песенного творчества, благодаря которому песни композитора имели широкую популярность, завоевали народную любовь и стали шлягерами эпохи.
Ключевые слова: *эстрада, Государственный эстрадный оркестр Армении, шлягер, К.Орбелян, эстрадно джазовая песня.*

Ն. Մելիքյան

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԵՐԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

«Կ.Օրբելյանի երգային արվեստը» հոդվածը նվիրված է կոմպոզիտորի երգերի ժառանգությանը: Այն երևույթի վերլուծությանը, որի շնորհիվ երգերը սիրված էին և դարաշրջանի հիթ էին համարվում:
Բանալի իրառեր՝ *հիթ, Կ.Օրբելյան, ջազ-փոփ, երգեր :*

N. Melikyan

SONG CREATIVITY BY KONSTANTIN ORBELIAN

The article "Song Creativity" by K. Orbelian is dedicated to the song heritage of the composer. The analysis of the phenomenon, due to which the songs were popular, loved, were hits of the era.
Keywords: *hit, K. Orbelian, pop-jazz song*

Вторая половина XX века и первые десятилетия XXI века – это время серьезной трансформации армянской песенной культуры, которая характеризуется синкретизмом, синтезом различных направлений и течений. Междисциплинарный подход к изучению явлений, происходящих в это время в армянской художественной культуре, особо актуален сегодня, так как в 90-е годы XX века произошел слом не только государственной идеологической системы, но и как следствие – всей социокультурной жизни армянского общества.

Некоторый анализ советской эпохи и изучение происходящих процессов, говорит о предпосылках к созданию новых форм, жанров, стилей в художественной и, в частности, в музыкальной культуре Армении. Появлению джаза, рока в культуре Армении предшествовала сформировавшаяся в начале XXв. культура переходного периода. Здесь обнаруживаются тенденции к поиску и восприятию новых культурных жанров и форм, среди которых – городской романс (Р.Меликян, А.Тигранян, Н.Тигранян..) Советизация Армении способствовали внедрению новых музыкальных форм, отвечавшим идеологическим установкам молодой Советской республики. Появляются и получают развитие такие формы как: массовая песня, патриотическая песня, лирическая песня с проникновением стилистики джаза. В середине XX века джаз воспринимается в основном, как особая ритмическая музыка. В процессе укоренения и рефлексии профессионалами музыкальной культуры Армении, проникновения в гармоническую, импровизационную, свинговую основу, начинается институционализация джаза и претворение его в феномен армянского джаза. В дальнейшем армянский джаз (А.Айвазяна, К. Орбеляна и др.) начинает оказывать влияние на всю советскую массовую культуру, проникая как в киноиндустрию, театр так и песенное искусство, которое постепенно превращается в феномен советской эстрадной песни. В культурном пространстве СССР середины XX столетия в результате взаимодействия различных художественных стилей, течений и форм (театр, кино, песенное и танцевальное искусство), появляется уникальный, присущий исключительно советской культуре феномен эстрадно-джазовой музыки. Об этом свидетельствует пресса конца 40х-50х лет. «С 19-21 августа (1949г) в летнем зале театра Арм. Филармонии пройдет концерт Государственного эстрадного оркестра Арм. Филармонии с новой программой. Худ. Руководитель А. Айвазян, дирижер оркестра К. Орбелян. В новую программу включены армянские народные песни, танцы, произведения современных армянских и русских композиторов, также сатира, пародия, конферансье и т.д. После концертов в столице республики, Эстрадный оркестр поедет в другие города для показа новой программы».[1] Или буклет- пригласительный билет на концерт в столице Белорусской ССР: «1мая 1951г. Минский окружной дом офицеров. Вечер отдыха генералов, офицеров и членов их семей. В программе-Государственный эстрадный оркестр Армении. Худ.рук.- заслуженный деятель искусств Арм.ССР, композитор Артемий Айвазян, дирижер- К. Орбелян, постановщик танцев Б.Ордоян. Солисты А.Малхасян, Б.Гаспарян, засл. артист Арм.ССР Роберт Еолчян….др… Ведущий

---

[1] *ТАСС–«Էստրադային նվագախմբի համերգ» Газ. «Սովետական Հայաստան» 18 августа №194, 1949г.на армянском языке.*

ТАСС–«Էստրադային համերգ» Газ. «Սովետական Հայաստան» 20 августа №196 1949год. На арм. яз.

программы Арташес Араратян и засл. артист Арм.ССР Роберт Еолчян.»[1] Массовые песни, посвященные социалистическому труду, отражающие время и высокий патриотизм принадлежат перу уже знаменитых в то время армянских композиторов и авторов песен: А. Хачатуряна, А. Айвазяна, А. Сатунца, А. Арутюняна, Э. Оганесяна, Э. Мирзояна. Стены домов, специальные стенды были увешаны плакатами с изображением счастливых советских тружеников. Социалистический реализм наступал как в литературном, так и художественном творчестве. Мечта о счастливой жизни захватила практически все общество и люди воспринимали эти картины в реальном времени. Этому также были посвящены и исполняемые гимны, песни; счастливая жизнь советского человека, запечатленная на картинах, буквально «лилась» из граммофонов и патефонов. «Вчера в летнем зале театра Арм Филармонии с новой программой Эстрадный оркестр исполнил песни про Сталина, Лауреатов Сталинской премии А.Арутюняна и А.Бабаджаняна. Песню Лауреата Сталинской премии А.Хачатуряна «Ереван», А.Айвазяна «Песня про Москву», Марш-шествие дирижера, пианиста оркестра К. Орбеляна, гусанские песни гусана Ашота и др.»[2]

Гармоническая основа джазовой музыки, с обязательными атрибутами свинга и импровизации, еще небыли основательно усвоены армянскими музыкантам. Они продолжали видеть в джазе лишь ритмическую основу и эксцентрику. Однако, именно ритмическая основа и эксцентрика положили основу армянской эстрадной песне. Этому способствовала, как утверждает А. Тутунджян[3] в своей работе, «наличие генетических общностей между важнейшими элементами джаза и элементами армянской национальной музыки». Еще до войны в Ленинградском отделении Союза советских композиторов, тезис о необходимости создания джазового репертуара был самым острым и звучал во многих выступлениях. Уже никто не заявлял, что джаз не нужен и противников джаза уже не было. Однако «джазу буржуазному должен быть противопоставлен джаз советский»[4], – настаивал известный музыковед М.С. Друскин. В каком-то смысле, К.Орбелян стал тем композитором, который воспринял новый стиль музыки и переработал его в советскую эстрадно-джазовую музыку. Армянская Советская эстрадно-джазовая музыка большей частью шла по пути песенного искусства. На гармонической основе джаза, свинга, импровизационности, ритмики, используя армянский фольклор, русский романс, К.Орбелян создавал феномен советской песни, армянской эстрадно-джазовой музыки.

---

[1] ***Фонд № 78*** *Гос.эстр.оркестр Армении. Музей литературы и искусства Армении ,музыкальный отдел.*

[2] ***Թադևոսյան Ալ.*** *Պետական Էստրադային նվագախմբի նոր ծրագիրը» Գազ. « Սովետական Հայաստան» 03 сентября, №208 1949г..на арм.яз.*

[3] ***Тутунджян А.Г.*** *«Джаз в Армении» ИИ НАН РА стр 4. 2013г.*

[4] ***Скороходов Г.*** *Три влечения Клавдии Шульженко. М., 2007. С. 41.*

Как уже говорилось, важность развития массовой песни обусловливалась тем, что в ней доступно и непринужденно воспевалась идея служения Родине, что способствовало решению задачи духовного единения всей страны. Небывалая по масштабам популярность К. Орбеляна объясняется, во-первых, приоритетом в его наследии песенного жанра – знакового для советского времени, а во-вторых, присутствием в песнях раннего периода достаточно ярко выраженной опоры на маршевость, которая в послевоенные годы – в силу ее коммуникативно-организующей функции – была своего рода отправной точкой для приобретения песнями массового признания. Также необходимо помнить, что марши-шествия были тесно связаны с политической жизнью советского государства, будучи обязательным атрибутом парадов, спортивных мероприятий и празднеств.

Песенные произведения К.Орбеляна объединяет высокий эмоциональный тонус, особая интонационная энергия, яркие запоминающиеся обороты, выводящие песни на высокий художественный уровень. Опора на устойчивые вербальные и интонационные обороты оказывает огромное значение для приобретения песнями черт шлягера, хита. Рассмотрим их функционирование в песенном творчестве К.Орбеляна. При анализе словесных текстов становится очевидным, что они, направленны на единение народа, воспевание Родины и любимых городов, прославление патриотических чувств, любовные и лирические темы, образы природы, родных просторов, увековечивание силы, славы и могущества трудового народа, в синтезе с яркими и колоритными армянскими интонационными оборотами, песени К.Орбеляна не только не теряли своей важности от частого повторения, но и начинали приобретать статус неких гипнотически воздействующих вербально-интонационных символов, ясных и любимых каждым советским человеком. Важным в понимании специфики песен К.Орбеляна как шлягеров является их интонационно-аккумулятивная способность. Небезызвестным является тот факт, что композитор активно и целенаправленно пополнял свой слуховой «багаж», в том числе и благодаря прослушиванию зарубежных радиопередач, посещение концертов во время гастролей, что позволило ему охватить музыкальный опыт прошлого и настоящего и создать подлинные шедевры в сфере советской массовой песни. Важный фактор в этом плане - синтезирующее, обобщающее качество таланта К.Орбеляна, позволившее сплавить в его творчестве, помимо западноевропейских, элементы армянского народного, других интонационных фондов, а также стилистику джаза. В своем интервью К.Орбелян говорил: «Слепое подражание Западу приводит к забвению национального начала в музыке, при этом коверкается и искажается народный вкус, настроенный на тысячелетнем бытии»[1] Помимо вербальных устойчивых оборотов, огромную роль для обретения песнями К.Орбеляна статуса символов эпохи имеет введение «смыслово-волнующих,

[1] ***Вердиян И.*** *«Товарищ песня» Газета «Коммунист»№243, 19 октября 1979г.*

общедоступных интонаций-обобщений».[1] Умелое владение интонационным багажом своей и предыдущих эпох, способствовало широкому применению в своих песнях интонационных оборотов-символов, составивших своего рода «лексикон» советской эпохи. Огромное значение при отборе и применении интонационных элементов имела изначальная установка массовой песни на доступность и легкую запоминаемость. Как следствие, устойчивые интонационные обороты, безусловно, должны были сочетаться с особым типом организации материала, которым выступила так называемая «линия скрытого лада» (термин В. Зака, ЛСЛ)[2]. Под данным определением исследователь трактует «драматургию акцентов, то есть последовательность метрических иктов в масштабах всей песни, которая помогает слушателю запечатлеть в сознании ладофункциональные пути мелодии».[3] Следовательно, ясность структурного членения мелодики песен К.Орбеляна оказывала огромное значение в процессе быстрого и качественного ее запоминания. Опираясь на труд В. Зака и анализируя песни К.Орбеляна выделим наиболее сущностные способы: «сцепление с ударением», «комплекс мечты» и опора на звуки тонического трезвучия. («Галисес».) Помимо традиционных для музыковедения принципов, новые специфические методы организации материала, первый из которых - «сцепление с ударением», связан со структурной устойчивостью, где наиболее важный звук фразы (чаще всего, начальной) становится неким катализатором для следующих фраз и всей песни в целом. Второй из указанных принципов организации материала («комплекс мечты»), отражает связь плагальных интонационных оборотов армянской народной песни: в кульминационной зоне, в апогее интонационной волны, на вершину приходится квинта субдоминанты. Благодаря тонкому наитию, используя различные варианты соединения, К.Орбелян создавал наиболее благоприятные условия для запоминания слушателем песенных мелодий, которые превращались в шлягеры. Рассмотрим, как функционируют названные виды ЛСЛ в песне К.Орбеляна «Аревик» и «Գալիս էս». Активная нисходящая арочная секвенционная композиция из трех нот, несет в себе потенциальную интонационную энергетику, что является основным козырем в столь популярном шлягере «Գալիս էս». Аналогичная структура «сцеплений с ударением» присуща другой не менее популярной песне «Արևիկ» опевающие ямбические обороты вокруг основных тонов, секвенционные обороты.

И.Вердиян в своей статье про К.Орбеляна «Товарищ песня» (1979г.) в газете «Коммунист» [4] с эпиграфом «Есть хлеб – будет и песня», ярко охарактеризовал значение песни в контексте истории, времени и в частности

---

[1] ***Асафьев Б.*** *Музыкальная форма как процесс / Б. Асафьев – Л. : Музыка, 1971. – 376 с., стр. 268*
[2] ***Зак В.*** *О мелодике массовой песни: Опыт анализа / В. Зак – М. : Советский композитор, 1979. – 356 с.,*
[3] ***Там же.*** *стр 70*
[4] ***Вердиян И.*** *«Товарищ песня».Газета «Коммунист»№243, 19 октября 1979г.*

в творчестве К.Орбеляна. «Портрет эпохи можно сложить из песенных строк. Прозвучит в эфире или с эстрадной сцены строка, и в памяти высветится былая история, незабываемые годы, бег дня полного свершений». «С песней растет человек. И, хорошо когда она товарищ, когда она поддерживает в нас созидательный дух, оптимистичный настрой, когда песня вдохновляет, утешает, возвышает». Отмечая в статье достижения К.Орбеляна, автор пишет: «Прежде всего, примечателен прорыв в сферу неведомых ранее интонаций и ритмов, обновлением, которое продиктовано скоростным движением времени, энергичным пульсом активной жизни», ….«ощущением полноты жизни, оптимизмом времени».

«Первые песенные опыты К.Орбеляна датированы в пятидесятых годах («Марш приветствие») Однако композитор неохотно вспоминал свои опусы 50-х 60-х годов, когда он сочинял в достаточно апробированной манере того периода»[1]. В его лучших песнях была индивидуальность, привлекавшая массы слушателей. Эти песни звучали светло, в них чувствовалась подлинная, невымученная жизнерадостность, в них проявлялся настоящий артистический талант превращать будни в праздник. «Люблю тебя, моя Москва», «Мой Ереван», «Ереван и весна в моем сердце» (издана пластинкой известной французской фирмой Шарль дю Мон), «Мир влюбленный и танцующий», «Петь – значит жить» и некоторые другие написаны именно орбеляновским почерком. Особенно популярны песни к кинофильмам, ярко выражая стиль армянской киномузыки 50-60 г. («Путь на арену», «2-Леонид-2», «Сердце поет» вместе с А.Арутюняном). Во второй половине 70-х-80-х годов появляются песни «Сто часов счастья» на сл. В. Тушновой, «Шум берез» (сл В. Лазарева), «Спасибо жизнь» (сл. Е. Евтушенко), «Любовь не стареет» (сл. Л.Дуряна – поэта, с которым композитор сотрудничал особенно часто), «Ты не тот, кто нужен мне» (сл.И.Резника), «Помните!» (сл. Р.Рождественского). Песни К.Орбеляна как вокальные джазовые стандарты лирически прочувствованы и эмоциональны. Это песни баллады, где благодаря новым выразительным средствам, правдивым интонациям чутко выделяется главная поэтическая мысль. В вокальных партиях большое место занимает речитатив, музыкальная декламация. Композиция разворачивается вслед за текстом и отражает его поэтическое развитие. Вместе с тем композитор к каждой песне находит яркую, запоминающуюся мелодическую фразу. «Сто часов счастья»- это и радость надежды, и горечь сомнений, и смирение. Риторический вопрос «сто часов счастья, разве этого мало?»- является лейтмотивом песни, несет в себе сильную смысловую энергетику. «Шум берез»- это песня-романс в стиле русской народной песни, с глубоко поэтичной и задушевной музыкой. Песня «Помните» как и его балет «Бессмертие» посвящена теме войны. Композитор назвал ее Реквием. Многократным рефреном звучит слово-восклицание – «Помните!». Очень разнохарактерно звучит на протяжении всей песни этот лейтмотив: грозно, неумолимо, наступательно, траурно, жалобно, с надеждой

[1] ***Берко М.*** *Константин Орбелян.-Ереван; Луйс, 1990г., 128с., стр. 47*

и мольбой. Особо была отмечена песня «Любовь не стареет» композитором А.Эшпаем: «Дорогой Котик! Я в совершенном очаровании от твоей песни. Это лучшее, что за последние годы я слышал. Она все время у меня в ушах. Мелодия эта-синоним самой музыки. Ведь, изящество, ее «единственность» - свойство подлинного творчества. Когда слышу – замираю от восторга. Был рад, что Бог надоумил тебя. Дело это очень нелегкое. Желаю всего самого хорошего. – твой А.Эшпай» [1]

Если в начале творческого пути песни К.Орбеляна были маршевые, танцевальные, жизнеутверждающие, (в формате, который был описан выше) с достаточно стереотипными образами: любовь, весна, любимый город и т.д., то в дальнейшем появляются интересные формы и образы вокальных произведений. Это песни-баллады, песни – монологи с психологически правдивыми и содержательными поэтическими текстами. Песни К.Орбеляна были одними из самых популярных не только в Армении, но и по всему СССР и зарубежом. Песни Орбеляна неоднократно удостаивались звания лауреата на известном телевизионном конкурсе в СССР «Песня года». Исполнителями его песен были самые известные артисты эстрады Алла Пугачева, София Ротару, Рози Армен, Белла Дарбинян, Левон Севан, Эльвина Макарян, Арташес Авитян, Дмитрий Хворостовский, Арамо, Артур Испирян, Гаяне Оганесян, Татевик Оганесян и др... Это песни «Сто часов счастья»- А.Пугачева, «Шум берез»- Г.Ненашева, Д.Хворостовский, «Аревик»- Г. Минасян, «Галис ес»- Л.Севан, .. «Вокализ»-Т. Оганесян. Международными премиями отмечены песни «Люблю тебя, моя Москва» (Венгрия), «Галис ес» (лауреат шлягерского фестиваля в Чехославакии и в ГДР. Под названием «Шум берез» вышла пластинка популярных песен советских композиторов в Чехославакии. Феноменом песен К.Орбеляна является их интонационная изюминка, которая передает главное настроение песни. И в этом часто заключается заслуга инструментального сопровождения. Именно благодаря богатому аккомпонементу, который на равных с вокальной партией участвует в создании образа и драматургии песни. Это и ритмический стержень передающий драйв, настроение, и типично «орбеляноовские» гармонически насыщенные блок-аккорды, контрапунктические мелодические линии: все говорит об универсальности композитора, применять как джазовые так симфонические приемы. Песни Орбеляна любимы и востребованы до сих пор: звучат по радио, телевидению в новой интерпретации часто звучат «Երգ ճանապարհի», «Երևանյան մեղեդի»,«Գալիս ես», «Արևիկ» и др.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Դ.Մուրադյանը:

[1] ***Там же*** *стр 49*

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета
Artsakh State University's
PROCEEDINGS

1/2020

Հանձնված է տպագրության՝ 4.05.2020 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2020 թ.:
Ծավալը՝ 18 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական հրապարակումներ – Գիտական տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am